

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ - ԹԻՎ 2

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԹՈՒՐԶ-ԱՄԵՐԻԿՅԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**ԵՐԼՍՍ
2004**

32 Վ
ՎՐ-99

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ - ԹԻՎ 2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3348

ՀՀ ՍԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Երևան 2004



ՆԵՐԱՃԱԿԱՆ

Ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած հայտնի հայ քաղաքագետ Իգոր Մուրադյանի գիրքը ոճական առումով մոտենում է վերջին ժամանակներս լայն տարածում գտնող քաղաքական վերլուծության ժանրին, սակայն իր քուլանդակությամբ կրում է շատ ավելի խոր, ավելին՝ գործառությանը բնույթ:

Փաստական հսկայական նյութի վրա հեղինակին հաջողվել է համադիչ կերպով ներկայացնել երկու ռազմավարական գործընկերների՝ Թուրքիայի և ԱՄՆ-ի դեռ երեկ անսասանորեն ամուրթվացող փոխհարաբերություն- ներում պարզորոշ նախանշվող, առնականաման պատճառները, բացահայտել նրանց մոտեցումների հակասությունները և նրանց կողմից Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող գործընթացների անհամարժեքության ընկալումը և գնահատումը:

Գլխավոր թեմայի բացահայտման ընթացքում Իգոր Մուրադյանն իր մանրակրկիտ վերլուծական հետազոտության մեջ ընդգրկել է մեծ թվով հարակից և շահագրգիռ պետությունների խճճած հիմնախնդիրների հսկայածավալ բազմազանությունը՝

- տնտեսությունների վատթարացող վիճակը.
- արտադրական ներուժի նվազեցումը և պաշտպանական աճը.
- տարածաշրջանի շատ երկրներում ներքաղաքական տագնապալի իրավիճակի առկայությունը.
- անբարենպաստ ժողովրդագրական վիճակը.
- տարածաշրջանի քաղաքական սուբյեկտների ազգային գաղափարական և տնտեսական բնութագրերը.
- արտաքին տնտեսական և արտաքին քաղաքական կապերը
- ռազմական համագործակցությունը և հետախուզական գործողությունները.
- տարածաշրջանային և ներգերիկ ծրագրերի տնտեսական և քաղաքական բաղադրիչները
- առանձին պետությունների և պետությունների խմբերի աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական շահերը.
- տարածաշրջանային կամ գլոբալ խնդիրների նկատմամբ դիրքորոշումների մոտեցումը կամ փոխբացառումը.
- իսլամական արմատականությունը և բազմաթիվ և բազմակրոն հասարակությունների զարգացման հեռանկարները.
- ահաբեկչական խմբերի և կազմակերպությունների գոյացման ու գործունեության նախապայմանները.
- փոխադարձ պահանջների և տարածքային պահանջատիրության թնջուկը.
- խոշորագույն տերությունների երկարաժամկետ և կարճաժամկետ ռազմավարությունը և այլն:

Գարգեթի այդ բազմազանությունն իր գրագետ, արհեստավարժ և փաստարկված արտացոլանքն է գտել ձեռագրի էջերում՝ ընթերցողին ներկայացնելով մեր ամհանգիստ տարածաշրջանը ծվատող քաղաքական նկրտումների և վեհապետական նախագծերի, բողադկված ծգտումների և բացա-

*Սույն գիրքը հրատարակվում է մեկենասությամբ՝ տեր և տիկին
Հասմիկ և Ժիրայր Պասանյանների*

ՀԱՅԿ

հայտ նախատարձակ ծրագրերի, բարձրագույն ակնկալիքների և բացահայտ պայքարի, թողոր պատժական, տնտեսական, քաղաքական և այլ հավաստությունների մեկը պատկերը:

Երևույթների խոր իմաստի մեջ ներթափանցելու կարողությունը, իրադարձությունների ճիշտ վերլուծությունը, հսկայածավալ տեղեկատվության ընդգրկման հետ համատեղ թույլ են տալիս հեղինակին ոչ միայն սթափ գնահատել ծայրաստիճան բարդ իրավիճակը, այլև և խիզախել նախագուշակելու ընդհանուր առմամբ անգուշակելի ապագան, իրադարձությունների զարգացումը նման պայթուցիկ տարածաշրջանում:

«Թուրքիայում տնտեսական ճգնաժամի գործոնները» գլխում հեղինակը նկարագրել է ինչպես երկար տարիներ բազմամիլիարդ արտասահմանյան ներարկումների և ներդրումների միջոցով սնուցվող երկրի սկզբնական կայացումը և հաջողված տնտեսական զարգացումը, այնպես էլ վերջին տարիներին վրա հասած տնտեսական ճգնաժամը, որը պարզորոշ ներկայացրեց ամբողջությամբ արտաքին օգնությունից կախված տնտեսությունների անկախության օրատեսությունը:

Նույն տեղում ներկայացված է ԼեՆդեֆտիկ ծրագրերի ոչ այնքան պայծառ հեռանկարը, որը սաստկանում է բազմաթիվ գործոնների՝ ռուսաստանյան, իտալական, հունական, քրդական, սեծովյան ներդրյալի խնդրի և այլնի ազդեցությամբ:

«Թուրքիայի տարածաշրջանային շահերը և ԱՄՆ-ի քաղաքականությունը» ներկայացնող գլուխը մանրակրկիտ բնութագրում է թուրքական դիվանագիտության քայքայված և բացահայտ մտադրությունները, սեփական շահերի առաջնադասման համար ԱՄՆ-ի հետ գործընկերային հարաբերությունների հիմուտ օգուտագործումը և հատկապես իր ռազմական ներկայությունը որոշ երկրներում հաստատելու նրա ցանկությունը:

Ուշագրավ է, որ ոչ միայն Թուրքիան, այլ գլոբալ քաղաքականության բոլոր սուբյեկտները՝ ԱՄՆ-ն, ՆԱՏՕ-ն, Եվրամիությունը, Թուրքիայի տարածաշրջանային և համաշխարհային դաշնակիցները, գործընկերները և թշնամիներն են ներկայացված իրենց տնտեսական, քաղաքական, ռազմական աշխարհառազմավարական, կայսերական և դիվանագիտական ծրագրերի, կերտումների և ձգտումների ամբողջ բազմազանությամբ:

Մեր օրերում իրադրությունը տարածաշրջանում և ընդհանուր առմամբ աշխարհում այնքան արագ է փոփոխվում, որ քաղաքական ուղղվածությունների, թշնամիների ընկերների հետ և հակառակը հանկարծակիորեն փոփոխելով՝ անպասելի պայմանավորվածությունների, դաշնությունների, հակադրվող և հաշտվողական տրամադրությունների հորձանուտում չափազանց դժվար է հասնել ժամանակի հետեւից, և ցանկացած նյութ մեկ մաքիս հետո արդեն իսկ կորցնում է արդիականությունը: Սակայն ի պատիվ Իգոր Մուրադյանի, պետք է նշել, որ նրա գիրքը կոնկրետ իրադրության այսուրպես կան դիտարկում չէ, այլ հիմնված է միտումների ուսումնասիրության վրա, քաղաքագետների, պետական գործիչների, լրբիստների համար հայաստանում, հարաբերում և Աֆիոնքում:

Մեր կարծիքով, այդ միտումների ճիշտ գնահատումը և գիտակցումը կարող են ամրացնել հայկական դիրքերը տարածաշրջանում և միջազգային քաղաքականության մեջ ինչպես պետական, այնպես էլ հասարակական մակարդակներում:

Վահան Գովհանճյան

-«Այո... Վերջերս, ճիշտն ասած, ինձ դուր չի գալիս Թուրքիայի քաղաքականությունը: Օ՛ր, դա այնպիսի խարդախ է... Դենց Թուրքիան նկատի, որ Գերմանիան ծանր վիճակում է, անմիջապես վրա կտա: -Դե ինչ է՞ս խոսում, այդպես մի ասա: -Էս ես, ես Գերմանիան: Բեղերս կկտրեմ, թե այդպես չլինի»:

Նոդար ԳՈՒԲԱԾԵ
«Ես, տատիկը, Իլիկոն և Իլարինը»
www.kvg.ru - **Банк положительных эмоций**

ՉԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Տարածաշրջանային ռազմական դաշինքների ձևավորումն այն հիմնահարցերից մեկն է, որով են զբաղվում եմ: Այդ առումով, ինձ հետաքրքրեցին Իրաքի դեմ ռազմական գործողության անցկացման նպատակով ամերիկյան քաղաքականության շրջանակներում Միջին Արևելքում դաշինքների ստեղծման խնդիրները: ԱՄՆ-ը համեմատաբար հեշտությամբ կարողացավ միաբանել տարբեր պետություններին ու նաև միջազգային հանրային կարծիքը Աֆղանստանում Թալիբանի վարչակարգը վերացնելու գործողությունների հարցում: Մահմեդական պետությունների մի մասը, նաև Միջին, ընդգրկվեցին հակահաղթելիական դաշինք կազմում: Իրանը նույնպես գործնականում աջակցեց ԱՄՆ-ին աֆղանական արշավի անցկացման ժամանակ: Փաստորեն, ամբողջ աշխարհը շահագրգռված էր Թալիբանի վերացման հարցում:

Իրաքի խնդրում ամեն ինչ այլ կերպ է երևում: ԱՄՆ-ը գործնականում միայնակ մնաց, իսկ նրա դաշնակիցների ծառայությունները սահմանափակվեցին գործողությանը բավականին աննշան մասնակցությամբ: Միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի ընդդիմախոսները տարբեր փաստարկներ են բերում, որոնք կոչված են ամերիկյան քաղաքականությունը ներկայացնել որպես չիմնավորված, ընդ որում՝ վկայակոչելով միջազգային իրավունքը, հումանիզմը և արդարությունը, մինչդեռ իրականում նրանք աշխարհագրված չեն Իրաքի դեմ գործողության հարցում: Ելնելով իրենց ազգային շահերից: Ֆրանսիան, Ռուսաստանը, Չինաստանը և մյուս մեծ տերությունները, նաև տարածաշրջանային գերտերությունները, չեն տեսնում իրենց դերակատարումը այս ռազմական գործողությանը հաջորդող աշխարհատնտեսական կարևոր նախաձեռնությունում, որոնք պետք է կենսագործվեն Միջին Արևելքում: Վերջին երեք տարիներին ամերիկյան քաղաքագետների ու փորձագետների հետ զրույցներում ես բազմիցս ասել եմ, որ Թուրքիան այնչես չի կարող լինել ԱՄՆ-ի իուսալի դաշնակիցը, քանի որ այդ երկրի հիմնախնդիրները չեն կարող լուծվել ամերիկյան ռազմավարության համատեքստում: Դա ընկալվում էր թերահավատությամբ: Այժմ, սակայն, Թուրքիան բացահայտեց իր անհամապատասխանությունը ԱՄՆ-ի խնդիրներին: Որոշակի իմաստով նույնիսկ Իսրայելի շահերը չեն համընկնում ԱՄՆ-ի ռազմավարության հետ, եթե նկատի առնենք նույնիսկ կարճաժամկետ հեռան-

կարը: Փաստորեն, բոլոր տնտեսապես զարգացած պետությունները, ինչպես նաև տարածաշրջանի երկրները զգացին, որ իրենք դուրս են մղվում առավել բարենպաստ տնտեսական ծրագրերից: ԱՄՆ-ի մյուս ավանդական գործընկերները՝ Եգիպտոսը, Ասուդյան Արաբիան և Դորդանանը, տվյալ իրավիճակում էլ ավելի անհուսալի դարձան:

ԱՄՆ-ը չկարողացավ շահագրգռել Արևմուտքի և Արևելքի քաղաքական ընտրախավերից եւ ոչ մեկին: Ոչ արքեր ու ծախերն, ոչ կաթոլիկներն ու մահմեդական երկրներն աշխարհիկները (saecularis) չընդունեցին տվյալ քաղաքականությունը Իրաքի նկատմամբ: ԱՄՆ-ին աջակցեցին միայն չափազանց խոցելի պետությունները եւ մի շարք երկրների քաղաքական խնջավորումներ: Ընդ որում, այս ամենը եղավ որեւէ հավասանբեղիկյան կուլիցիայի չզոյուրյան եւ ոչ միայն արաբական ու մահմեդական, այլեւ եվրոպական հանրության խորին պատակտան պայմաններում: «Մեծ քառյակին» Ֆրանսիային, Ռուսաստանին, Գերմանիային եւ Չինաստանին, չի կարելի համարել ոչ հավատարիմ գործընկերներ, ոչ ընդհանուր տարածաշրջանային շահեր ունեցող պետություններ: Եվրոպայի եւ Ասիայի առաջատար պետությունները ներկայացրեցին իրենց արմատական շահերը եւ այս հարցում զիջումներ չեն անի: Չի կարելի ասել, թե ԱՄՆ-ը հայտնվեց մեկուսացման մեջ, բայց նա չկարողացավ դառնալ ազատ աշխարհի առաջնորդը: Մինչդեռ, ծայրահեղ դեպքում Ֆրանսիան եւ Ռուսաստանը պատրաստ էին գոհաբերել Իրաքի շահերը եւ մարդասիրական նկատառումները, եթե որանց առաջարկվեր Իրաքում եւ առևտարակ Միջին Արևելքում ստեղծված իրադրությունից համատեղ տնտեսական ու քաղաքական շահեր քաղելու երկարաժամկետ ծրագիր:

Գարը է ծագում. կարող է ԱՄՆ-ը օգտվել ռազմական գործողության արդյունքներից Միջին Արևելքում թեկուզեւ սահմանափակ ամերիկանան տ դաշինքի բացակայության պարագայում: Այս հեռանկարից է կախված նաև ընդհանուր առմամբ նավթային, հեռահարողակցային եւ աշխարհատնտեսական նախագծերի իրագործումը: Իհարկե, կարելի է կենսագործել որեւէ նախագիծ, սակայն խոսքը աշխարհատնտեսական արդյունավետության եւ աշխարհառազմավարական անվտանգության մասին է: Ամերիկյան տնտեսության կայուն զարգացմամբ շահագրգիռ է ողջ աշխարհը, նույնիսկ մրցակցող հիմնական տնտեսական համաաշխարհային «բեռեռնրը»: Ըահագրգռված են նաև ԱՊԳ նորանկախ պետությունները, որոնք զգալի ֆինանսական օգնություն են ստանում ԱՄՆ-ից: Ամերիկյան տնտեսության բարեհաջող զարգացումից կախված է նաև համաաշխարհային կայունությունը: Իրականում մեծաթիվ պետություններ կարող էին աջակցել ԱՄՆ-ին: Այնուհանդերձ, եվրոպան, միջինարևելյան տարածաշրջանը եւ աշխարհը պատակտվեցին, որից ընդհանուր անկայունության մակարդակն աճեց: Տարածաշրջանը քառուի եզրին է, եւ ԱՄՆ-ը հիմա ստիպված է ավելի մեծ ծախսեր անել վրդովմունքի տվյալ օջախները մարելու համար: Գնարավոր է, սակայն, որ մեր դատողություններն անիմաստ լինեն, եթե նկատի առնելու լինենք այն պնդումները, թե ամերիկյան տնտեսությունը հետագայում կիս չի կարողանալու հաջողությամբ զարգանալ ազատ համաաշխարհային շուկայի պայմաններում:

Ուստի, ամերիկյան տնտեսական համակարգը պետք է մենիշխանություն հաստատի կենսագործունեության որոշ առանցքային ոլորտներում: Ի-

րավիճակը բացահայտորեն փակուղային է: Ամերիկյան քաղաքագետ Արիել Քոնենը այդ առնչությամբ ինձ ասաց. «Ամերիկայի համար փակուղի չկա, փակուղին մնացյալների կամ շատերի համար է»: Չափազանց շատ չե՞ն արդյոք փակուղիները: ԱՄՆ-ի քաղաքականությունը Միջին Արևելքում եւ հարակից տարածքներում բազմաբնույթ է եւ մի շարք հրատապ կարճաժամկետ ու միջին ժամկետ ունեցող խնդիրներ լուծելու նպատակ ունի: Ըստ եուրյան, սակայն, ավելի ու ավելի է ուրվագծվում մի առավել համաաշխարհային (զորայ) նպատակ, քան նավթն է: Այդպիսի իրադարձությունների արդյունքում, որպիսիք են ԽՍՀՄ-ի փլուզումը եւ տեղային բախումները, Իրանում իսլամական հեղափոխությունը, Աֆղանստանում Թալիբանի վարչակարգի հաստատումը, Թուրքիայի՝ առավել ինքնուրույն արտաքին քաղաքական ուղեգիծ վարելու ձգտումը, նոր մահմեդական արմատական կազմակերպությունների երեւան գալը, աստիճանաբար տարածաշրջանում ձեւավորվեց ԱՄՆ-ի համար աննպատու ժերի հավասարակշռություն, ինչը կարող է հանգեցնել ԱՄՆ-ի հանդեպ ոչ բարեկամական տարածաշրջանային աշխարհատնտեսական եւ ռազմաքաղաքական դաշինքների ստեղծմանը: Ավանդական տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռազմավարությունները հնացել են: Այսպես թե այնպես, ԱՄՆ-ը պետք է վերանայի իր գործընկերների ու դաշնակիցների «ցանկը», քանզի ավանդական ռազմավարական գործընկերներից շատերն ի վիճակի չեն այլեւ կատարել այդ գործառույթները պարզապես իրենց եւրյան հաշվառմամբ: Իսկ, այսպես կոչված, նոր գործընկերները որեւէ հիմք չունեն կատարելու ռազմավարական դաշնակիցների գործառույթները: Գնարավոր է, հատկապես դրանում է «Մեծ Միջին Արևելքի» տարածաշրջանում ռազմաքաղաքական միավորումների (alliance) ձեւավորման տրամաբանությունը:

ՎԼՈՒՄ 1.

ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎՆԱԿԱՐԳՈՒՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՐԸ

1.1. Տնտեսական զարգացման առանձնահատկությունները Թուրքիայում

Պետականության բեմախիտական բնորոշ (մոդել) ենթադրում է ետափոխի սկզբունքների արտահայտություն տնտեսության մեջ պետական հատվածի առաջատար դերն է, ընդհանուր առմամբ, տնտեսության նկատմամբ պետության ուժեղ վերահսկողություն, քանի որ այդքան գաղափարականացված բնույթ ունեցող վարչակարգը չի կարող տասնամյակներ գոյատևել չափազանց ցածր ընկերային-տնտեսական զարգացման մակարդակ ունեցող եւ տարասեռ ազգային ու կրոնական բնակչության խմբերի առկայության պայմաններում: Թուրքիայի տնտեսությունը ձեւավորվել է հետամնաց հողագործական եւ կոմպրադորական-լեւանտական տնտեսական ավանդույթների, ինչպես նաեւ թույլ ազգային քաղաքացիության (բուրժուազիա) գոյության միջավայրում: Որոշ հեղինակներ կարծում են, որ Թուրքիայում է տատկոզմը գաղափարախոսության բաղադրատարր չէր, այլ միայն անցումային փուլում ծառայում էր որպես միջոց, փուլ, որի ընթացքում ստեղծվում էր ապագա ժամանակակից տնտեսության նյութական հիմքը: Այսինքն, Թուրքիայի պետական քաղաքականության մեջ տատկոզմը դիտվում է ոչ թե իբրեւ գաղափարախոսական բաղադրիչ, այլ քաղաքական պրագմատիզմ (գործնապատկառություն): Սակայն հարկ է նկատել, որ տվյալ քաղաքականությունը կենսագործվել է 20-ական թվականների սկզբից մինչեւ 70-ական թվականները, այսինքն՝ հիմն գտանալով, եւ միայն 80-ականներին Թուրքիան ձեռնարկեց իսկապես ազատական վերափոխումներ տնտեսության մեջ:

Չինգ տասնամյակների ժամանակաշրջանը համարելի է խՍՀՄ-ում եւ այլ երկրներում համայնավարական վարչակարգերի գոյության ժամանակաշրջանը: Բայց տվյալ ժամանակահատվածում զրեթե բոլոր այդ երկրներում հաջողվեց ստեղծել ավելի զարգացած արդյունաբերական հասարակություն եւ շատ ավելի բարձր ընկերային-տնտեսական մակարդակ: 80-ականների սկզբին Թուրքիայում համայնաժամանակեւ արտադրանքի միջինը կազմում էր 1000-1200 դոլար, մինչդեռ եվրոպական համայնավարական երկրներում 4500-6500 դոլար: Ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ Թուրքիայում հասարակական բարիքների բաշխումը կատարվում էր անհասնելի, քան դա կար համայնավարական երկրներում: Մինչեւ 80-ական թվականները Թուրքիան ոչ արդյունավետ տնտեսություն, բազմաբնույթ արտահանման պաշարներ չունեցող եւ արտաքին տնտեսական օգնությունից մեծապես կախում ունեցող երկիր էր, որի մասնավոր կապիտալն ի վիճակի չէր իրազորվել խոշոր ենթակառուցվածքային նախագծեր եւ կախված էր պետական աջակցությունից, թեեւ Թուրքիան ավելի զարգացած պետություն էր, քան նրա ասիական հարեւանները եւ Ասիայի այլ երկրներ:

Ետափոխվող թույլ չտվեց Թուրքիային ստեղծել «երրորդ ուղու» որեւէ

բնորոշ եւ ազատական վերափոխումների հարցում երկարատեւ վայրկից-ունեններից հետո, 80-ականների սկզբին երկիրը լուրջ ջանքեր փորձադրեց տնտեսության վերափոխումների համար: Ազատական վերափոխումների արդյունքում թուրքական տնտեսությունը դարձավ առավել արդյունավետ, ժամանակակից եւ ճկուն, փոխվեցին կառուցվածքային առաջնահերթությունները: Ներմուծման ավանդական քաղաքականությանը փոխարինեց արտահանման կողմնորոշումը, ստեղծվեցին նոր մեքենաշինական, քիմիական, դեղագործական, մետաղագործական, արտահանման ճյուղեր: 1980-90 թթ. երկու տասնամյակների ընթացքում ՀՆԱ-ն 1200 դոլարից աճեց մինչեւ 3200 դոլարի, իսկ գնողունակությունը հասավ 5000-6000 դոլարի սահմանագծին: (Օրինակ, Իրանում տվյալ ցուցանիշը կազմում է շուրջ 1600, Սի-րիայում 1500, Եգիպտոսում 1000 դոլար): 1980-90 թթ. ընթացքում ՀՆԱ-ի ծավալը 61,6 մլրդ դոլարից աճեց մինչեւ 185,7 մլրդ դոլարի, 1995 թ. արտահանման ծավալը հասավ 23,197 մլրդ դոլարի 1980 թ. 2,261 մլրդ դոլարի դիմաց (The Economist - Pocket Europe in Figures - London - 2001): Թուրքիան որպես տարաբնույթ տնտեսություն եւ տարատեսակ արտահանում ունեցող մեծ երկիր բնութագրվում է տնտեսական զարգացման բարենպաստ եւ աննպաստ գործոններով:

Կարելի է բարենպաստ գործոն է շահավետ աշխարհագրական դիրքը արդյունաբերական ու էներգակիրային-հումքային երկրների հարեւանությամբ եւ միջտարածաշրջանային հեռահաղորդակցությունների առկայությամբ (որը կարելի էր տարանջան նշանակություն ունի): Տարողունակ ներքին շուկայի ստեղծմանը նպաստեց 66,5 մլն թվաքանակ կազմող բնակչության արագ աճը, որն ավանդաբար ուներ սպառման բարձր մակարդակ, ինչպես նաեւ առեւտրական գործունեության դարավոր փորձ ունեցող քաղաքացիներ եւ էքոնիկական խմբերի առկայությունը: Բնակչության մեծ մասի պատկանելությունը խանիֆիթական մազհարի սուննիզմի դավանանքին պայմանավորում է որոշակի գործնապատկառություն, հակում որոշակի տնտեսական եւ աշխատանքային կարգիկանոնի հանդեպ, հանդուրժողականություն արտաքին տնտեսական ենթակազմերի եւ գործընկերների նկատմամբ:

Երկար ժամանակ Թուրքիան եղել է ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի աշխարհառաջնավարական կարելի գործընկերը, ինչի շնորհիվ երկրում կատարվել են ծավալուն ռազմական եւ քաղաքացիական ներդրումներ: Կառուցվել են օդանավակայաններ, ավտոճանապարհներ, նավահանգիստներ, թերմինալներ, կապի ցանցեր եւ ամբողջը՝ արեւմտյան դաշնակիցների, նախ եւ առաջ ԱՄՆ-ի ու զերմանհայի հաշվին: Թուրքիան ունի որոշ հանրային պաշարներ, որոնցից արտահանման նշանակություն ունեն պղինձը, բրոնզը եւ վոլֆրամը: Սակայն տվյալ պաշարները երկրի տնտեսության համար առանցքային նշանակություն չունեն, այլ ունեն երկրողական կարելիություն (դրանք ավելի կարելի էր ին մինչեւ 1980-ական թվականները): Թուրքիայի համար կարելիորագույն տնտեսական ու աշխարհառաջնավարական նշանակություն ունեն ջրային պաշարները Եփրատ, Տիգրիս, Արաքս, Եորդոս, Սեյխան եւ այլ գետերը (բոլորը սկզբնավորվում են Հայկական լեռնաշխարհում): Այդ ջրային պաշարների առկայությունը Թուրքիային գերակայելի դիրքեր է ապահովում Միջին Արեւելքում: Ընդհանուր առմամբ, սակայն, Թուրքիան զուրկ է ջրային պաշարներից, հատկապես արդատ է վառելիքային համաժողովրդի տեսակետից: Կան քարածխի ու Նավթի ոչ մեծ հանքավայրեր: Վառելիքի պաշարների ներմուծ-

ծուրը թուրքիայի ռազմավարության և տնտեսության զգալիորեն խոցելի կետն է: Փաստորեն, Թուրքիային և զագ. ե. և ցավք մատակարարող բոլոր երկրները չեն կարող համարվել բարեկամական կամ գործընկերային պետություններ (Իրան, Իրաք, Ռուսաստան): Այդ իսկ պատճառով չափազանց կարեւոր է Կասպիական ավազանի նավթահանքերը վերահսկող իր գործընկերների հետ Թուրքիայի աշխատանքային մասնակցությունը: Թուրքիան այդպես էլ չստեղծեց տեղական հանքային հունքի արտահանման հզոր արտադրամուլ, բացառությամբ երկրի համար առանցքային նշանակություն չունեցող Իսկանդերուհի (Ալեքսանդրեթ) մետաղագործական հզորությունները:

Չնայած արդյունաբերության բուռն զարգացմանը, թուրքական արտահանման մեջ գերակայում են ավանդական արտադրամուլերը: Արտահանվող ապրանքների մինչև 32 տոկոսը կազմում են տեքստիլային և մանածագործական արտադրանքները (գործվածեղեն, հագուստ, կտորեղեն, կաշի, կոշիկ): Սննդի և ծխախոտի արտադրանքը կազմում է 14,5 տոկոս, իսկ սե. ու գունավոր մետաղները և հանքատեսակների արտահանումը 13,9 տոկոս է: Երկար ժամանակ մանածագործական և սննդի արտադրանքները, ինչպես և ծխախոտի հունքը կայուն տեղ ունենին արեւմտյան և միջինարեւելյան երկրների շուկաներում: Սակայն 90-ականների երկրորդ կեսին Թուրքիան հայտնվեց իր համար փաստացիորեն աղետալի արտաքին տնտեսական իրավիճակում, երբ իր ավանդական արտահանման որոշ ապրանքներ դուրս մղվեցին շուկայից: Խորհրդային ժամաքի տրոհումից հետո Թուրքիան հետխորհրդային տարածքում և Արեւելյան Եվրոպայի երկրներում ստացավ մեծածավալ և շատ չափվետ մերձավոր շուկաներ: 1995 թ. այդ երկրներ ներմուծվող ապրանքների 48 տոկոսը թուրքական արտադրանքն էր (15,6 մլրդ դոլար), իսկ Եվրոպական տնտեսական միություն արտահանվեց 42 տոկոս (13 մլրդ դոլար) թուրքական ապրանք: Նման վիճակը շատ շահավետ էր, քանի որ հնարավորություն էր տալիս, կախված քաղաքական-տնտեսական պայմաններից, մանեւրել ֆինանսական և ապրանքային պաշարների արտահանմամբ զոնե ժամանակավորապես խուսափելով մրցակցությունից:

Եվրոպական և բալկանյան շուկաների նվաճումը հսկայական դեր ունեցավ թուրքական տնտեսության առաջանցիկ զարգացման մեջ: Այդ շուկաները թուրքական տնտեսությանը, հատկապես արդյունաբերությանը, հնարավորություն ընձեռեցին 90-ական թվականներին ապահովել աճի մեծ տեմպեր (4,5%) ֆինանսական անկայունության և սղածի (ինֆլյացիա) բարձր մակարդակի պայմաններում: Սակայն 90-ականների երկրորդ կեսին եվրասիական շուկայում հայտնվեցին հսկայաքանակ էժան չինական ու իրանական ապրանքներ, որոնք սահմանափակեցին մանածագործական և սննդի շուկաներում Թուրքիայի չափարաժիցը: 1998 թ. Ռուսաստանում տնտեսական ճգնաժամը 34,4 տոկոսով նվազեցրեց թուրքական արտահանման ծավալը, իսկ 1999 թ.՝ եւս 70,6 տոկոսով, ինչը ընդհանուր առմամբ անդրադարձավ արտահանման նվազման վրա 13 տոկոսով (6,4 մլրդ դոլար), իսկ ներմուծման վրա՝ 34 տոկոսով (7,9 մլրդ դոլար): Զգալիորեն նվազեց «մաքրային» առևտրի ծավալը, որը կազմում էր 10-12 մլրդ դոլար (Ռուսաստանի մասը կազմում էր 5-6 մլրդ դոլար): Ռուսաստանյան ճգնաժամը, որն անորոշարժավ առանց բացառության բոլոր նորանկախ պետությունների տնտեսությունների վրա, հանգեցրեց Թուրքիայի շինարարական ոլոր-

տի ճգնաժամային իրավիճակին (մինչև 6 տոկոս 7ևԱ), քանի որ 90-ականների սկզբին վերջինս ԱՊԳ տարածքում կատարում էր 10 մլրդ դոլար ծավալի աշխատանքներ: Տարբեր գնահատումներով, Թուրքիան մեծ վնասներ կրեց նաեւ Իրաքում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմարշավի արդյունքում զրուսաշրջիկների թվի կրճատման պատճառով (մոտ 12 մլրդ դոլար):

Եվրամիությունում Թուրքիայի արտահանումը կազմում է 40-42 տոկոս, ներմուծումը՝ 35-41 տոկոս և արտաքին ներդրումները՝ մոտ 70 տոկոս: Եվրոպական հանրության հետ Թուրքիայի առնարկունը երկարատեւ գործընթաց է: 1963 թ. Թուրքիան դարձավ ԵՄ-ի հասնացված անդամ, իսկ 1973 թ. կազմվեց Լրացուցիչ արձանագրություն, որն ուժի մեջ մտավ նույն թվականին: 1995 թ. ստորագրվեց Մացաային միության մասին համաձայնագիրը և ուժի մեջ մտավ 1996 թ.: Համաձայնագիրը նախատեսում է երրորդ երկրների հետ առևտրի Միասնական մաքսային սակագուցակ (ինչը վերջինս նվազեցրեց 5,7 տոկոսով), արտադրական չափորոշիչների համակարգի ներդրում, արտադրողներին ու արտահանողներին պետական աջակցության բացառում (ինչը նպաստում էր մրցակցության անհամախաճանք), բացառությամբ Արեւելյան շրջաններում ներդրողներին օգնության ցուցաբերմանը: Համաձայնագիրը ենթադրում էր նաեւ Թուրքիային անհատույն օգնություն 3,2 մլրդ դոլարի չափով: Սակայն նշյալ համաձայնագիրը հանգեցրեց արտաքին առևտրի հաշվեկշիռի պակասորդի (22 մլրդ դոլար), որն անորոշարժավ վճարման հաշվեկշիռի վիճակի վրա: Մանածագործական առաջատար արտադրամուլերը ոչ միայն չստացավ նոր շուկաներ եվրոպական, այլև կորցրեց նախորդները: Բացի այդ, Թուրքիան որդողվեց եվրոպական և երրորդ երկրների ապրանքներով, ինչի համար ստեղծվել էին բարենպաստ պայմաններ: Գործնականում Թուրքիայի տնտեսությունը պատրաստ չէր եվրոպական շուկայում «իրավահավասար» գործընկերոջ դերին:

Թուրքիայի արտաքին առևտրական հարաբերություններում ներմուծումը միշտ գերակայել է արտահանման նկատմամբ: 1998 թ. արտահանումը կազմել է 27 մլրդ, իսկ ներմուծումը՝ 46 մլրդ դոլար: 1990-ական թվականների սկզբից մինչև 1998 թ. արտաքին առևտրի հաշվեկշիռի պակասորդը աճել է 5-7 մլրդ դոլարից մինչև 19 մլրդ դոլար: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը հիմնականում ձեւավորվում է ենթոգալկերի, մասամբ հունքի և կիսաարտաստի արտադրանքների ներմուծման հաշվին, ուստի Թուրքիայի աշխարհատնտեսական ռազմավարական խնդիրն է հարաբերականորեն էժան ենթոգալկերի ստացման հիմնախնդրի լուծումը:

Տնտեսության վերափոխման քսանամյա շրջանից հետո ստեղծելով արդյունաբերության նոր առաջատար արտադրամուլեր, ներդնելով արդի առաջավոր տեխնոլոգիաներ, սերտորեն համագործակցելով եվրոպական և ամերիկյան ընկերությունների հետ, վարելով թուրքական տնտեսական շահերի պաշտպանությանն ուղղված ակտիվ արտաքին քաղաքականություն, Թուրքիան, այնուհանդերձ, անկարող եղավ կայուն տեղ գրավել ինչպես ավանդական եվրոպական շուկաներում, այնպես էլ իր համար նոր եվրասիական շուկաներում:

Եվրոպական և եվրասիական երկրներում տնտեսությունների անհասարակ իրավիճակը պայմանավորեց Թուրքիայում արտադրության անկումը և անկայունությունը: Արդյունքում 1999 թ. 7ևԱ-ն նվազեց 2 տոկոսով, բյուջեի պակասորդն աճեց մինչև 12,1 տոկոսի: 1996-98 թթ. ժամանակա-

հատվածում սղաճի տարեկան միջին մակարդակը հասավ 83 տոկոսի։

Թուրքիան ջանքեր է գործադրում մասամբ քաղաքական քվանդա-կոթյուն ունեցող տարածաշրջանային տնտեսական համագործակցություններ ձեռնարկելու ուղղությամբ։ 1985 թ. ստեղծվեց Տնտեսական համագործակցության կազմակերպություն (ՏՀԿ) Թուրքիայի, Իրանի և Պակիստանի մասնակցությամբ, որի կազմում հետագայում ընդգրկվեցին Ադրբեջանը, Աֆղանստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը (ՄՏՀԿ) 11 երկրների Ռուսաստանի, Բուլղարիայի, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ռուսիայի, Մոլդովայի, Ուկրաինայի և Հունաստանի անդամակցությամբ։ Որպես դիտորդներ մասնակցում են Իսրայելը, Եգիպտոսը, Լեհաստանը, Թունիսը, Իտալիան և Նիդակիան։ Հավակնելով այդ կազմակերպության առաջնորդի դերակատարմանը, Թուրքիան հաջողությամբ զարգացնում է տնտեսական և քաղաքական հարաբերությունները անդամ յուրաքանչյուր պետության հետ, սակայն կազմակերպությունն ինքը հարկավոր զարգացումը չունեցավ։ Կազմակերպության անդամները շատ ջանքեր թափեցին ՏՀԿ-ն հաստատուն դարձնելու և նրան իրական գործունեության մղելու համար, սակայն անդամ երկրների միջև ի հայտ եկան բավականաչափ տնտեսական և քաղաքական հակասություններ, տարբերություններ նպատակների և գերակայությունների միջև։

Նույն երևույթը կրկնվեց ԿՈՒՆԱՄ կազմակերպությունում, որին Թուրքիան նկատում էր իրեն գործընկեր։ Ինչ վերաբերում է ՏՀԿ-ին, ապա վերջինիս հաջող զարգացմանը խոչընդոտում է նրա իսլամական բնույթը նվազեցնելով հնարավորությունները։ Ղա հասկանում է նաեւ թուրքական ընտրախաղը։ Ն. Էրթաքանը փորձեց իրագործել եվրոպական «Սեծ յորնյակի» այլընտրանք հանդիսացող «Դ-8» իսլամական «ուճրյակի» երկարակամեւն ծրագիրը Թուրքիայի, Իրանի, Պակիստանի, Եգիպտոսի, Մալայզիայի, Ինդոնեզիայի և Նիգերիայի հետ։ Այս երկրների արտգործնախարարների հանդիպումը կայացավ 1997 թ. հունվարին, Ստամբուլում։ Թուրքիայի օրվա ԱԳՆ ղեկավար Թանսու Չիլերը այդ առիթով այսպես ասաց. «Եվրոպայի պնդմամբ Եվրամիությունը բրիտանոնական ակունք չէ։ Մենք եւս հայտարարում ենք, որ «Դ-8»-ը մահմեդական ակունք չէ»։

Թուրքիայի տնտեսության գործաճնության համար կարեւոր դեր է խաղում արտաքին տնտեսական օգնությունը։ Երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիան, որպես ԱՄՆ-ի ռազմավարական գործընկեր և ԱՍՏՊ-ի անդամ, տասնամյակների ընթացքում բարենպաստ պայմաններ է ունեցել արտաքին օգնություն և վարկեր ստանալու համար։ 1950-ականներին Թուրքիան տարեկան միջին հաշվով ստանում էր 178 մլն դոլար արտաքին վարկեր ու օգնություն, 60-ականներին 300 մլն, 70-ականների առաջին կեսին մոտ 600 մլն, 1976-1985 թթ.՝ 2,5 մլրդ, 1984-87 թթ.՝ 4,9 մլրդ, 80-ականների երկրորդ կեսին՝ շուրջ 4,0 մլրդ դոլար։ Վերջին տասնամյակների ընթացքում կայի, մետաղագործական, լեռնային արդյունաբերության և հեռահաղորդակցության և ոռոգման առաջատար ոլորտներում արտաքին ֆինանսավորման չափաբաժինը կազմել է 40-60 տոկոս։ Միաժամանակ, վերջին չորս տասնամյակներում, արտաքին հատկացումների ընդհանուր գումարից հետևողականորեն նվազում էր անհատույց օգնության և արտոնյալ վարկերի չափաբաժինը։ Թուրքիային, 1970 թ. տրված արտաքին վարկերի մասով մի-

ջին տոկոսադրույքը կազմում էր 3,6 տոկոս, իսկ 1984 թ.՝ 9,6 տոկոս։ Նաեւ միջին ժամկետը 19 արտուրց նվազեց մինչև 12 տարի, իսկ արտոնյալ ժամանակահատվածը՝ 5 -ից մինչև 4 տարի։ Առավել արտոնյալ են արդյունաբերական զարգացած երկրների երկարաժամկետ և միջմասնակետ (15-30 տարի) վարկերը, որոնք մարումը սկսվում է տասներորդ տարում, իսկ տոկոսադրույքը հաշվում է միջին տարեկան 1,5-3,5 տոկոսի չափով։ Արտաքին ֆինանսավորումը հնարավորություն տվեց ոչ միայն կայունացնել Թուրքիայի ֆինանսական ոլորտը, այլև ստեղծել արդյունաբերության առաջատար ճյուղեր, վերափոխել տնտեսության ու արդյունաբերության կառուցվածքը, նոր արտահանման բնագավառները։ Սակայն այդչափ ծավալուն արտաքին ֆինանսական ներդրման արդյունքում Թուրքիայի արտաքին պարտքը կազմում էր, 1962 թ.՝ 1,6 մլրդ, 1972 թ.՝ 5,0 մլրդ, 1982 թ.՝ 16,2 մլրդ, 1992 մլրդ, 1992 թ.՝ 55,6 մլրդ, 1998 թ.՝ 90 մլրդ դոլար։ 1980-ականների երկրորդ կեսից Թուրքիան արտաքին պարտքերը վճարելու համար հատկացնում է համախառն ազգային արտադրանքի շուրջ 9 տոկոսը եւ արտահանումից ստացվող արտադրանքային գումարների ու մասնավոր արտաքին փոխանցումների (տրանսֆերտ) 53 տոկոսը։

1994 թ. Թուրքիան լայնածավալ ազատական վերափոխումներից հետո առաջին անգամ տնտեսական ճգնաժամ է 6 տոկոս կազմող արտադրության անկում ունեցավ։ Վերջինս տեղի ունեցավ նախ արդյունաբերության առաջատար մասնագործական, ավտոմեքենաշինական, շինարարության ոլորտներում։ Միջազգային արժույթային հիմնադրանքի (ՄԻԴ) կողմից տրամադրված ավելի քան 700 մլն դոլարի վարկը միայն մեղմեց ճգնաժամային գործընթացը, քայքայ չշտկեց իրավիճակը։ 1995 թ. Թուրքիայում սկսվեց քաղաքական ճգնաժամ, որն անդրադարձավ այս երկրի մասին վարկատուների հոռետեսական կարծիքի ամրապնդման վրա։ Աշխարհ ՄԱԶ-ը քննարկեց վիճակը Թուրքիայում, (երբ իշխանության գլուխ էր Ն. Էրթաքանը), և թուրքական տնտեսության կայունացման համար վարկ հատկացնելու մասին որոշում չընդունեց։ Այս հարցի քննարկումը շարունակվեց երկու տարի, եւ միայն 1999 թ. դեկտեմբերի 22-ին ԱՄՆ-ը որոշեց Թուրքիային հատկացնել 4,0 մլրդ դոլար վարկ (stand-by) մինչև 2002 թ. վերափոխումներ անցկացնելու նպատակով։ Այս որոշումից հետո թուրքական տնտեսությունում աշխուժացում է ճգնաժամը հարթախարելու նշաններ երեսացին։

Արեւմտյան հանրության համար Թուրքիայի աշխարհառազմավարական նշանակության նվազեցումը (ավելի չափով եվրոպացիների, պակաս ԱՄՆ-ի համար), երթարդաքական և ընկերային անկայունության մեծացումը, իսլամական արմատականության և առիստարակ քաղաքական իսլամի ալիքը, հարեւան երկրների հետ չկարգավորված հարաբերությունները և թուրքական ընտրախաղերի կողմից նոր ու անհամարժեք արտաքին քաղաքական հավակնությունների դրսեւորումը հանգեցրեցին արտաքին վարկատուների առավել զուսպ վարքին Թուրքիային ֆինանսավորելու հարցում։ Մինևույն ժամանակ, սակայն, այդ երկրում անկայունության մեծացման վրանգը, թուրքական ճգնաժամի աղբյուրները որոշ զարգացող երկրների և անցումային տնտեսություն ունեցող պետությունների տնտեսությունների վրա պայմանավորեցին ԱՄԻ-ի և որոշ երկրների կառավարությունների կողմից վարկերի տրամադրումը։ Ծավալուն արտաքին վարկատվությունը կարեւորագույն գործոն է Թուրքիայում ֆինանսական և տնտեսական կա-

յունության պահպանման համար:

Մեծաթիվ թուրք հեղինակներ փորձում են հաստատել, որ քննալիստական հայեցակարգը ենթադրում է տնտեսության զարգացման «երրորդ ուղու» սկզբունքներ: Հարկ է նկատել, որ ինչպես ծայրահեղ աջերը, այնպես էլ իսլամական կուսակցությունները Թուրքիայում հարում են «երրորդ ուղու» գաղափարներին, թեև ոչ Ազգայնական գործողության կուսակցությունը («Գործ գայեթ»), ոչ Ջարգացման ու արդարության կուսակցությունը բացի որոշ մակերեսային քայլերից, այդպես էլ այդ գաղափարի վերաբերյալ առավել որոշակի ծրագրային հայտարարություններ չարեցին: Առայժմ «երրորդ ուղու» գաղափարը ինչ-որ կերպ քննարկվում է միայն այս երկու կուսակցությունների հարող շրջանակներում: Սակայն թուրքական հանրապետության գոյության ողջ պատմության ընթացքում «երրորդ ուղու» գաղափարը չի ունեցել ոչ արդիական եւ ոչ գործնական քաղաքական նշանակություն: Մի քանի տասնամյակների ընթացքում Թուրքիայում ձեւավորվել է բազմակացուքածու տնտեսություն, բայց ոչ «երրորդ ուղու» տնտեսություն: Երնիկական առումով բազմաբնույթ, տարբեր քաղաքակրթություններ ներառող երկրում, որտեղ ցածր է ազգային ու հասարակական միաբանության մակարդակը, հազիվ թե հնարավոր է խոսել բավականաչափ հեղափոխական քաղաքական եւ ընկերային ուղղվածությամբ «երրորդ ուղու» հայեցակարգի սկզբունքները կիրառելու հնարավորության մասին:

(Ստեֆան Լարրեթի «Թուրքիայի ազգային քաղաքականությունը անվատառության ժամանակաշրջանում»,

<http://www.rand.org/publications/MR/MR1612>)

(Թուրքական հանրապետությունը, Մոսկվա, 1990)

(The Economist-Pocket Europe in Figures-London, 2001)

(Թուրքիան Ասիայի եւ Եվրոպայի միջև, Մոսկվա, 2001, էջ 87-98)

(The Economist-Pocket Europe in Figures-London, 2001)

(Ե. Ի. Ուրագովա, Թուրքիայի քաղաքական եւ ընկերային-տնտեսական զարգացման որոշ առանձնահատկությունները ու հեռանկարները, Մահնեդական երկրները ԱՊԳ սահմանի վրա, «Կրաֆտ հրատարակչություն», Մոսկվա, 2002 (և Յու. Ռյչենկո, Սովերային տնտեսությունը Թուրքիայում, ծավալները եւ զարգացման գործոնները, Մահնեդական երկրները ԱՊԳ սահմանների վրա, «Կրաֆտ հրատարակչություն», Մոսկվա, 2002)

1.2. Տնտեսական ճգնաժամ

2000 թ. տեղեկվեց հետեւյալ իրավիճակը. Թուրքիայում համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) ծավալը կրճատվեց 4,1 տոկոսով, արտահանումը 0,8 տոկոսով, ներմուծումն ավելացավ 35,4 տոկոսով, ներքին պարտքը հասավ 48 մլրդ դոլարի, իսկ արտաքին պարտքը գերազանցեց 117 մլրդ դոլարի սահմանը, ինչը կազմում է երկրի ՀԱԱ-ի ավելի քան 80 տոկոսը: Պաշտոնական տվյալներով գործազուրկների թիվը կազմում է 7,3 տոկոս, իսկ արհմիությունների հաշվարկով՝ 15-20 տոկոս: Թուրքիայի քաղաքացիներից 30 մլն մարդ արքայազանության սահմանագծից անդին է, որի չափանիշը 2000 թ. վերջին գնահատվում էր 281 դոլար: Համարվում է, որ Թուրքիայում բաշխատում է 22 մլն մարդ, որոնցից 23 տոկոսը՝ անօրինական: Չորս անձից քաղկացած ընտանիքի նվազագույն կենսամակարդակի ապահովումը ամսական 946 դոլար է (պարենային զանրուղը՝ 388 դոլար), երբ նվազագույն աշխատավարձը 153, իսկ նվազագույն կենսաթոշակը 183 դոլար է: Միաժամանակ, կառավարություն կողմից ՄԱՀ-ի կայունացման միջոցառումների կատարումը, ըստ որոնց նախատեսվում է հարկային քաղաքականության խստացում, ընկերային ծրագրերի ֆինանսավորման նվազեցում, պետական ձեռնարկություններին եւ կազմակերպություններին տրամադրվող հատկացումների սահմանափակում է կիսնազեցի բնակչության լայն զանգվածների դժգոհությանը:

Տնտեսական ճգնաժամի խրաքցման պայմաններում Թուրքիայի տնտեսության նախարար նշանակվեց Քեմալ Դերվիշը, որը ազատական վերափոխումների կողմնակից է, տեխնոկրատ, ամուսնացած է ԱՄՆ-ի քաղաքական շրջանակների հետ սերտորոն անցվող աներկուրու հետ: Լավ կապեր ունի արեւմտյան հանրության ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Կրթվել է Լոնդոնի Տնտեսական դպրոցում եւ Փրինսթոնի համալսարանում, ունի աշխատանքի մեծ փորձ ֆինանսների ոլորտում: Հատկապես Քեմալ Դերվիշի անձի հաշվառմամբ եւ նրա տնտեսական վերափոխումները նկատի առնելով ՄԱՀ-ը 2002 թ. ամռանը Թուրքիային հատկացրեց 8 մլրդ դոլար լրացուցիչ օգնություն: Ք. Դերվիշի ազատական վերափոխումները իրենց բովանդակությամբ եւ ուղղվածությամբ հիշեցնում են Արեւելյան Եվրոպայի երկրներում խորհրդային համակարգի փլուզումից հետո անցկացված համանման վերափոխումները, սակայն Թուրքիայում դրանք առարկայորեն ուղղված են ոչ թե որոշակի քաղաքական գաղափարախոսության, այլ ընդդեմ բյուրոկրատիայի եւ վերջինիս շահերի արտահայտիչների: Սակայն տվյալ վերափոխումների դեմ հանդես եկան ոչ միայն պետական կառույցները ի դեմս ֆինանսների, փոխադրամիջոցների, գյուղատնտեսության եւ սեփականացնողի մասնաճյուղի, այլ նաև ամսավոր գործարարները: Թուրք հեղինակ Ալլ Երգինսոյը նշում է, որ հասարակության լայն խավերի կարծիքով ազատական վերափոխումները սպառնում են ընկերային միաբանությանը եւ կայունությանը երկրում:

Ընկերային առումով հատկապես խոցելի է գյուղական բնակչությունը: Օրինակ, միախոտագործությունը, որից կախված է 4 մլն մարդու գոյությունը, պլանդարար վարկավորվում է պետության կողմից: Վերջերս ՄԱՀ-ը կոլլապս արեց Թուրքիային պետական ձեռնարկություններում եւ պետաշխատատեղում կրճատել շուրջ 100 հազար աշխատանքային տեղեր, ինչը հավանաբար կառավարության կողմից հավանության չի արժանանա: Բացի այդ, ՄԱՀ-ը պնդում է իրագործել ազգային տարադրամի ամրապնդելուն նպատակով:

կառավարված տիպոգրիանակային միջոցառումներ: Սակայն հատկապես ազգային տարադրամի ամրապնդումը և դրամատեների հետ հիմնականորեն դաժարորոշեցին 2001 թ. ճգնաժամին: Նվազ շահութաբեր դրամատեների և ձեռնարկությունների սեփականաշնորհումը, նպաստների հատկացումների վերացումը (նախ գյուղատնտեսական ոլորտում), գների ազատականացումը պատճառ դարձավ թուրքական հասարակության կողմից բողոքների ազդեցիկ, սակայն ոչ քե ծախ քերում ունեցող, այլ աջ եւ ազգայնական քաղաքական կուսակաղությունների առաջնորդությամբ: Այնուամենայնիվ, ազատական նախարարի գործողությունները մնացին անավարտ: Գուլիսի 11-ին մեծ հեղինակություն վայելող արտգործնակարար Իսմայիլ Չեմը եւ տնտեսության նախարար Քեմալ Դերվիսը հրաժարական տվեցին: Չորս օրվա ընթացքում քաղաքական պայքարը վերաճեց ճգնաժամի: (Լիլ եղգիսոյ, Posted July 18, 2001; Posted July 3, 2001 Eurasianet http://www.Eurasianet.org):


Թուրքական տնտեսության առանձնահատկությունը մինչեւ 70-80 տոկոս կազմող բարձր տղամի եւ ավելի քան 50 տոկոսանոց տոկոսադրույքի մակարդակի պայմաններում վերջին տասը տարիներին ունեցավ տարեկան ավելի քան 4 տոկոս կազմող զարգացման տեմպեր: Այդչափ անկատար ֆինանսադրամատնային համակարգի եւ վտանգավոր միտումների պարագայում անգամ միջազգային ֆինանսական կազմակերպությունները եւ արդյունաբերական զարգացած պետությունների կառավարությունները շարունակապես թուրքիային տրամադրել նշանակալից վարկեր: Դա բացատրվում է ոչ միայն տնտեսության իրական մասի զարգացման մասին դրական սպասելիքներով, այլեւ արեւմտյան հանրության համար թուրքիայի աշխարհառազմավարական դերակատարությամբ: Եվրոպան եւ ԱՄՆ-ը գործնականում միշտ շահագրգիռ են թուրքիայի կայունությանը: Սակայն տնտեսության աղուժ, ներքին շուկայի ծավալ, պետության աջակցություն (էժան աշխատուժ, ներքին շուկայի մակալ, պետության աջակցություն, արտաքին շուկաների մատչելիություն հատկապես Եվրասիայում) համատեղվում էր տնտեսության պետական ոլորտում ֆինանսավորման անչափ ծանր խնդիրների եւ վարչաբյուրոկրատական աշխատակազմի պահպանման հետ: Ապաստելի արդյունքներ չունեցավ նաեւ սեփականաշնորհման ծրագիրը (5 մլրդ դոլար սպասված 7,5 մլրդ դոլարի փոխառում), եւ դա նույնպես բյուրոկրատիայի շահերի պաշտպանության պատճառով: Չնայած տարադրամային աճին, ֆինանսա-դրամատնային ոլորտն իր ծավալով ու շարժումակությամբ չի համապատասխանում տնտեսության զարգացման հսկայական ծրագրերի պահանջներին, նախ եւ առաջ թանկարժեք ենթակառուցվածքների եւ արտահանմանը կողմնորոշված արտադրանյութերի պահանջներին: Տնտեսագետների գնահատմամբ, կառավարության պարտքի համեմատաբար ցածր մակարդակի պարագայում տեղի չունեցավ ոչ միայն արտաքին, այլեւ ներքին պարտքերի մարում: Թուրքիայի խոշորագույն ընկերությունները երկար ժամանակ իրենց շրջանառու միջոցները ձեւավորում էին պետական վարկերից, եւ տնտեսությունը հարմարվել էր նման բարենպաստ պայմաններին: Արեւմուտքում վարկերի զգալի էժանացման հետ թուրքիայում ստեղծվեց վարկային պաշարների խիստ անբավարար փոխակ: Վարկերն ամենաէջի դարձան մանր եւ նույնիսկ միջին գործարարական համար: Խոշոր ընկերությունները փորձում են ստեղծել իրենց վարկային հիմնարկությունները: Եգ-

3340

նաժամի կարեւոր գործոններից մեկը եղավ թուրքական տարադրամի արժեքի արհեստական բարձրացումը, ինչը նպաստում է ներմուծմանը եւ որի արդյունքը եղավ վճարման հաշվեկշիռի հսկայական պակասորոգը: Գալիք ճգնաժամի կանխանշանների ի հայտ գալուց անեւ, երկրից դուրս բերվեցին կարեւորաժամկետ արտաքին ներդրումները: ԱՄՆ-ի պահանջով տնտեսական քաղաքականություն պիտի խոստովանեց, իրայի համար «լողացող» արժեքի աստիճանումը, ինչը վերջինս իջեցրեց 50 տոկոսով եւ տեղի ունեցավ 30 տոկոս կազմող դեֆլյացիա, հանգեցրեց ֆինանսատնտեսական համաճանախուժությունների որոշ բարելավման, սակայն չփոխեց ընդհանուր իրավիճակը: ԱՄՆ-ը չափազանց երկարատեւ քննարկեց կայունացման համար հերթական վարկի տրամադրման մասին հարցը: Այդ պայմաններում պարզվեց, որ թուրքիան, ըստ էության, ապրում է պարտքով եւ չի կարող հաջողությամբ զարգանալ առանց արտաքին օգնության: Դա համաշխարհային «քաղաքական ու տնտեսական իշխանության կենտրոնների» գլխավոր կաճանում էր, որը փորձ էր թուրքիային դնել ուժեղ կախվածություն մեջ եւ կանխել վերջինիս առավել անկախության ձեռքբերումը, ինչին իր գոյության բոլոր տարիներին ձգտում էր թուրքական Զանրապետությունը:

1.3. Թուրքիան որպես աշխարհատնտեսական գործընկեր Թուրքիայում եւ Գարավային Կովկասում հակամտերկային ահաբեկչական գործողությունների սպառնալիքի մասին: 2002 թ. դեկտեմբերի կեսին թուրքիայում, Վրաստանում եւ Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպանատները պետքարտուղարությունից եւ Կենտրոնական հետախուզական վարչությունից (ԿԿԿ) հրահանգ ստացան իսլամական խմբերի ու կազմակերպությունների կողմից հնարավոր ահաբեկչական եւ սադրիչ գործողությունների առնչությամբ միջոցառումներ անցկացնել այդ երկրներում ԱՄՆ-ի դեսպանատները, դիվանագիտական եւ այլ ներկայացուցչությունների անվտանգությունն ապահովելու նպատակով: Գլխավոր թիրախները համարվում էին թուրքիայում ամերիկյան ռազմական օբյեկտները եւ դիվանագիտական ներկայացուցչությունները: Բացի «Չըգրուլլաիից», Անատոլիայում կան այլ, ոչ պակաս արժանազան իսլամական եւ հեղափոխական կազմակերպություններ: Ահաբեկիչների եւ սադրիչների թիրախների թվում են նալթաանուլ-ները եւ նալթային ենթակառուցվածքային հաստատությունները Գարավային Կովկասում, ինչպես նաեւ ամերիկյան եւ հեղափոխական նալթային ընկերությունների ներկայացուցիչներն ու աշխատակիցները: Այս սպառնալիքներն առիթով Թրիլիխում ստեղծվեց ԿԿԿ գրասենյակ մի քանի սպաներից բաղկացած: Սպաների այս խումբը պետք է տեղեկատվություն հավաքել եւ անվտանգություն հարցերով միջոցառումներ մշակել: Գարավային Կովկասում եւ թուրքիայում ԱՄՆ դեսպանատները շվուժներ ունեն այդ երկրների ազգային անվտանգության ծառայությունների հետ: Ամերիկացիների կարծիքով, Գայաստանում նման ահաբեկչությունների իրագործումը նվազ հավանական է, քանի որ ամենակայուն երկիրն է Գարավային Կովկասում: Թրիլիխի ԿԿԿ գրասենյակի զեկուցագրերից մեկում նշվում է, որ Վրաստանն ու Ադրբեջանն ի վիճակի չեն ապահովել ենթակառուցվածքի հարողակցությունների անվտանգությունը:

Նշյալ ահաբեկչությունները սպասվում են չեչնական ազգային շարժ-



ման մաս կազմող չորս տարբեր խմբավորումների կողմից: Այս խմբերում կան մասնագետներ Գորդանաճի, Ստուդյան-Մարտիայից ու Եգիպտոսից, որոնք կապված են «Ալ Ղաիդա»-ի և «Ալ Քրամեհին» բարեգործական հիմնադրամի հետ: Միաբեկիչներից ու սադիչներից ոմանց մասին կա տեղեկատվություն, հայտնի են նաև Գարավային Կովկաս փոխադրվելու նրանց երրորդիները:

Չայտնի է, որ «Ադրբեջանի օպերացիոն ընկերության» ղեկավարությունը, նաև «Բրիթիշ Փեթրոլիումը», ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարները Ադրբեջանի և Վրաստանի կառավարություններից պահանջել են Կասպից ծովում նավթի արդյունահանման, Բաքու-Սուպսա նավթամուկի և Սանգաչայի նավթային թերմինալի անվտանգության ապահովման համար լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել: Նույն սպառնալիքների առնչությամբ ԿԿԿ ղեկավարությունը դիմել է ՌԴ Սնվտանգության դաշնային ծառայությանը (ՄԴԶ) ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեմ Գարավային Կովկասում հնարավոր ահաբեկչությունների մասին տեղեկատվության առկայության դեպքում այն իրենց տրամադրելու խնդրանքով: ԱՄՆ-ը ցանկանում է նաև միայն Բաքու-Ջեյհան նավթամուկի պաշտպանության համար օգտագործել իր հատուկ նշանակության զորամասերը:

Դեռևս հնարավոր սպառնալիքների հետազոտման ժամանակ ամերիկացիները համառորեն փորձում էին կապեր գտնել Իրանի և ահաբեկչական խմբերի միջև: Նրանք ջանքեր գործադրեցին Իրանի և Ադրբեջանում իրանաձեռն կազմակերպությունների մեղսակցությունը ահաբեկչական մտադրությունների գործի վերաբերյալ սպառնալիքներ հիմքեր ստեղծելու համար: Սակայն վերջերս ԿԿԿ մասնագետները եզրակացություններ կայացրին նյայ սպառնալիքների հարցում Իրանի անմեղսակցության մասին: Այնուհանդերձ, Վրաստանում ԱՄՆ ժամանակավոր հավատարմարար Ռիչարդ Մայզլը մասնավոր զրույցներում ասում է, որ ինքը չի հավատարմ Իրանի և ահաբեկչական խմբերի միջև կապերի բացակայությանը: Նա համոզված է, որ վաղ քե ուշ նման սպառնալիքներ ի հայտ կգան: Նրան համակարծիք է Վրաստանում ԱՄՆ նախկին ղեկավար, այժմ պետքարտուղարության պատասխանատու աշխատակից Ֆիլիպ Ռիմերը:

Լուրեր տարածվեցին, քե թուրքիան Վրաստանին ու Ադրբեջանին առաջարկել է վերահսկողություն սահմանել օդանավակայաններում, սահմանների վրա և նավթային ենթակառուցվածքում: Վրացական քաղաքական ղեկավարության կարծիքով, թուրքիայի այդ առաջարկն անընդունելի է, քանի որ կհանգեցնի տարածաշրջանում լարվածության աճին, սակայն ապագայում քաղաքական այլ պայմաններում թրիխին կարող է դրականորեն քննել թուրքիայի այդ առաջարկը:

Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը և անվտանգության ծառայությունների պատասխանատուները փորձում են ԱՄՆ-ի ուշադրությունը հրավիրել «Գարավային Կովկասում Լեռնային Դարաբաղի Գանրապետության հավանական մասնակցությունը հնարավոր ահաբեկչական և սադիչ գործողությունների առնչությամբ» պնդելով, որ ԼՂԳ-ն ահաբեկչական գործողությունների առումով կապված է Իրանի հետ: Իրականում, սակայն, ԱՄՆ-ը ահաբեկչության հարցերով կասկածաբեքներ ու պահանջներ չունի ԼՂԳ վարչապետից:

Բաքու-Թրիխի-Ջեյհան նախագիծը: Այս նախագիծը անորոշ վի-

ճակում է անբավարար պաշարների առկայության ապահովվածության ու կասկածելի շահութաբերության պատճառով: ԱՄՆ-ի և ՌԴ-ի խոշորագույն ընկերությունները ExxonMobil-ը, ChevronTexaco-ն և «Լուկոյլ»-ը չեն ցանկանում մասնակցել այդ վտանգալարույց միջոցառմանը: «Բրիթիշ Փեթրոլիումը»-ը (BP) ադրբեջանական նախագծերում, նաև Բաքու-Թրիխի-Ջեյհան նավթամուկի կառուցման համար պատրաստ է ներդնել ավելի քան 13 մլրդ դոլար: BP-ի սպասումներով, այդ ընկերության կողմից ամբողջ աշխարհում արդյունահանվող նավթը BP-ն կվերահսկի զոհե Կասպից ծովի հատվածում (Ադրբեջանում) նավթային քաղաքականությունը, ինչը ձեռնուտու չէ այլ խոշոր ընկերություններից:

2003 թ. հուլիսին հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ում Գայկական ազգային կոմիտեն արչավ է ձեռնարկել Բաքու-Թրիխի-Ջեյհան նավթամուկի նախագիծը ֆինանսավորումը թույլ չտալու նպատակով: Կոմիտեն առաջարկում է ամերիկացիներին ստորագրել ԱՄՆ գանձապետարանի քարտուղար Ջոն Սնոուին ուղղված կոչի ներքո, որում կոչ է արվում ճնշում գործարարել Գանաշխարհային դրամատան վրա և թույլ չտալ վերջինիս վարկ տրամադրել «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերությանը նավթամուկը կառուցելու համար: Նման դիրքորոշումը բացատրելու նպատակով կոմիտեն նշում է, որ նավթամուկի միջոցով միմյանց կապվող թուրքիան ու Ադրբեջանը Գայազարմանը ենթարկում են տնտեսական շրջափակման: ԱՄՆ Գայկական ազգային կոմիտեն ավցնում, այդ երկրները նպատակ ունեն Գայաստանը դուրս դնել տատածաշրջանային զարգացումից, ուստի նրանց շահերի իրագործմանը միջոցների հատկացումը հավասար է ժողովրդավարության սկզբունքներին: ԱՄՆ-ում ազդեցիկ լորթիստական կազմակերպության այս գործողությունը չի կարող հաջվի չառնել ամերիկյան ընտրախափի, ներառյալ վարչակազմի ու վերլուծաբանների որոշակի տրամադրությունները: Կասպիականի հիմնախնդիրների հարցով ԱՄՆ-ի հատուկ ներկայացուցիչ Աթիվեն Մանըը շահանում է հայտարարություններ անել հոգուտ նախագծի, սակայն շատ բան Ամերիկայում կատարվում է քաղաքական ինքնիջայի կարգով, իսկ քաղաքական տրամադրությունները այսպես քե այնպես փոխվում են:

Ստեղծված անորոշ վիճակում, երբ թուրքիան վտան էլ արտոնյալ պայմաններով իրաքյան նավթից օգտվելու հնարավորություն ունենալու վրա, երբ Բաքու-Թրիխի-Ջեյհան նախագիծը լուրջ փորձությունների մեջ է, Անկարան աշխույժ բանակցություններ է վարում արտասահմանյան ընկերությունների հետ նոր նավթահանքերի յուրացման շուրք: Ինչպես հայտնում է թուրքիայի լենդգետիկայի ու բնական պաշարների նախարարության տեղեկատվական աղբյուրը, պաշտոնական Անկարան ծայրահեղաբան շահագրգռված է արդեն գործող և նոր մշակվող նավթի ու գազի հանքերի գործարկմամբ: Այս բնագավառում անհրաժեշտ աշխատանքները կատարելու և կապեր հաստատելու պատասխանատուն ենթակցություններ է բնական պաշարների նախարար Գիլմի Գյուլբան է: Մասնավորապես, նա էր աշխույժ բանակցում «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերության պաշտոնական ներկայացուցիչներին: Օտարերկրյա մի շարք լրատվամիջոցների հաղորդման համաձայն, «Բրիթիշ Փեթրոլիումը» քուրքական TPAO ընկերության հետ համատեղ իրեն ծրարանագնում է երկրաբանական-հետախուզական աշխատանքներ Սև ծովի արեելյան մասում նավթային պաշարներ հայտնաբերելու նպատակով: Մասնագետների ենթադրմամբ, այդ սեյսմիկ անկարան շրջանում կարող է

նավթ լինել: Թուրքիան նավթի եւ գազի ներմուծման պատճառով որոշ արտահանող երկրներից կախյալ վիճակում գտնվող պետություն է: Այդ խնդրով վերջին տասնամյակում դիվանագետները, գիտնականները եւ գործարարները ամեն ջանք գործադրում են, որպեսզի ինչ-որ կերպ նվազեցնեն այդ կախումը: Սեւ ծովի նշյալ հատվածում նավթի հայտնաբերման ռիսկերով զգալիորեն կմվազի էներգետիկների ներմուծմանն առնչվող ռիսկը: Թեեւ անկասկած, սեւծովյան նավթը զգալիորեն բանկ կլինի իրաքյան նավթից:

«Չափային» քաղաքականություն: Ամերիկյան վերլուծաբանների կարծիքով, Թուրքիայի նոր կառավարությունը ստիպված է փոփոխություններ անել իր երկրակի էներգետիկական քաղաքականության մեջ: Այս կարծիքը արտահայտված է Վաշինգտոնի Միջազգային եւ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (CSIS) զեկուլցում, ամերիկյան քաղաքականության «Ուղեղային» կենտրոնում: CSIS-ում Թուրքիայի դիրքերը բավականաչափ ուժեղ են, կենտրոնի շատ աշխատակիցներ վաղուց զբաղվում են թուրքական հիմնախնդիրներով եւ շահագրգռված են այդ ուղղությամբ հետազոտական ծրագրերի զարգացմամբ: CSIS վերլուծաբանները նշում են, որ դեռ վերջերս Թուրքիայի էներգետիկ քաղաքականությունը հատուկ կասկածներ չէր առաջացնում: Անկարան մտադիր է դառնալ Եվրասիական էներգետիկական միջանցքի (EEC) կարեւոր քաղադրատարրը, որի ստեղծումը աջակցություն է ստանում ԱՄՆ-ի կողմից: Սիւս թե ինչու է Թուրքիան մեծ ուշադրություն դարձրում նավթի Բաքու-Ջեյհան հիմնական արտահանման խորդակաշարի նախագծին եւ Բաքու-Թրիխի-Էրզրում արդրեջանական գազի արտահանման երթուղուն, որպես EEC քաղադրիչների: Սակայն թուրքական տնտեսության անմախաղեպ անկումը հանգեցրեց էներգետիկների պահանջարկի նվազեցմանը եւ որպես հետեւանք կասկածներ հարուցեց «Շահ Դենիզ» հանցավալրից Թուրքիայի կողմից գազ զննելու կարողության հարցում:

Վաշինգտոնի աջակցությունը EEC նախագծին ամենեւին չի ենթադրում ֆինանսական օգնություն: Ջեկուլցում առավել լավատեսական գնահատական է տրվում Բաքու-Թրիխի-Ջեյհան նավթամուղին, որը չնայած բարդություններին, այնուամենայնիվ, կիրառվով: Սակայն նույն համոզմունքը բացակայում է Բաքու-Թրիխի-Էրզրում գազամուղի հարցում: Եթե Թուրքիան անկարող լինի կատարել «Շահ Դենիզ»-ից գազի գնման մասին համաձայնագիրը գազի շուկայում առաջարկի գերակշռման պատճառով, իսկ պայմանագրային ծավալներով գազը եվրոպա վերարտահանելու նախագիծը չկենսագործվի, ապա սպառնալիքի EEC-ի ստեղծման գաղափարն իսկ: Իր էներգետիկական հիմնախնդիրների ըզլությամբ Թուրքիան պարտական է «Ճշմարիտ ուղի» եւ «Անս Կարան» կուսակցությունների կոալիցիային, որը ստեղծվեց 1996 թ., եւ որի ներկայացուցիչները 6 տարիների ընթացքում գրավում էին ղեկավար պաշտոններ էներգետիկայի նախարարությունում: Գատկապես այդ տարիներին ծագեց Թուրքիայի փաստակց կախվածության հարցը ռուսաստանյան գազից, որը նախատեսվում էր իրադրվել այն ժամանակ վիճելի «Երկնագույն հոսք» նախագծով, թեեւ Անկարան շարունակում էր մնալ ԱՄՆ-ի, Արդրեջանի եւ Վրաստանի ռազմավարական գործընկեր EEC-ի կենսագործման հարցում:

Միաժամանակ, Թուրքմենստանի նախագահ Սափարուդաղ Նիյազովը, նախքան էներգետիկայի ոլորտում կոռուպցիայի հետաքննության պատճառով բարձրացած արձուկի հետեւանքով Թուրքիայի էներգետիկայի նա-

խարար Ջուժուր Էրսուների պաշտոնանկությունը, վերջինիս մեղադրել էր Արդրեջան-Վրաստան ճանապարհով թուրքմենական գազը Թուրքիա արտահանելու Տրանսկասպյան նախագծի տապալման մեջ: Գնարավոր է, որ ստարկայական աշխարհատեսական բնույթի առարկայական դժվարություններից զուժարվում են նաեւ կոռուպցիայի ռեպերը:

CSIS փորձագետները նշում են, որ Անկարայի էներգետիկ քաղաքականությանը բնորոշ է արմատական երկվությունը: Կողմ լինելով կասպյան նավթի Ռուսաստանն ու Իրանը շրջանցող արտահանման երթուղիներին, Թուրքիան միաժամանակ խոշոր պայմանագրեր է կնքում ռուսաստանյան եւ իրանական գազը զննելու վերաբերյալ: Վերջերս Անկարայի անրոժեղի հիվանդություններ է դարձել զնվող գազի պայմանագրային ծավալների մշտապես գերազանցումը պահանջվող բանակից: «Radikal» թերթի համաձայն, ս.թ. հունվարին Թուրքիան ի վիճակի էր վճարել միայն ներմուծվող գազի 80 տոկոսը: Այս թիվը փետրվարին նվազեց մինչեւ 50, իսկ մարտին մինչեւ 40 տոկոսը: Բացի այդ, թուրքական թերթերի պնդմամբ, BOTAS ընկերությունը ստիպված է վճարել շուրջ 1 մլրդ դոլար տուգանք ներմուծվող ծավալի մի մասից հրաժարվելու համար: Սիւս թե ինչու Անկարան բանձնեց փորձել է փոխել Ռուսաստանի եւ Իրանի հետ կնքված համաձայնագրերի պայմանները, թեեւ BOTAS-ի ներկայացուցիչները ամեն կերպ հերքեցին այդ տեղեկատվությունը (այդ մասին բազմիցս գրել է Media-Press-ը):

Միջոցով, Վաշինգտոնը համառորեն ձգտում է կենսագործել Բաքու-Թրիխի-Էրզրում գազամուղը: ԱՄՆ-ը մտադիր չէ զիջել այս հարցում նույնիսկ տնտեսական անհպատակահարմարության եւ էներգամատակարարման համակարգի անբարեհուստիքյան պատճառով: Ըստ Media-Press-ի, Կասպյան տարածաշրջանում էներգետիկ ռազմավարության հարցերով պետքատուղարության ավագ խորհրդական Սիվին Մանըց հուլիսի սկզբին հայտարարել է, որ ԱՄՆ-ը նախկին մնան կարեւորում է «Շահ Դենիզ» գազի արտահանման նախագիծը, իսկ ենթադրություններն այն մասին, թե Թուրքիան ելնելով գազի ունեցած ավելցուկի հիմնախնդիրից, «կարգեալիկ» վերոնշյալ գազամուղի կառուցումը լուրջ հիմքեր չունեն: Նրա կարծիքով, Բաքուն կունենան գազի մեծ պահանջարկ գազային ցանցի ընդլայնման եւ, կարելորը, տնտեսական երկար սպասվող աճի ղեպքում: Ս. Մանըց կարելու պայման է համարել «երկնագույն վառելիք» մատակարարների հետ Թուրքիայի կողմից որոշ համաձայնագրերի վերանայում: «Գնարակ»-ը նշում է, որ եւ չեն կարող Թուրքիային մատնանքել, թե հատկապես որ մատակարարումները պետք է կրճատվեն, բայց նրանք գլխավոր անելիքը «Շահ Դենիզ» նախագծի պաշտպանությունն է, միանշանակորեն հայտարարեց ամերիկյան դիվանագետը: Ըստ նրա, մնան եզրահանգման համար կան երկու համազանցներ. արդրեջանական գազը մյուսներից էժան է, եւ դա նաեւ համապատասխանում է Կովկասում կայունության պահպանման Թուրքիայի շահերին: Գատկապես Վաշինգտոնի ճնշմամբ է բացարվում այն փաստը, որ Թուրքիան թուրքմենական գազից առավել նախընտրեց արդրեջանական գազը. կարծում են CSIS վերլուծաբանները: Նաեւ Թուրքիան մտադիր է ստեղծված դժվարին վիճակից արդյունավետ ելք գտնել իր հերթին արտահանել ներմուծվող գազը: 2003թ. մարտին էներգետիկայի նախարար Ջեքի Չականի հայտարարության համաձայն, Թուրքիան համոզեւ կգա ոչ միայն իրրեւ սպառող, այլեւ տարանցիկ երկիր գազ մատակարարելով ոչ միայն

Գունաստանին, այլև եվրոպայի մյուս երկրներին:
Սակայն այս ծրագրերի իրագործման հեռանկարները չնայած ԱՄՆ-ի և եվրամիության աջակցությանը Թուրքիայի շատ չի ոգեշնչում: Եվրոպական շուկաներին և նույն Թուրքիային մեծածավալ գազ մատակարարող Ռուսաստանը հազվի քե չանտարբերությամբ դիտի, քե հիշպես Թուրքիայից գազ կարտահանվի այն շուկաները, որոնցում ինքը մեծ մասնաբաժին ունի: Դա բավականաչափ տարօրինակ պատկեր կինքի. ռուսաստանյան գազը Բուլղարիայի տարածքով անցնում է Թուրքիա, իսկ թուրքական գազը Գունաստանով վերադառնում է Եվրոպա, նշում են գեկուլցի հեղիակները: Ավելին, ընդգծում են նրանք, այս ծրագրերի իրագործումը հնարավոր է միայն Թուրքիայի և Գունաստանի միջե գործընկերային կայուն հարաբերությունների դեպքում, ինչը քիչ հավանական է Կիպրոսի հիմնախնդրի առկայությամբ:

Անկարան պետք է ձերբազատվի իր էներգետիկ քաղաքականությունյան արմատական երկվությունից, որը նրա համար մեծ խնդիր է հարուցում: Նախընտրելով իր տարածքով իրանական գազի արտահանումը, Անկարան փաստորեն հանդես է գալիս ԱՄՆ-ի դեմ, որը Իրանին դիտում է «չարի առաջնքի» մեջ: Բոլոր ջանքերը եվրասիական էներգետիկական միջանցք (EEC) ստեղծելու համար, որի նպատակն է արտահանման էներգետիկական երթուղիներ կառուցել շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը, ի չիք կրտանան Թուրքիայի հակաասական քաղաքականության պատճառով: Առանց Թուրքիայի լույս վերաբերմունքի՝ անհիմաստ են դառնում ամերիկյան ռազմավարության նշյալ նախագծերը: CSIS-ի վերլուծաբանների կարծիքով, Թուրքիայի նոր կառավարությունն ստիպված է լուծել իր էներգետիկական հայեցակարգի ներդաշնակեցման դժավար խնդիրը:

«Երկնագույն հոսք» նախագիծը Ռուսաստանի համար ոչ միայն կարելուրագույն աշխարհատնտեսական ծրագիր է, այլև արտաքին գազի շուկաների, ինքնին գազափոխադրամիջոցային համակարգի փոխադասավորվածության արմատական փոփոխության հույս, և Արևմտյան Ասիա ու Արևելյան Միջերկրական ներթափանցում, ինչը կհանգեցնի ՌԴ-ի արտաքին քաղաքականության համար գազի գործունի ուժեղացմանը որպես առանցքային գործոն: Այս նախագծի հարցում Ռուսաստանի կեցվածքը նույնպես երկակի է: Միաժամանակ անհրաժեշտ է և՛ առաջ անցնել Իրանից վերոհիշյալ շուկաների յուրացման գործում, և՛ թույլ չտալ Իրանի մուտքը էներտրոնական ու Արևմտյան Եվրոպա, ինչպես նաև տապալել ԱՄՆ-ի Եվրագետիկական ու քաղաքական համապարփակ ծրագրերը: Ընդ որում, «Գազպրոմի» հաշվարկն այն է, որ Թուրքիան ունի ոչ միայն մեծ ու հեռանկարային շուկա, այլև լուրջ վճարունակ գործընկեր է: Սակայն հատկապես այս գործոնն արդեն դարձավ առավել հարաբերական:

«Երկնագույն հոսք» նախագիծը ծրագրում է տեսնելի հեռանկարում ռուսաստանյան գազի արտահանումը Թուրքիա 16 մլրդ խորմ ծավալով, այն դեպքում, երբ 2002 թ. Եվրոպա արտահանվել է ընդհանուր առմամբ 129 մլրդ խորմ գազ: Այսինքն, Թուրքիան կդառնա ռուսաստանյան գազի առաջատար սպառողներից մեկը: Այդ գազամուղի կառուցման ժամանակ մեծ են հաջողված ջանքեր գործարկվեցին բավականին դժվարին ինժեներական, ֆինանսական և քաղաքական խնդիրներ լուծելու համար: Ռուսաստանը մրցունակ չէ նավթային ոլորտում Պարսից ծոցի երկրների հետ, ուստի ռուսաստանյան ղեկավարությունը տնտեսական և քաղաքական շեշտադրումն

առում է գազի բնագավառում: Գամաշխարհային գազի պաշարների 32 տոկոսը Ռուսաստանում է, իսկ Իրանում այդ ցուցանիշը կազմում է 15, Կատարում 7, Մաուրյան Արաբիայում և Արաբական էմիրաթներում 4-ական տոկոս: Իհարկե, ռուսաստանյան գազի առավել հուսալի և վճարունակ սպառողները եվրոպական պետություններն են, հատկապես եթե հաշվի առնվի ՌԴ-ի Բրիտանիա գազ առաքելու նախագծի ձեւավորումը: Հեռանկարում ռուսաստանյան գազի կարելուր սպառող կարող է դառնալ ԱՄՆ-ը, որը լուծել է նավթամատակարարման խնդիրը, սակայն արդեն իսկ հայտնվել է իրեն գազով ապահովելու հիմնախնդիր առջև, քանի որ գազի ներմուծումն անհամեմատ դժվար է ՌԴ-ի գազի մեծ սպառող կարող է լինել նաեւ ճապոնիան: Սակայն հատկապես Արեւմտյան Ասիան և Արևելյան Միջերկրականը Ռուսաստանի համար առանձնահատուկ աշխարհատնտեսական գործընկեր է, քանի որ այդ շրջաններից են բխում իսլամական արմատականության և միջազգային ահաբեկչության իրական սպառնալիքներն ընդդեմ ՌԴ-ի: Այս դեպքում Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանը կունենա հզոր ազդեցության լիակ հաշվի առնելով այդ երկրի հավակնությունները կենտրոնական Եվրասիայում: Բազմաթիվ նավթարտահանող երկրներ ձեռնտու են համարում սեփական նավթային պաշարները ներքին շուկայում փոխարինել ներմուծված գազով՝ դրանով իսկ ստանալով լրացուցիչ շահույթներ: Դա վերաբերում է ոչ միայն Արդեբջանին ու Ղազախստանին, այլև Պարսից ծոցի երկրներին:

«Երկնագույն հոսք» նախագիծ վերաբերյալ Թուրքիայում առկա է երկու տեսակետ: Օրինակ, էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ջեկի Չակլանի կարծիքով, «Գազպրոմի» և ENI-ի մատակարարած գազը կվերադառնի էներգետիկայի «սովը» այդ երկրում: Այժմ մամր ու միջին բազմաթիվ ձեռնարկություններ չեն կարող բավարարել իրենց գնորդների պահանջները, քանի որ որոշ շրջաններում էլեկտրատներգիայի համար չափաբաժին է սահմանված: Այսօր արդեն կարելի է սպասել իսկական տնտեսական պայթյունի: Իսլամամետ թուրքական «Ենի Մաֆաթ» թերթը գրում է, որ «Երկնագույն հոսք» կլինի նվազագույնը անմեղելի ռազմավարական և քաղաքական վրիպում»: Նախագիծի հակառակորդները պնդում էին, որ պայմանագիրը զանգվածային կաշառակերության հետեւանք է, և ռուսաստանյան գազամատակարարումը կստանալորպապես հարկավոր չէ Թուրքիային, կան չափազանց քանակ է մյուս առաջարկների համեմատ: Ստամբուլում լոնդոնյան հեղինակավոր «Էկոնոմիստ» շաբաթաթերթում Ամբերին Չամանը գրել է իր հոդվածներից մեկում. «Երկնագույն հոսք»-ի շուրջ սկանդալը որուր է եկել ներտուրական քաղաքական գզվտոցի առիձաններից և գտնվում է Կասպյան ավազանի բնական պաշարների շուրջ աշխարհաքաղաքական պայքարի կենտրոնում»: 2003 թ. ծրագրվում էր մատակարարել 2 մլրդ, իսկ 2004 թ. 4 մլրդ խորմ գազ: Հետագայում ենթադրվում էր տարեկան հավելացնել 2 մլրդ խորմ գազ, մինչև 2010 թ. հասնելով նախագծով նախատեսված ծավալին: Ընդհանուր առմամբ, 3,3 մլրդ դոլար արժեքով նախագիծը իրագործվում էր համաձայն 1997 թ. ստորագրված ռուս-թուրքական միջկառավարական համաձայնագրի, և մի քանի տարի աշարունակ գազի մեծատիրոջ համար առաջնային ծրագրերից մեկն էր: Դա կառուցելու համար «Գազպրոմը» տրամադրել 1,7 մլրդ դոլար:

Միաժամանակ, «Երկնագույն հոսք» նախագիծ իրագործման հարյուրությունը պայմանավորված է մեծ տնտեսական արդյունավետությամբ, ին-

չը հատկանշական է փաստորեն արտահանման համար նախատեսված ռուսաստանյան բոլոր էներգետիկական նախագծերին: Ուշագրավ է դոկտոր Ռոբերտ Քաթերի կարծիքը, որն աշխատում է Կանադայի Կարլտոնի համալսարանի Եվրոպայի և Ռուսաստանի հետազոտությունների ինստիտուտում: «Երկնագույն հոսք»-ի անխուսափելի հաջողությունների ինստիտուտում, վերված է Ռուսաստանի և Թուրքիայի արդյունաբերական ու գործարար շահերի վերազգային միավորմամբ, այլ ոչ թե ԱՄՆ կարյաի ինչ-որ ռազմավարական ծրագրով: Գազամուղը կուժեղացնի Թուրքիայի Թուրքիայի կախումը Ռուսաստանի գազից... եւ այդ պատճառով ԱՄՆ-ը վերջին տարիներին բազմիցս հայտնել է իր դժգոհությունն ԱՄՆ կարյաից: Սակայն այն պատկերացումները, թե Թուրքիան նոր ամերիկյան «ենթահզեմոն» է տարածաշրջանում, միշտ եղել է ծայրաստիճան պարզունակություն» (MGI, թիվ 5, 2002):

Տարածաշրջանում գազի նախագծի հիմնախնդիրների հարցում ԱՄՆ-ը պետք է լուծի բավականաչափ ղեկարհին եւ հակասական խնդիր: Խափառել Եվրոպայի ու Միջին Արևելքի, նաեւ Պակիստանի ու Հնդկաստանի էներգետիկական կապվածությունը նոր ռուսաստանյան ու իրանական նախագծերին: Ռուսաստանյան գազահոսքի լուրջ այլընտրանքը կարող են լինել միայն իրանական կամ թուրքմենական գազամուղները անցնելով Իրանի տարածքով: Աղբրեջանական գազը, այսպես թե այնպես, կարող է ունենալ միայն տեղային, թեև այլընտրանքային նշանակություն: «Երկնագույն հոսք» նախագծի ճգնաժամային վիճակը Ռուսաստանին զրկում է այդ գազամուղով աղբրեջանական գազը մատակարարելու հեռանկարից: Ս. Մանը, օրինակ, հայտարարել է, որ աղբրեջանական գազի փոխադրումը նշյալ խոդակալաչարով անմիաստ է: Այսպիսով, էներգետիկ քաղաքականությունը եւս տարածաշրջանում երկակի է և հակասական բնույթ ունի:

Աշխատանքներն սկսելուց հետո «Երկնագույն հոսք» գազամուղը գործեց ընդամենը 3-4 ամիս եւ 2003 թ. սկզբից (մարտին) գազամատակարարումը դադարեցվեց տնտեսական պատճառներով: Տնտեսական ճգնաժամը մեծ հարված հասցրեց այս նախագծին եւ երկրորդական դերակատարում ունեցած քաղաքական գործընկերի հետ բացահայտեց Թուրքիայի որպես աշխարհատնտեսական գործընկերոջ անհուսալիությունը: Սակայն տարածաշրջանային նշանակության ճարտարագիտական նախագիծը կառուցված է եւ մինչև նրան, և պիտի գործարկվի, քանի որ Թուրքիան եւ ՌԴ-ն կրում են գազի վնասներ: Կարելի է ենթադրել, որ այս նախագիծը կդառնա Թուրքիա, ՌԴ եւ ԱՄՆ կողմերի միջև տուր քաղաքական պայքարի առարկա:

Մեծաթիվ փորձագետների գնահատմամբ, Թուրքիան բացահայտորեն ցուցաբերում է գազի ոլորտում տարանջկի երկիր դառնալու իր ձգտումը: Դրանով է բացատրվում Թուրքիայի ցանկությունը նույնիսկ հեռավոր վայրերից (Լիգերիա) բնական եւ հեղուկ գազ մատակարարելու հարցում, ինչը հնարավորություն կընձեռի դառնալ առանցքային գազատարանցման երկիր: Օրինակ, 2002 թ. Թուրքիան ծրագրել էր ներմուծել ընդհանուր հաշվով 56 մլրդ խորմ գազի հումք, որը բավականաչափ գերազանցում է նրա մերթն պահանջարկը: «Երկնագույն հոսքի» հարցում ԱՄՆ-ի մերժողական կենցավածը սակայական վնաս է հասցնում Թուրքիայի աշխարհատնտեսական քաղաքականությանը եւ ինչ-որ չափով զրկում գազի, առհասարակ էներգետիկների համապարփակ տարանցման գաղափարը կենսագործելու հնարավորությունից: Նույնը վերաբերում է նաեւ Իրանից եւ Լիբիայից գազ ներ-

մուծելու խնդրում ԱՄՆ-ի դիրքորոշմանը, երկրներ, որոնց հանդեպ վերջինս կիրառում է պատժամիջոցներ:

Չուտ քաղաքական խնդիրների հետ կա նաեւ Կովկասյան-Կասպյան ավազանում ԱՄՆ-ի աշխարհատնտեսական դազմավարության այլ տարբերակ: Հնարավոր է, վերջին տարիներին Ռուսիայում է եղել արեւմտյան հանրության եւ ԱՄՆ-ի աշխարհատնտեսական շահերում, նաեւ Արեւմուտքի առաջատար արդյունաբերական երկրներին ավելի սկսել են հետաքրքրել ոչ թե էներգետիկական շուկայի տնտեսական չափորոշիչները եւ իրենց ընկերությունների ֆինանսական շահերը, այլ ենթոգապահովման կայունությունն ու հուսալիությունը: Այսինքն, առաջնային դառնում են էներգետիկական անվտանգության հարցերը, ընդ որում, բավականին դրամատիկական, նույնիսկ «աշխարհակործան» համատեքստում: ԱՄՆ էներգետիկայի նախարարության տեղեկություններով, 2003 թ. բնական գազի պահուստները վերջին ավստերին հասել են ճգնաժամային ճգնազգային մակարդակի եւ կարող են ավելի նվազել այն քանակից, որն անհրաժեշտ է ամերիկյան շուկայի պահանջները բավարարելու համար: Ստեղծված իրավիճակի առնչությամբ ԱՄՆ էներգետիկայի նախարար Սպենսեր Աբրահամը գումարել է Լավիի ազգային խորհրդի արտակարգ նիստ, որում ներկայացրել է տվյալներ երկրի 15 տոկոս պահուստների վիճակի մասին: ԱՄՆ-ում բնական գազի զինը հատել է գազակուս սահմանագիծը եւ շարունակում է աճել: Այժմ բնական գազի պաշարներն ԱՄՆ-ում նախորդ տարվա համեմատ նվազել են 17 տոկոսով: Շուկայում գազի պակասը հետևանք է ԱՄՆ-ում գազի արդյունահանման փոքր քանակի եւ Կանադայից անբավարար մատակարարման դեպքում էլեկտրականների ու ձեռնարկությունների կողմից մշտապես աճող պահանջարկի: Հնարավոր է, ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան կոլկասյան-կասպյան, նաեւ ռուսաստանյան գազը դիտում են որպես ռազմավարական պահուստներ իրենց կարիքների համար եւ չեն ցանկանում այլ պաշարներից մաս հանել ոչ իրենց հակառակորդներին (օրինակ Հինաստանին), եւ ոչ ռազմավարական գործընկերներին, տվյալ դեպքում Թուրքիային, (www.mineral.ru):

Իսրայելական գործոն: Արևելք-Արևմուտք էներգետիկական միջանցք ունի մի շարք նպատակներ եւ խնդիրներ: Նպատակներից մեկը (ամեն դեպքում աշխարհատնտեսական նախագծերի եւ քաղաքական իմաստավորումների որոշակի փուլում) Թուրքիայի եւ Իսրայելի անկախության պետական ընկերության նախագահ Գեորգի Չանտուրիան մի պատճառով է հրապարակել, որի հետևանքով ԱՄՆ-ը այբակցում է Բաթու-Չեյիան նախագիծը: Ըստ նրա, դա հնարավորություն կտա Իսրայելին նաև վերցնել Չեյ-հանցի: Թուրքիան միակ միջինարեւելյան պետությունն է, որն Իսրայելի հետ լավ հարաբերություններ ունի: Հատկապես այս գործոնը վնասական դեր ունեցավ Ռուսաստանում իսլամամետ լոբիստական խմբերի կողմից (առաջին հերթին ի դեմս խոշոր նավթային ընկերությունների ու ներդրումային դրամատներին) Ռուսաստան այդ նախագծի կապելուն ուղղված ջանքերի գործարման համար, ինչը պետք է հանգեցներ տվյալ երթուղով ռուսաստանյան նավթի փոխադրմանը: Այդ ջանքերում մասնակցություն ունեցավ «Քրիթի Փեթրոլիումը», որը Ռուսաստանին նկատում է իբրեւ այդ եւ մյուս նախագծերի անվտանգության երաշխավոր եւ որպես համապարփակ գործընկեր: Որոշ մտորումներից ու գնահատումներից հետո ՌԴ քաղաքական դե-

կավարությունը հասկացավ, որ դրանով իսկ Ռուսաստանը վերածվում է անփորձ համաշխարհային նախագծի ենթակա գործընկեր եւ հրաժարվեց որեւէ մասնակցությունից: «Լուլույ» ընկերությունը ՌԳ աշխարհատնտեսական կարելուր գործիքներից մեկը, իր փայլարածինը վաճառեց, եւ դրանով Ռուսաստանը հրաժարվեց պարտավորվածություններից: Դա գործընկացումն նրան ազատություն տվեց իրագործելու այլընտրանքային նախագծեր:

Միաժամանակ, եթե Բաբու-Թբիլիսի-Չեյխան նավթանուղը կառուցվի, ապա ենթադրվող նավթահոսքի մինչեւ 50 տոկոսը՝ 25 մլն տոննա, կօգտագործի Իսրայելը, որի պահանջարկը 9 մլն տոննա նավթ է, իսկ Թուրքիայի պահանջարկը 16 մլն տոննա է: Այս նավթանուղը Իսրայելի համար շատ ավելի կարելուր նշանակություն ունի, քան Թուրքիայի համար: Խայթա նավահանգստից 300 միլ հեռու գտնվող վայրում «Նոր մեծ» նավթի հայտնաբերելը կարելու է ոչ միայն անվտանգության, այլև այդ երկրի դժվարին ստեղծական վիճակը բարելավելու համար: Միաժամանակ, Բաբու-Թբիլիսի-Չեյխան նավթանուղի նախատեսվածությունը Իսրայելի պահանջների համար կհանգեցնի այդ խողովակաշարի անվտանգության աստիճանի նվազեցմանը, նկատի առնելով արարական եւ մահմեդական արմատականների հնարավոր գործողությունները: Ընդ որում, Թուրքիան կդիտվի որպես Իսրայելի աշխարհատնտեսական գործընկեր: Այս հանգամանքները, ըստ երեւույթին, ի հայտ կգան ապագայում: Դա իսրայելական գործոնը բնութագրում է որպես Թուրքիայի էներգետիկ շահերի համար բացառական ազդեցություն ունեցող երեսույթ:

Հունական գործոն: Արեւել-Արեւմուտք էներգետիկական միջանցքը եւ հատկապես նավթի բաղադրատարրը մեծապես կհիմնաստեղծվի, եթե սովյալ միջազգային նախագծում մասնակցություն բերի Հունաստանը իբրեւ էներգետիկների սպառող եւ տարանցիկ երկիր: Վերլուծական ուսումնասիրություններում եւ հրապարակումներում Հունաստանը փաստորեն չի հիշատակվում, բայց անկասկած ԱՄՆ-ի ծրագրերում մտադրություն կա էներգետիկական գործոնն օգտագործել թուրք-հունական հարաբերությունները կարգավորելու համար: Թուրքիան ընդլայնելու է իր նախագիծը շահագրգռված է Հունաստանի հետ համագործակցությանը իբրեւ տարանցիկ երկիր: Ուշագրավ է, որ այս խնդիրը նշել է կասպյան էներգակիրների հարցերով ավագ խորհրդակցանքը ելույթ ունենալով կասպյան տարածաշրջանի էներգետիկական հետազոտությունների խնդիրներով Քեմբրիջի ասոցիացիայի խորհրդածրոյում (19.06.2001)։ «Չոր ուշարությունն են հրավիրում նախորդ ամսին «ԱՄՆ ազգային էներգետիկական քաղաքականություն» հրապարակված փաստաթղթին: Կասպյան էներգակիրների վերաբերյալ բաժնում լիովին հաստատվում է ԱՄՆ-ի այն հանգամանքը, որ այդ նախագծերը կարելու են, իրական եւ իրագործման ավելորդ չենին են: Չեկուցագրում բացահայտ հայտարարություններ կան ԵՏԿ աջակցելու Ղազախստանից արտահանու՞մը ԵՏԿ եւ «Շահ Դենիզ»-ի միջոցով իրագործելու մասին: Ավելին, «Ազգային էներգետիկական քաղաքականություն» փաստաթուղթը բեւադրում է (մեջբերում են) «Նախագահին համեմարաբել պետքարտուղարին Հունաստանին եւ Թուրքիային միավորել իրենց զգացման համակարգերը՝ հնարավորություն տալով եվրոպական սպառողներին բազմազանություն մտցնել իրենց զագամատակարարություններում կասպյան զազը ստանալու ճանապարհով»: Այս էներգետիկական վերլուծությունը վարչակազմի համար դեկավարել է փոխնախագահ Գ. Չեյնին: «Նոր պաշտոն ստանձնելու ժամա-

նակ եւ հանդիպել են փոխնախագահի հետ եւ նա խնդրել է ինձ ձեզ փոխանցել Կասպյան էներգետիկայի հարցերով իր անձնական նախաձեռնված գործընկացում ու անձնական աջակցության մասին»։http://usinfo.state.gov

Անկարան արդեն խորհրդակցություններ է սկսել Հունաստանի հետ ծրագրվող զագամուղը Արթուրեանից (Բաբու-Թբիլիսի-Չեյխան) մինչեւ եվրոպական տարածքը հասցնելու շուրջ: Սակայն Հունաստանը ձեռնարկում է ռուսաստանյան զազը բավական երկրների Բուլղարիայի, Մակեդոնիայի եւ մյուսների տարածքով ներածման կազմակերպումը: Հունաստանը չի կարող հուսալ, թե Թուրքիայում կլինեն վերարտահանման համար բավականացիլ զազի պաշարներ:

Առավելագույնը, ինչի վրա կարող են հույս դնել հույները Թուրքիայից այլընտրանքային զազի ներմուծումն է, իսկ հազիվ թե այդ պաշարները հնարավոր լինի տարանցել եվրոպական պետություններ: Սակայն էներգետիկայի նման կարելուր ոլորտում իրեն կախման մեջ դնել Թուրքիայից Հունաստանը չի համաձայնի: Չճայած հույն-թուրքական հարաբերությունների կարգավորման որոշ հաջողություններով, այդ հարաբերություններում հիմնականորեն համալիրը բավականին մեծ է եւ տարաբնույթ: Նույնիսկ, եթե ենթադրենք, որ Հունաստանն ու Թուրքիան կարող են համաձայնության գալ իրենց անմիջական հիմնահարցերի շուրջ, ապա կնճա Կիպրոսի խնդիրը: Հետեւաբար, հույն-թուրքական հարաբերությունները եւս սահմանափակում են Թուրքիայի հուսալիությունը որպես առաջատար գործընկեր համաշխարհային էներգետիկական նախագծի շրջանակներում:

Քրդական գործոն: Ամերիկայի եւ բրիտանական փորձագետները, նաեւ «Contril risk» ձեռնարկության մասնները կարծում են, որ իրենք միանգամայն ճիշտ են հավասարակշռված կերպով ճշտել են քրդական քաղաքական եւ ռազմական կազմակերպությունների կողմից Բաբու-Թբիլիսի-Չեյխան նավթանուղի եւ առհասարակ էներգահաղորդակցությունների նկատմամբ ռիսկի չափը: Ըստ նրանց, իհարկե ռիսկ կա, սակայն ոչ այնչափ մեծ, որ դիտարկվեն իրեն սահմանափակները: Սակայն քրդական գործոնն այնքան բազմակողմանի է եւ անկանխատեսելի է, որ քոլորովին անիմաստ է որեւէ կանխատեսում անելը: Քրդական կազմակերպությունները հանդես են գալիս եվրոպայի եւ ԱՄՆ-ի 64 ոչ կառավարական կազմակերպությունների հետ համատեղ բողոքելով տվյալ նավթանուղի կառուցման հիմնախնդրի անընդմեջ: Քրդերի իրավունքների պաշտպանության կոմիտեի ներկայացուցիչ Քերիմ Յըլդիզ (Kerim Yildiz), որն այդ հասարակական աղբյուրի մասնակիցն է, կարծում է, որ «այդ նավթանուղը ռազմականացում է շրջանը իր երթուղու Կասպից ծովից մինչեւ Միջերկրական տարածքում, եւ կսպառնա Քուրդիստանում հաստատված փկորուն հրադադարին»: (Բաբու, 03.08.2002 Medusa-Press) ընդհանուր առմամբ քրդական գործոնը համարվում է Թուրքիայի՝ իրեն քաղաքական գործընկերոջ իրական հուսալիության առավելապես լուրջ գործոն: Հատկապես քրդական գործոնը եղավ հիմնական գործոններից մեկը Իրաքի հարցում Թուրքիայի եւ ԱՄՆ-ի հարաբերություններում:

Սեւծովյան նեղուցներ: Սեւծովյան նեղուցները դարձել են Թուրքիայի արտաքին քաղաքականության կարելուր գործոններից մեկը: Գործնականում ոչ միայն Ռուսաստանը, այլև ամբողջ եվրասիան ինչ-որ իմաստով հայտնվեց Սեւծովյան ավազանը վերահսկող Թուրքիայի վերահսկողությունները: Փաստորեն, Թուրքիան ստեղծեց Սեւ ծովում ռազմածովային ուժերի

հավասարակշռություն մի քանի ոլորտներում գերազանցելով Ռուսաստանին: Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Չեմը, Կիևում կայացած մամուլ հասուլիսում մեկնաբանելով ուկրաինական գազափոխադրամիջոցային համակարգի շահագործման համար կոնտրոլիում ստեղծելու մասին Ամենկա Պետերբուրգում ստորագրված համաձայնագիրը. «Թուրքիան մեծապես շահագրգիռ է ուկրաինական նավթա-գազափոխադրամիջոցային համակարգի օգտագործմամբ, քանի որ Թուրքիան ակտիվորեն մասնակցում է մի շարք նավթա-գազային հանքավայրերի մշակման եւ ենթակառուցման փոխադրման աշխատանքներին, սակայն սահմանափակ հնարավորություններ ունի ենթակառուցումը Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներով փոխադրելու գործում»: Նա նշեց, որ Թուրքիան շահագրգիռ է Միջին Ասիայում եւ Կովկասում նավթի ու գազի հանքավայրերը մշակելու եւ այդ շրջաններին ենթակառուցումը փոխադրելու հարցում: Ընդ որում, Չեմը ընդգծեց, որ Թուրքիան հիմնական ուշադրություն է դարձնում Բաքու-Ջեյհան նավթամուղին:

Սեկնաբանելով Թուրքիայի ենթակառուցման քաղաքականությունը, նախարարը նշեց է. «Սեմը թույլ չեմք տա Բոսֆորում Դարդանելը վերածել նավթամուղի», նկատելով, թե այդ ենթակառուցումը ենթակառուցման փոխադրումը կարող է շատ վատ հետեւանքներ ունենալ երկրի բնակչության եւ բնապահպանության համար: Ուստի Թուրքիան շահագրգռված է նավթի եւ գազի փոխադրումը կազմակերպել այլ ուղիներով, մասնավորապես ուկրաինական նավթամուղիներով: Սակայն Իսմայիլ Չեմի այս հայտարարությունը ընդհանուր ոչինչ չունի Թուրքիան առանցքային ենթակառուցվել երկիր դարձնելու թուրքական քաղաքական ղեկավարության իրական նպատակների հետ: Թուրքիան մեծ հույսեր է կապում ռուս-ուկրաինական հակամարտության շարունակության հետ Դրիմի, սեւեռական նավթադրամի ռազմականների, ռուսալեզու բնակչության եւ ենթակառուցման փոխադրումների հիմնախնդիրների շուրջ: Ուկրաինան բավականաչափ երկար ժամանակ խոչընդոտեց ռուսաստանյան գազի եւ նավթի փոխադրումը եվրոպա: Որպես աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ՎՈՒՈՄՄ չկայացած դաշինքի անդամ Ուկրաինան փաստորեն մոտենում էր Թուրքիայի ռազմականների դաշնակից դառնալու ուղեգծին: Վերջերս միայն ԱՄՆ-ի քաղաքական ծրագրավորողների շրջանում գաղափար ծնվեց Թուրքիան, Սերբիան եւ Ուկրաինան միավորող ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու մասին, որին հույս կար հետագայում ներգրավել Բուլղարիային, Ռումինիային եւ Մոլդովային: Սակայն Ուկրաինան բավականին մեծ երկիր է եւ ունի գազի տնտեսական մեծ ներուժ ու հավակնություններ, որպեսզի մասնակցի տարածաշրջանային, ըստ էության, տեղային դաշինքում եւ շարունակում է ԱՆՏՕ-ին անդամակցելու իր մտադրության կենսագործումը:

Ուկրաինան աստիճանաբար դառնում է Ռուսաստանի գործընկերը եւ, հնարավոր է, որ առաջիկայում նաեւ դառնա Դազախտանի եւ Թուրքմենտանի գործընկերը նավթի ու գազի փոխադրման գործում: Ուստի, մի կողմից Թուրքիան աշխուժորեն խաղարկում է Սեւեռական նեղուցների խաղաքարը աշխարհաքաղաքական խաղում, մյուս կողմից, սակայն, նեղուցների գործող Ռուսաստանի, Դազախտանի, Ուկրաինայի եւ Արեւելյան եվրոպայի մյուս պետությունների համագործակցությամբ բավականաչափ համոզիչ չի դառնում:

Բոսֆորով (31 կմ երկարությամբ եւ 600-1500 մ լայնությամբ նեղուց է

Սեւ եւ Մարմարա ծովերը միացնող) եւ Դարդանելով (60 կմ երկարությամբ եւ 1,3-7 կմ լայնությամբ Մարմարա եւ Էգեյան ծովերը միացնող նեղուց է) փոխադրվում են 3 անգամ ավելի բեռներ, քան Սուեզի եւ չորս անգամ ավելի, քան Պանամայի ջրանցքներով: Այս նեղուցներով կատարվում է բեռնափոխադրում Սեւեռական ավազանի երկրներ Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Ռուսաստան, Վրաստան: Տարեկան նեղուցներով անցնում է մինչեւ 50 հազար տոնտարանավ, օրական 15 նավթատար, որոնցից երկուսը տվեթրամակերներ: Քացի այդ, օրական Մասմուրիի հանդիպակալ ավերի միջեւ լինում է 2-2,5 հազար բեռնանավերի ուղեքներ, ինչը զգալիորեն մեծացնում է նեղուցում բախտմանի վտանգը: Տնտեսական եւ աշխարհաքաղաքական տեսակետներից նավթն ամենակարեւոր փոխադրաբեռն է, իսկ նավթատար նավերը շրջակա միջավայրի արտոտման սպառնալիքի հիմնական գործոնը: 1994 թ. մարտին կիպրոսյան «Nasaj» նավթատար Բոսֆորում բախտել այլ մեկ նավի հետ: Արդյունքում զոհվեց 29 նավաստի եւ ջուրը քաղիվեց 20 հազար տոննա հում նավթ՝ դանախով բնագաղափարական արեւի պատճառ: 1994 թ. Թուրքիայի կառավարությունը միակողմանի որոշում ընդունեց Մոնրոպի 1936 թ. ստորագրված պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին, որով ազատ նավագնացության կարգ էր սահմանված: Գործընկեր նավագնացության մասին նոր կանոններ, սակայն տեխնիկական, կազմակերպական եւ ֆինանսական բնույթի պատճառներով ու քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, այդ կանոններն ամբողջովին չեն գործում:

Նեղուցներով անցնող բեռների 25 տոկոսը ռուսաստանյան են. Նովոռոսիսկի նավահանգստից ելնում են եվրոպական երկրների համար նախատեսված նավթատարներ բեռնված ռուսաստանյան, մասամբ արդեթանական ու դազախական նավերով: Ներկայումս նեղուցներով փոխադրվող նավթի ծավալը կազմում է մոտ 80 մլն տոննա:

Սակայն շուտով գործարկվելիք Թեմզիզ-Նովոռոսիսկյան նավթամուղով հոսող նավթի ծավալը կկազմի մոտ 28, ապա 67 մլն տոննա (140-160 հազար բարել օրական): (10 դեկտեմբերի, 11sole 24 օր. «Ռուսաստանյան նավթը կանցնի նեղուցներով» (Պիեր Սիմատի), www.inosmi.ru):

Այսպեսով, 1936 թ. Մոնրոպի պայմանագրի միակողմանի փոփոխությունը լուրջ քաղաքական քայլ է, որը կասկածի է ենթարկում միջազգային հարաբերությունների ողջ համակարգը սեւեռական ավազանում, որտեղ կան եվրոպայի շուրջ 12-15 պետություններ:

Դազախտանն իր անհամայնությունը հայտնեց նավթափոխադրման սահմանափակումների վերաբերյալ: Ատանայում կայացած մամուլ հասուլիսում արտգործնախարար Երլան Իրիխովն ասաց. «Չարժանալի այսլեռպ չի արվում: Դազախտանը համաձայն է, որ Բոսֆորի նեղուցով նավթափոխադրման անվտանգության պահպանման միջոցներ պիտի կիրառվեն, սակայն ոչ տնտեսական նկատառումներով սահմանափակումներ չպետք է լինեն: ՄԱԿ-ը հստակ բանաձեւ է ընդունել ընդդեմ Թուրքիայի կողմից դազախտանյան նավթի տարանցման խտրական քաղաքականության (18 հոկտեմբերի, Rus Energy): Վերջին երկու տարիներին Թուրքիան աշխուժորեն ընդդիմանում է իր սեւեռական նեղուցներով Բոսֆորով ու Դարդանելով դազախտանյան նավերով բեռնված նավերի շարժին: Դազախտանը դեպի ծով ելք չունի, եւ թուրքական կողմը օգտվելով դրանից առաջարկում էր Ուրաղար պայմաններ: ՄԱԿ-ը խոստացել է աջակցել Դազախտանին

Թուրքիայի հետ ունեցած նրա վեճում դեռևս մեկ տարի առաջ, սակայն համապատասխան բանաձևին ընդունվեց մեծ ուշացումով: Հնարավոր է փաստաթղթի ընդունումը կապված էր հաջորդ տարի ՄԱԿ-ի գազաթնափողվն իր հաշվին անցկացնելու Ղազախստանի համաձայնության հետ, որը նվիրված կլինի նավթափոխադրության հարցերին» (www.centran.ru):

Ղազախստանի արտգործնախարար Ե. Իդրիսովի կարծիքով, Թուրքիան չափազանցում է նեղուցների բնապահպանական վտանգը կապված «Թենզիզ» հանքավայրից նավթի արտահանման հետ: Թուրքիայի կառավարությունը անհանգստություն հայտնեց այն նավթամուղային համակարգի շահագրգռմանը, որով ղազախական նավթը կնդվեր մինչև ԼոսՊոստիսկ եւ Բոսֆոր-Ղարդանելով կփոխադրվեր Եվրոպա, դրանով իսկ նավերի երթևեկը նեղուցներում ավելացնելով եռակի անգամ: Մինչդեռ, Ղազախստանն ունի մեծ տարանցիկ ներուժ, որը մոտակա 10 տարիներին գնահատվում է 1-1,5 մլրդ դոլարի չափով: Ղազախստանի համար առաջնային է Եվրասիական միջանցքը, որն անցնում է Չինաստան-Ղազախստան-Ռուսաստան երթուղով դեպի Բելառուս եւ Լեհաստան: Այդ միջանցքի կարիքն ունեն գործնականում Արևելյան, Կենտրոնական եւ Արեւմտյան Եվրոպայի բոլոր երկրները, քանի որ շահեր ունեն չինական շուկայում: (www.centran.ru): Փաստորեն, Թուրքիան հայտարարելով Եվրոպայի թուրքալեզու պետությունների հետ հարաբերությունների զարգացման գերակայելի մտադրության մասին, կասկածի է ենթարկում Ղազախստանի՝ առաջատար նավթաարդյունահանող երկրի շահերը՝ գործնականում անտեսելով դրանք:

ԳԼՈՒԽ 2.

ԹՈՒՐԻՔԱՅ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՅԵՐԸ ԵՎ ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ԱՄՆ-ի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ

ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ սերտ եւ «փոխադարձորեն հավատարիմ» ռազմավարական համագործակցության պայմաններում 1990-ականների երկրորդ կեսին նկատվեցին ապագա երկարաժամկետ հակամարտության նախանշանները: Իզրո Մուրադյանի «ԱՄՆ քաղաքականությունը եւ Հարավային Կովկասի տարածաշրջանի անվտանգության հիմնախնդիրները» (Երևան, 2002) գրքում նշված է. «Փորձառու եւ իրազեկ փորձագետների վերլուծաբանների համար միանգամայն ակնհայտ է, որ ԱՄՆ-ը պատրանքներ չունի Հարավային Կովկասում եվրոպացիների, հետևաբար ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունը հնարավոր լինելու վերաբերյալ: ԱՄՆ-ը Հարավային Կովկասում ռազմական մասնակցություն ցուցաբերող գործընկերոջ է համարում միայն Թուրքիային: Բայց եվրոպացիները ռազմական կամ խաղաղասիրական որևէ գործողությունների չեն մասնակցի Թուրքիայի հետ համատեղ հիանալիորեն հասկանալով Թուրքիայի հատուկ ռազմավարական շահախնդրությունը տարածաշրջանում եւ հաշվի առնելով վերջին ներքաղաքական իրադարձություններն ու գործընթացները այդ երկրում: Առայժմ առավելագույնը, ինչ կարողացել են անել ամերիկացիները Թուրքիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի որոշակի օգնությունն ու համագործակցությունն է Վրաստանի հետ:

Նաեւ Անդրկովկասում Թուրքիայի հետ երկկողմ համագործակցությունը ռազմական ոլորտում ամերիկացիներին պատկերվում է խոցելի ու անկանխատեսելի, եթե Եվրոպա մասնակցություն չունենա: Ամերիկացիներն ավելի ու ավելի քիչ վստահում Թուրքիային եւ, մտահոգվելով ներքին քաղաքականության ասպարեզում իսլամական միտումների խորացմամբ, փորձում են իբրեւ հակակշիռ աշխուժացնել միասնական թուրքական ազգայնականությունը, ինչը ԱՄՆ-ի դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ դարձնում է բավականաչափ հակասական:

ԱՄՆ-Թուրքիա հիմնախնդիրները խորանում են եւ պահանջում որոշ նախագծերի, հայացքների ու համադրույթների (դոկտրինա) վերանայում: Դա առնչվում է որոշ գործոնների «պահեստավորման» անհրաժեշտությանը, որոնք կարող են չուրջ 20-25 տարի անց հակադրել Թուրքիային: Այս ժամկետը նշում են ոչ միայն համապարփակ համադրույթների հեղինակները, այլեւ շատ քաղաքագետներ ու «Մեծ Միջին Արևելքի» տարածաշրջանային հարցերով վերլուծաբաններ: Վերջիններս չունեն համադրույթների քարոզչության գործառույթներ, այլ զբաղվում են կառավարությունների ու խոշոր ընկերությունների համար «սեւ» աշխատանքով: Նրանց կարծիքով, 20-25 տարի անց ԱՄՆ-ը կունենա շատ լուրջ հիմնախնդիրներ, քանի որ Թուրքիան այնքան կփորձանա, որ կկարողանա միանգամայն ինքնուրույն կայսերակա-

լական քաղաքականություն վարել եվրոպայում ինչպես Ռուսաստանի դեմ, այնպես էլ առանձնապես ուշադրության չառնելով ԱՄՆ-ի շահերը: Նրանց կարծիքով, Թուրքիան հասկանալով Արևմուտքի հետ տեխնոլոգիական ու լորտում մրցակցության անհերքիմությունը, նույնիսկ 20-25 տարի անց կառաջադրի հսկայածավալ եվրասիական տարածքում Կասպիական ավազանում, Ղազախստանում, Միջին Ասիայում, Սիբիրի մի հատվածում և Արևմտյան Չինաստանում հանքային հանածոների վերահսկողությունն իրագործելու նպատակը: ԱՄՆ-ը Թուրքիային կարող է հակադրել աշխարհաքաղաքական գործոնի նշանակություն ունեցող Իրանը և Չայնաստանը, հնարավոր է որոշ արաբական երկրներ: Ամերիկայի վերլուծական «Stratfor» ծառայության հետազոտողները կարծում են, որ ԱՄՆ-ը կանխելով Թուրքիայի հետ ահազանցող հիմնախնդիրները, կծգոի մշտական լարվածություն պահպանել Ռուսաստան-Թուրքիա-Իրան նռանկյունու կողմերի միջև իրրես տվյալ երկրների և տարածաշրջանի նկատմամբ վերահսկողության կարելու միջոց:

Եվրոպացիները, նախ և առաջ Գերմանիան, որը եվրասիան դիտարկում է որպես հունքի այլընտրանքային աղբյուր, ամենեին ոգևորված չեն այդ տարածքում Թուրքիայի դերակատարությամբ: Գերմանիայի տեսակետից Թուրքիան ոչ միայն «ավելորդ» գործընկեր է իր արևելյան քաղաքականություն մեջ, այլև նշյալ վունքի և վառելիքի աղբյուրների օգտագործման մրցակից: Եվրասիայում առավել ընդունելի, արդյունավետ ու բնական գործընկերը Գերմանիայի համար Ռուսաստանն է, որն ունի հունքային պաշարների արտահանման գործող ենթակառուցվածքներ: Դրանով է բացատրվում Գերմանիայի ձգտումը Ռուսաստանում կոնտրաբանիտիցների հաղորդակցությունների ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելը, որը վերաբերում է նաև ՏԱԽՄ եվրոպական ծրագրին:

Ամերիկա-թուրքական հարաբերությունները, կրելով բավականին հակասական բնույթ, բովանդակում են փոխբացառող միտումներ և դրանով իսկ հետաքրքիր են Միջին Արևելքում և Կենտրոնական Եվրոպայում ԱՄՆ քաղաքականության բնթարմանը ռեպրեսն: Այսօր ԱՄՆ-ի վարչակազմում ձեւավորվել է առանձնահատուկ ղեկավար կազմ: Ջորջ Բուշի վարչակազմը ամերիկյան խթելիչներին համատեքստում լուսանցքային է (մարզիախ), ինչ-որ ճշմարիտ է նաև Դանրապետական կուսակցության, վերջինից աջ բեկի և նույնիսկ աշխատակազմի վերաբերմամբ: ԱՄՆ-ում Բուշի քիմի անդամներին ընդունված է անվանել նորպահպանողականներ, քեե վերջիններս այն քաղաքական գործիչներն են, որոնք ունեն որոշակի գաղափարներ ու գաղափարախոսություն, և կարծում են, որ վերափարները մեծ նշանակություն ունեն արտաքին և առիասարակ քաղաքականության ասպարեզում:

Նորպահպանողականներն արտահայտում են ամերիկյան անվտանգության, նորագոյանականության և քրիստոնեական արմատականության որոշ գաղափարներ: Նրանք հիմք են ընդունում ԱՄՆ-ի հարավային նահանգների գաղափարախոսական և քաղաքական ավանդույթները արմատներ ունենալով Դանադաշնայինների պատմության մեջ: Քրիստոնեական արմատականությանը հարող ամերիկյան համայնքներն են բազալիստական, մեթոդիստական և այլ բողոքական եկեղեցիները, ինչպես և ԱՄՆ-ի բնակչության շուրջ մեկ քառորդը: Վերջիններիս բվին է պատկանում նաև Բուշի ընտանիքը: Նորպահպանողականները բավականաչափ ուժեղ չեն արդի ամերիկյան քաղաքականությունում, որտեղ նկատելի է կեղծ-ծախական գաղափարներն օգտագործող ազատական գաղափարների դիրքերի

հզորացումը: Այդ գաղափարները ներկայացված են Դեմոկրատական կուսակցության քաղաքականությանը, քեե տվյալ կուսակցության ոչ բոլոր խմբավորումները, նաև Կոնգրեսում, համավարծիք են ազատական և ծայր գաղափարների վերաբերյալ: Դեմոկրատական կուսակցության մեջ կան բավականաչափ պահպանողական քաղաքական գործիչներ: Այնուամենայնիվ, այդ կուսակցությունն ԱՄՆ-ում առաջարկում է առավել գաղափարական-նեղած քաղաքականություն վարել: Ներքին քաղաքականության ուղրտում դեմոկրատները կողմ են ընկերային վերաախիտումների զարգացմանը և ընկերային պետության կայունակից: Արտաքին քաղաքականության ասպարեզում դեմոկրատները կողմնակից են տարերք առիթներով ու պատրվակներով պետությունների ու տարածաշրջանների գործերին ԱՄՆ-ի համապարեզում միջնատությանը: օգտագործելով մարդու իրավունքների և ազատությունների սկզբունքների պաշտպանությունը անկայն քաղաքականություններից, ավանդույթներից և կոնկրետ հանրույթներից:

Ինչպես Դանրապետական, այնպես էլ Դեմոկրատական կուսակցություններում ուժեղ է «իրական քաղաքականության» կողմնակիցների քիվը, որոնք ժխտում են որեւէ սկզբունք քաղաքականության մեջ, նաև գաղափարախոսություն, պաշտպանելով ԱՄՆ-ի ե նրա քաղաքացիների շահերի պաշտպանության գերակայությունները անկայն ընդունված միջազգային կարգերից ու կանոններից: «Իրական քաղաքականության» կողմնակիցները փորձում են Ջ. Բուշի վարչակազմին պարտադրել իրենց համարույթն ու հայացքները հատկապես արտաքին քաղաքականության ասպարեզում: Գործնական քաղաքականության մեջ Ջ. Բուշի վարչակազմը ավելի ու ավելի է հակվում «իրական քաղաքականության» սկզբունքների կողմը, քեե «նորպահպանողականներ» բառեզրը ավելի հարմար է Բուշին ու նրա քաղաքական շրջապատին:

Թեե ԱՄՆ-ի դիրքորոշումը այնպիսի պետությունների նկատմամբ, որպիսիք են Իսրայելը և Թուրքիան, բավականին հակասական է թվում նորպահպանողականների սկզբունքների հատկապես քրիստոնեական (բողոքական) արմատականության տեսանկյունից, սակայն միանգամայն համաձայնի է «իրական քաղաքականության» սկզբունքների առումով: Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում նորպահպանողական շարժումը տրամադրված է ոչ միայն պարզապես իսլամական արմատականության, այլև մահմեդականների դեմ որպես այդպիսից: Ինքնին նորպահպանողականները հսկասեմական հալացքներ ունեն: Ասկայն քրիստոնեական արմատականության շրջանում կան իսրայելամետ տրամադրություններ, քանի որ բավականաչափ բողոքական կրոնական համայնքներ ու եկեղեցական կազմակերպություններ կարծում են, որ Իսրայելի ստեղծումը նպաստում է Մեսիայի երկրորդ գալուստին, իսկ հուդայականները արտահայտում են Դին կրտականի գաղափարները և միաստվածության ներկայացուցիչներն են: Դատկապես երեք գաղափարաքաղաքական հոսանքները նորպահպանողականության, «իրական քաղաքականության» են քրիստոնեական արմատականության ուղղություններն ընդհանուր առմամբ արտահայտում են ամերիկյան ավանդականության (տրադիցիոնիզմ) և նորպահպանողականության գաղափարները, որոնց հիմքի վրա մեավորվում է Ջ. Բուշի ղեկավարած լուսանցքային վարչակազմը:

Կարծիք կա, որ այս խումբը ձեւավորվել է Ռ. Ռեյզանի նախագահության շրջանում, ինչն անկասկած հիմքեր ունի: Ասկայն Ռ. Ռեյզանը «դասական» ամերիկյան հանրապետականություն արտահայտիչներից էր և հե-

վում էր առավել լայն քաղաքական ու հասարակական խմբերի ու բնակչության խավերի վրա: Ոնեյանը ժողովրդականություն էր վայելում նույնիսկ Պեննիլատական կուսակցության ավանդականների շրջանում: Ո՛նեյանի վարչակազմը չէր ձգտում աշխուժացնել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, բայց նպատակադրվել էր կործանել խՍՀՄ-ը և խորհրդային համակարգը: Նրան և իր վարչակազմին չէին հետաքրքրում որոշ բռնապետական երկրներում մարդու իրավունքների և ներքին հիմնախնդիրները, եթե չէին սպառնում ԱՄՆ-ի շահերին: Բայց հենց Ոնեյանի նախագահության օրոք որվեցին այն քաղաքականության հիմքերը, որը փորձում է կենսագործել Ջ. Քուլ կրտսերը: Տարածաշրջանների և պետությունների գործերին ԱՄՆ-ի կողմից միջամտություն, հատկապես ռազմական միջամտություն՝ ենթադրվում է միայն ԱՄՆ-ի դեմ սպառնալիքի կամ կենսականորեն կարևոր շահերի վտանգված վիճելու դեպքում: Օրինակ, նորպահպանողականները և «Իրական քաղաքականության» կողմնակիցները վճռականորեն հանդես եկան Չարավայլվիայի դեմ ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունների իրագործման դեմ, քանի որ կարծում էին, թե Բալկաններում ԱՄՆ-ի շահերին ոչինչ չի սպառնում Ջ. Քուլի վարչակազմը, սակայն, չի ներկայացնում Չանրավայլվածական կուսակցության «դասական» ավանդույթները: Այս վարչակազմը նոր քաղաքականության ավանդույթի և քաղաքական ոճի արտահայտիչն է: Չլինեն սեպտեմբերի 11-ը, դեռես հույսեր կային կասեցնելու Ջ. Քուլի արտաքին քաղաքականությունը, բայց «Սեպտեմբերի 11-ը» բարենպաստ պայմաններ ստեղծեց Ջ. Քուլի վարչակազմի առավել արմատական գործիչների քաղաքական ուղեգծի զարգացման համար:

2001 թ. նախագահական ընտրություններում, երբ ԱՄՆ-ում բարձրագույն հավաստիության ալիք, իսկ հրեական կազմակերպություններում ու համայնքը ամբողջապես աջակցեցին Պեննիլատական կուսակցությանը, Ջ. Քուլի վարչախմբում հայտնվեցին բազմաթիվ հրեաներ, որոնք զբաղվում են եվրոպական, Արևելաեվրոպական և Միջինարևելյան խնդիրներով: Հրեաների ծագմամբ այս գործիչները լինելով իրաչալի մասնագետներ, բազմաթիվ այլ վարչադարձերի հետ դարձան Իսրայելի ու Թուրքիայի շահերի արտահայտիչներն ԱՄՆ-ում: Պաշտպանության փոխնախարար Պոլ Վուլֆովիցը, պետքարտուղարի տեղակալ Մարկ Գրոսմանը, պաշտպանության հարցերով նախագահի օգնական Դուգլաս Ֆեյրը և այլք Թուրքիայի վստահելի անձինք են: (Օրինակ, Մարկ Գրոսմանը բուրգ-հայկական հարաբերությունների կարգավորման նախաձեռնողը և վերահսկողն է, իսկ Գ. Ֆեյրը գործառնության թուրքական լորբիստ է): Թուրքիան որևէ լուրջ խնդիրներ Քուլի վարչախմբի հետ չունի այդ երկրի ավանդական շահերի տեսանկյունից: Թուրքիան Պենտագոնի միջոցով առանց որևէ ջանքի լուծում է շատ հարցեր չունեցող Կոնգրեսի օգնությամբ: Պենտագոնը օգտագործում է Թուրքիային, վերլուծաբանների կարծիքով՝ հուսանելի գործընկեր: Մի շարք ամերիկյան վերլուծաբանները կարծիքով՝ Պենտագոնը օգտագործում է Թուրքիային, վերջինիս հավակնություններն ու ձգտումները որպես կարևոր գործոն ու կռվան վարչակազմում ու Կոնգրեսում առանձին խմբավորումների ու գործիչների հետ ենթադրաբանական պայթարում: Միաժամանակ, ի հայտ են եկել Թուրքիայի նոր շահեր ու ռազմավարություն, ինչը ոչ մի կերպ համատեղելի չէ ամերիկացիների պատկերացումների հետ: Այդ առնչությամբ ուշագրավ կլինի Բվարկել Թուրքիայի ավանդական ու նոր շահերի հարաբերակցություն-

ընդ ԱՄՆ-ի քաղաքականության հետ դրանց համատեղման հարցը: Բուռն տնտեսական ու քաղաքական զարգացումից հետո Թուրքիան ապրեց խոր քաղաքական ու պետական ճգնաժամ, որը հազիվ թե նմարավոր լինի հարցադարձի միայն զգալի արտաքին ֆինանսական օգնությամբ: 2001 թ. Թուրքիայի ԴՆԱ ծավալը կրճատվեց 5 տոկոսով: Այս ճգնաժամի պատճառները հետևյալն են: Տնտեսական արագ զարգացման հետ Թուրքիայում շտեղծվեցին բնակչության ընկերային պաշտպանվածության համապատասխան հաստատություններ: Ինժե արմիությունների ու ծախսների աշխույժ գործունեությանը, վերջին տասնամյակներում Թուրքիան զարգանում էր որպես չափազանց աջ հանրույթ, որում ընկերային շերտավորված բարձր մակարդակ ուներ: Բնակչության արագ աճը, զավտների զարգացման համար բավարար ներդրումների բացակայությունը հանգեցրին գործազրկության աճ: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների պահանջով տնտեսության ազատականացման արագացումը հանգեցրեց պետական ծախսերի կրճատման նաեւ համայնքային մակարդակում: Դա վերաբերում էր ամբողջ համապետական բյուջեին: Գրականության մեջ և վերլուծական աշխատանքներում նվազ ուշադրություն են դարձնում այնպիսի գործոնի, որպիսին է Կենտրոնական Ասիայում և ԱՊՀ-ում ընդ, մատչելի ռուկների նվաճման հույսերի կորուստը: Թուրքիան մեծ հույսեր ուներ իր համար նախապատվելի պայմաններով գործունեություն ծավալել Միջին Ասիայի և Չարավայլված Կովկասի երկրների շուկաներում: Նախ այդ շուկաները բավականաչափ մեծ ու զարգացած չէին, իսկ այդ պետությունների ծախսերը բավականին սահմանափակ էին: Երկրորդ, տվյալ շուկաներում թուրքական ապրանքները մրցողունակ էին չինական և իրանական արտադրանքի համեմատությամբ: Երրորդ, Թուրքիան ամերիաեշտ ներդրումային և տեխնոլոգիական պաշարներ չունեցր այդ երկրներում բարձր տեխնոլոգիական ուրտներում ներդրման համար: Չորրորդ, Թուրքիան հուսով էր ստանալու ԱՄՆ-ի քաղաքական աջակցությունը այդ տարածաշրջաններում, որտեղ իրենք ունեին իրենց խնդիրներն ու պատկերացումները Չարավայլված Կովկասի և Միջին Ասիայի հեռանկարների վերաբերյալ: Հինգերորդ, այդ տարածաշրջանների պետությունների կառավարությունները չնախընտրեցին Թուրքիային որպես գլխավոր և գերակայելի քաղաքական ու տնտեսական գործընկեր: Արդյունքում, թեև Թուրքիայի կողմից արտահանումն այդ շրջաններ չկրճատվեցին, բայց և չաճեցին, չնայած այդ հաշվարկով Թուրքիայում ստեղծվել էին նոր զգալի հզորություններ արդյունաբերության մեջ: Թուրքիայում տնտեսական անկման կարևոր գործոն էր նաեւ եվրամիության կողմից իր կազմում Թուրքիային ընդգրկելու համար հանդիչ նախապայմանների ազդանշանների բացակայությունը: Ժ. Շիրակի և Գ. Շյուրդերի «դրական» վերաբերմունքը եվրամիության կազմում Թուրքիային ընդունելու հարցում, ինչը եղավ 2002 թ. վերջին, նպատակ ունի այդ խնդիրը հետաձգել անորոշ ժամանակով: Արդյունքում, գործող քաղաքական գործիչները Թուրքիայում կորցրեցին իրենց հեղինակությունը, թուրքական ընկերությունները անորոշ սպասումների մեջ ընկան մնալ տնտեսական հեռանկարի համատեքստում: ԱՄՆ-ը պնդում է Թուրքիայի մուտքը եվրամիությունների կախվածության մեջ է պահում իր քաղաքականությունից: Սովորաբար եվրամիությունների պատույթների մեթոծում բացատրվում է Թուրքիայի մեծությանը, տնտեսական և ժողովրդավարական անկատա-

րությանը եւ ժողովրդագրական ակիբի սպասելի վտանգներով: Ասկայն Պորտուգալիան եւ Հունաստանը եվրամիությանն անդամակցելու պահին ունենի ավելի վատ քաղաքական ու տնտեսական ցուցանիշներ, քան ներկայիս Թուրքիան: Եվրոպան Թուրքիան համարում է խորք քաղաքակրթությանը երկիր: Բացի այդ, եվրամիությունը դեռեւս չավարտելով համարված գործընթացները, ունի զգալի տնտեսական ու քաղաքական բարդություններ: Եվրամիությունը չունի միասնական քաղաքական կենտրոն հատկապես արտաքին քաղաքականության առումով, չունի զինուժ, եւ համազոր-ժանկության երկրները վարում են ինքնիշխան տնտեսական քաղաքականություն: Եվրամիությունը նկատելիորեն թուլացել է, եւ Թուրքիայի նման նույնպես: Եվրամիությանը նկատելիորեն օգտագործումը սահմանափակելու հարցում Թուրքիայի քաղաքականությունը որպես իր անդամակցության նախապայման, այդ երկրի դիրքերը չի դարձնում առավել բարենպաստ, այլ բացասաբար է ընկալվում եվրոպական շահերի տեսանկյունից:

Եվրոպայի կրմվենտի ղեկավար Վալերի ժիսկար դ'Էստենի այն հայտարարությունը, թե Թուրքիայի մուտքը եվրամիություն կհասնելու վերջինիս փլուզմանը, արտահայտում է այն եւ պահպանողական ուժերի տեսակետի վերադարձը: Եվրոպայի քաղաքական գործիչներն ավելի ու ավելի բաշտել են նշում Թուրքիայի հանրության կրոնական դավանանքի մասին: 2002 թ. ղեկտեներին Կոպենհագենում եվրամիության զագաթնաժողովում որոշում կայացվեց այդ հարցի քննարկումը հետաձգել մինչեւ 2004 թ., ինչը կարող է նշանակել հնարավոր դրական պատասխանի փոխանցում մինչեւ 2010 թ.: Ուշագրավ է, որ զագաթնաժողովից մի քանի ամիս անց, առաջատար եվրոպական վերլուծաբանները (օրինակ, հեղինակավոր փորձագետ Կլաուս Բեքերը) պնդում էին, թե Թուրքիայի անդամակցության հարցը եվրամիությունում փաստորեն վճռված է: Այս զարգացումները հանգեցրեցին Թուրքիայի թուլացմանը, մի շարք հավակնուտ աշխարհաքաղաքական կալվածության մեծացմանը, մի շարք հավակնուտ աշխարհաքաղաքական ու ռազմատեխնիկական ծրագրերից հրաժարվելու: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ ոչ մի ենթադրյալ կոնստիտուցիոնալ Թուրքիայում ի վիճակի չէր նույնիսկ մասնակիորեն լուծել տնտեսական ու քաղաքական հիմնահարցեր առանց ԱՄՆ-ի ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների օգնության ու աջակցության: Հարկ է նշել, որ Թուրքիայի կալվածության մեծացումով, ԱՄՆ-ը կանգնեց այդ երկրում չափավոր ծախս ու իսլամական կոնստիտուցիոնալների իշխանության գալու անցնելու անպայման հեռանկարի առաջ: Այդ առումով, Բուշի վարչախումբը բավականին հետևողական էր: Թուրքիայի ժողովրդավարացման պատրանքային սկզբունքներից եւ ընդունեց միակ հնարավոր լուծումը երկրում զինվորական ընտրամալի վերահսկողության պահպանումը: Թուրքիայում ԱՄՆ-ի շահերին չհամապատասխանող քաղաքական կուսակցությունների իշխանության գալու սպառնալիքի դեպքում ամերիկացիները նախատեսում են զինվորականներով հերթական սահմանադրական միջամտության իրագործումը:

Փետրվարին ԱՄՆ պաշտպանության նախարարության ավագ խորհրդական Ռիչարդ Փերլը Իրաքի խնդրի նկատմամբ վաշինգտոնյան խորհրդաժողովի իր ելույթում հայտարարեց, որ Թուրքիան միայն կշափ Բաղդադի վարչակարգի փոփոխությունից: Նա խոստովանեց, որ սկզբից երկիրն արձ-

րագույն ղեկավարությունը դեմ էր ամերիկյան զորքերն իր երկիր տարածնու տեղակայելու գաղափարին: Ասկայն երկարատեւ բանակցություններից ու խորհրդակցություններից հետո, ԱՄԿարան կարծես հասկացավ իրանյան բռնապետական վարչակարգի դեմ ռազմական գործողությանը մասնակցելու անհրաժեշտությունը: Ավելին, Վաշինգտոնը առաջին հավասարեցական գործողության հաջողությունն անհնար է համարում առանց Թուրքիայի մասնակցության: Իրաքում ժողովրդավարական հաստատությունների կայացումից հետո Թուրքիայի սպասվող հեռանկարների մասին իր խոսքում Փերլը ընդգծեց, որ Թուրքական շինարարական ընկերությունները կստանան ենթակառուցվածքները, արդյունաբերական ձեռնարկություններն ու բնակելի շենքերը վերականգնելու իրավունքը եւ կապիտալները: Բացի այդ, նավթային ընկերությունները իրաշալի հնարավորություն կստանան մասնակցելու նավթահանքերի մշակման մրցույթին (Կենտրոնական Ասիայի նորություններ, 7 փետրվարի, 2003 թ., <http://www.centras.ru/>): Պենտագոնի առաջատար քաղաքական ծրագրավորողի այս հայտարարությունը անկասկած լուրջ հիմքեր ուներ: Ասկայն հատկապես հայտնի թուրքամետ լրքիստ Ռ. Փերլը ազակուցեց Պենտագոնին կից պաշտպանության հարցերով խորհրդի նախագահի պաշտոնից՝ գործողությանը մասնակցելու վերաբերյալ Թուրքիայի մերժումից անմիջապես հետո:

Թուրք-ամերիկյան հարաբերություններն անհնար է դիտարկել առանց տարածաշրջանային հիմնախնդիրների հետ առնչությունների տեսանկյունից: Եվելով այս քաղաքական նախարդանքներից, քննարկենք թուրք-ամերիկյան հարաբերությունների հիմնական արդիական ասպեկտները:

2.2. Իսրայելական եւ քուրդական ծրագրերը Իրաքի եւ տարածաշրջանի պետությունների վերաբերյալ

2002թ. գարնանը եզիպտական, սիրիական եւ լիբանանյան փորձագետները, նաեւ Նրաջ եվրոպական արար գործընկերները պնդում էին, թե Իսրայելը ու Թուրքիան ռազմական գործողությունների ծրագրեր են մշակում ընդդեմ Սիրիայի ու Իրանի Իրաքի դեմ ԱՄՆ-ի կողմից ցամաքային գործողություններ սկսելու դեպքում: Ավում էր, որ Իսրայելի ու Թուրքիայի Գլխավոր շտաբները ստեղծել են համատեղ հատուկ խումբ, որը պետք է մշակի երկու պետությունների զինուժի ռազմական գործողությունների մշակ ծրագրեր: Հարկ է ավելացնել, որ ամառն Իրանի, ըստ երևույթին, Իսրայելի ու Թուրքիայի պլանները Սիրիային ու Իրանին հարվածներ հասցնելու առումով գործնականում մշակված էին: ԱՄՆ-ը որոշակի զգուշավորությամբ ընդունեց իր տարածաշրջանային զաշնակիցների այդ նախաձեռնությունները: ԱՄՆ-ը գերադասեց հասկացնել, որ Իսրայելի մասնակցությունը գործողությանը բավականին խնդրահարույց է, սակայն եւ դա չի կարելի բացառել, իսկ այդչափ սերտ թուրք-իսրայելական ռազմական համագործակցությունը չի կարելի դիտարկել իրրեւ ամբողջովին ինքնուրույն եւ ինքնավար: Նկատի էր առնվում հետևյալը.

1. Իսրայելը ու Թուրքիան փորձել են իրենց մտադրությունները ԱՄՆ-ին ներկայացնել որպես զուտ պաշտպանական, եթե Իրաքի դեմ գործողությունը դուրս գա վերահսկողությունից: Նրանք նախահեցել են ԱՄՆ-ին, որ մտադիր չեն կիրառել լայնածավալ հարվածներ եւ խոսքը միայն սահմանափակ ու ժգնության հարվածների մասին է այն դեպքում, եթե Սիրիան ու Իրանը ձեռնարկեն իրենց ամվտանգությանը սպառնացող քայլեր:

2. ԱՄՆ-ը բավականաչափ անհանգստացել է Իրաքի դեմ գործողությանը միջամտելու Իսրայելի մտարություններից: Ավայայտ այդ անհանգստությունը արտահայտում է փաստորեն միայն պետքարտուղարությունը, իսկ Պենտագոնը միանգամայն հնարավոր է համարում Իսրայելի որոշ սահմանափակ մասնակցությունը այն դեպքում, եթե Իրաքը օդային զորի ձեռնարկի Իսրայելի դեմ: Տ. Բուշի եւ Ա. Շարոնի զրույցներում Իրաքի դեմ արշավում Իսրայելի մասնակցության տարբերակները, իբրև այդպիսիք, չեն քննարկվել: Քննարկվել են Իսրայելի անվտանգության հարցերը Իրաքի դեմ ԱՄՆ ռազմական գործողությունների համատեքստում:

3. Հարկ է նշել, որ Թուրքիան պակաս արձատյական դիրքորոշում ունեւր, քան Իսրայելը: Թուրքիայի ռազմական ու քաղաքական գործիչները չէին ցանկանում երկիրը ներքաշել Սիրիայի, առաւել եւս՝ Իրանի դեմ պատերազմի մեջ: Թեւ 2001 թ. սկզբին եւ 2002 թ. բավականին սերտ հարաբերություններ էր հաստատել Սիրիայի հետ, սակայն չի քացառել հնարավոր օգնական գործողություններ նրա դեմ: Իրանի հետ հարաբերությունները տարբեր գնահատումներով լարված էին, սակայն Թուրքիան չունի այնպիսի պահանջներ Իրանից, որոնք պատերազմի պատճառ լինեն: Այնուամենայնիվ, իբրև հակաիրաքյան դաշինքի հնարավոր անդամ Թուրքիան վախենում է տարածաշրջանում մեկուսացված մնալ եւ չի կարող անտեսել Իսրայելի առաջարկը, ինչպէս նաեւ հաշվի չառնել իրադարձությունների հնարավոր զարգացումը եւ Իրաքի դեմ ռազմաորշավը ընդհանուր տարածաշրջանային պատերազմի վերածելու վտանգը:

4. Իսրայելը եւ Թուրքիան ԱՄՆ-ին ներկայացրել են հետևյալ փաստարկները: Սիրիայի եւ այլ արաբական երկրների հնարավոր ռազմաքաղաքական եւ նյութական օգնությունն Իրաքին: Իրաքի կողմից Իրանի եւ Սիրիայի հաղորդակցական միջոցների ու ենթակառուցվածքների օգտագործումը: Իրանի եւ Սիրիայի տարածքները տարբեր արձատյական զինված կազմակերպությունների կողմից օգտագործումը ընդդեմ Իսրայելի, Թուրքիայի եւ Իրաքում թուրքական զինուժի: Սիրիայի եւ Իրանի տարածքներում Իրաքի զինուժի ու ռազմատեխնիկական ներուժի, ղեկավարների ու նյութական միջոցների հնարավոր ներկայումս:

5. Թուրք-իսրայելյան ռազմական ծրագրերից բացի, Իսրայելը մշակել է Սիրիային հարվածներ հասցնելու ինքնուրույն ծրագրեր: Ընդ որում, որպէս թիրախ նախատեսվում են ոչ միայն այդ երկրի տարածքում ռազմական կառույցները, այլեւ կարեւորում են Սիրիայի հակաօդային պաշտպանությանը, ռազմաօդային ուժերին եւ զրահատեխնիկային եական վնասներ պատճառող հարվածները: Լույսպիսի նպատակներ առաջարկված էին թուրք-իսրայելյան ծրագրերում:

6. Թուրքիան եւ Իսրայելը անհանգստացած են Սիրիայի ու Իրանի աջակցությամբ մահմեդական զինված կազմակերպությունների կողմից իրենց տարածքներին հարվածելու հնարավորությունից: Դա հիմնական սպառնալիքն է եւ ամերիկացիների համար գլխավոր փաստարկն է Սիրիայի եւ Իրանի դեմ ռազմական հարվածներ հասցնելու Իսրայելի ու Թուրքիայի իրավունքի: Իսրայելը ավելի ու ավելի համայն է Սիրիային ու Իրանին մեղադրում ոչ միայն Լիբանանի հարավում, այլեւ Պաղեստինում «Յըզբուխի» գործունեությանը աջակցություն ցույց տալու մեջ:

Իսրայելի համար շատ կարեւոր էր թեկուզ խորիրդանական մասնակցությունը ընդդեմ Իրաքի, ինչը թույլ էր տալու հաղթահարել ԱՄՆ-ի որոշ քա-

ցասական վերաբերմունքը իր քաղաքականության նկատմամբ, հնարավորություն էր տալու ԱՄՆ-ին կապել իսրայելական քաղաքականության առավել արձատյական ծրագրերին: Իսկ Իսրայելի ծրագրերը ուղղված են տարածաշրջանային դաշինքի ստեղծմանը, որի կորիզը կլինեն Իսրայելն ու Թուրքիան: Ներկայումս Թուրքիան ցուցաբրում է իր բացասական վերաբերմունքը Իսրայելի հիմնախնդիրներին՝ տարածաշրջանում Իսրայելի բախումնային դիրքորոշումներին մասնակից լինելու հարցերում: Միաժամանակ, Իսրայելը եւ չի ցանկանում ներգրավվել Թուրքիայի արտաքին քաղաքականության խնդիրների լուծումներում եւ փորձում է Թուրքիայի շահերի գոտում Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում վարել ինքնուրույն քաղաքականություն: Թուրքիայի եւ Իսրայելի այս կեցվածքը նշվում է արաբական եւ եվրոպական բազմաթիվ փորձագետների կողմից:

Հարկ է նկատել, որ Իրանական շրջանակների հնարավորությունների վերաբերյալ Թուրքիայի ունեցած նախկին պատրանքները, համաձայն ուրուկ վերջինները պետք է լուծեին իր հիմնախնդիրները ԱՄՆ-ի եւ Եվրամիությունում աղոթել չի չիք եւ դարձել: Թուրքիան հասկանում է, որ քաղաքական սպասարկումը, ինչն իրեն առաջարկում էին ԱՄՆ-ի Իրանական շրջանակները, ակնհայտորեն չեն համապատասխանում Թուրքիայի պահանջներին: Արդյունքում ստեղծվեց տարիմաստ իրավիճակ, երբ Թուրքիայի ու Իսրայելի միջեւ աշխույժ ռազմական եւ ռազմաքաղաքական համագործակցությանը զուգահեռ՝ քաղաքական համագործակցությունը ակնառու կերպով ետ է մնում: Բազմաթիվ գնահատումներով, այնուամենայնիվ, առաջիկայում տեղի կունենա թուրք-իսրայելական ռազմաքաղաքական համագործակցության աշխուժացում, քանի որ երկու երկրների խնդիրները համամասն բնույթի են եւ ունեն տարածաշրջանային ընդհանուր հակահարկեր: Հարկ է աւելել, որ ոչ Իսրայելին, ոչ Թուրքիային ձեռնտու չէ միայն իրենց մասնակցությամբ մեկուսի դաշինք, եւ Վրաստանի, Ադրբեջանի ու Գորդանանի հնարավոր մասնակցությամբ Թուրքիան եւ Իսրայելը ցանկանում են ստեղծել ԱՄՆ-Իսրայել-Թուրքիա տարածաշրջանային դաշինք: Այս դաշինքը կստանա համաշխարհային աշխարհառազմավարական նշանակություն եւ տարածաշրջանային մեկուսացվածության տարրերը այնքան սպառնալից չեն լինի: Ուստի, հատկապես Իրաքի դեմ ռազմաշրջակում մասնակցությունը կհանգեցնի այդ դաշինքի ստեղծման համար առավել նախընտրելի պայմանների ձեւավորմանը:

Նկատենք, որ Իրանի նկատմամբ Իսրայելն ըստ երեւույթին մշակել է նվազագույն եւ առավելագույն ծրագրեր: Առաջինը նշանակում է իրանամետ կազմակերպությունների, ներառյալ Լիբանանում իրանական Իրահան-զինելու, արձատյական իրանամետ խմբերի ռազմական եւ քաղաքական առաջնորդների ոչնչացում: Առավելագույն ծրագրի համաձայն, ներառվում են հարվածներ Իրանի ռազմածովային նավատորմին, ատոմային եւ այլ բարձր տեխնոլոգիական օբյեկտներին, Իրանի տարածքում իրաքյան ռազմական գործողությունից առաջ կամ հետո իրականացվող գործերին:

Կարելու են Իսրայելի ու Թուրքիայի մտարությունները եզրագրատում, Սիրիայում, Սաուդյան Արաբիայում, Գորդանանում, Լիբանանում Իրաքի դեմ գործողության արդյունքում ընկերային-քաղաքական դրությունն ապակայունացնելու վերաբերյալ: Այդ դեպքում, բազմաթիվ արաբական ու մահմեդական արձատյականների հիմնական գործունեության քատերաբեմը կդառնան Իրաքը, Սիրիան եւ Լիբանանը: Այս պարագայում Իրանին տրվում է տարածաշրջանային «համեղակարի» դերը, ինչպէս նաեւ քաղաքական գոր-

ծիչների ու կազմակերպիչների համդիպավայրի կարգավիճակ: Իսրայելի ու Թուրքիայի քաղաքական ղեկավարները գիտակցում են, որ Իրաքի ռազմական պարտությունը տարածաշրջանում երկարատև կայունության պատճառ չի դառնա, այլ կլինի դիմակայության պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբը: Ավելին, Իրաքում սադդամյան վարչակարգի դեմացույցը հանգեցրեց տարածաշրջանում նոր հակամարտիչներ ու հակաիսրայելյան շարժումների առաջացմանը: Իրաքի դեմ գործողության ավարտը ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին հնարավորություն տվեց խիստ գործողություններ սկսել Իրանի դեմ, որոնք, սակայն, հազիվ թե քաղաքական որոշումներից այն կտան անցնեն: Ուստի Իսրայելի ու Թուրքիայի ծրագրերը ավելի շուտ կոչված են լուծել ոչ թե կարճաժամկետ, այլ միջին ժամանակային խնդիրներ: Թուրքիայի ու Իսրայելի միջև հարաբերությունների զարգացման տրամաբանությունն այնպիսին է, որ հազիվ թե խոսք լինի ռազմավարական բնույթի համագործակցության առկայության մասին: Սակայն Իսրայելը սկզբունքորեն պատրաստ է Թուրքիայի հետ ռազմավարական բնույթի համագործակցության: Ամեն դեպքում, Իսրայելը տանուլ չի տա եւ քաղաքական առունձվ չի վնասի Թուրքիայի հետ նման հարաբերությունների հաստատելու դեպքում: Թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման հիմնական խոչընդոտ հատկապես Թուրքիայի քաղաքական ու ռազմավարական շահերն են, որը ստիպված է բազմակողմանի ուղղվածության քաղաքականություն վարել:

Մեկ «Անվտանգության հիմնախնդիրները ԱՄՆ-ի միջինարևելյան քաղաքականությունում» ռուսերեն ճրված է («Ամսաթե» հրատարակչություն, Երևան, 2002), որը լույս էր տեսել Իրաքի դեմ կռախիցայի ձեռնարկած գործողությունից 30 օր առաջ, մենք ենթադրում էինք իրադարձությունների զարգացման հետևյալ բեմագրությունները (սցենարները):

«Ռազմական գործողությունները եւ նրանց հետևանքները Սիրիային առնչվելու դեպքում, Թուրքիան նախ կփորձի ներկայացնել Սիրիային վերջնազորն որոշակի պահանջներով: Ամեն հետևանքար արդեն ուրվագծվում է Թուրքիայի եւ Սիրիայի ներկայիս հարաբերություններում: Թուրք քաղաքական գործիչները եւ զինվորականությունը Սիրիային ակնարկում են, որ իրենց հարաբերությունների զգալի բարելավումը չի չիք կառան, եթե այդ երկիրը ներգրավվի տարածաշրջանում սպառնալից իրադարձություններում: Այժմ Թուրքիային ու Սիրիային միավորում է բրոնի խնդիրը, որի նկատմամբ նրանց տեսակետները նույնանման են: Սակայն Թուրքիայի քաղաքական վարքի գլխավոր շարժառիթը կապված է այդ երկրում տեսական ու անկանխատեսելի տնտեսական ճգնաժամի, իրական քաղաքական կայունության չգոյության, երկրի ռազմական ու քաղաքական ղեկավարության միջև զգալի հակասությունների, իսլամականների ու բրոնի կողմից սպառնալիցի պահպանման հետ: Թուրքիան շահագրգռված չէ ոչ միայն Իրաքի, Սիրիայի եւ Իրանի, այլ առհասարակ որևէ մեկի դեմ պատերազմով: Այս տրամաբանություններն են գերակայում Թուրքիայի քաղաքական ու հասարակական շրջաններում: Ընդհանուր առմամբ, զինվորականությունը եւս այս դիրքորոշումն ունի: Միևնույն ժամանակ, հենց զինվորականությունն է գիտակցում որ Թուրքիայի կրավորականությունը տարածաշրջանային եւ համաշխարհային քաղաքականությունում կարող է երկիրը մեկուսացնել ու հանգեցնել հստակ արտաքին քաղաքականության ուղեգծի քայքայության: Իրաքի դեմ Թուրքիայի պատերազմելուց հրաժարումը կընձեռի որոշ առավելություններ, սակայն կարճաժամկետ ընթացքում: Մինչդեռ ավելի հեռավոր ապագայում

նման դիրքորոշումը Թուրքիային որևէ առավելություն չի տա ոչ արտաքական երկրներին, ոչ Իրանի եւ ոչ էլ Իսրայելի հետ հարաբերություններում:

Այսպիսով, Իսրայելը եւ Թուրքիան լրջորեն զգուշանում են Իրաքի դեմ պատերազմը համատարածաշրջանային պատերազմի վերածվելու հետևանքից, երբ ռազմական գործողությունները կարող են տեղափոխվել Իսրայելի ու Թուրքիայի տարածքները եւ հանգեցնել Սիրիայի, Իրանի եւ այլ երկրների ներգրավմանը: Իսրայելի ու Թուրքիայի գլխավոր շտաբների կողմից մշակված ծրագիրը նախատեսում է ինչպես Սիրիայի ու Իրանի առանձին օբյեկտների դեմ օդային գրոհներ, այնպես էլ զանգվածային հարվածներ նրանց գիտնական: ԱՄՆ-ի տեղեկություններով, Իսրայելն ու Թուրքիան ունեն սահմանափակ մտադրություններ: Հատկապես այս տեղեկությունները հատու դարձան արաբական քաղաքական շրջանակներին, Հունաստանի եւ Ֆրանսիայի կառավարություններին: Հնարավոր են, սակայն, այլ Իսրայելի ու Թուրքիայի ղեկավարությունների կողմից մշակված առավել լայնածավալ ծրագրերի գոյությունը:

Սակայն, հատկապես Սիրիայի նկատմամբ վերաբերմունքի հարցում ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իսրայելի միջև մոտ ապագայում ի հայտ կգան սկզբունքային հակասություններ: Սիրիան մնում է իր ավանդական դիրքորոշմանը, ինչը ենթադրում է մասներներ համաշխարհային եւ տարածաշրջանային տերությունների միջև: 2002 թ. նոյեմբերին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը, կարծեք, եսկան շուրջանային վերաբերմունքի միջին Արևելքի տարածաշրջանի վերաբերյալ բոլոր կանխատեսումներում, Թուրքիան եւ Սիրիան թուրք-արաբական հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ (քայքայության միջին Արևելքում) պայմանագրի ստորագրեցին ռազմական համագործակցության մասին: Այս պայմանագիրը թովանդակային առունձվ ռազմավարական բնույթ չունի, ավելի շատ կոչված է ընթացիկ գործունեության համագործակցության, սակայն ունի Սիրիայի ու Թուրքիայի հարաբերությունների միջև լարվածությունը թուլացնելու նշանակություն: Անկասկած, ԱՄՆ-ը կարելի էր դեր խաղաք թուրք-սիրիական հարաբերությունների կրգավորման գործում: Միաժամանակ, տարածաշրջանային ներկայիս պայմաններում այս եւ նման պայմանագրերը հազիվ թե ի վիճակի են ազդել ռազմաքաղաքական դաշինքների եւ պետությունների դիմակայության հիմնական միտումների վրա: Թուրքիայի ԱԳ ղեկավար Ա. Գուլի այցը Դամասկոս իրաքյան գործողությունների նախտեսի նպատակ ունեցավ ԱՄՆ-ից ցուցադրել Թուրքիայի կարողությունը տարածաշրջանային հարեւանների հետ հարաբերություններ կառուցելու առանց ԱՄՆ-ի միջնորդության: Ամեն դեպքում նույնիսկ թուրք-սիրիական պայմանագրի ստորագրումից հետո հարաբերությունները Սիրիայի ու Իրանի, Սիրիայի ու Իրաքի, նաեւ Սիրիայի ու Հունաստանի միջև ավելի սերտ ու վստահելի են, քան Թուրքիայի միջև:

Ռազմական գործողությունների սկզբից մի վոքր առաջ, Թուրքիան քայլեր ձեռնարկեց տարածաշրջանի պետությունների միջև որոշակի հարաբերությունների ձեւավորելու ուղղությամբ, ընդ որում՝ վերջիններս պետք է ունենան թուրքական կողմնորոշում, իսկ Թուրքիան ունի սերտ հարաբերություններ ԱՄՆ-ի ու Իսրայելի հետ, առավել անվտանգ վիճակում է եւ հավակնում է տարածաշրջանային առաջնորդի դերին, թեեւ բոլոր այդ առավելությունները հարաբերական դարձան ռազմաքաղաքական մասնակցությունից հրաժարվելու դեպքում: «Թուրքիան Իրաքի հարցով կկազմակերպի տարածաշրջանային խորհրդակցություն: Ամերիկյան դաշնակցի կողմից համար-

վելով հարևան Իրաքի դեմ պատերազմի ղեկավարն էին հանվում, թուրքահայ ցանկանալով խուսափել հակամարտությունից 2003 թ. հունվարի 16-ին հայտարարեց, որ հավանաբար հաջորդ շաբաթվա մեջ կանցկացնի զագաթնաժողով՝ փորձելով լուծել ճգնաժամը: Հանդիպմանը հրավիրված են Սիրիան, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Հորդանանը եւ Իրանը» (17 հունվարի, 2003 թ. Le Monde, http://www.inosmi.ru):

Իսրայելը չի կարող անտարբերությամբ վերաբերվել «Արդարություն եւ զարգացում» իսլամական կուսակցության քաղաքական հաջողությանը: Անկասկած, այդ երկիրը մինչեւ թուրքիայի քաղաքական կյանքում տվյալ իրադարձությունը, ինչպես եւ Մախրոբ «Ռեֆահ» կուսակցության ղեկավար, կապեր ուներ նաեւ իրավահարգողի հետ: Բայց իսլամական քաղաքական սյուժեները ցանկալի չեն Իսրայելի համար: Իսրայելյան լրատվամիջոցների ու հեղինակների վերլուծական հրապարակումների դիտարկումը թույլ է տալիս առաջադրել այն վարկածը, որ Իսրայելում մեծ անհանգստություն չի նկատվում թուրքիայում իսլամական կուսակցության հաջողության կապակցությամբ: Խնդիրն այն չէ, որ այդ առնչությամբ Իսրայելում զուսպ գնահատականներ են տրվում: Այստեղ լավ են հասկանում, որ թուրքիայում իսլամական, ինչպես եւ մյուս կուսակցությունները գործնապաշտ են ու գերակայելի են համարում երկրի ազգային շահերը: Այս էական հանգամանքը թույլ չի տա հարվածի տակ դնել թուրք-իսրայելական համագործակցությունը:

«Իսրայելին անհանգստացնում է իսլամամետ կուսակցության հաղթանակը թուրքիայում: Իսրայելի քաղաքական շրջանակները տագնապ են արտահայտում թուրքիայում կայացած ընտրություններում «Արդարություն եւ զարգացում» իսլամամետ կուսակցության հաղթանակի առիթով: Դիտարկելով զգուշանում են, որ թուրքիայի քաղաքական քարտեզի փոփոխությունը կվճարի այդ երկրների հարաբերություններին» (04.11.02, www.Jewish.ru):

Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, Իսրայելը լայնածավալ նախաձեռնություններ է սկսել Եվրոպայի թուրքական պետությունների հետ հարաբերությունները ամրապնդելու ուղղությամբ, ինչը կարելի է անվանել «Իսրայելյան եվրասիական նախագիծ»: Այս քաղաքական ուղղությունը Իսրայելի համար նորույթ չէ. նա միշտ ձգտում է հարթեցնել շրջապակումը մահմեդական աշխարհում: Սակայն այս նախագիծը հավանում է ստեղծել ինստիտուցիոնալ հարաբերություններ եվրոպական պետությունների հետ: Այս ծրագիրը, իրարեկ, ունի որոշակի նշանակություն թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման առումով: Եվրասիայում Իսրայելի բարենպաստ դիրքերը նրան հնարավորություն կտան թուրքիայի հետ հարաբերությունները կառուցել ավելի նախընտրելի դիրքերից: Ընդ որում, տվյալ «Իսրայելյան եվրասիական նախագիծը» կապակցվում է ՄԱՄ-ից հրեական քաղաքական-հասարակական կազմակերպությունների միջոցով:

«Եվրո-ասիական հրեական կոնգրեսի (EAEK) պրեզենտացիան սկսվում է հունվարի 27-ին ՄԱՄ-ում: Կոնգրեսի մասով ծառայության ղեկավարությունը, որը միավորում է ԱՊՀ բոլոր երկրների եւ Ասիական-խաղաղովկահանոսյան տարածաշրջանի պետությունների համայնքները, ժամանել է Նյու Յորք, ՄԱՄ-ի իշխանություններին եւ հասարակությանը միջազգային լրուվածությունը նվազեցնելու հարցերով միջազգային երկխոսությանը մասնակցելու հրավերի: EAEK-ի մասով ծառայության տվյալներով, Նյու Յորքում կկայանան Նյու Յորքի եւ ՄԱՄ-ի միավորված հրեական համայնքների (NY Jewish Federation) (UJC) եւ Կոնգրեսի ներկայացուցիչների հանդիպումները: Պատ-

վիրակությանը կընդունեն Համաշխարհային հրեական կոնգրեսի (WJC) նախագահ Էդգար Բրոնֆմանը եւ ՄԱՄ-ի հրեության կրոնական առաջնորդները ռեֆորմիստական ռաբբին Ամին Հիրշը, նրա ուղղափառ գործընկեր Արուրո Հեյալերը եւ «Մեծ Նյու Յորքի» հրեա-արտագաղթածների միավորման ներկայացուցիչները: Հունվարի 28-ին ծրագրված են EAEK-ի ղեկավարության մասով ասուլիսները եւ Կոնգրեսի հետ համատեղ Առաջատար ամերիկյան հրական կազմակերպությունների ղեկավարների կոնֆերանսի (Conference of Presidents of Major Jewish American Organizations), Նախկին խՍՀՄ հրեության գործերով ազգային կոնֆեդերացիա (NCSJ) եւ Համաշխարհային հրեական կոնգրեսի կազմակերպած մեծ ընդունելությունը: Իսկ հունվարի 29-ին Կոնգրեսի պատվիրակությունը կժամանի Վաշինգտոն, որտեղ հանդիպումներ կունենան ՄԱՄ ազգային անվտանգության հարցերով խորհրդակալն տեղակալ Սթիվ Դեյլիի եւ պետքարտուղարության Եվրոպայի ու Եվրասիական տարածաշրջանի հարցերով քարտուղարի օգնական Էլիզաբեթ Յոնսի հետ: Այսուհետեւ, պատվիրակությունը կայցելի ՄԱՄ Կոնգրես, որ կգրուցի հրեա կոնգրեսականների ու սենատորներ Բրաունբերկի, Շապիրոյի եւ Հիլարի Բլիմբոնի հետ: Ամերիկյան հասարակայնության հետ շիւմունելը կավարտվեն EAEK ղեկավարության ելույթներով Ազգային մասով ասուլիսում ՄԱՄ հրեական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ եւ Վաշինգտոնում Ղազախստանի ղեկավարության ընդունելությանը: Այս ընդունելությանը հրավիրված են ՄԱՄ-ի խոշորագույն հրեական կազմակերպությունների ղեկավարները, «Ամերիկյան հրեական կոմիտեն» (AJC), Վաշինգտոնի հրեական համայնքը (Washington D.C. Jewish Federation), NCSJ եւ այլը: EAEK նախագահ Ալեքսանդր Մաշկելիչի խոսքերով, Ղազախստանի ղեկավարության ընտրված է Կոնգրեսի պրեզենտացիան ավարտելու համար ոչ միայն այն պատճառով, որ շտաբ-քնակարանը գտնվում է Ալեւ Աբայում, այլեւ հուղայական-իսլամական երկխոսության եւ միջինարեւելյան կարգավորման գործերում էլ նշան Ղազախստանի դերի ճանաչման: Կոնգրեսի նախագահը ենթադրում է, որ այցը ՄԱՄ կդառնա 2003 թ. փետրվարի 12-13-ը Աստանայում նախատեսված խաղաղության եւ համամայրության միջազգային խորհրդաժողովի յուրատեսակ նախապատրաստություն: Նախագահ Նազարբաեւի հրավերով Ղազախստանի մայրաքաղաք կայցելեն Կենտրոնական Ասիայի երկրների ղեկավարները: Կոնգրեսի ներկայացուցիչների եւ Ամերիկյան հրեության ղեկավարների պատվիրակության հետ, որոնց թվում կլինեն ՄԱՄ ներկայացուցիչների պատրիարք Կոնգրեսի սենատի անդամները, որսնք կստորագրեն խաղաղության եւ համամայրության խարտիան: Ա. Մաշկելիչի կարծիքով, եթե Ղազախստանը այդքան բարդ միջազգային իրադրությունում վճռել է անել այդ քայլը, ապա նա նախաձեռնությանը պատրավոր է աջակցել ոչ միայն Եվրո-ասիական հրեական կոնգրեսը, այլեւ ողջ հրեա ժողովուրդը» (Lenta.Ru.http://lenta.ru):

2003 թ. մարտին Բաբոյ ալցեյեց Հրեական եվրասիական կոնգրեսի ղեկավար Ա. Մաշկելիչը, Արդեջանում ծավալելով մեծ գործունեություն խորհրդարանի անդամների, քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ աշխատանքներում: Նա հանդիպումներ ունեցավ նախապես աշխատակազմում եւ զրուցեց վերջինիս ղեկավար Ռամիզ Սեհտիեւի հետ: Ա. Մաշկելիչի նպատակն էր Արդեջանի համագործակցությունը կազմակերպել Իսրայելի հետ՝ Կենտրոնական Ասիայի եւ Ղազախստանի հետ միասնաբար: Այս նոր կազմակերպության քաղաքականության կարևոր գիծը նու-

րոնական եվրոպայում և Ռուսաստանում Իրանի կողմից արդյունավետ բազմաբաղաձայնություն իրականացնելու խոչընդոտելն է: «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Դամբարի և «Աղրեբջանի ազգային անվտանգություն» կուսակցության առաջնորդ Էթիբար Մամեդովի հետ հանդիպումներում փոխընթերցում է կայացել հակաիրանական գործունեության բնագավառում Իսրայելի ու Աղրեբջանի ջանքերը համակարգելու անհրաժեշտության վերաբերյալ: Ա. Մաշեկելիչը Աղրեբջանի քաղաքական կուսակցություններին առաջարկել է մի շարք հանդիպումներ անցկացնել ՌԴ առաջատար կուսակցությունների հետ, Աղրեբջանի քաղաքականություն և Իրանի կողմից վտանգի վերաբերյալ բացատրությունների համար:

Իսրայելը բավականաչափ կանոնավոր չէիւմներ ունի Աղրեբջանի հետ ոչ միայն երկկողմանի հարաբերությունները զարգացնելու, այլև Իսրայել-Թուրքիա-Աղրեբջան «եռանկյունին» ամրապնդելու համար: 2002 թ. հոկտեմբերին Բաբու ժամանեց հետախուզության մասնագետ, Իսրայելի վարչապետի հետախուզության հարցերով նախկին խորհրդական, պրոֆեսոր, բրիգադային զեներալ Ամնո Գիլոնա: Նա հանդիպումներ ունեցավ Ազգային անվտանգության նախարար Նամիլ Աբասովի և Աղրեբջանի ռազմական հետախուզության աշխատակիցների հետ: Զննարկվել են հետեյալ հարցերը.

- համագործակցություն Իրանի հարցում,
- տեղեկատվության փոխանակում աշխատանքային կարգով անվտանգություն ապահովելու համար,
- համագործակցություն Աղրեբջանին Հայաստանի ռազմական ներուժի մասին հետախուզական տեղեկատվության, ինչպես նաև ԱՄՆ-ում և Միջին Արևելքում հայկական կազմակերպությունների մատուցությունների վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու մասով,
- Բաբու-Թրիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումը ծախսողելու գործում շահագրգիռ ուժերի փորձերը համատեղ չեզոքացնելու գործունեություն,
- Իսրայելի ու Աղրեբջանի ռազմատեխնիկական համագործակցության մասին տեղեկատվություն անվտանգությունը ապահովելու հարցեր,
- Անվտանգության մասին իսրայելա-աղրեբջանական պայմանագիրը ստորագրելու նախապատրաստության հարցեր:

2003 թ. ապրիլին Հ. Ալիեյը ստորագրեց աղրեբջանական քաղաքականության իրանական ուղղության վերաբերյալ դիրեկտիվային փաստաթուղթ: Վերջինում թվարկված են այն պետությունները, նաև Իսրայելը, որոնց հետ պետք է համագործակցել Իրանի հիմնախնդիրներով: Ըստ առկա տեղեկությունների, Աղրեբջանում մշտապես գտնվում են Իսրայելի ռազմական իրահանգիչների երեք խմբեր՝ ռազմական տեխնիկայի ուսուցման, կադրերի պատրաստման և տեղեկատվական-հետախուզական գործունեության հարցերով: Անկայն Իսրայելն ու Աղրեբջանը խոստովանում են, որ ներկայումս առկա պայմանավորվածությունները բավարար չեն և չեն համապատասխանում արդեն ծնոթբերված համագործակցության մակարդակին: 2002-2003 թթ. շրջանում Իսրայելի ռազմական հետախուզության սպաները կատարեցին աղրեբջանա-իրանական սահմանի մանրամասն հետազոտություն և Աղրեբջանի Գլխավոր բանակի շտաբին փոխանցեցին սահմանային գոտում հետախուզական աշխատանքների վերաբերյալ ցուցումներ:

2003 թ. հունվարին Բաբու ժամանեց պաշտոնաթող բրիգադային գեներալ Գիորա Ռոմմը, որը պաշտոնապես ներկայացնում է Համաշխարհային հրեական գործակալությունը և Աղրեբջանում էր հրեական համայնքի գոր-

ծերով: Իրականում գեներալ Ռոմմը ներկայացնում էր Իսրայելի կառավարության շահերը: Նա զրույցներ ունեցավ նախագահի աշխատակազմում, արտգործնախարարությունում, պաշտպանության նախարարությունում: Զրույցների ընթացքում քննարկվել են իսրայելա-աղրեբջանական համագործակցության հարցերը անվտանգության ոլորտում, Իրանի ու Հայաստանի հիմնախնդիրների, ինչպես նաև ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում լորբիստական գործունեության հարցերը: Համաձայնություն է կայացվել այդ երկրների քաղաքականության տարբեր ուղղությունների, մասնավորապես, Իրանի հարցում, Իսրայելի ու Աղրեբջանի փոխսամայնացման մասին: Գիորա Ռոմմը հայտարարել է, որ Հայաստանը տարածաշրջանում բացասական քաղաքականություն է վարում և համագործակցում է ըրնապետական, հարձակողական վարչակարգերի Իրանի ու Սիրիայի հետ կապեր ստեղծելով Իրաքի ու պաղեստինցիների հետ:

Սեպտեմբերին Բաբու ժամանեց Իսրայելի Կնեսետի անդամ Ամնո Զոհենը, որը նույնպես անմիջականորեն զբաղվել է ԱՄՆ-ում և եվրոպայում լորբիստական գործունեության ներքե համագործակցության խնդիրներով: Նրան անչափ հետաքրքրել են աղրեբջանա-իրանական հարաբերությունների վիճակն ու հեռանկարները:

2003 թ. ապրիլի սկզբին Բաբու է ժամանել իսրայելցի գործարար Լիվիելը, որը Հայաստանում գործարարական գործունեություն է ծավալել և կապեր ունի ՌԴ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հետ: Լիվիելը լայն քաղաքական կապեր ունի Աղրեբջանում, այդ թվում խորհրդարանի անդամների և քաղաքական կուսակցությունների նախագահների հետ: Նա նպատակադրվել է կապեր հաստատել ՌԴ հայերի միության, ՀՀ քաղաքական կուսակցությունների և Աղրեբջանի քաղաքական գործիչների ու կուսակցությունների միջև: Լիվիելը նաև լոբբերն զբաղվում է հակաիրանյան գործունեությանը Ռուսաստանում փորձելով ներգրավել Ռուսաստանի կառավարության և քաղաքական գործիչների վրա ազդեցություն ունեցող ռուսաստանյան գործարարներին:

2003 թ. մայիսին Վաշինգտոնում կայացան երկու հանդիպումներ Աղրեբջանի և Իսրայելի ղեկավարների միջև: միջազգային ասպարեզում իսրայելա-աղրեբջանական համագործակցության, նաև իրանական ուղղության հարցերով: Պայմանավորվածություններ եղան կանոնավոր հանդիպումների անցկացման, տեղեկատվության փոխանակման, տարբեր մակարդակներում ԱՄՆ-ում հանդիպումների կազմակերպման (նաև իրանական ու աղրեբջանական կազմակերպությունների միջև) վերաբերյալ: Առաջին հանդիպման ժամանակ Աղրեբջանի ղեկավար Իսրայելի իր գործընկերոջ բազատուն է, որ 2002 թ. հոկտեմբերին Եգիպտոսի արտգործնախարարության հետ հանդիպման ժամանակ Հ. Ալիեյի կողմից Իսրայելի քննադատությունը արվել է դիվանագիտական նկատառումներով և սկզբունքային նշանակություն չունի, քանի որ Աղրեբջանը Իսրայելին համարում է իր կարևոր ռազմավարական գործընկերը:

Իսրայելի շահերը եվրասիայում և առաջին հերթին թյուրքական պետությունների նկատմամբ՝ սերտորեն առնչվում են Ռուսաստանում Իսրայելի ռազմավարական նպատակների հետ: Խորհրդային համակարգի տրոհումից հետո, Իսրայելը հայտնվեց բավականին բարդ վիճակում, քանզի պարզվեց, որ աշխարհաքաղաքական միջնաբերդի գործառույթ իրականացնող պետության համար ժժվար է գոյատևել «միաբնեռ» աշխարհում: Իսրայել-

ԱՄՆ հիմնախնդիրներն ակնհայտորեն ավելանում են: Առայժմ դա հնարավոր է բողոքել, սակայն որքան երկար ժամանակ կարելի կլինի երկվորյաններին հավատարիմ ռազմավարական գործընկերություն ձևացնել: Ուստի 90-ականների սկզբից Իսրայելը ջանքեր է գործադրում Ռուսաստանի հետ քարեկանական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Արաբ-իսրայելական հակամարտության արդյունքում մահմեդական աշխարհի որոշակի համայնքնան հետևանքով Իսրայելի և հրեական կապիտալի գործունեության ոլորտը զգալիորեն սահմանափակվել է: Այս պայմաններում Ռուսաստանը իր հսկայական տնտեսական հնարավորություններով Իսրայելի համար բավականաչափ կարևոր գործընկեր է: Ռուսաստանում ընկալվում են պաշտոնապես ավելի քան մեկ միլիոն, իրականում 2,5-3 միլիոնից ոչ պակաս հրեաներ, որոնք մեծ ներդրում ունեն ռուսաստանյան մշակույթում, գիտության և տնտեսության ասպարեզներում: Ներկայումս հրեա գործարարները կարևոր դիրքեր ունեն ռուսաստանյան տնտեսության առանցքային ճյուղերում, մետաղագործական, այլուժինային, դրամատոնային բնագավառներում և լրատվամիջոցներում:

Իսրայելը մեծ հաջողությունների է հասել ՌԴ հետ գործընկերային հարաբերություններում, սակայն Ռուսաստանը սկզբունքային շահեր ունի արաբական աշխարհում, սերտորեն համագործակցում է Իրանի հետ և չի կարող ակտիվեցնել Նյույակ շահերը համուն Իսրայելի հետ գործընկերության: Իսրայելական լոբբին Ռուսաստանում, չնայած երկարատև ընթացքում լրատվամիջոցների նկատմամբ իր վերահսկողությանը, Բ. Ելցինի «ընտանիքի» նկատմամբ ազդեցությանը, չկարողացավ հասնել իր առավել կարևոր նպատակին հեռացնել Ռուսաստանի Իրանից և օգտագործել Իրանի դեմ իրելե ճնշումից: Այդ առնչությամբ կարևոր է եվրասիայում Իսրայելի բազմակողմանի քաղաքականությունը, ուր պետությունների մեկ միավորումը կարող է հակակշռել մյուս միավորման ազդեցությանը: Փաստորեն, Ռուսաստանի կողմից Միջին Ասիայի երկրները ու Ադրբեջանը համարվում են իր ռազմավարական շահերի գոտին, հետևաբար իրենք եւս կարող են ազդեցություն գործել ՌԴ-ի վրա: Թուրքիայի հետ միասին այդ պետությունները կարողանան գրեթե որոշիչ ազդեցություն ունենալ և ճնշում գործադրել Ռուսաստանի: Սակայն թուրքական «եվրասիական նախագիծը» բախվում է շատ խոչընդոտների, որոնցից են հարկավոր ներդրումների և տեխնոլոգիաների բացակայությունը, անկայուն դիրքերը եվրոպայում և վերջապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ճշտումը: Այդ պայմաններում Կենտրոնական Ասիայում Իսրայելի խաղը բավականին արդյունավետորեն կարող է հանգեցնել իր ռազմավարական զարգացմանն անհրաժեշտ շատ հուսալի քաղաքական և տնտեսական հենարանի ձեռքբերմանը: Իսրայելը շատ բան կարող է առաքարկել Կենտրոնական Ասիայի երկրներին ու Ադրբեջանին՝ ԱՄՆ-ում իսրայելական ազդեցությունը, լրատվամիջոցների աջակցությունը ԱՄՆ-ում, եվրոպայում և Ռուսաստանում (հրեական վերահսկողության ՁԼՄ-ները), կապեր ֆինանսական աշխարհում, բարձր տեխնոլոգիաներ: (Ռուսաստանը նույնպես կարող է դառնալ Իսրայելի կողմից մյուս պետությունների հետ լավ հարաբերությունների հաստատման կարևոր ասպարեզ. օրինակ՝ ամերիկյան քաղաքագետ Արիել Քոհենը մասնավոր զրույցում առաջարկում էր քննարկել Իսրայելի և Գայաստանի միջև հարաբերությունների քննակննդային ընկալումը Ռուսաստանում երկկողմանի շահերի համատեքստում): Եվրասիական քառերաբանում Իսրայելի մյուս կարևոր խնդիրն է Իրանի աշխարհաբաղա-

քական մեկուսացումը (որոշակի պայմաններում այս նպատակը կարող է առաջնային դառնալ): Այսպիսով, Իսրայելի «եվրասիական ծրագիրը» ինչ-որ իմաստով դառնում է լրացվող գործունեություն, երբ Թուրքիան անկարող էր ավարտել հասցնել իր նախագիծը Կենտրոնական Եվրասիայում:

Թուրք-իսրայելյան հարաբերությունները տեսանկյալ են, հնարավոր է, առավել հեռավոր հեռանկարում կապահովվեն ներկայիս «կաղաքավիճակով»: Քաղաքական զարգացումները Թուրքիայում կապված իսլամական կուլտուրալությունների ջանքերի, ազգայնական տրամադրությունների աճի հետ, չեն խոչընդոտի այս երկրների միջև հարաբերությունների զարգացումը: Ընդհակառակը, Թուրքիայում մահմեդական-ազգայնականության սինթեզը, համաթուրանական և նրոսամայան համադրությունների (դոկտրինա) զարգացման նոր փուլը, թուրք-իրանական հարաբերություններում լարվածության աճը, թուրք-իսրայելական համագործակցության կաղաղրի նոր րովանդակությունը:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացումը, փաստորեն, թուրք-իսրայելյան հարաբերություններին տվել է նոր «շունչ», քանի որ Իսրայելը հնարավորություն է ստացել ընդգծել իր կարևորությունը ԱՄՆ-ի հետ գործընկերային ու ռազմավարական հարաբերությունների պահպանման գործում: Այս հիմնահարցի հետ էին առնչվում Իսրայելի ու Թուրքիայի պետական ու ռազմական գործիչների երկկողմ այցերը: Թուրքիա կատարած այցի ժամանակ Իսրայելի նախագահ Մոշե Կացալն ուղղակիորեն նշել է Թուրքիայի շահերի պաշտպանության համար ԱՄՆ-ում հրեական լոբբիի նշանակությունը, նաեւ հայկական և հուսական ազդեցության դեմ պայքարում (Jewish Telegraphic Agency, July 14 2003 By drawing closer to Israel, Turkey hopes to mend relations with U.S. By Vigal Schleifer Istanbul, July 14 (JTA)- Moshe Katsav's recent visit to Turkey.):

Իսրայելը կարևոր դեր ունի թուրքական զինուժի տեխնիկական մատակարարման գործում: Իրագործվում է F-4 և F-5 (համապատասխանաբար՝ 56 և 48 հատ) ինքնաթիռներ սարքավորելու ծրագիրը 820 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Իսրայելի հետ համագործակցությունը Թուրքիայի համար շատ կարևոր է իրրոնային տեխնիկա իսրայելյան «օդ-երկիր» կարգի «Պուպայ» իրրոններ ունենալու առումով, որոնք կարող են դիմակայել ռուսաստանյան C-300 իրրոններին: 1997-98 թթ. Թուրքիան Իսրայելից գնել է 100 «Պուպայ» իրրոններ F-4 ինքնաթիռները զինելու համար: 1998 թ. Իսրայելն ու Թուրքիան ստորագրել են Թուրքիայում «Պուպայ-2» իրրոնների համատեղ արտադրության մասին պայմանագիր, և այդ նպատակով ստեղծվել է երկու թուրքական հիմնարկների իսրայելյան «Ռաֆայել» կոնսորցիումի միջև մեկ ընդհանուր կոնսորցիում: Թուրքիան նաեւ շահագրգիռ է ունենալ «օդ-երկիր» կարգի «Դելիլա» իրրոնները: «Ռաֆայել» կոնցենդի ներկայացուցիչները թուրքական կողմի հետ քննարկել են այդ երկրի ռազմաօդային ուժերին (ՌՕՈՒԲ) «օդ-օդ» կարգի «Պիթոն-4» իրրոններ մատակարարելու մասին հարցերը: Իսրայելյան «Էլտա» ձեռնարկությունը և ԻԴՊ կոնցենդը պատրաստակամություն են հայտնել թուրքերին արտոնյալ պայմաններով (350 մլն դոլար) հատկացնել անօդաչու տարբեր նշանակության ինքնաթիռներ, որը Թուրքիայի ՌՕՈՒ-ն օգտագործում է հիմնականում ջրուղ անջատողականների դեմ պայքարում: Իսրայելի ՊՆ ներկայացուցիչը հայտարարել է Թուրքիայում «Էրրուս» հակահրթիռային համալիրներ տեղադրելու պատրաստակամություն՝ անհրաժեշտության դեպքում

եւ ԱՄՆ-ի համաձայնության պարագայում: Իտալյեյն չի կարող մնան զինատեսակ վաճառել բարձր տեխնոլոգիական արտադրանքները թուրքական արտահանելու վերաբերյալ ԱՄՆ-ի արգելքի պատճառով:

Իտալայեյան ԻԱՊ կոնցեռնը ուսաստանյան «Կամոլ» ձեռնարկության հետ համատեղ թուրքական արտադրում է 4,5 մլրդ դոլար ընդհանուր արժեքով 145 ռազմական ուղղաթիռներ: «Իտալայեյան ռազմական արդյունաբերություն» (ԻՌԱ) կոնցեռնը ամերիկյան «Ռոբոտեկ Դայնմեյթս» ձեռնարկության հետ համատեղ զբաղված է թուրքական բանակի սպառազինության մեջ եղած ամերիկյան M60A3 հրասայլերը (տանկ) արդիականացնելու աշխատանքներով, որն արժե մեկ մլրդ դոլար: Թուրքիան ցանկանում է զնել իտալայեյան արտադրության «Մերկավա-3» եւ «Մերկավա-3 բիս» հրասայլերը: Իտալայեյան ԻՌԱ կոնցեռնը եւ ամերիկյան «Ջեներալ Դայնմեյթս» կորպորացիան կատարում են թուրքական «Պատոն» 1000 տանկերի արդիականացմամբ: Թուրքիան եւ Իտալյեյն աշխուժորեն համագործակցում են տարբեր ուղղություններով (Սիրիա, Իրան, Իրաք, Հայաստան, Հունաստան, Կիպրոս, Կենտրոնական Ասիա եւ Ռուսաստան) հետախուզական գործունեության ուղղությամբ: Հատուկ ուղղություն է համարվում քրդական մյուլը: Բազմաթիվ տեղեկություններով, «Մոստարն» է հայտնաբերել Ա. Օչայանի բնակավայրը եւ գործնականում մասնակցել նրա կալանման գործողությանը: Ըստ առկա համաձայնագրերի, կամոնավորապես տեղի են ունենում թուրք-իտալայեյան ռազմածովային նավատորմի համատեղ զորանվաճումները: 1999 թ. դեկտեմբերի 15-17-ը Արեւելյան Միջերկրականի ջրերում տեղի է ունեցել ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իտալյեյն ՌՃՆ ճավերի համատեղ զորանվաճումները «Ռիլայնթ» ներմույժ-2» ծրագրային անվամբ: Իտալյեյն ՌՃՆ-ն նույնպես ռազմական խնդիրներ է կատարում Թուրքիայի օդային տարածքում համապատասխանեցնելով Սիրիայի, Իրաքի եւ Իրանի պայմաններին: Ռազմավարական նշանակություն ունի Իտալյեյն եւ Թուրքիայի զլխավոր շտաբների համագործակցությունը Իրաքի դեմ ռազմական գործողությունները նրա տարածքում վերանջելու հնարավոր տարբերակի դեպքում համատեղ ծրագրերի մշակման հարցերով:

Այս եւ այլ փաստեր հնարավորություն են տալիս խոսել Թուրքիայի եւ Իտալյեյն միջեւ սերտ ռազմաքաղաքական համագործակցության մասին: Սակայն համանման հարաբերություններ շատ չպահանջում ձեւավորվել են եւ այն պետությունների միջեւ, որոնք ամենեւին չհասագրիտ չեն ռազմավարական համագործակցության հարաբերություններում, ինչը ենթադրում է ոչ միայն ռազմատեխնիկական համագործակցություն եւ սերտ քաղաքական կապեր, այլեւ արտաքին քաղաքական որոշումների ու քայլերի համակարգում էլ եւ համաձայնեցում: Համարժեք ռազմատեխնիկական եւ տնտեսական համագործակցություն է ձեւավորվել Ռուսաստանի եւ Իրանի միջեւ, սակայն այդ հարաբերությունները ռազմավարական անվանել չի կարելի: Թուրք-իտալայեյան ռազմատեխնիկական համագործակցությունը, հիմնականում Իտալյեյնի սպառազինության մատակարարումը Թուրքիային, նրա սպառազինության արդիականացումը, հանգեցնում է Թուրքիայի «ինքնավարության» ԱՄՆ-ից, ինչը ձեռնտու էլ վերջինիս: Սակայն ԱՄՆ-ի համար թուրք-իտալայեյան հարաբերություններին միջամտությունը խնդրահարույց է, քանի որ երկու երկրներն էլ իր ռազմավարական դաշնակիցներն են:

2.3. Թուրքիայի ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում

Ավնիայտ է, որ Կենտրոնական Եվրոպայում քաղաքական ու տնտեսական ներկայություն հաստատելու Թուրքիայի անհաջող փորձերը հաշվի կառնվեն, եւ նրա քաղաքականությունը այդ տարածաշրջանում կդառնա ավելի բարդ ու բազմամակարդակ: Թուրքիան ապրում է չտեսնված տնտեսական, քաղաքական եւ պետական ճգնաժամ իր ժամանակակից պատմության ընթացքում եւ անկարող է միաժամանակ աշխույժ քաղաքականություն վարել մի քանի աշխարհաքաղաքական ուղղություններով: Թորագեղությունի գնահատմամբ, այս վիճակը Թուրքիայում առնվազն կտևի 5-7 տարի: Կանխատեսվում են 12-15 տարի ժամկետներ, ինչը նույնպես հնարավոր է, եթե երկրում մեծանա ընկերային անկայունությունը: Թուրքիայի հարցերով ամերիկյան շատ փորձագետների ու վերլուծաբանների կարծիքով, այս երկրի քաղաքական ու զինվորական ընտարանալը չի ձգտում ընդլայնել երկրի տարածքն եւ հավասարիմ է տարածքային առումով հավաք (կոնպակտ) պետության մասին Մուստաֆա Քեմալի սկզբունքներին: Սակայն ամերիկյան փորձագետների նկատառումներն իսկ վկայում են թուրքական ընտարանալի ոչ պաշտոնական համադրություններում տարածքային խնդիրների գոյությանը: Թուրքիան տասնամյակներ շարունակ սպասել է ԽՍՀՄ-ի փլուզմանը եւ պատրաստվել դեպի Արեւելք աշխարհաքաղաքական «ցատկին», այսինքն մե ժամանակ շահելու փորձ ունի եւ պատրաստ է համբերել անբարեկամատ շրջանում նախապատրաստվելով էքսպանսիայի նոր փուլին: Որեւէ կանխանշան չկա, որ Թուրքիան իրաժարվել է դեպի Արեւելք ծավալվելու մտադրությունները: Այդ գաղափարները լայնորեն օգտագործվում են թուրքական քաղաքական գրականության մեջ, առկա են թուրք քաղաքական եւ ռազմական գործիչների խոսքում, նկատելի կոնկրետ քաղաքական քայլերում:

Սակայն Թուրքիան ուսումնասիրելով Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի ու Կասպից ծովի պայմանները, հասկացել է, որ առանց ռազմական ներկայության ոչ մի տերություն, նաեւ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը, չեն կարող լուրջ դիրքեր ունենալու հույսեր տալն: Թուրքիան մշակում է տվյալ շրջաններում ռազմական համագործակցություն եւ ներկայության գործնական քաղաքականություն կենսագործելու ծրագրեր մշակել: Հատկապես ուսումնասիրվում են Աֆղանստանում թուրքական ռազմական միավորման գործունեության, Կրաստանում եւ Ադրբեյջանում թուրքական ռազմական իրահանգիշների աշխատանքների փորձերը: Թուրքիայում հասկանում են, որ անհրաժեշտ է տարբերակված մտնելու մեջ մշակել տվյալ շրջանների երկրներում ռազմական ներկայության վերաբերյալ հաշվի առնելով նրանց հարաբերություններն այլ տերությունների հետ, ներքաղաքական վիճակը եւ ընկերային-տնտեսական պայմանները: Թուրքիան ի վիճակի է այդ ծրագրերն իրագործել բացառապես ԱՄՆ-ի հետ սերտորեն համագործակցելով եւ ԱՄՆ-ի կողմից որոշակի համաձայնությանը: Բացի թուրք-ամերիկյան ռազմավարությունների որոշակի անհամապատասխանության խնդիրներից, ինչպես նաեւ Կենտրոնական Ասիայում եւ Հարավային Կովկասում քաղաքականության եւ տնտեսության ոլորտներում շահերի տարբերություններ, մազում է տվյալ երկրներում ժողովրդավարության չափանիշների պահպանման վիճակի վերաբերյալ ԱՄՆ-ի ու Թուրքիայի վերաբերմունքների տարբերության հիմնահարցը: Չնայած Ջ. Բուշի վարչակազմը նկազեցրել է այդ տարածաշրջանի երկրներին ներկայացվող պահանջների մակարդակը ժողովրդավարու-

թյան մասով, սակայն ԱՄՆ-ը չի կարող բոլորովին հրաժարվել այդ սկզբունքներից: Իսկ Թուրքիայի շահերն ու նպատակները թույլ են տալիս փաստորեն լիովին անտեսել դա, քանի որ Թուրքիան ինքն աչքի չի ընկնում ժողովրդավարությանը: Ամերիկյան վերլուծաբանների շրջանում համառորեն պահանջվեր են հնչում Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ժողովրդավարացման քաղաքականություն վարելու վերաբերյալ: Ջ. Քոլի վարչապետը, այնուամենայնիվ, ստիպված է վերանայել իր նորափայտացողական սկզբունքները արտաքին քաղաքականության ոլորտում և ուշադրություն դարձնել այդ երկրներում վերոհիշյալ հիմնականիներին: Դա էին պնդում ոչ միայն վերլուծական հանրույթի ազատական քեի ներկայացուցիչները Մարթա Օլթոբը, Անատոլ Լիվենը («Կարնեգի» հիմնադրամ) և Նելսոն Լեյսկին (ժողովրդավարության ազգային ինստիտուտ), այլև աջ և չափավոր աջ հասցրածների վերլուծաբանները: (Այս ենթադրությունը հաստատվում է Կենտրոնական Ասիային լավատեղյակ ամերիկյան փորձագետների վերլուծական հրապարակումներում, Ֆրեդերիկ Սթարրի Ջոն Հոպկինսի համալսարանի Կենտրոնական Ասիայի ու Կովկասի ինստիտուտի տնօրենը «Վաշինգտոն պոստ» թերթում (19 դեկտեմբեր, 2000 թ.) ստված իր հոդվածում «Ոչ այնքան «Մեծ խաղ» Կենտրոնական Ասիայում»: Ռեյն Մերրիի Կենտրոնական գեկույցը Ամա Աբայուն Մարալլի կենտրոնի խորհրդատուով (հունիս, 2001 թ.) խոսելով «Պենտագոնի եւ պետքարտուղարության նախկին աշխատակիցը, ներկայումս Վաշինգտոնում Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհրդի գլխավոր մասնագետներից է», «Եվրասիա», 23 հուլիս, 2001 թ.) http://www.eurasia.com.ru/2001/analytical/0723_Notgreatgame.htm

Ամերիկյան փորձագետների վերլուծական հրապարակումներում առաջարկվում են գործունեության հետևյալ ուղղությունները.

- Ակտիվ աշխատանք Վրաստանի հետ ռազմական և ազգային անվտանգության համակարգի կադրերի պատրաստման հարցում, համագործակցություն պետական, այդ թվում ծովային սահմանները պահպանելու առումով, զրահատանակային, կապի գործառնների պահպանելու բազայի ամրապնդում: Թուրքիայի եւ Վրաստանի միջե կան պայմանավորվածություններ ռազմավարական հարողրդակցությունները, ծովային նավահանքի ստեղծումը, նավթամուղները, երկաթուղին, օդանավակայանները ևն ցանկացած գործառն ստեղծելու միջոցով պաշտպանելու վերաբերյալ: ԱՄՆ-ը թուրք-վրացական համագործակցությունը համարում է արդարացիված և լիովին աջակցում է այդ ոլորտում երկու երկրների մտադրությունները ևն ցանկացած ծրագրով: ԱՄՆ-ը կարծում է, որ թուրք-վրացական համագործակցությունը բավականաչափ հաջող չի ընթանում և դա համարում է Ռուսաստանի հետ հավասարակշռության տարածաշրջանային դիմակայությանը Թուրքիայի անպարտապիտակ լինելու եւ անվտանգ զգալու հետևանք: ԱՄՆ-ը պատրաստ է որակաւորեն վերաբերվել Վրաստանի տարածքում ոչ մեծ թուրքական գորակաւոր տեղակայմանը, որին կարող են հատկացվել զրահատեխնիկական գործանքներ և ռազմական ուղղաթիռներ: Վրաստանն ընդհանուր առմամբ համաձայն է այդ ծրագրերին, սակայն առարկում է երկրի մահնեղական շրջաններում Ա-ջարիայում և Լեռքին Քարթլիում թուրքական գորակաւոր տեղակայումը:

- Աղբրեջանի գիւնուժի Թուրքիայի կողմից փաստացի ղեկավարումը (ռազմատուճմական ծրագրեր, օպերատիվ աշխատանք, զննի մակարդակով գորակաւորություններ, գիւնուժում վերափոխումների անցկացում ոչ մեծ պրոֆեսիոնալ բանակ ստեղծելու նպատակով, ռազմական հետախուզու-

թյուն, ՌՕՈՒ, ՌՃՈՒ վերստեղծում): ԱՄՆ-ը առարկում է Աղբրեջանի ռազմուժ փաստացիորեն արժողապես Թուրքիային ենթարկելու և բազառական երկկողմ հիմնադրեցում այդ երկրների քաղաքական ինտեգրացիայի, ինչպես նաեւ Լախիջեանի մարզում Թուրքիայի գլխավոր շտաբի մշտական ներկայացուցչություն ստեղծելու դեմ: ԱՄՆ-ը կողմ է Աղբրեջանում, հատկապես Լախիջեանի մարզում Թուրքիայի ռազմական ուղղաթիռների տեղակայմանը ժամանակավոր, առանց մշտական հենակետեր ստեղծելու ջանքերի հիմնադրելու: ԱՄՆ-ը և Թուրքիան մշակել են համատեղ գործողություններ Իրանի ու Աղբրեջանի միջե, զինված բախման դեպքում ներառյալ թուրքական բրիգադի դեսանտի եւ ՌՕՈՒ-ի օգտագործման: ԱՄՆ-ը մեծապես վախենում է Դարաբաղում ռազմական գործողությունների վերակաման դեպքում Թուրքիայի միջամտությունից և դա համարում է անբույսատրելի: ԱՄՆ-ը անկասկած զգուշանում է թուրք-աղբրեջանական ռազմական դաշինքի ինքնուրույն զարգացումից, քանի որ դա կարող է զինված բախումների շրջապակաւ ռեակտիվ պատճառ դառնալ: ԱՄՆ-ը փորձում է ամերիկամասն ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու շրջանակներում իրականացնել Հարավային Կովկասում Թուրքիայի սահմանափակ ռազմական ներկայություն բոլոր երեք երկրների, նաեւ Հայաստանի մասնակցությամբ: Թուրքիայի օգտագործումը ենթադրվում է Ռուսաստանի եւ Իրանի հետ դիմակայության պայմաններում:

- Առկա են ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս թուրք-ամերիկյան համաձայնեցումներ Հարավային Կովկասի եւ Կասպյան ավազանի օդային տարածքը թուրքական օդուժի յուրացման վերաբերյալ: Թուրքիայի ռազմական օդուժը պետք է փորձ ձեռք բերի Վրաստանի եւ Աղբրեջանի մի շարք օդանավակայաններ օգտագործելու համար, որի նպատակով պետք է կատարվեն ուսումնական թռիչքներ, ռազմական բեռների ու անձնակազմի օդային փոխադրումներ, թռիչքներ տարբեր եղանակներին: ՌՕՈՒ-ն պետք է կատարի կարելու օբյեկտների նավահանգիստների, թեթմիսաների, նավթամուղների, օդանավակայանների, քնակավայրերի ևն ժամանկության պահպանման պայմանական առաջադրանքներ, թռիչքների փորձ ունենա ռազմական դիմակայության գծի երկայնքով:

- ԱՄՆ-ը և Թուրքիան համաձայնեցրել են Թուրքիայի եւ Հայաստանի պաշտպանության նախարարությունների միջե հարաբերությունների հաստատման վերաբերյալ որոշ խնդիրներ, որոնք պետք է զարգանա հետևյալ փուլերով. չվուճներ ՆԱՏՕ-ի ծրագրերի շրջանակներում զորակամությունների անցկացման ժամանակ, չվուճներ զինծառայողների միջե ռազմատուճմական ծրագրերի իրագործման ժամանակ, սահմանային հարցերով համաձայնեցումների սկզբնավորում, Թուրքիայի կողմից ԳՀ ՄՈՒ-ին ոչ մեծ տեխնիկական օգնության ցուցաբերում, Հայաստանի մասնակցությամբ Հարավային Կովկասում կարելու օբյեկտների եւ հաղորդակցությունների պաշտպանության համար կոչված միջպետական գորակաւորումներում, որի ստեղծման ու զորաձեռնության հարցում մասնակցություն կունենա Թուրքիան:

Միաժամանակ, թուրք-ամերիկյան ռազմաքաղաքական համագործակցությունը ստանում է նոր երանգներ, բացահայտելով Թուրքիայի ոչ ձեռնտու որոշ պահեր: «Թուրքիայի կողմից իր դիրքերի վերանախադրումը հատկապես պարզորոշ երեւում է Եվրոպայի օրինակով: Թուրքիան ոչ միայն ձգտում է երեւալ որպես աշխարհիկ և չափավոր մահնեղական պետություն, այլև փորձում է տարածաշրջանում իրավիճակի վրա ազդեցության եղանակներ գտնել: Գետնելով ԱՄՆ և ՌԴ նախագահներ Ջ. Բուշի եւ

Վ. Պոտսինի միջև սերտ հարաբերությունների ծնւալովումանը, Սեզերը պետք է ըմբռնեք, որ իրենց նպատակներից հասնելու համար ՌԴ-ն եւ ԱՄՆ-ը կարող են թուրքիայի կարիքը չունենալ: Դա հատկապէս ակնհայտ է Վրաստանում ամերիկյան ռազմական ներկայութեանը Ռուսաստանի կողմից զգուշակալոր հավանութեան լուսի ներքո եւ որոշ նախկին խորհրդային հանրապետությունների հետ նրա մերձեցմանը»: «Թուրքիայի դերը կարող է բացառապատվել նաեւ անվտանգութեանը վերաբերող պայմանագրերի կնքման ժամանակ: Դունեսի 10-ին այցով Մոսկվա եկավ Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Դունեսյն Կիլիկիօղլին, որը հանդիպումներ ունեցավ իր գործընկերոջ Սեբզե Իվանովի հետ: Կողմերը ցնճարկել են իրավիճակը Չեչենիայում, միջազգային ասիաբեկչութեան եւ զինատակարարումների հարցեր: Ռուսաստանը մի շարք ընկերությունների հետ մրցակցում է Թուրքիային ռազմական ուղղաթիւներ մատակարարելու հարցում: Դաջորդ օրը Կիլիկիօղլին ժամանեց Թբիլիսի՝ Վրաստանին 2,8 մլն դոլարի չափով երկու ռազմականները արդիականացնելու (նաեւ Վազիանիի նախկին ռուսաստանյան ռազմականայնը) մասին համաձայնագիր ստորագրելու համար: Մայիսին Թուրքիան համաձայնագիր ստորագրեց «Քաջու-Թբիլիսի-Տեյխան նավթամուղի անվտանգությունն ապահովելու նպատակով Արդեբեջանի ու Վրաստանի հետ ռազմական համագործակցութեան մասին: (Մեկուրթ Քարիկ, Թուրքիայի արտաքին քաղաքականութեանը նոր ուղեգծի որոնումներում, Մեկնաբանություններ EurasiaNet 19 VI.20002, EurasiaNet <http://www.eurasianet.org> ԱՄՆ-ը եւ Թուրքիան փաստորեն երբեւիցե չեն ծրագրել գլխավոր Ասիայում Թուրքիայի ռազմական ներկայութեան կենսագործումը: ԱՄՆ-ի կենտրոնական իրամանատարությունը որոշակի նկատառումներ ունի Թուրքիայի սահմանափակ գործադիրումները Դրոզգաստումն եւ Ուզբեկստանում այդ երկրներին դեկավոր վարչակազմերի դեմ իսլամական արմատականների հարձակման ժամանակաշրջանում օգտագործելու վերաբերյալ: Այդ շրջանում Թուրքիան հակված չէր մասնակցելու իսլամական արմատականների դեմ գործողություններին, քանի որ չէր ցանկանում Կենտրոնական Ասիայում հանդես գալ որեւէ քաղաքական, առավել եւս կրոնաքաղաքական շարժման դեմ: Այս թեման ուշադիր չուսումնասիրվեց, քանի որ Կենտրոնական Ասիայում այդ խնդիրները լուծվեցին պետությունների կողմից Ռուսաստանի, մասամբ Չինաստանի աջակցութեամբ: ԱՄՆ-ին միանգամայն ձեռնտու էին տվալ գաղտնիութեան արդյունքները: ԱՄՆ-ը եւ Թուրքիան հնարավոր է շահագրգիռ էին այդ տարածաշրջանում ծագած պատերազմում Ռուսաստանի ներքաշմամբ: Այնուամենայնիվ, Թուրքիան Կենտրոնական Ասիայի բոլոր մայրաքաղաքներում ունի ռազմական կցորդներ, բավականին ուժեղ զործակալական մասնաճիւղեր ունի: Թուրքիան Կենտրոնական Ասիայի բոլոր մայրաքաղաքներում ունի ռազմական կցորդներ իրոքիստական խմբեր եւ քաղաքական կուսակցություններ, որոնք իրենց զործունեութեամբ նպաստում են իրենց երկրների ռազմաքաղաքական համագործակցութեանը Թուրքիայի հետ: Դազախստանում եւ Ուզբեկստանում տարբեր ժամանակներում ներկա էին Թուրքիայի ռազմական իրախանգիչները: Տեղեկություններ կան, որ ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալ էլիզաբեթ Ջոնսը, որի իրավասութեան մեջ են եվրասիայի եւ Կասպյան ավազանի հիմնախնդիրները, ծգտում է փորձեր կելիլ ինչ-որ ծրագիր, ըստ որի պետք է ստեղծվեն միջազգային ուժեր կրեւտյան Դազախստանում նավթահանքերը եւ հեռախաղողակցությունները պաշտպանելու նպատակով: Այդ հարցերով մասնակիորեն զբաղվում է նաեւ Կասպյան ծովի հարցերով ԱՄՆ-ի հատուկ ներկայացուցիչ Սթիվեն Մանը:

Ըստ տեղեկությունների, Դազախստանի քաղաքական դեմակարությունը նախագծերին եւ աջակցելով Քաջու-Տեյխան նախագծին, այնուհանդերձ անհասկանալի է համարում միջազգային ուժերի ստեղծման վերաբերյալ հարցադրումը: Դազախստանը վկայակոչում է ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ իր գործընկեր լինելու հանգամանք տվալ ծրագրի իրագործման հարցում, իսկ Իրանը նրա կարծիքով հնարավորություն չունի նավթի արդյունահանման ու փոխադրման գտում խտուվություններ հրահրելու:

Մակսիմում ԱՄՆ-ը շահագրգիռ էր Թուրքմենստանի հետ ռազմական համագործակցութեամբ բնական գազը փոխադրելու ծրագրերի իրագործմանն առնչվող խնդիրների առումով: Եւ այդ պետութեան նկատմամբ Իրանի ազդեցությունը կանխելու նպատակով: ԱՄՆ-ի ռազմական եւ քաղաքական վերլուծաբանները լրջորեն կարծում էին, որ Թուրքմենստանը որպես ռազմականապես թույլ երկիր ճնշման կենթարկել ՌԴ-ի եւ Իրանի կողմից: Քաջի այդ, ամերիկացիները շատ էին երկուրում Թուրքմենստանի դեմ Թախիբանի վարչակարգի հարձակումից: Դեռեւս պարզ չէ, թե հատկապես ինչպիսիք ծրագրեր ունի ԱՄՆ-ը Թուրքմենստանի վերաբերյալ: Մակայն միանգամայն պարզ է, որ չնայած ԱՄՆ-ի առավել սերտ կապերին, օրինակ, Դրոզգաստի հետ, որը բոլոր չափանիշներով նման է Թուրքմենստանին, ամերիկացիները երբեք վերջինիս չեն տարել համարժեք առաջարկներ: Տեղեկությունների համաձայն, 1999 թ. գնեւերալ էտոնիի Չինեիի Թուրքմենստան կատարած այցի ժամանակ նա այս երկրի քաղաքական դեկավարութեանն առաջարկել է ԱՄՆ-ի կողմից անվտանգութեան երաշխիքներ: Այնուհետեւ, սակայն, թուրքմենական գազի մշակման եւ փոխադրման քաղաքությունների աճի հետ, ԱՄՆ-ը կորցրեց հետաքրքրությունը ռազմաքաղաքական այդ հեռանկարի նկատմամբ:

Թուրքիայի ռազմական համագործակցությունը Կենտրոնական Ասիայի պետությունների հետ չի կարող հաջողութեամբ ու բազմակողմանիորեն իրագործվել առանց ԱՄՆ-ի ամբողջական նյութական ու քաղաքական աջակցութեամբ: Թուրքիան միջոցներ չունի այս պետությունների եւական օգնություն հասկացնելու համար, որոնց անվտանգությունը եմթաղում է համապարուխ միջոցառումներ պետական սահմանների պաշտպանութեան, հակաօդային պաշտպանութեան եւ անվտանգութեան հատուկ ուժերի հզորացման նպատակով: Թուրքիան նաեւ վստահ չէ, որ կենտրոնաասիական պետություններին ռազմատեխնիկական ուրուտում ցույց տրված օգնութեան զգալի ծախսերը կփոխատուցվեն այդ տարածաշրջանում իր քաղաքական եւ տնտեսական ազդեցութեան մեծացմամբ: Մինչեւ Սեպտեմբերի 11-ը ԱՄՆ-ի շահագրգռութեամբ բացակայությունը Կենտրոնական Ասիայում եւ այսօր այդ շրջանում շարունակվող սահմանափակ ներկայությունը Թուրքիայի համար բարենպաստ պայմաններ չի ստեղծում: Այնուամենայնիվ, կարելի է որոշակի կանխատեսումներ անել Կենտրոնական Ասիայում թուրքական ռազմական ներկայութեան վերաբերյալ: Տվյալ գնահատումները արվել են ԱՄՆ-ի ռազմաքաղաքական վերլուծաբանների կողմից: Դազալի առնելով Թուրքիայի իրական տնտեսական ու քաղաքական պայմանները, Կենտրոնական Ասիայում մենիշխանութեան գաղափարի աջակցութեան բացակայությունը, վերջինս կարող է սահմանափակվել միայն ռազմակրթական ուրուտում օգնություն ցուցաբերելով:

Մակայն ռազմական համագործակցութեան այս ուղղությունը եւս կարող է մեծացնել թուրք զինվորականների ազդեցությունը Կենտրոնական Ա-

սիայում: ԱՖրանստանում Թուրքիայի մասնակցությունը ռազմաշարժված նկատելիորեն բարձրացրեց նրա հեղինակությունը այդ պետություններում: Ուստի Թուրքիան ԱՄՆ-ի կողմից դիտվում է որպես Կենտրոնական Ասիայի եւ Միջին Արևելքի պետությունների համար աշխարհիկ պետության եւ հասարակության օրինակ եւ բնորդ, ինչն առավել կարելի է ԱՄՆ-ի համար, քան կենտրոնասիական տարածաշրջանում նրա ռազմական ներկայության ուժեղացումը: Թուրքիայի հետ սերտ համագործակցությանը զուգահեռ, ԱՄՆ-ը բավականին լուրջ է վերաբերում այդ երկրի քաղաքականության վերահսկման խնդիրներին: Պետքարտուղարության, Պենտագոնի եւ ԿԳԿ-ի մնաց գերատեսչությունները ունեն միանգամայն որոշակի ցուցումներ Թուրքիայի վրա վերահսկողության իրագործման հարցերով: Այդ վերահսկողությունը ենթադրում է թուրքական քաղաքականության մշտական սրբագրում նախ եւ առաջ տարածաշրջաններում: Շարունակելով հաշվարկի կատարումը Թուրքիայի գինձորական վերնախավի հետ, ԱՄՆ-ը նաեւ հասկանում է, որ վերջիններիս բնութագրական են մեծ արտաքին քաղաքական հավակնությունները եւ կարող են կատարել անսպասելի ու անկանխատեսելի քայլեր: Ուստի ԱՄՆ-ը միշտ Թուրքիային հիշեցնում է, թե նրա որ հավակնությունները չեն կարող բավարարվել իր կողմից:

1. Հարավային Կովկասում ռազմական տարածաշրջանային բախումներին, նախ եւ առաջ դարաբաղյան հակամարտությանը միջամտությունը;
 2. ռազմական միջամտությունը Իրանի թյուրքալեզու նահանգներում;
 3. Թուրքիայի ընդունումը Եվրամիություն եւ Կիպրոսի ընդունման մեթոդները;
 4. ատոմային զենք ունենալը;
 5. Կիպրոսյան հակամարտության վերկսուումը;
 6. քրդական ազգային շարժման ճնշումը առավել դաժան եղանակներով:
- Թվարկվածները միայն ԱՄՆ-ի կողմից Թուրքիային առաջադրված արտաքին քաղաքականության ոլորտում ուժային գործողությունների կիրառման սահմանափակումների բնութագրական օրինակներ են:

2.4. Կիպրոսյան հիմնախնդիր

ԱՄՆ-ը խոստովանում է, որ կիպրոսյան հարցն անլուծելի է: ԱՄՆ-ը չի փորձում ջանքեր գործադրել այդ խնդրի լուծման համար: Բ. Քլիմոնի վարչակազմը ամեն առիթով քարոզում էր հույն-թուրքական խնդիրների կարգավորման գործում իբր եղած հաջողությունները, այն է՝ Դունաստանն այլեւ չի խոչնդողտում Թուրքիայի մուտքը Եվրամիություն եւ հարաբերակնորեն նվազել է լարվածությունն եզեյան ծովում: Սակայն Կիպրոսի հարցը մնում է չլուծված: Ջ. Բուշի վարչակազմը դավանելով տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման այլ սկզբունքներ, չի պարտապատվում Եսկան քաղաքական ջանքեր վատնել եւ առաջարկում է, ըստ էության, ոչ թե հակամարտության կարգավորում, այլ Կիպրոսի համար անվտանգության պայմանների ստեղծում, ինչը կնպաստի լարվածության նվազեցմանը եւ կղզու կենսագործունեության առավել կարելի կարելու խնդիրների լուծմանը: ԱՄՆ-ի վարչակազմը առաջարկում է ստեղծել անվտանգության կառույց, որում կենտրոնական հավասարակշռության պահպանությունը կապահովվի, ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի եւ կամ Եվրամիության կողմից Կիպրոսին տված անվտանգության երաշխիքներով, վերջինիս կողմից անհրաժեշտության դեպքում եվրոպական զենքի կիրառմամբ: Փաստորեն, դա նշանակում է ստա-

տուս քվոյի ճանաչում, ինչպես պատահեց 1974 թ. Թուրքիայի կողմից Դյուսիսային Իրաքը բռնազավթելուց հետո: Դեմարվոր է, դա ծեռնում է Թուրքիային, որը այդ պայմաններով կհամաձայնի հույների վերահսկողությանը հանձնել ֆամագուստա քաղաքը: Անվտանգության երաշխիքները առավել կարելի քաղաքական եւ տնտեսական նշանակություն ունեն Կիպրոսի Դանրապետության համար, որը հեմարվոր է համաձայնի այդ առաջարկին:

Չգտելով ամրապնդել իր ներքաղաքական դիրքերը, Բ. Էջեփը առավելադրյուն օգտագործեց «ազգային կիպրոսյան հիմնասարկը»: Բազմամյա անհիշյուն ու դժեռես, ըստ էության, անարդյունք թուրք-հունական պայքարը Կիպրոսի շուրջ, անշուշտ միայն լրացուցիչ բարդությունների առիթ կտա եվրամիության կազմում Թուրքիայի անդամակցության հարցի որոշման ժամանակ: Կարչապետն այնուհանդերձ, նախկինի պես անգիջում է, անհրաժեշտ չհամարելով որեւէ քայլ անել միջերկրական կղզին երկու պետությունների Կիպրոսի Դանրապետության եւ Միջազգային հանրության կողմից ճանաչված Դյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության, բաժանումը կանխելու համար: Օրեքս նա նորից հայտարարեց, որ Եվրամիությունը չպետք է միջամտի այդ խնդրի լուծմանը, որը «վերաբերում է տարբեր կրոններ դավանող ու լեզուներ ունեցող երկու տարբեր ժողովուրդների»: Բ. Էջեփի համար Կիպրոսի խնդիրը նախ ռազմավարական է, ապա անձնական քաղաքական հեղինակության հարց են, հեմարվոր է, որոշակի իմաստով, իր կյանքի կարելուբազույն նվաճումներից մեկը, քանի որ անձամբ հինքն է 1974 թ. հրաման արձակել կղզին բռնազավթելու մասին: Ծերացած թուրք վարչապետը, ըստ ամենայնի, կարծում է, որ խորհրդարանի կողմից կիրափուխումների փաթեթի ընդունումը (մասնապատիվ վերաբացում, քրդերին լեզվով կորվելու եւ հեռուստատարիտիաղողողումներ հեմարվակելու արգելքի վերացում, կոմկուսի օրինականացում եւ այլն) այնքան լուրջ գիջում է եՄ-ին, որ կիպրոսյան խնդիրը շատ չի կարելուրվի («Նեզավիսիտայա գազետա», 23.08.02): Թ. Էրդողանի միակուսակցական կառավարությունը շատերի համար անսպասելի փորձեց ճնշում բանեցնել Դյուս. Կիպրոսի կառավարության վրա, ստիպելով Ռ. Դենքքաշին (Կիպրոսի թուրքերի ղեկավար) գիջումներ անել հույներին եւ ստեղծել Կիպրոսի դաշնային հանրապետություն: Ռ. Դենքքաշի կարծիքով, այդ առաջարկն անընդունելի է եւ կհանգեցնի թուրքերի կողմից տարածքների կորստին՝ հօգուտ հույների: Թուրքական հատուկ ծառայությունները փորձեցին կազմակերպել թուրք բնակչության ցույցեր կղզու վերանվարման պահանջով: Սակայն Թուրքիայի ազգայնական ուժերի դիրքերը եւ ռազմական շրջանակների կարծիքը արգելեցին Դենքքաշի վրա հետագա ճնշումների գործադրումը: Այս ըստ երեւոյսին, գաղտնի բախումը ներկայիս թուրքական քաղաքական ընտրախավում 2002 թ., հանգեցրեց այն կարծիքին, որ Կիպրոսի հիմնախնդիրը քաղաքական լուծում չուրի այնպես, ինչպես համանման հիմնախնդիրները Լեռնային Ղարաբաղում, Աբխազիայում եւ Մերձդնեստրում: Ինչպես եւ Բ. Քլիմոնի վարչակազմը, այնպես եւ Ջ. Բուշի վարչակազմը փորձեց կիպրոսյան հարցը կարգավորել շուտափույթ կերպով եւ բախվեց այս եւ համանման խնդիրների բարդությանը՝ «քրոնիկական» թերազնաստանն երեւոյսին:

Կիպրոսի հիմնախնդիրը լուրջ արգելք է ոչ միայն Եվրամիությունում Թուրքիայի համարկնան ճանապարհին (թեեւ Դունաստանը օգնում է նրա նաւուտքին եՄ), այլեւ ամերիկացիների կողմից իրենց տարածաշրջանային ռազմավարության կենսագործման համար: Այս հիմնասարքի պահպանումը

մեծ ազդեցություն է գործում համանման հավանարտությունների գոտիներում իրավիճակի վրա:

2.5. Տարածաշրջաններում թուրքական ռազմական ներկայության փոխալայմանակորվածությունը ամերիկյան ռազմական ներկայության հետ

Ուշագրավ է, թե թուրքական ռազմական ներկայությունը տարածաշրջանում՝ ինչ չափով է պայմանավորված ամերիկյան ռազմական ներկայությամբ: Այսինքն, եթե տարածաշրջանում ամերիկյան ռազմական ներկայությունը կլինի, ապա Թուրքիայի ռազմական ծառայությունները ինչքան է կարևոր կլինեն, եւ չի՞ հանգեցնի դա Թուրքիայի դերակատարման նվազեցմանը: ԱՄՆ ռազմաքաղաքական փորձագետների գնահատականներով, Թուրքիայի դերը ԱՄՆ-ի կողմից տարածաշրջաններում իրագործած ռազմական գործողություններում ունի իր տրամաբանությունը, գործառույթը, շրջանակները եւ համապատասխան կերպով համաձայնեցվում է տվյալ ռազմական գործողության քաղաքական խնդիրների հետ: Յուրաքանչյուր կոնկրետ գործողությունում թուրքական զորքերի քանակը որոշվում է ոչ միայն ռազմական խնդիրներով, այլեւ քաղաքական նպատակահարմարությամբ: Երբեմն Թուրքիան պատրաստակամ է հայտնում տրամադրելի ակտի մեծաթիվ զորախումբ, ինչպես Կոսովոյում եւ Բոսնիայում: Սակայն ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն հասկանում էին, որ Թուրքիան հետապնդում է որոշ չարդարացված քաղաքական նպատակներ: Ասքիան ինտերակոնտինենտալ իրավունքային մասնակցեց Աֆղանստանում կապիցիայի ռազմաշրջանի: Ուստի ԱՄՆ-ը փորձում է հավասարակշռել Թուրքիայի ռազմական ծառայությունները ու քաղաքական հավակնությունները: Պատերազմն Իրաքում բացառություն չի լինի: Թուրքիայի զորքի քանակը եւ ռազմադաշտի առանձնահատկությունը կլինի այն, որ Թուրքիան պետք է տրամադրի քավականին մեծաթիվ զորախումբ ու մեծաթիվ ինքնաթիռներ:

Փորձագետները պնդում են, որ ԱՄՆ-ը զգալի ուժ է Հարավային Կովկասում թուրքական ռազմական ներկայության ծավալման դեմ, ինչը ամերիկյան քաղաքական գործիչները ու զինվորականությունը համարում են շատ վտանգավոր երևույթ: ԱՄՆ-ը միանգամայն որոշակիորեն Թուրքիային հասկացնել է տվել Հարավային Կովկասում իրենց ռազմական համագործակցության շրջանակները: Թուրքիայի գործառնությունն ու խնդիրները քավականաչափ հստակորեն ամրագրված են համապատասխան փաստաթղթերում:

Ամերիկյան ու թուրքական ռազմական ներկայությունը տարածաշրջաններում հաղորդակից ամրոթների նմանվող համակարգ չէ, քանի որ ԱՄՆ-ի ու Թուրքիայի զինուժի քվաքանակը որոշվում է ելնելով ռազմական ու քաղաքական խնդիրներից:

2.6. Իրաքի դեմ գործողություններին Թուրքիայի մասնակցության երկրի ներքաղաքական իրավիճակից

Ներքաղաքական զարգացումները Թուրքիայում փաստորեն ոչ մի ազդեցություն չունեն Իրաքի դեմ ռազմաշրջանի երկրի մասնակցության հարմարում: ԱՄՆ-ը հուսալի պայմանավորվածություններ ունի Թուրքիայի հրամանատարության հետ եւ այդ պարտավորությունները կկատարվեն վերջինիս կողմից՝ անկախ խորհրդարանական ընտրությունների արդյունքներից: Թուրքուր Ծագլի մահից հետո, Թուրքիայում չկա այնչափ գործը քաղաքական գործիչ, որը գոնե մասամբ կկարողանա դիմակայել զինվորական վեր-

նախալին: Թուրքիայում քաղաքայում է հակազինվորականության մեծ շարժում, քանի որ շատերը հույս ունեն լուծել քրդական հարցը ոչ միայն ընդ Թուրքիայում, այլեւ Գլոսիսային Իրաքում: Թուրքական հասարակությունը նույնպես ԱՄՆ-ի տնտեսական օգնության սպասումն ունի: Իրաքի դեմ պատերազմում Թուրքիայում հնարավոր է միայն դժգոհության ալիքի մեկ սցենար, ուժեղ դիմադրության հետեւանքով կենդանի ուժի մեծ կորուստների դեպքում: Ըստ երևույթին, սակայն, հյուսիսում իրաքյան քանակի դիմադրությունն ավելի թույլ կլինի, քանի որ կոտավորող վարչակազմը փորձում է որոշակի պայմանավորվածություններ ունենալ Թուրքիայի հետ եւ վերջինիս որպես բռնազավթված գոտի համընթաց առավելագույն մեծ տարածք: ԱՄՆ-ը նկատի ունի հակազինվորականության շարժման ուժեղացման սցենարը թուրքական քանակի պարտության պարագայում: Ենթադրվում է, որ այդ դեպքում հրամանատարությունը կուժեղացնի քարոզչությունը եւ կասիմանակի հասարակական-քաղաքական կազմակերպությունների այլընտրանքային լրատվամիջոցների գործունեությունը: Թուրք զինվորականությունը դժգոհ է եւ անչափ մտահոգ ներքաղաքական գործընթացների զարգացման եւ կարող է օգտվել պատերազմական վիճակից ու ներքաղաքական դիմակայությունից ռազմական հեղաշրջում կատարելու համար: Ուշագրավ է հետեւյալը: 2002 թ. աշնանը հեղինակը Մեծ Բրիտանիայում եւ ԱՄՆ-ում հետազոտություններ էր կատարում «Մեծ Միջին Արեւելքի» տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ, այդ հարցով հարաբերվելով տարբեր գաղափարախոսական ու մեթոդաբանական հոսանքների ներկայացուցիչ 100 բրիտանացի ու ամերիկացի փորձագետների հետ: Հատկանշական է, որ հարյուր փորձագետներից եւ ոչ մեկը կասկածներ չունեց, թե Թուրքիան կմասնակցի Իրաքի դեմ կռաւիցիայի ռազմաշրջանին, ինչպես նաեւ այն հարցում, որ Թուրքիայի որոշումը կախված կլինի կառավարության կուսակցական պատկանելությունից:

2.7. Թուրք-ադրբեջանական համադաշնություն: 1997-98 թթ. ընթացքում տեղի էին ունենում անչափ կարևոր շփումներ Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքական ղեկավարների միջեւ, որի արդյունքում մշակվեցին երկու երկրների հարաբերությունների սկզբունքները:

Նրանք հայտարարեցին հեռանկարում համադաշնություն ստեղծելու մտադրության մասին, ըստ որի՝ երկու պետությունները մնում են միջազգային իրավունքի ենթակամներ, սակայն համարվում են տնտեսական, քաղաքական եւ ռազմական համակարգերի զարգացման գործում իրենց ջանքերը: Միջդեռ ԱՄՆ-ը չխանդավաղվեց այդ մտադրություններով: ԱՄՆ-ը շահագրգռված է Կովկասյան-Կասպյան ավազանում Թուրքիայի ազդեցության սահմանափակմամբ: ԱՄՆ-ում կարծում են, որ Թուրքիան մեծ հնարավորություններ ունի Ադրբեջանի հետ հարաբերությունները կառուցելու՝ առանց համադաշնության ստեղծման ծրագրերի իրագործման: Սակայն անսահման չեն ԱՄՆ-ի հնարավորությունները: ԱՄՆ-ը հասկանում է, որ Ադրբեջանը Թուրքիայի համար ունի Կենտրոնական Ասիայի տարբեր նշանակություն: Թուրքիայի եւ Ադրբեջանի թուրքերը մեկ ցեղ են (թթոս)՝ միասնական լեզվով եւ արժեքների համակարգով: Ուստի ԱՄՆ-ը չփորձեց պնդել այդ ծրագրերի չեզոքացումը, հուսել կապելով Ադրբեջանի ու նրա քաղաքական ընտրախալի տեղական շահերի գոյության հետ: Համադաշնության կազմում արդեթանական ընտրախալը կկորցնի իր ազդեցությունը ու նշանակությունը սեփական երկրում: ԱՄՆ-ը

չահագրգռված է տարածաշրջանում բազմաթիվ ենթակառուցի գոյությունը, բայց ոչ մեկ «Մոր» կայսրության ձեռնարկումը՝ իր մեծ հավակնություններով հանդերձ: «Արդարություն եւ զարգացում» կուսակցության ղեկավարները բազմիցս հայտարարել են Թուրքիայի արտաքին քաղաքականության անաջնահերթությունների մասին, որոնց բվում են Ադրբեջանի հետ հարաբերությունները: Միաժամանակ, Թուրքիայի իսլամական կառավարությունը հանդես էլի եկել Մոր եւ առավել արձատական հայտարարություններով դարձաբաղյան հակամարտությունում Ադրբեջանի աջակցելու մասին: Եղած հայտարարությունները չափավոր են երբեք պարտավորություններ չեն ենթադրում: Թ. Էրդողանի իշխանության գալուց հետո նա այցել կատարել քաղաքական պետություններ, սակայն միայն այն երկրները, որոնք նավթ եւ գյուղատնտեսություններ են: Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան: Արեւմուտքում եւ կենտրոնական Եվրասիայում այս այցերն ընկալվեցին որպես գործնականորեն քաղաքականության տարրեր: Թ. Էրդողանը հայտարարություններ արքեց որեւէ Մոր նախաձեռնությունների մասին՝ կոչելով տնտեսական եւ քաղաքական համագործակցության: Ադրբեջանի քաղաքական շրջանակները բավականին հիասթափված էին այդ այցով, նաեւ տնտեսական պատճառներով: Որեւէ արձատական շրջադարձ Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունում տեղի չունեցավ:

«Ադրբեջանում Էրդողանը կոչ արեց ամրապնդել «ռազմավարական գործընկերությունը» Անկարայի ու Բաքվի միջեւ, միաժամանակ առաջարկելով իր աջակցությունը Բաքվին Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման հարցում: Թուրք ղեկավարն սասց նաեւ, որ կողմ է Ադրբեջանի ու Թուրքիայի միջեւ անտերալիս հարաբերությունների արագ զարգացմանը, հույս հայտնեց, որ 2004 թ. երկու երկրների միջեւ առեւտրի շրջանառությունը կհասնի 1 մլրդ դոլարի: Բաքվի «Զերկալու» օրաթերթը Էրդողանի ծրագրերը անվանեց «տիգերական», նկատելով, որ 2001 թ. անտերալիս շրջանառությունը նվազել է մինչեւ 295 մլն դոլարի»: (Իզոլ Տորակով, 23.01.2003 Eurasianet, <http://www.eurasianet.org>)

1990-ական թվականների սկզբին ԱՄՆ-ը Թուրքիային համարում էր կրեւոր գործընկեր Չարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում վերահսկողություն սահմանելու համար: Այդ շրջաններում Թուրքիան կատարում է մի շարք քաղաքական եւ ռազմաքաղաքական խնդիրներ: Սակայն ԱՄՆ-ը միշտ զգուշանում է այդ շրջաններում Թուրքիայի ավելորդ ջանքերից եւ անկախ ու ինքնուրույն քաղաքականություն վարելուց: Պա հատկապես վերաբերում է Ադրբեջանին: ԱՄՆ-ը որեւէ կերպ չի զրստրել իր շահագրգռությունը Ադրբեջանի ինքնիշխանության կորստով, ինչը կլինի Թուրքիայի հետ հինարվոր միացմամբ: ԱՄՆ-ի հայեցակարգը նախատեսում է Գարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրների ինքնիշխանության ամրապնդումը որոշակի ամերիկյան շահերի համատեքստում: Վերլուծական գրականության մեջ փաստորեն չի նկատվել այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը եւ Թուրքիան համակարծիք չեն այն հարցում, թե որ ընտրախավը կամ թիւը պետք է կառավարի Ադրբեջանում: Գայտնի է, որ Թուրքիան երբեք չի իրացել Գ. Ալիեւի եւ նրա քաղաքական ոճով: Թուրքիան աջակցել է առավել իռաքիսցի քաղաքականությունը վարող եւ տարբեր հավակնուտ ու անհամարժեք գաղափարներ հռչակող գործիչների, որոնցից էր, օրինակ, Ա. Էլչինբեյը: Ադրբեջանում «Մուսավաթ» կուսակցության եւ նրա ղեկավար Իսա Գամբարի իշխանության գալը թույլ կտար Թուրքիային չզգուշանալ Ռուսաստանի ազդեցունիցի եւ ԱՄՆ-ի չափազանց

մեծ ազդեցությունից: Այս քաղաքական խնդրակիրումը մշտապես ճնշում կիրառործել Իրանի նկատմամբ եւ դրանով որեւէ խնդիր չէր լինի միասնական քուրքամետ տարածքի ձեռնարկման հարցում: ԱՄՆ-ի համար առավել ծեւնտու է Գ. Ալիեւի թիւը, որպես ավելի կանխտեսելի, մերձդրեն Թուրքիայից ծերքազատվող եւ անկախ իշխանության պահպանմամբ շահագրգռու:

Թուրքիայի յուրաքանչյուր կառավարություն, որը կվարի գործնականաշտ քաղաքական ուղեգիծ, լավ է հասկանում, որ երկրի ներգաղափումը դարձաբաղյան հակամարտության մեջ նվազագույնը կհանգեցնի արտաքին քաղաքականության ոլորտում մասներելու հնարավորության սահմանափակման, հնարավոր է նաեւ տարածաշրջանային պատերազմի, որը կործանարար կլինի Եվրամիությանն անդամակցելու համար այնքան ջանքեր գործադրած պետության համար: Թուրքիան փորձում է ցուցադրել առանց ԱՄՆ-ի միջնորդության Գայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու իր կարողությունը: Թուրքիայի իսլամական ղեկավարները հայտարարում են, թե հնարավոր է Գայաստանի հետ սահմանների բացումը եւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման գործընթացի սկզբնավորումը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրը որպես ԳԳ-ի հետ հարաբերությունների կարգավորման նախապայման, մերթ անկա եւ մեծք բացակայում է այդ հայտարարություններում: Նման անորոշությունը անվաստիության տարր է մտցնում թուրք-արդբեջանական հարաբերություններում: Իհարկե, Թուրքիան փորձում է ժամանակ չափել եւ Արեւմուտքում առավելություն ստանալով մեծացնել ճնշումն Արեւելքի վրա: Բայց արդբեջանական ընտրախավը չի կարող համաձայնվել թուրքական քաղաքականության զարգացման նման ռիսկի եւ:

«Այն քանից հետո, երբ Թուրքիայի նախագահը չնորհավորական հեռագիր հղեց իր հայ գործընկերըը հերթական ժամկետում վերընտրվելու կապակցությամբ, պաշտոնական Բաքուն ծայրաստիճան անխուսաք հայտնեց այդ աթիվ եւ կտրուկ ձեւով բացատրություն պահանջեց թուրքական կողմից: Ինչպես սասց Բաքվում Թուրքիայի դեսպանը, բոլոր ներդարանքները Անկարայի հասցեին ակնհայտորեն չափազանցված են: Թուրք նախագահ Ա. Սեզերը հղել է տվորական հեռագիր, որը պետք է ուղարկվի բարձրագույն պաշտոնյաներին ընտրվելու կամ վերընտրվելու կապակցությամբ: Ադրբեջանում որոշակի տագնապ են հայտնում իր հարեւանի նման քաղաքական քայլերի անչլուսմբ: Բաքուն չափազանց շահագրգռված է Թուրքիայի հետ համագործակցության շարունակմամբ, որը շատ գործ է կատարել նախ նավթամուղի եւ գազամուղի իրականացման համար, ինչպես նաեւ նախապատրաստում է Ադրբեջանի զինուժը» (Կենտրոնական լուրեր, «Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ հակասության պատճառը դարձավ նրանց ընդհանուր թշնամին», 11.04.2003 թ. <http://www.centran.ru>):

Իրաքում ռազմարշակից հետո թուրք-ամերիկյան հարաբերություններում կատարված փոփոխությունները ենթադրում են ԱՄՆ-ի շահագրգռությունը Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ սահմանազատմամբ: Նման այնոման համար դեռես քիչ փաստեր եւ հիմքեր կան, սակայն կարելի է սել նայնախի իրադարձություններ, որպիսիք են Բաքու-Չեյխան նախագծի արգելումը, Ղազախստանում ամերիկյան նավթային ընկերությունների քաղաքականության եւ Գարավային Կովկասում ԱՄՆ-ի հռչակած քաղաքականության տարաբնույթ լինելը, Ադրբեջանում այս կամ այն քաղաքական խնդրակիրմանն աջակցությունը ցույց տալու հարցում ԱՄՆ-ի եւ Թուրքիայի անհամաձայնությունը:

2.8. Թուրքիա-Հայաստան-Ադրբեյջան

Անկախված, հակառակ Ադրբեյջանի շահերի ու դիրքորոշմանը, Թուրքիայում կան բուրբ-հայկական սահմանի քարտեզները և ԳԳ-ի հետ տնտեսական հարաբերությունների զարգացմանը շահագրգիռ ազդեցիկ շրջանակներ: Չի կարելի չնկատել, որ այս խնդրոց ավելի հետևողականորեն սկսվեց քննարկվել «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո: Իհարկե, Թուրքիան շահագրգիռ է եՄ-ին անդամակցելու խոչընդոտները վերացնելու մեջ և դա է Թուրքիայի քաղաքականության հիմնական դրդապատճառն այս հարցում: Սակայն Թուրքիան ակնհայտորեն ձգտում է ցույց տալ առանց ամերիկյան մասնակցության Հայաստանի հետ հիմնախնդիրները կարգավորելու ունակությունը, քննել բուրբ-հայկական հարաբերությունների կարգավորումը ԱՄՆ-ի քաղաքականության կարելի խնդիրն է Հարավային Կովկասում: ԱՄՆ-ը չի կարող անտարբերություն ցուցադրել այդ հարցի նկատմամբ այն բանից հետո, երբ Թուրքիայի հետ խնդիրներ եղան, սակայն, հնարավոր է, որ ԱՄՆ-ը այլևս չափազանց չէ Թուրքիայի ու Հայաստանի միջև առկա խնդիրների լուծմամբ: 2003 թ. լրատվամիջոցներում տարածվեց մի տեսակետ, ըստ որի, բուրբ-հայկական սահմանը կարող է բազմվել «ամսպակելիորեն շուտ» մինչև 2003 թ. վերջը: Մեկնաբանելով Մարդիկուն Հայաստանի ու Թուրքիայի արտգործնախարարների վերջերս կայացած հանդիպումը, Բիզնեսի համագործակցության հարցերով հայ-թուրքական խորհրդի համանախագահ Քահան Սոյաքը նշել է, որ «դա սպասելի սկիզբն է երկկողմ հարաբերությունների բարելավման գործընթացում»: Երբ խոսքերով, բուրբ հասարակության մեծ մասը, հատկապես երկրի արևելյան բնակիչները կողմ են Թուրքիայի ու Հայաստանի միջև «բարեկամական հարաբերությունների» հաստատմանը: Գործակալությունը հիշեցնում է, որ դեռևս նախորդ տարվա Նոյեմբերի Քահան Սոյաքը նշել է, քե «Ադրբեյջան և զարգացում» կուսակցության հաղթանակը խորհրդարանական ընտրություններում կնպաստի հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը (PanArmenian.Net):

Բացի քարոզչական-քաղաքական նպատակներից ու եվրոպական քաղաքական բառերաբեմի վրա ցույցերից, Թուրքիան, անկասկած, Հայաստանում ունի տնտեսական շահեր, որի նշանակությունը սովորաբար Հայաստանում թերագնահատվում է: Ստեղծված իրավիճակում Հայաստանում առկա տնտեսական շուկան ոչ պակաս մեկ մլրդ դոլարի ծավալով (հատկապես զանգվածային սպասումն ապրանքների շուկան) շատ անհրաժեշտ է Թուրքիային: Հակառակ մասնակի շրջափակմանը, Հայաստանը, նաև հակառակ ոչ բարեկամ երկրների քարոզչությանը, կարողացավ գալուի հաջողությունների հասնել տնտեսական զարգացման ոլորտում 1997-2003 թթ.: Ընդլայնվում է սպասումն առկա, այդ քվում է մեքենաշինության, մետաղագործության և քիմիայի արտադրանքի սպառումը: Թուրքիայի արևելյան շրջանները, որպես գյուղատնտեսական շրջաններ լինելով, հատկապես շահագրգռված են Հայաստանի հետ տնտեսական հարաբերություններում: Թուրքիան նաև հետապնդում է Հայաստանն իր արտաքին քաղաքականության ծիրի մեջ ներգրավումը և ապա ենթարկեցում իր քաղաքական կանջին: Այս գաղափարներն արտասպառել է Ա. Դեմիրելը: Ավելին 1998 թ. գարնանը վերջինիս Անկարա կատարած այցի ժամանակ: Թուրքիայի նախագահի կարծիքով, Հայաստանը շրջափակելու քաղաքականությունն անպտղոլ է և ավելի արդյունավետ մտտեցում է Հայաստանի ներքա-

շումը բուրբ-ադրբեյջանական քաղաքականության ուղեծրում: Այս գաղափարը, քննել ընթացում ունեցավ Հ. Ալիևի կողմից, սակայն Ադրբեյջանը շարունակում է խանդով վերաբերել բուրբ-հայկական հարաբերություններին: Այսպես քե այնպես, Թուրքիան փորձում է հանգստացնել Ադրբեյջանին և իր ազդեցականներին: «Կարելի է տարբեր կերպ գնահատել այն, ինչը իմ կարծիքով մեծեցման շատ դանդաղ գործընթաց է, - ասում է «Դյուրիթե» առաջատար օրաթերթի արտաքին քաղաքականության հարցերով փորձագետ Ֆերաի Թինը,- հայ նախարարը կցանկանար սահմանափակվել Թուրքիայի ու Հայաստանի միջև Ադրբեյջանով, մինչդեռ Տեմը այդ շփումները դիտում է եռակողմ գործընթացի կողմնակցի Ադրբեյջանի մասնակցությունը ենթադրող հաստատեցություն» (27.06.2002 Eurasianet <http://www.eurasianet.org>):

1915-23 թթ. Հայոց ցեղասպանության ճանաչումը միջազգային մակարդակի հիմնահարց է և քննարկվում է ինչպես համաշխարհային լրատվամիջոցներում, այնպես էլ միջազգային քաղաքականության մեջ: Արեւմտյան համրությունը ընդհանրապես առանց ընթացումով է վերաբերվում Ցեղասպանությանը միջազգայնորեն ճանաչելու հայ հասարակության պահանջներին: Այս քեման որոշակի բարդություն էր ստեղծում միջազգային հարաբերություններում, մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերություններում: Որոշ պետություններ իրենք երկմակուս վիճակում են գզում, երբ իր համայնքները փորձում են այդ հարցը քննարկել պաշտոնական մակարդակում, քննել այդ երկրների հասարակության համար 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստն ակնհայտ է: Այդ երկրների կողմից Ցեղասպանության պաշտոնական ճանաչումը մեծ խնդիրներ կհարուցե Թուրքիայի հետ նրանց հարաբերություններում: Այդ երկրներից Իրանը, Սիրիան, Վրաստանը, Բուլղարիան, Մեծ-Բրիտանիան ու Գերմանիան ամենեին շահագրգիռ չեն Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում: Առաջինը ոչինչ չծնամեցված Օսմանյան կայսրությունում հայերին պաշտպանելու համար, եւ 1923 թ. Լոզանի համաձայնագրի ոգեկոչողն էր, երբ բացառվեց Արեւմտահայաստանում հայկական պետություն ստեղծումը: Գերմանիան գործում մասնակցություն է ունեցել կատարվող ցեղասպանության քաղաքական «քողարկման» գործում: Բացառված էլ, որ հատկապես Մեծ Բրիտանիան և Գերմանիան են վարում ցեղասպանությունը միջազգային մակարդակով ճանաչելու անթույլտրելիության (կրիպտո) ծպտյալ քաղաքականությունը: Իսրայելը և Իրեական լորբիստական կազմակերպությունները ԱՄՆ-ում են այլ երկրներում մեծ ջանքեր են դնում ԱՄՆ-ի Կոնգրեսում «Հայկական բանաձեւի» ընդունումը խափանելու հարցում, ոչ միայն դրդված Թուրքիայի հանդեպ ստանձնած պարտավորություններից, այլև Իրեականի հուրոստը ընդթափող ցեղասպանությունն հրակացության բացառիկությունը և եզակիությունը պաշտպանելու հավանաբար կարող են հակարդունավետ զաղափարի հետեւանքով:

Ամերիկյան քաղաքագետ Պոլ Գորըլ հեղինակի հետ մասնավոր զրույցում նշեց, որ փաստորեն ողջ աշխարհը համոզվել է 1915 թ. Թուրքիայի կողմից հայ ժողովրդի ցեղասպանության իրողության մեջ, և Հայոց ցեղասպանությունը որպես անժխտելի պատմական փաստ գործնականում առկա է մարդկանց հասարակական գիտակցության մեջ: Երբ կարծիքով, խնդիրը ցեղասպանության իրողությունը միջազգային հարաբերության մարտնչություն մեջ չէ, այլ դրա պաշտոնական ճանաչման մեջ է: Դա լիովին վերաբերում է նաև ամերիկյան հասարակությանը: Մեծատի է Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ոչ մի անգամ հրապարակային են նույնիսկ պաշտոնական ե-

լույթում չի հերքում ցեղասպանության փաստը, եւ դա վերաբերում է ճանե հրեական ու հրեա-թուրքական լրբբիի անդամներին (ամերիկացիները զե-րադատում են անել Կոնգրեսում Իսրայելի բարեկամները): Եթե Բ. Քլինթոնի իշխանության զուխ եղած ժամանակ հայերի ցեղասպանության ճանաչման խնդիրը թողարկվում է տարբեր ճրբանապատ փաստարկներով, ապա Ջ. Քու-չի վարչակազմը իր քաղաքական ոճին հավատարիմ նախընտրեց լիովին մեղազանջել այդ հիմնախնդրի քաղաքական ու բարոյաբանական (եթիկա-կան) կողմերը: Դա հանգեցրեց նրան, որ ամերիկյան հասարակությունը ցե-ղասպանության հարցն ընկալում է ճիշտ Պոլ Գոբլի մենեարանությունը: այ-սինքն իրենշավոր հանցագործությունը եղել է, բայց այդ փաստի պաշտոնա-կան ճանաչումը կարող է վնասաբեր լինել ամերիկյան շահերին: Այդ պայ-մաններում փաստորեն միայն Թուրքիան եւ Իսրայելն են ժխտում ցեղա-սպանության փաստը: ԱՄՆ-ը կանգնած է մի խնդրի առջեւ, որը ցեղասպանու-թյան պաշտոնական ճանաչման հարցը չէ, այլ թե երբ դա տեղի կունենա: Աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների փաստերն առանց պաշ-տոնական ճանաչելու, ԱՄՆ-ը եւ Արեւմուտքը չեն կարող հաջողությամբ ի-րականացնել արտաքին քաղաքականություն: (Օրինակ, գոյություն չունեն հուջալու (ԼԴԴ) գոյություն մարդկանց զանգվածային զոհվելու փաստի քն-նարկման քաղաքական սկզբունքները):

2003 թ. ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումը հան-գեցրեց ոչ միայն ԱՄՆ վարչակազմի կողմից Դայոց ցեղասպանության պաշ-տոնական ճանաչման խնդրի կոնյունկտուրային վերաործարմանը, այլեւ ա-մերիկացիների գիտակցության մեջ էական փոփոխություններին: Տեղի է ու-նեցել «դավաճանություն» ռազմավարական դաշնակցի կողմից ամերիկյան աշխարհընկալման տեսանկյունից «ցավալի» հարցի առնչությամբ, կիեծխ-նորություն ահաբեկչներից ու ԱՄՆ-ին բռնամական քաղաքական վարչա-կարգից, չխտսելով արդեն գործնական պահերի մասին:

«Քչերն էին կասկածում, որ բանածելը կընդունվեր, եթե չլիներ Սպի-տակ տան, պետքարտուղարության եւ Պենտագոնի ճնշումը Սենատի ղեկա-վարության վրա: Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը հեռախոսազրույց ու-նեցավ ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնիի հետ, որը խտտացավ միջոցներ ձեռնարկել կասեցնելու Դայոց ցեղասպանությունը հիշատակող օրերնի նա-խագիծը քննարկումը Կոնգրեսում: Պենտագոնի ղեկավարի տեղակալ Պոլ Վլիֆոլիցը, որը վերջերս հանդես էր եկել Թուրքիայի ղեկավարության հաս-ցեին անճախաղեպ խիստ հայտարարությամբ, նույնպես միացավ օրակար-գից բանածելը հանելու օգտին արվող լոբբինգին (PanArmenian.net):

2.9. Թուրք-հայկական տնտեսական կապեր

Թուրքիան եւ Դայաստանը կարող են շահագրգռել մեկնելու որպես տնտեսական գործընկերներ: Սակայն այդ շահերը այրբան նշանակալից չեն: Թուրքական հեռահաղորդակցությունն այրբան բարենպաստ էլ Դայաս-տանի համար, որբան թվում է: Թուրքիայի տարածքով Դայաստանի հաղոր-դակցումը եվկուպական, նույնիսկ բալկանյան երկրների հետ ոչ միշտ կլինի տնտեսապես արդարացված: Դայաստանի համար թուրքական ճանապարհ-ները առավել կարելու են Սիրիայի ու Լիբանանի հետ հաղորդակցվելու ա-ռումով, ուր կարող է ձեւավորվել երկրի համար կարելու շուկա: Թուրքիա-յում եւ Դայաստանում զարգացել են նույն արդյունաբերական ճյուղերը մա-հանագործությունը, կոչիկի, հագուստ, էլեկտրատեխնիկական ապրանք-

ներ, այլումինի, պղնձի, ռետինա-տեխնիկական ապրանքների եւ սնդրի-արդյունաբերական ճյուղերը: Ծնայած Թուրքիայի ու Դայաստանի արդյու-նաբերական ապրանքների արագ ընդլայնմանը, ընդհանուր առմամբ կպահպանվի արդեն առկա արդյունաբերական մասնագիտացումը: Դայաս-տանի հետ Թուրքիայի համագործակցությունը կարելու է առաջ հյուսիսարե-ւելյան վիլայեթների (իլեր) համար: Սրանք տնտեսապես նաաւել հետամ-նաց շրջաններ են, որտեղ չկա ժամանակակից արդյունաբերություն: Այդ շրջաններից կա բնակչության արտագաղթ, բնակչության աճի ցածր տեմ-պերի հատկապես Կարսի, Արդահանի, Իզդրուսի, Էրզրումի, Արդահանի, Ռիզա-յի եւ այլ վիլայեթներում: Սեւծովյան առափնյա վիլայեթներում վիճակն ավե-լի բարվոր է, բայց այս շրջանները եւս Թուրքիայի առավել հետամնաց շր-ջանների շարքում են: Այստեղ տնտեսությունը հողագործական է, գյու-ղատնտեսական հումքի վերամշակմամբ: Թուրքիայի եւ Դայաստանի միջեւ ազատ հաղորդակցությունը նաա շահութաբեր կլիներ այս շրջանների հա-մար: Նրանց վարչակազմերը եւ գործարարները անչափ շահագրգռված են Դայաստանի հետ հարաբերությունների զարգացմամբ: Միաժամանակ, տկալ վարչություն Թուրքիան չունի անհրաժեշտ ու բազմազան ապրանքներ Դայաստանի հետ լայնածավալ առեւտրի համար: Թուրքիայի հյուսիս-արե-ւելյան մարզերում արտադրված ապրանքները կարող են լինել հացահատիկ-ը, կարի փոշին, կիտրոնային մրգերը, ժխախտահումքը, բուրբը, կաշին եւ անասնակներ: Այս ապրանքների հանդեպ Դայաստանն ունի հետաքրքրու-թյուն, եւ ներմուծումը բուրբուն չի ազդի ԴԴ-ում դրանց արտադրությունը կասեցնելու իմաստով: Այլ ապրանքային պաշարներ, որոնք կաաահագրգռեն Դայաստանին, այդ շրջաններում չկա: Թուրքիայից արտահանվող ապրանք-ների մեծ մասը արտադրվում է այլ մարզերում: Ուստի ասանանակից շրջա-նները Դայաստանի համար կարող են ունենալ տարանցիկ ճանապարհի նշա-նակություն, բայց ոչ ապրանքներ մատակարարողների դերակատարում:

Թուրք-հայկական հարաբերությունների զարգացման հիմնախնդրի քն-նարկման առավել կարելու հարցը Դայաստանի տնտեսական անկտանգու-թյունը եւ առաաարակ ազգային անվտանգությունը է: Դայաստանում տարած-ված կարծիքն այն մասին, թե տնտեսական կապերը Թուրքիայի հետ կարող են դառնալ շատ արտադրաճյուղերի վերացման պատճառ անհիմն է: Տարբեր գնահատումներով, 2003 թ. չեմին Թուրքիայի եւ Դայաստանի միջեւ ապրան-քաղաքանառության ծավալները կազմել են 80-160 մլն դոլար, ընդ որում այդ ծավալի շուրջ 90 տոկոսը կազմում է թուրքական արտահանումը Դայաստան: Աստիճանաբար կրճատվում է էլեկտրատեխնիկական արդյունաբերության, շի-նանյութերի եւ մետաղամշակման արտադրանքների ծավալը Դայաստան, բայց շարունակվում է գյուղատնտեսական հումքի ներմուծումը: Փաստորեն, ներ-մուծվում են այն ապրանքները, որոնք Դայաստանում չեն արտադրվում եւ, հա-վանաբար, չեն արտադրվի տնտեսական աննպատակահարմարության պատ-ճառով: Դայաստանում աշխուժորեն զարգանում է թեթեւ եւ սնդրի արդյունաբե-րությունը, նաեւ՝ մետաղագործական ու քիմիական, լայն սպառման ապրանք-ների արտադրությունը: Ընդ որում, զարգանում է հիմնականում շուկայում հա-մանման էժան, զանգվածային ներմուծման ապրանքների առկայության պայ-մաններում: Խնդիրը ոչ այնքան տեղական շուկայում մրցակցության, որբան արդյունավետ կառավարման մեջ է: Դայաստանի անկախ գոյության առաջին տարիներին Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացումը շատ անցան-կալի էր ազգային անվտանգության տեսանկյունից: Պարաբարում պատերազմ-

եր, ու Թուրքիան օգնում էր Արդրեթանին, ճնշում բանեցնելով Հայաստանի վրա: Հայաստանը տնտեսապես աղետալի վիճակում էր: Հայաստանում իշխանության դեկին էր բացահայտ պարտվողական ու հաշտվողական տրամադրություններով քաղաքական խմբավորումը, որը մերժում էր Հայաստանի ու ԼՂ-ի վերամիավորման գաղափարը: Չեաավորված չէր ազգային բանակը: Լուծված չէին ազգային անվտանգության հարցերը: Սեփականաշնորհված չէր պետական ունեցվածքը, նախ եւ առաջ արդյունաբերությունը, որը այդ պայմաններում կարող էին ձեռք բերել թուրք ձեռնարկատերերը: 1997-98 թթ. Հայաստանը համոզիչ ձեռքբերումներ ունեցավ տնտեսական զարգացման գործում, ստեղծվեցին զինված ուժերը եւ ազգային անվտանգության համակարգը, գործնականում լուծվեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Նվաճումներ եղան արտաքին քաղաքականությունում, նաեւ արտաքին տնտեսական ոլորտում: Հայաստանն անդամակցում է Կոլեկտիվ անվտանգության պայմանագրին, այն դարձնելով իբրեւ իր անվտանգության հիմք, սերտորեն համագործակցում է ԱՄՆ-ի հետ, եվրամիության, ՆԱՏՕ-ի հետ, Իրանի եւ տարածաշրջանի այլ պետությունների գործընկերներ: Այսինքն, Հայաստանը կարող է սկսել Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացումը բավականին նախընտրելի պայմաններում:

Այս հիմնահարցը մեկնաբանելու համար ստորեւ ներկայացում է տնտեսական գիտությունների թեկնածու Աշոտ Եղիազարյանի «Հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հեռանկարը» աշխատությունը:

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՆԱԿՐՆԵՐԸ

Հասկանալի է, որ հայ-թուրքական սահմանի փակված լինելու համաձայնեցրել է Թուրքիայի ու Հայաստանի միջեւ պաշտոնական առեւտրատնտեսական կապերի բացակայությունը չեն նպաստում տարածաշրջանի պետությունների միջեւ առեւտրային հարաբերությունների ընդլայնմանը եւ ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը, որում լոջիկոն շահագրգռված են ԱՄՆ-ը եւ եվրոմիության անդամ երկրները, որոշակի պայմաններում՝ նաեւ Ռուսաստանը:

Միեւնույն ժամանակ, տարածաշրջանի պետությունների միջեւ գոյություն ունեցող տարաբնույթ կոնֆլիկտային շահերի բախումները մերժում եւ անկիրառելի են դարձնում կարգավորման ցանկացած ունիվերսալ մոտեցում, որը սովորաբար առաջ են քաշում ճշված երկրները: Այդ պատճառով, հիմնախնդրին մոտ կանգնած շրջանակներում, աստիճանաբար հաստատանում է այն գիտակցությունը, որ հարցի կարգավորումը անհրաժեշտ է որոնել տարածաշրջանի համալիր անվտանգության հիմնախնդիրների լուծման համատեքստում:

Այդպիսի պայմաններում, խոսել ամենամոտ ժամանակներում հայ-թուրքական հարաբերությունների, այդ թվում պաշտոնական տնտեսական հարաբերությունների հաստատման եւ նորմալացման մասին, անիմաստ է: Փորձենք վերլուծել եւ գնահատել հայ-թուրքական ոչ պաշտոնական տնտեսական հարաբերությունների մակարդակում ձեւավորված ներկա վիճակը եւ կատարել հետևություններ, որոնք պայմանավորված կլինեն սահմանի ենթադրյալ բացմամբ:

1. Թուրքիայի արտաքին առեւտրի վիճակը եւ փոփոխությունների միտումները

Բազմաթիվ թուրք եւ այլազգի փորձագետներ պնդում են, որ Թուրքիայի 20-րդ դարում ձեռք բերված տնտեսական հաջողությունները պայմանավորված են իշխանությունների կողմից տատակալի քաղաքականության (տնտեսության պետական հովանավորության թուրքական մոդելի) իրականացմամբ: Իսկ Ի՞նչ շահեց Թուրքիան եվրոպայի հետ հարաբերություններում:

1996 թ. հունվարից գործում է Թուրքիայի եւ եվրոմիության միջեւ կնքված Մաքսային միության համաձայնագիրը, որով զգալի չափով ազատականացվել է երկրի արտահանման-ներմուծման կարգավորումը: Ինչպես ցույց է տալիս Թուրքիայի արտաքին առեւտրի 1996-2000թթ. դինամիկան, եվրոմիության հետ մաքսային միությունը դեռեւս չունեն սպասվելիք արդյունքը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

	Թուրքիայի արտաքին առ եւ տուրք, մլրդ ԱՄՆ դոլար				
	1996թ.	1997թ.	1998թ.	1999թ.	2000թ.
Արտահանում	23.1	26.2	26.8	26.6	27.3
Ներմուծում	42.7	48.5	45.9	40.7	53.9
Այլաբնաշրջանառություն	65.8	74.7	72.7	67.3	81.2

2000թ.-ի ընթացքում ավելի խորացավ Թուրքիայի արտաքին առևտրի ամհաշվեկշռվածությունը՝ դեֆիցիտի ծավալը 1999թ.-ի համեմատ ամեն ավելի քան 87%-ով եւ գործնականում հավասարվեց արտահանման ծավալին: Արտաքին առևտրի հաշվեկշռի վատթարացումը տեղի է ունեցել ներմուծման կտրուկ աճի հաշվին (32,4%-ով), որի ծավալը հասավ ռեկորդային մակարդակի 54 մլրդ դոլլար, այն դեպքում, երբ արտահանումը ավելացել է անճանաչափ (2,6%) եւ կազմել է 27 մլրդ դոլլար:

Ինչպես տեսնում ենք, նշված ժամանակահատվածում, չի կատարվել թուրքական արտահանման զգալի աճ: Ավելին, սկսած 1997թ.-ից, արտահանումը լճացած վիճակում է, նրա ծավալը 1997-2000թթ. գտնվել է 26.5-27 մլրդ դոլլարի սահմաններում:

Միեւնույն ժամանակ, ներմուծման, ինչպես նաեւ արտահանման արդյունքը որոշվում է նրա կառուցվածքով: Թուրքիայի ներմուծման ճյուղային կառուցվածքում հիմնական տեղը զգալիւմ են մշակող եւ վերամշակող արդյունաբերության ապրանքները՝ 44.5 մլրդ դոլլար կամ ներմուծման 82.5 %-ը, այնուհետեւ, հանքարդյունաբերության արտադրանքը՝ 7.9 մլրդ դոլլար (13,2%), գյուղատնտեսական արտադրանքը, ներառյալ ձկնորսությունը՝ 2,1 մլրդ դոլլար (3,9%) եւ այլն՝ 0.4 %:

Ներմուծման ապրանքային կառուցվածքում փոքրացել է ներդրումային ապրանքների կշիռը՝ 21.4%-ից մինչեւ 20.7%, այն ժամանակ, երբ սպառողական ապրանքների կշիռը ավելացել է (12,3%-ից մինրեւ 13,4%): Այսպես կոչված միջնակյալ ապրանքների (պատրաստի հումք եւ կիսաֆաբրիկատներ) տեսակարար կշիռը գործնականում չի փոխվել՝ 65,3% 1999թ.-ին եւ 65,4% 2000թ.-ին: Սկստվում է պատրաստի հումքի եւ կիսաֆաբրիկատների ներմուծման լճացում եւ սպառողական ապրանքների ներմուծման քացարձակ աճ: Այդպիսի միտումները չեն կարող հեղափոխել ազդեցություն չունեցող ներքին տնտեսության զարգացման վրա, առաջին հերթին արդյունաբերության, եւ չանրադառնալ արտաքին տնտեսական քաղաքականության ուղղությունների, գերակայությունների որոշման եւ գործընկերների ընտրության վրա:

Ներկայումս Թուրքիայի արտաքին առևտրի հիմնական գործընկերներն են Տնտեսական Համագործակցության եւ Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) եւ նրա մեջ մտնող Եվրոպական Միության անդամները: ՏՀԶԿ-ի երկրների կշիռը թուրքական արտահանման մեջ 2001թ. կազմել է 65.9%, ներմուծման մեջ 62.3%, իսկ ԵՄ-ի երկրներինը համապատասխանաբար՝ 51.6% եւ 44.6%: Եվ եթե թուրքական արտահանման մեջ ՏՀԶԿ –ի տեսակարար կշիռը վերջին տարիներին ավելացել է (62.9% 1998թ.-ին, 67.8% 1999թ.-ին, 68.5% 2000.թ-ին), ապա թուրքական ներմուծման մեջ տեղի է ունեցում հակառակ միտումը՝ ՏՀԶԿ-ի կշիռը կրճատվել է, համապատասխանաբար՝ 72,9%, 69,5% եւ 65,5% (աղբյուրը՝ Թուրքիայի պետական վիճակագրական վարչություն):

Բնական է, որ ստեղծված պայմաններում Թուրքիայի արտաքին առևտրի հաշվեկշռի ոչ բարվոք վիճակը ավելի շուտ կհանգեցնի ոչ քե՛ն արտաքին տնտեսական քաղաքականության սահմանփակմանը, այլ, ընդհակառակը, տարածաշրջանային տնտեսական շրջանային ընդլայնմանը: Թուրքիան, անշուշտ, իր արտաքին առևտրի հաշվեկշռը բարելավելու նպատակով կձգտի ձեռք բերել նոր տարածաշրջանային շուկաներ, որտեղ իր ապրանքները կլինեն ավելի մրցունակ, մասնավորապես Աեւծովյան ՏՆ-

տեսական Համագործակցության (ՄՏՀ) երկրների շրջանակներում:

Այսպես որոշված է ՄՏՀ-ի երկրներում թուրքական ծեռնարկությունների գործունեության հիմնական ոլորտներ են հանդիսանում էներգետիկայի արդյունաբերությունը եւ փոխադրված, շինարարությունը, բանկային գործը, ապահովագրությունը, հեռակոմունիկացիաները, սննդի արդյունաբերությունը, շինանյութերի եւ ավտոմոբիլների արտադրությունը, տուրիզմը: Ներտարածաշրջանային կապերի ինտենսիֆիկացման արդյունքում Թուրքիան սկսել է այդ համագործակցության շրջանակներում իրացնել ավելի բարդ նախագծեր:

Թուրքիայի կողմից ՄՏՀ-ի երկրներ արտահանվող հիմնական ապրանքներ են հանդիսանում տեքստիլը, էլեկտրատարաչափորումները, հրուշակեղենի արտադրանքը եւ օժառը, ներմուծվում են էներգակիրներ, մետաղ, պարարտանյութեր եւ քիմիական արտադրանք: ՄՏՀ-ի երկրներ Թուրքիայի արտահանումը մեծամասամբ ուղեկցվում է մրկային (փախվճված) առևտրով, որը գնահատվում է տարեկան 10-12 մլրդ դոլլար: Դրա մոտավորապես կեսը ընկնում է Ռուսաստանին:

Ասկայն, Թուրքիայի տնտեսական շրջանային ծզոտում ունի տարածվել առավելապես Եվրասիական ուղղությամբ, որը նախ եւ առաջ վերաբերում է Հարավային Կովկասին եւ Միջին Ասիային: Այդ երկրների տնտեսությունների համեմատ Թուրքիայի տնտեսության զարգացման մակարդակն ունի ակնհայտ առավելություն: Բավական է նշել, որ եթե քննաչության մեկ շնչին ընկնող Թուրքիայի համախառն ներքին արդյունքը 3100 ԱՄՆ դոլլար է, ապա այդ ցուցանիշը Հայաստանում կազմում է 550 դոլլար, Ադրբեջանում՝ 490 դոլլար, Վրաստանում՝ 530 դոլլար, Միջին ասիայի երկրներում՝ 520 դոլլար:

Ինչո՞ւ հատկապես Հարավային Կովկասի եւ Միջին Ասիայի պետությունները: Բացի զուտ տնտեսական եւ շուկայական նպատակահարմարությունից, Թուրքիան Ադրբեջանի եւ Միջին Ասիայի երկրների հետ ունի ընդհանուր արժեքներ եւ միասնական մշակութային միջավայր, մտածելակերպի եւ րիզմեն-մշակույթի ներդաշնակություն, աշխարհագրական մոտ հեռավորություն, իրազեկ է տարածաշրջանի եւ նրա քննաչության մասին, ունի տարածաշրջանում առևտրատնտեսական գործունեության բազմաձայն փորձ, վերջապես Թուրքիան աշխարհաքաղաքական տեսանկյունից իրեն պատկերացնում է որպես Եվրոպայի եւ Ասիան միացնող կամուրջ:

Տարածաշրջանում Թուրքիայի տնտեսական ներթափանցումը իրականացվում է երկու մակարդակներում՝ պետական գործակալությունների (ամենակերպաշրջանայինը 1992թ.-ին ստեղծված Համագործակցության եւ Զարգացման Թուրքական Գործակալությունն է, որը սկզբունքորեն կարելի է համեմատել Միջազգային Զարգացման Ամերիկյան Գործակալության հետ), որոնք ցույց են տալիս տեխնիկական եւ ֆինանսական օժանդակություն, ինչպես նաեւ թուրքական ծեռնարկությունների ներդրումների շնորհիվ:

Այնուամենայնիվ, Թուրքիայի առևտրային հարաբերությունները ԱՄՆ-ը կրկնվապի եւ Միջին Ասիայի հանրապետությունների հետ դեռեւս ցանկալի մակարդակի չեն հասել: Որպես օրինակ բերենք արտահանման ծավալի տվյալները 2001թ. չորս ամիսների համար՝ Ադրբեջանը գտնվում է 21-րդ տեղում (համապատասխանաբար նրա կշիռը կազմում է 0.7%), իսկ Վրաստանը 34-րդ տեղում, այսինքն 0.4% (աղբյուրը՝ <http://www.foreigntrade.gov.tr/>):

Ասկայն, Թուրքիայի առևտրի համախառն ծավալը Եվրասիայի երկրների հետ տարեցտարի ավելանում է: Այսպես, 1997-2002թթ. այն կազմել է

40.4 մլրդ դոլլար, որը կազմում է Թուրքիայի ընդհանուր ապրանքաշրջանառության 9%-ը: Եվրասիական տարածաշրջանում թուրքական ներդրումների ընդհանուր ծավալը 2002թ.-ի դրությամբ կազմել է 6.1 մլրդ դոլլար, որից Ադրբեջանում՝ 1.5 մլրդ, Վրաստանում՝ 125 մլն, Ղազախստանում՝ 1.3 մլրդ, Թուրքմենիստանում՝ 1.25 մլրդ, Ռուսաստանում՝ 800 մլն, Ուզբեկստանում՝ 750 մլն, Կիրգիզիստանում՝ 350 մլն, Ռիկոսիայում՝ 100 մլն, Մոլդովիայում՝ 42 մլն, Տաջիկստանում՝ 30 մլն, Բելառուսում՝ 19 մլն (աղբյուրը՝ Թուրքիայի պետական վիճակագրական վարչություն):

2. Ինչ տնտեսական օգուտ է կողմերին խոստանում հայ-թուրքական սահմանի բացումը

Չնայած Թուրքիան 1991թ.-ին առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև այդպես էլ չհաստատվեցին: Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համար առաջ է քաշում երկու հիմնական նախապայման՝ Հայաստանը եւ հայկական սփյուռքը պետք է հրաժարվեն հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջից, հայկական գործերը պետք է դուս գան ԼՂՀ-ից եւ ազատագրված տարածքներից:

1993թ. ապրիլ ամսից թուրքական կողմը արգելափակեց հայ-թուրքական սահմանը: Սակայն մեկ տարի անց ստիպված եղավ վերացնել Հայաստանի օդային շրջափակումը, լռելյայն ընդունելով, որ դրանով վնաս է հասցնում սեփական տնտեսությանը:

Հայաստանի ցամաքային շրջափակման հետեւանքով թուրքական անմասնա կրուստները գնահատվում են 500-600 մլն. դոլլար: Սակայն դա չի նշանակում, որ Թուրքիայի համար կարելի էրվում է հենց հայկական շուկան: Այս առումով չենք կարող չհամաձայնվել Հայ-թուրքական հորիորի եվրոպական համակարգող Բուրջու Գյուլտեկինի կարծիքի հետ, որ Հայաստանը, ունենալով փոքր շուկա, Թուրքիայի համար հետաքրքրություն է չի ներկայացնում ոչ արտադրական առումով, ոչ էլ որպես միջազգային հեղինակության: «Սենց Հայաստանը դիտում ենք որպես տարանցիկ երկիր, Հայաստանի համար Թուրքիան ելք է Եվրոպա, իսկ Թուրքիայի համար՝ ելք Ադրբեջան», - Եւում է թուրք գործարարը:

Այս առումով հարկ է նշել նաեւ, որ թուրք փորձագետների գնահատմամբ, Թուրքիայի արտահանման ծավալները Ադրբեջան, Միջին Ասիայի երկրներ եւ Հիմաստան կարող էին լինել նվազագույնը երեք անգամ ավելին, քան այժմ՝ Հայաստանի եւ Նախիջեւանի միջոցով երկաթուղային եւ ավտոմոբիլային հաղորդակցության վերականգնման դեպքում:

Այսպիսով, Հայաստանի հետ սահմանի բացումը եւ տնտեսական հարաբերությունների բարելավումը բխում է Թուրքիայի շահերից եւ կարելի էրվում է Թուրքիայի տնտեսական քաղաքականության՝ Եվրասիական ուղղությանը նպաստող շրջանակներում:

Մնում է ենթադրել, որ մինչեւ հայ-թուրքական սահմանի անխուսափելի բացումը, Թուրքիան, առաջ քաշելով նախապայմաններ, ուղղակի չի ուզում կորցնել իր քաղաքական խաղաքարտերը Հայաստանի հետ հարաբերություններում: Բնականաբար, առկա է նաեւ Ադրբեջանի կողմից որոշակի ճնշումներ Թուրքիայի վրա:

Իսկ ի՞նչ կշահի Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերություններում: Այս հարցում գոյություն ունեցող տեսակետները տարբեր են, սակայն ընդհանուր առմամբ դրանք երկու հակադիր մտեցումներ են:

Ըստ հայ-թուրքական տնտեսական հանձնաժողովի համանախագահներ Արսեն Ղազարյանի եւ Քախան Սույաթի խոսքերի, եթե թուրքական իշխանությունները փոխեն իրենց դիրքորոշումը, ապա այդ հարաբերություններն ունեն գարգացման լուրջ հեռանկարներ:

Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ Թուրքիայի հետ տնտեսական կապերի հաստատումը տնտեսապես շահավետ է Հայաստանի համար, մասնավորապես Հայաստանը հնարավորություն կունենա վաճառել էլեկտրաէներգիա Թուրքիայի արելեյան շրջաններին, Հայաստանը դուրս կգա մեծ թուրքական շուկա, Թուրքիայի հետ շփումների միջոցով հնարավորություն կունենա իր առեկտրատնտեսական հարաբերությունները ընդլայնել եվրոպական երկրների հետ:

Հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հարցի քննարկումների ժամանակ հաճախ շրջանառվում է հետևյալ ցուցանիշը. հայ-թուրքական սահմանի բացումից հետո Հայաստանի արտաքին առևտրի շրջանառությունը կավելանա շուրջ 500 մլն դոլլարով: Ամենայն հավանականությամբ այդ ցուցանիշի ծագումը կապված է Համաշխարհային Բանկի այն հաշվարկների հետ, որ քաղաքական հիմնախնդիրների բազալայության ժամանակ Հայաստանի եւ Թուրքիայի միջև առևտրային շրջանառությունը կկազմեր 420-500 մլն դոլլար: Ընդ որում, այդ հաշվարկների ժամանակ նկատի է առնվում, որ Հայաստանի հարաբերությունները պետք է կարգավորվեն նաեւ Ադրբեջանի հետ: Ենթադրվում է, որ Հայաստանը ավելի էժան, քան հիմա, Լեւոնառեստրաններ ծեք կերի Ադրբեջանից եւ օգտագործելով իր Լեւոնառեստրակ կարողությունները՝ արտադրած էլեկտրաէներգիան կարտասելի Թուրքիա: Այս պայմանի դեպքում ընդհանուր ներուժային արդյունքը սահմանի բացումից եւ հարաբերությունների կարգավորումից հետո կկազմի. տրանսպորտային ծախսերի խնայողությունից՝ 6.4-8.4 մլն դոլլար, Լեւոնառեստրանների ցածր գների հաշվի խնայողությունից՝ 45 մլն դոլլար, արտահանումը կավելանա 268.9-342.4 մլն դոլլարով, ընդհանուր արդյունքը կկազմի 320.3-395.8 մլն դոլլար: Եթե ընդհանուր արդյունքից էլ հանենք 80-100 մլն դոլլար կազմող Ադրբեջանից Լեւոնառեստրանների լրացնող ներմուծումը, ապա էֆեկտը կկազմի 220.3-315.8 մլն դոլլար (աղբյուրը՝ Evgeny Polyakov, Changing Trade Patterns after Conflict Resolution in the South Caucasus, The World Bank, Poverty Reduction and Economic Management Sector Unit, April 2001):

Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական ապագա հնարավոր տնտեսական հարաբերություններին, ապա հարկ է նշել, որ հորիորային Հայաստանի եւ հորիորային Ադրբեջանի առևտրային կապերի կառուցվածքը վերականգնելն այլևս անհնար է: Տասներեք տարիների ընթացքում իրավիճակը զգալիորեն փոխվել է: Մագուրը, որը նախկինում Ադրբեջանի համար արտահանման ապրանք էր, այն ծավալվով, որ հիմա է արտահանվում, անհրաժեշտ է հենց Ադրբեջանի Լեւոնառեստրակի համար: Գազը ընդհանուրապես դառնում է ռեֆիցիտ ապրանք, Հայաստանն էլ կարող է ավելի լավ այլընտրանքային աղբյուր ունենալ, քաղի ռուսականից օգտվելով թուրքոմենական եւ իրանական գազից: Իրանի հետ Հայաստանը նախագծում է կառուցել 140 կիլոմետր երկաթուղային գազատար (նախաձեռն արժեքն է 100 մլն դոլլար):

Այն Իրանի միջոցով միացված է նաև թուրքմենական զազի կանցանքի: Դիզելային փառեկից առուով Ադրբեջանի շրկան որոշ չափով կրճատվել է (մասնավորապես Ադրբեջանը կորցրել է իրանական շուկան), ես հնարավոր է ապագայում այդպիսի շուկա կարողանա որոշակի շայատասանը: Չայատասանից Ադրբեջան նախկինում մատակարարվող շատ ապրանքատեսակների գծով այս Ադրբեջանի շուկան արդեն վաղուց զբաղեցված է այլ երկրների կողմից: Իհարկե, սահմանային ոչ պաշտոնական առևտուր (Չայատասան նավթամբերի, բամբակե մանրաթելի ներմուծում եւ Չայատասանից էլեկտրատեխնիկայի, թեթև եւ սննդի արդյունաբերության արտադրանքի արտահանում) Չայատասանի եւ Ադրբեջանի քաղաքացիների միջև (որոշ զննատուներով այն կազմում է 40 մլն դոլար) այսօր իրականացվում է Վրաստանի տարածքում (Սադախլու), բայց դժվար թե այն ընդլայնվի:

Իհարկե, համարվման բնորոշների մի քանի տարբերակներ, անկախ Ադրբեջանի եւ Չայատասանի կամքի, ծեսավորվում են: Այսպես օրինակ, գոյություն ունեն ունիֆիկացված տնտեսական բնորոշներ, որոնք ներդրում են Չարավային Կովկասում Միջազգային Արժույթային Գիմնարարմի եւ Դանաշխարհային Բանկի կողմից: Կարելի է նկատել, որ արեւմտյան երկրների կողմից մեծ միջոցներ են ծախսվում Չարավային Կովկասի պետություններում համատեղելի իրավական տարածքի ստեղծման վրա: Որոշ հիմնադրամներ ակտիվորեն խթանում են երեք հանրապետությունները ընդգրկող համատեղ ծրագրերը: TASIS միանման բնորոշները հանգեցրել են այն բանին, որ այդ կառույցը նախաձեռնել է Ադրբեջանի, Վրաստանի, Չայատասանի, Թուրքիայի նոր Միասնական Ենթահամակարգի բնորոշ: Երկիրը, որը ունի էլեկտրաէներգիայի ավելցուկ կարող է այն մատակարարել այդ երկրներից ցանկացածին: Չնայած հիմա այդ բոլոր չորս երկրներն էլ տարբեր չափերով զգուս են էլեկտրաէներգիայի սղություն, այդ նախագիծը կարող է մեծ նշանակություն ունենալ խաղաղությունից հետո: Այսօր այդ գործընթացը արդեն սկսվել է, սակայն ծեսական առուով առանց Չայատասանի:

3. Չայատասանի տնտեսական շահերը եւ անվտանգությունը

Չայատասանում քիչ չեն, իսկ ներքին մտավախության զգացումով մեծամասնություն են կազմում այն անձինք, ովքեր կարծում են, որ հայ-թուրքական սահմանի բացումից հետո Չայատասանի համար էլ ավելի կնեծանա Թուրքիայի կողմից տնտեսական եւ քաղաքական էքսպանսիայի վտանգը: Բեզվող փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին. թուրքական արարները բավական էժան են, հետևաբար սահմանի բացումից հետո մեր ապրանքները ուղղակի անմրցունակ կդառնան, իսկ հայկական շուկաները թուրքական ապրանքներով հեղեղելով կործանարար է մեվող ազգային արդյունաբերության համար: Գյուլբերկուս ունեն նաև այլ մտավախություններ՝ թուրքական դրամազուլվել կլլանի հայկական ձեռնարկությունները, Չայատասանի տարածքում Թուրքիայի շատ քաղաքացիների գտնվելը կարող է կապված լինել հետախուզական գործունեության հետ, վերջապես Չայատասանը շատ բույլ է քաղաքական առումով, իսկ պետական իշխանության ինստիտուտները այնքան հասուն չեն, որ հավասարը հավասարի հետ գործ ունենան 67 մլն. բնակչություն ունեցող պետության հետ: Առաջին հայացքից զուեզ դեվլարատիվ են հենչում բոլոր այդ կարգի հայտարարությունները, սակայն ոչ ոք չի կարող վիճարկել, որ այս ուղղությանը ձեռնարկվող բոլոր

գործողությունները պետք է հավասարակշռված լինեն, իսկ սահմանի բացումից հետո պետք է չեզոքացնել բոլոր այն բացասական գործընթացները որոնք կարող են ծագել Չայատասանի եւ Թուրքիայի միջև երկաթուղային եւ ավտոժոբիլային հաղորդակցության վերականգնմամբ: Այս բոլոր հիմնական դիրքերը հաշու էլուծելի կլինեն, եթե Չայատասանը ունենար բավարար նյութական պաշարներ:

Մյուս կողմից Չայատասանի վիճակը չի բարելավվում այն հանգամանքով, որ նա 2003թ. փետրվարի 5-ից դարձել է Առեւտրի Զամաշխարհային Կազմակերպության (ԱԶԿ) 145-րդ անդամ երկիրը: Դա նշանակում է, որ ԱԶԿ-ի անդամ հանդիսացող Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններում գործելու են այդ կազմակերպության կանոնները:

Գյուլատնտեսության ոլորտում ներքին աջակցության եւ արտահանման լուրջարման առնչությամբ Չայատասանի ստանձնած պարտավորությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

ա/ արտահանման լրավճարման մակարդակն ամրագրված է գրոյի վրա, այսինքն Չայատասանը իրավունք չի ունենա իր գյուլատնտեսական արտադրանքների համար արտահանման լրավճարներ տրամադրելու.

բ/ աջակցության համախառն չափի մակարդակն ամրագրված է գրոյի վրա, այսինքն՝ Չայատասանից պահանջվելու է «դեղին զամբյուղի» լրավճարման մակարդակը պահել ընդամենը «գ» կետում նշված նվազագույնի վրա.

գ/ առանձին ապրանքի հետ կապված եւ ապրանքի հետ չկապված ներքին աջակցության նվազագույն մակարդակը մինչեւ 2008թ. դեկտեմբերի 31-ը կլինի 10 տոկոս, իսկ 2009թ. հունվարի մինչև սկսած 5 տոկոս, այսինքն 2009թ. հունվարի 1-ից սկսած Չայատասանից կպահանջվի «դեղին զամբյուղի» լրավճարում սահմանափակել տվյալ տարվա գյուլատնտեսական արտադրության արժեքի 5 տոկոսով.

դ/ 2009թ. հունվարի 1-ից Չայատասանը կվերացնի գյուլատնտեսական տեղական արտադրանքների՝ արտադրողի կողմից իրացման եւ անասնաբուժական միջոցների իրացման նկատմամբ կիրառվող ավելացված արժեքի հարկից ազատումը, այսինքն 2009թ-ից սկսած գյուլատնտեսական արտադրողների նկատմամբ եւս կկիրառվի ավելացված արժեքի հարկը:

Վերջին հաշվով միաջազգային առեւտրի ազատականացման միտումները հանգեցնում են նրան, որ վաղ թե ուշ Թուրքիայի եւ Չայատասանի միջև սահմանը բացվելու է: Կարող ենք մենք այսօր հաշվել բոլոր հետևանքները, որ կարող են առաջանալ Թուրքիայի հետ սահմանը բացելուց հետո:

1994թ. Չայատասանի արտահանման մեջ Թուրքիայի բաժինը կազմել է 0.1%, 1998թ. -ին՝ 1.4 %, որը կազմում է 3 մլն. դոլար, ներմուծումը համապատասխանաբար 0.1% եւ 6.3 %, որը կազմում է 14 մլն. դոլար: Ինչպես տեսնում ենք, եթե արտահանումը եւ ներմուծումը 1994թ.ին հավասար էին, ապա 1998թ. ներմուծումը 4.5 անգամ զերազանցում է արտահանմանը (աղբյուրը՝ Statistical Yearbook of South Caucasus, 2000):

Որոշ ոչ պաշտոնական տվյալների համաձայն առետրային շրջանառությունը երկու երկրների միջև, միջնորդավորված Վրաստանի եւ Իրանի մասնակցությամբ, տարեկան կազմում է շուրջ 200 մլն դոլար, Չայատասանում գործում են 200 հայ-թուրքական համատեղ ձեռնարկություններ հիմնականում թեթև եւ սննդի արդյունաբերության ոլորտում: Ընդ որում, Չայատասանի եւ Թուրքիայի միջև առետրային շրջանառության մեծ մասը կազմում է Թուրքիայից

Հայաստան սպառողական ապրանքների արտահանումը: Իսկ Հայաստանից Թուրքիա հիմնականում արտահանվում է հունք՝ մետաղի քարոն, կաշի:

Ինչպես տեսնում ենք Թուրքիայի և Հայաստանի միջև ձեւակորված արտաքին առևտրի հաշվեկշիռը և դրա կառուցվածքը չեն խոսում այդ հարաբերություններում Հայաստանի օգտին: Այս իրավիճակում սահմանի բացումը և ԱԳԿ-ի կանոնների պահպանումը կարող է հանգեցնել:

- թուրքական ապրանքների ներմուծման զգալի ավելացմանը, որոնք այսօր ներմուծվում են միջնորդավորված ճանապարհով՝ Կրաստանի և Իրանի միջոցով, որը կարող է հարված հասցնել հայրենական ապրանքների արտադրությանը, հատկապես գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության ոլորտում:

Հայաստանում 1998թ. տվյալներով գյուղատնտեսական ապրանքների միջին մեծածախ գինը Թուրքիայի համեմատ կազմել է 104%, ճանապարհային ցորենը՝ 111%, գարին՝ 131 %, արեւածաղիկը՝ 218%, տավարի և ոչխարի միսը 34%, հավի միսը՝ 113%, բուրդը՝ 33%, ձուն՝ 163%, կարագը՝ 41%, շաքարավազը՝ 55%, այլուրը՝ 144% (արքյուրը՝ Հայաստանի վիճակագրական ծառայություն):

1994թ. համեմատ գների ինդեքսների դինամիկան Թուրքիայից արտահանվող գյուղատնտեսական և անասնաբուծական մթերքների գծով հետևյալն է. 1998թ.՝ 111.9%, 1999թ.՝ 102.3%, 2000թ.՝ 99.3%, 2001թ.՝ 89.7%, 2002թ.՝ 85.8%, ներմուծման ինդեքսը համապատասխանաբար՝ 97.6%, 81.1%, 79.4%, 75.0%, 72.9%:

1994թ. համեմատ գների ինդեքսների դինամիկան Թուրքիայից արտահանվող տեքստիլ արտադրանքի գծով հետևյալն է. 1998թ.՝ 101.1%, 1999թ.՝ 90.3%, 2000թ.՝ 83.6%, 2001թ.՝ 82.2%, 2002թ.՝ 79.9%, ներմուծման ինդեքսը համապատասխանաբար՝ 99.2%, 88.2%, 84.2%, 85.9%, 82.5% (աղբյուրը՝ www.die.gov.tr):

Վերը նշված ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանի գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության շուկաները արտաքին առևտրի ազատ կարգի պայմաններում կարող են դառնալ Թուրքիայի տնտեսության համապատասխան ճյուղերի կողմից գրավման պոտենցիալ օբյեկտներ:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք համզել հետևյալ եզրակացություններին.

1. ՏՀԶԿ-ի և ԵՄ-ի երկրերի հետ Թուրքիայի արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը և արտահանման-ներմուծման որակական կառուցվածքը թելադրում են վերջինիս կանգնել տնտեսական էքսպանսիայի եվրասիական ուղղության վրա,
2. Հայաստանը տարանցիկ է Արբեջան և Միջին Ասիա Թուրքիայի տնտեսական ներթափանցման համար, այդ առումով հայ-թուրքական սահմանի բացումը բխում է Թուրքիայի տնտեսական շահերից
3. Հայ-թուրքական սամանի բացումից Հայաստանի համար ակնկալվող տնտեսական օգուտների մասին պատկերացումները և հայտարարությունները ուժեղացված են
4. Ավելին, հայ-թուրքական սահմանի բացումը ԱԳԿ-ին Հայաստանի անդամակցության պայմաններում կարող է հանգեցնել Հայաստանի պարենային անվտանգության աստիճանի կտրուկ նվազմանը և Թուրքիայի կողմից Հայաստանի գյուղատնտեսական և թեթև արդյունաբերության շուկաների գրավմանը:

2.10. Պանթուրքիզմի գաղափարները և ծրագրերը

ԱՄՆ-ի հետախուզական և վերլուծական կենտրոնները աշխուժորեն քարոզում են պանթուրքիզմի գաղափարները, բայց ոչ թե որպես աշխարհաքաղաքական համադրույթ (դոկտրինա), այլ քաղաքակրթական օրինակ: ԱՄՆ-ը չունի միասնական թյուրքական պետություն (Թուրքիայի գերիշխանությամբ) ստեղծելու ծրագիր, այլ շահագրգռված է Կենտրոնական Եվրասիայի նորանկախ պետությունների ինքնիշխանության ամրապնդմամբ, թեև հնարավոր է համարում համարված տնտեսական ու մշակութային տարածքի ստեղծումը, որն ընդհանուր շահեր ու ռազմավարական հավանականորեն կունենար: Պանթուրքիզմն ինքնին, նույնիսկ որպես մշակութային մեծ ուժ նույնպես բավականին վտանգավոր է և ամենեւին հիմնավորված չէ ոչ պատմականորեն, ոչ մշակութային, ոչ տնտեսական և ոչ անվտանգության առումներով: Պանթուրքիզմի մեծագույն հարված հասցվեց «Կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագիր» կազմակերպության ստեղծմամբ, որի կազմում են թյուրքական երկու պետություններ՝ Ղազախստան և Ղրղզստանը, ու նաև իրանալեզու մահմեդական Տաջիկստանը: Ուզբեկստանը վարում է սեփական քաղաքական խաղը, իսկ Թուրքմենստանը ձգտում է արտաքին քաղաքական չեզոքության: ԱՄՆ-ը պանթուրքիզմի գաղափարը համարում է չափազանց իռացիոնալ, անիրական ու ժամանակավոր: ԱՄՆ-ը ավելի շահագրգռված է նորոսմանիզմի համարություն միավորված ռազմավարություններով, որոնք ենթադրում են Թուրքիայի ազդեցության տարածումը թյուրքական, բայց ավելի շատ ոչ թյուրքական ժողովուրդների ու երկրների վրա, որոնք տարբեր ժամանակաշրջաններում եղել են Օսմանյան կայսրության կազմում: ԱՄՆ-ի համար անընդունելի է նորոսմանիզմ անվանումը, ուստի ԱՄՆ-ի հովանու ներքո փորձեր են արվում ի-

րագործել այնպիսի նախագծեր, որպիսիք են «Մեծովյան համագործակցության կազմակերպությունը», ՎՈՒՌԱՄ-ը: ԱՄՆ-ը ավելի շահագրգիռ է Թուրքիայի ազդեցության մեծացմանը Բալկաններում, Դյուսիսային ու Զարավալին Կովկասում, Ղրիմում, Ուկրաինայում, Բելառուսում, նաեւ Լեւանտում Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Իսրայելում: Այնուամենայնիվ, նույնիսկ այս ծրագրերի շրջանակներում ԱՄՆ-ը վստահ չէ Թուրքիայի մասնակցության արագացման վրա: Օրինակ, Թուրքիան կարող էր առաջադրար դեր խաղալ ՎՈՒՌԱՄ-ի գործունեության մեջ, սակայն ըստ երեւույթին ԱՄՆ-ը դրա համար անհրաժեշտ քայլեր չարեց: Թուրքիայի գործունեությունը Վրաստանում, նրա շրջաններում, հատկապես Աջարիայում, Աբխազիայում, նաեւ Դաղստանում, Չեչնիայում, Կարաբոլինո-Քալկարիայում, Ադիգեյում, Կրասնոդարի երկրամասում, Բուլղարիայում, Քուսիայում, Աբխազիայում, Կոստովում, Մակեդոնիայում, Բենարեայում անհրաժեշտ է դիտարկել որպես թուրք-ամերիկյան համատեղ ծրագիր: Այս ծրագրի համեմատությամբ որեւէ այլ համատեղ ԱՄՆ-Թուրքիա նախագիծ Կենտրոնական Ասիայում ստանում է երկրորդական նշանակություն: Տեղեկություններ կան, որ ԱՄՆ-ի ու Թուրքիայի ռազմական ու հետախուզական գերատեսչությունների միջեւ մշտապես քննարկվել են Բալկաններում, Կովկասում եւ Ղրիմում բուրբալան ռազմական ու հետախուզական ներկայության ուժեղացման խնդիրը: Թուրքիայի դիրքերն այս տարածաշրջաններում ավելի ուժեղ են, քան Կենտրոնական Ասիայում: Նշյալ ներկայության մակարդակը համեմատելի է միայն Իրանում Թուրքիայի դիրքերի հետ, որը վերաբերում է նախ եւ առաջ Իրանի թուրքական ու քրդական շրջաններին:

Գալու է նկատել, որ Ուզբեկստանում, Թուրքմենստանում եւ Ղազախստանում Ռուսաստանի ազդեցության զգալի ու սկզբունքային նվազումից հետո, ԱՄՆ-ը կորցրեց հետաքրքրությունը Թուրքիայի հանդեպ որպես տվյալ շրջանում Ռուսաստանի վրա ճնշման գործոնը: ԱՄՆ-ը հասկանում է, որ Ղազախստանը, Ղրղզստանը ու Տաջիկստանը աշխարհաքաղաքական առումով խոցելի վիճակում են եւ միշտ կմզտեն համագործակցելու Ռուսաստանի հետ (Տաջիկստանը նաեւ Իրանի հետ): Անկախ գոյության մաստորոշ ժամանակաշրջանում այդ երկրները եւ Դայաստանը թուր հնարավորություններ ունեն Արեւմուտքի հետ քաղաքական, ռազմական եւ տնտեսական ոլորտներում համարկվելու համար ու գործնականում այդ հնարավորությունները օգտվեցին լիակատար «ծրագրով»: Սակայն այդ համագործակցությունը բավարար չէր նրանց անվտանգության ապահովման համար: Այս երկրները գերադասեցին պահպանել առաջնահերթությունները Ռուսաստանի նկատմամբ: ԱՄՆ-ը լավ հասկացավ դա եւ հազվի քն նորից ցանկանա Ռուսաստանի հետ այդ պետությունների միջեւ հարաբերությունների խզումը:

Կովկասյան-կասպյան եւ կենտրոնափակյան տարածաշրջաններում ԱՄՆ-Թուրքիա համագործակցություն քննարկման համար հարկ է ընդունել հետևյալ տարբերակը: ԱՄՆ-ը այս շրջաններում ունի միայն նախ ու զազ ստանալու շահեր: Զափազանցություն չի լինի այն պնդումը, քե որիչ արմատական շահեր այդ մարզերում ԱՄՆ-ը չունի: Կերքին տասնամյակների ընթացքում ամերիկյան քաղաքագետները փորձում էին ձեռակերպել իրենց նպատակներն ու խնդիրները Կովկասում ու Կենտրոնական Ասիայում: Կային այդ տարածաշրջաններում արագ ներդրման գաղափարներ, կային նաեւ հակաթուրք եւ ոչ պակաս կտրուկ գաղափարներ: Քննարկվում էր այն հար-

ցը, քե այդ երկրների նկատմամբ ճնշումը գործադրել մարդու իրավունքների ու ազատությունների հարցերով, քե՞ սահմանափակվել ԱՄՆ-ի քաղաքականության հանդեպ կառավարող վարակարգերի լույստությանը: Ջ. Բուչի վարչակազմը աննախադեպ քայլեր կատարելով Միջին Ասիայում ԱՄՆ-ի ռազմական ներկայության հաստատման համար, այնուհանդերձ, դա կապեց ոչ քե տեղի, այլ հարևան շրջանների Աֆղանստանի, Չինաստանի ու Զարավալին Ասիայի հիմնախնդիրների հետ: Սկզբունքորեն ամերիկյան ռազմական ներկայությունը անմասնակից է տարածաշրջանի խնդիրներին: Ընդունելով այս տարբերակը, կարելի է բացահայտել Թուրքիայի դերը ԱՄՆ-ի համար կենտրոնական Ասիայում եւ Կովկասում:

2.11. Քրդական հարցը

Քրդական հարցի վերաբերյալ ԱՄՆ-ը պաշտոնապես թուրքամետ դիրքորոշում ունի: ԱՄՆ-ը հռչակել է ոչ միայն քրդական պետությունը Թուրքիայում ու Իրաքում ստեղծելու, անհնարինությունը, այլեւ լայն իրավունքներով ինքնավարությունների ստեղծումն անհնարինությունը: ԱՄՆ-ը ենթադրում է Թուրքիայի պահպանումը որպես ունիտար պետություն եւ, ի տարբերություն եվրոպայիության ու առաջատար եվրոպական երկրների, չի ենթադրում նույնիսկ իր լեզվի ու մշակութային օգտագործման իրավունքների մեծացում: Լավագույն դեպքում ԱՄՆ-ը Թուրքիայում քրդական հիմնախնդրի կարգավորում համարում է երկրի քրդարձակ վայրերում ընկերային-տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Այս դիրքորոշումն անվիճելի էր մնում վերջին 20 տարիներին, բայց Ջ. Բուչի վարչակազմը սույն հարցի վերաբերյալ ավելի պարզորոշ արտահայտվեց: ԱՄՆ-ը ստիպված է Թուրքիայում քրդական խնդրի հետ հաշվի նստել միայն այդ հարցի կարգավորման պայմանով վերջինի՝ եվրոպայիության անդամակցելու հանգամանքի առնչությամբ: Միաժամանակ, ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան հանդիպեցին մեծ դժվարությունների կապված Իրաքի քրդաբնակ վայրերի հետ: Նրանց ջանքերով Իրաքի հյուսիս-արեւմուտքում փաստացի ստեղծված է քրդական պետություն, որին աջակցում են Իրանն ու Իսրայելը որպես Իրաքին հակակշռելու գործոնի: Այս պետական կազմավորումը թեեւ շարունակում է մնալ տնտեսապես ու անվտանգության տեսանկյունից ոչ ինքնաբավ, ապացուցել է իշխանության մարդիկներ ձեւավորելու, արեւելյան տիպի քաղաքացիական հասարակություն կառուցելու, արտաքին հարաբերություններ իրագործելու իր կարողությունը: ԱՄՆ-ից ու Մեծ Բրիտանիայից մեծ կախում ունենալով, քրդական պետական այս կազմավորումը իր հարաբերություններն է ձեւավորում շահագրգիռ պետությունների Իրանի, Իրաքի, Սիրիայի, Իսրայելի եւ նույնիսկ Թուրքիայի հետ: Կանոնավոր շփումներ կան Իրաքյան Քուրդիստանի ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ղեկավարների ու շրջանային կառավարության եւ նշյալ պետությունների ներկայացուցիչների հետ:

2001 թ. սեպտեմբերի 11-ին հաջորդած ողջ ժամանակահատվածում ԱՄՆ-ը փորձում էր իմաստավորել Իրաքում քրդական հարցի հեռանկարն ու քաղաքական գործողությունները: Խնդիրը հակաիրաքյան ռազմաքաղաքական քրդերի ռազմական աջակցությունը ստանալու եւ միաժամանակ ազգային պետություն ստեղծելու նրանց պահանջն անտեսելու մեջ էր: Խնդիրը լուծվեց 2002 թ. ամռանը, երբ ԱՄՆ-ը հասկացավ, որ քրդերը չեն կարող լուրջ ռազմական գործընկեր լինել Իրաքի դեմ պատերազմում: Իրաքում քրդա-

կան առաջնորդներն ու ռազմական ուժերը չեն կարող պատկանել օտար շահերի համար: Բացի այդ, ուրվագծվեցին կանոնավոր շփուհման բուրդ դե-կավարների ու Ս. Հուսեյնի վարչակարգի միջև: ԱՄՆ-ի նշյալ դիրքորոշման իրականացման հստակեցման գործով վճռորոշ դեր խաղաց Թուրքիան, ո-րը կասկածի ենթարկեց այդ ռազմարշավում քրդական զորաջկատների մասնակցության նպատակահարմարությունը: Թուրքիայի կարծիքով, արաբ տնակալության հանդեպ իրենց քրեական վարքով քրդերը կվարկարկեն ևն իր գործողությունը եւ որոշակիորեն կխոչընդոտեն թուրքական զորքերի գործողություններին: Միաժամանակ ԱՄՆ-ը փաստորեն ռազմարշավում քր-դերի գործուն մասնակցության հնարավորությամբ շանտաժի էր ենթարկում Թուրքիային, ինչն իր կարող էր համարժեք լինել Թուրքիայի մասնակցու-թյանը Իրաքյան Թուրքիստանում բավականին մեծաթիվ ամերիկաքրիստա-նական զորավախումբ տեղակայելու պայմանով:

Վերլուծական շրջանակներում ԱՄՆ-ը չունի շատ թե քիչ փորձառու մասնագետներ քրդական հարցերով: Որոշ քվով մասնագետներ կան հետա-խուզությունում, որոնց վերլուծական կարողությունները ըստ երևույթից սահմանափակ են: ԱՄՆ-ում վարչակարգի պատվերով քրդական հիմնախնդ-րով զբաղվում են երեք հետազոտական հիմնարկություններ «Միջին Արեւել-քի ինստիտուտը», «Միջինարեւելյան քաղաքականության վաշիգտոնյան ինստիտուտը», «Միջազգային ու ռազմավարական հետազոտությունների կենտրոնը», ինչպես նաեւ որոշ համալսարանների առանձին հետազոտող-ներ: Գաղափարների հիմնական մրցակցությունը ծավալվում է առաջին եր-կու հաստատությունների միջև, որոնցից առաջինը արաբամետ, իսկ երկ-րորդը իսրայելամետ է և լուրջ դիրքեր ունի ամերիկյան քաղաքականության մեջ: ԱՄՆ-ում հետազոտական հաստատությունները մեծ դեր են խաղում աղ-տաքին քաղաքականության ձեւավորման մեջ այն դեպքերում, երբ այդ խն-դիրների վերաբերյալ բացակայում է քաղաքական որոշումներ իրականաց-նելու բավականաչափ փորձ: Ուստի, քրդական հարցով մեծ դեր ունեն իսրա-յելամետ կենտրոններն ու մասնագետները: Բացի այդ, Իսրայելում ու իրե-կան կազմակերպությունները միշտ բավականին կարելու դեր են խաղում ա-մերիկացիների կողմից Միջին Արեւելքի հիմնախնդիրների համալիրը բն-նարկելու ժամանակ: Նաեւ Թուրքիայի հետ համագործակցության բարձր մակարդակին զուգընթաց, Իսրայելը ունի իր շահերը որոշ մահնեղական շր-ջանակներում: Հայտնի է, որ Իսրայելը հարաբերություններ է հաստատել Թալիբանի վարչակարգի հետ: Իսրայելը վաղեմի կպպի ունի փաստորեն բոլոր քրդական քաղաքական, կրոնական և զինված կազմակերպությունե-րի հետ: Իսրայելը ձգտում է առավել արդյունավետ օգտագործել քրդական գործուն ընդդեմ Իրաքի, Իրանի և Սիրիայի և կոնկրետ օգնություն է ցույց տալիս Իրաքյան Թուրքիստանի կառավարությանը, նաեւ հետախուզության ոլորտում: Իսրայելը միակ պետությունն է, որը շահագրգռված է Հյուսիսարե-ւելյան Իրաքում անկախ քրդական պետության ստեղծմամբ, որը կունենա ոչ միայն զգալի տարածք, այլեւ կվերահսկի նավթարդյունաբերական Զիրիքով շրջանը: Իսրայելը քրդական հարցում Թուրքիայի հետ հարաբերությունները կառուցում է բոլոր բողերի (սիրիական, իրանական ու իրաքյան) նկատմամբ թուրքական, փաստորեն՝ թուրք-իսրայելյան գերիշխանություն հաստատելու ուղղությամբ: Թուրքիայի տեսանկյունից դա շատ կասկածելի ծրագիր է, բայց Իսրայելը հույսեր է կապում ԱՄՆ-ի հետ, որին կարող է շահագրգռել

դրանով: Ընդ որում, Թուրքիայում քրդական հարցի կարգավորման եվրա-մուրյան նախագիծը՝ քրդերի ընկերային-մշակութային իրավունքների ընդ-լայնման հիմքով, նպաստում է իսրայելյան նախագծի իրագործմանը: Այսպի-տակ, քրդական հիմնախնդրի դիտարկումը անհրաժեշտ է անել Իսրայելի շա-հերի ու ձգտումների հաշվառմամբ: (Անգլերեն տեքստը էջ 42):

Հիմքեր կլան պնդելու, որ ԱՄՆ-ը քրդական հիմնախնդրի լուծման ման-րամասն մշակված ծրագիր ունի, որը նախատեսված է Իրաքի դեմ ռազմար-շակի դեպքում: Ամերիկյան որոշ փորձագետների կարծիքով, մինչև ռազ-մարշավը Իրաքում քրդական հարցի լուծման մասին նման տեսակետ սկզ-բունքորեն անմիաստ է եւ անհնար, որովհետեւ իրավիճակն անկայնառեսե-լի է: Ակնհայտ է, որ 2002 թ. ածառնից հետո ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան ավե-լի քիչ էին հավված Իրաքում քրդական հարցը բննարկելուն եւ ակնհայտորեն այլեւս քիչ խոստումներ էին տալիս քրդական քաղաքական կազմակերպու-թյուններին: Զուգահեռաբար նվազեցին նաեւ խոստումները շիիթական կազ-մակերպություններին: ԱՄՆ-ը հավված է Իրաքի ապագան տեսնել իրեն ունի-տար պետություն: Ասկայն ԱՄՆ-ի քաղաքական արտաքին դրսեւորումները ամենեւին չեն արտահայտում այդ երկրի իրական մտադրությունները Իրաքի վերաբերյալ: ԱՄՆ-ը մտադիր չէ ետպատերազմյան Իրաքում ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն: այսպես թե այնպես, ամերիկացիները մտադիր են ստեղծել մի քանի համարժեք իշխանության կենտրոններ Իրաքի ամբող-ջականության ձեւական պահպանմամբ: Ուստի, քրդերի համար ստեղծվում է բավականաչափ բարենպաստ հեռանկար: Ամեն դեպքում, քրդեր Իրաքում եւ այլ երկրներում չունեն առավել լավ հեռանկարներ: Ետպատերազմյան ժամանակահատվածում քննարկումներ կկայանան Իրաքի պետական-քա-ղաքական կառուցվածքի մասին որպես ժողովրդավարական գործընթացի արտահայտություն ներգրավելով իրաքյան հասարակության բոլոր խավերն ու շերտերը: Հատկապես այդ ժամանակ կվճռվի քրդերի ճակատագիրը, ո-րոնք կստանան քաղաքական իրավիճակով պայմանավորված իրավունք-ներ: Սրա հետ մեկտեղ տեսանելի ապագայում ԱՄՆ-ը անպայման կօգտա-գործի քրդական գործուն Թուրքիայի վրա ճնշում բանեցնելու համար: Բայց ներկայումս ԱՄՆ-ը շահագրգռված չէ ու անպատրաստ է Թուրքիայում քրդա-կան գործուն աշխուժացնելու համար: Անկասկած, Հյուսիսարեւելյան Իրա-քում իրադարձությունների կարգացման գործընթացում կզարգանան նաեւ քրդական պետականությունը, իսկ քրդական քաղաքական կազմակերպու-թյունները շահագրգռված են հետելայլում. ա) պատերազմն ընդդեմ Իրաքի չկայանա, բ) Իրաքում քրդական պետականության գոյության շարունակ-մամբ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի հովանու ներքո և իրենց տարածման այդ երկրների ռազմակայանի ստեղծմամբ, գ) Թուրքիայում քրդական հարցից սահմանազատմամբ եւ Իրաքում թուրքական գործերի բացակայությամբ, դ) Իրաքի, Սիրիայի, Թուրքիայի, Իսրայելի ու Ս. Հուսեյնի ղեկավար վարչակար-գի հետ շփումների ու հարաբերությունների պահպանմամբ, ե) եվրոպայի քաղաքական թատերաբեմում Իրաքյան Թուրքիստանի հիմնախնդրի ներկա-յություն մեծացմամբ: Այսինքն, իրաքյան քրդերը շահագրգռե են ստատու-թվոյի պահպանմամբ, ինչը նշանակում է Իրաքում դե ֆակտո քրդական պե-տության գոյություն: Քրդերն ամենեւին շահագրգռված չեն Իրաքի դեմ պա-տերազմով, որի արդյունքում իրենց կզրկվեն իրենց փաստացի անկախու-թյունից եւ ստիպված կլինեն ենթարկվել Բաղդադին: Բացի այդ, նրանք

կկորցնեն նավթարդյունահանումից շահույթներ ստանալու հնարավորությունը, քանի որ պարզ է, որ նավթի աղբյուրներն ու հաղորդակցությունները կվերահսկի թուրքիան որպես ռազմաքաղաքական մասնակցության մրցակցի:

Իրաքում ռազմական գործողությունից առաջ քրդական պետական կազմավորման կառավարությունը առաջադրեց իր գինուժե ամրապնդելու խնդիրը: Նախատեսվում է մարտունակ ուժերի հասցնել 25 հազար մարդու: Նախկինում այս թիվը ձեռական էր, իսկ իրականում մարտունակ էր միայն 12-15 հազար մարդ: 2002 թ. ընթացքում քրդական կառավարությունը ԱՄՆ-ից ու Մեծ Բրիտանիայից ստացավ մեծաքանակ սպառազինություն և որսնջ յուրաքանչյուր կատարվում է այդ երկրների ներկայացուցիչների վերահսկողությամբ: Իրաքյան Քուրդիստանում ստեղծվել են 4-7-ի ու Մեծ Բրիտանիայի արտաքին հետախուզության գրասենյակներ, որոնք գործում են սեղի իշխանությունների հետ կապի մեջ լինելով: Քրդական կառավարությունը ԱՄՆ-ին ու Մեծ Բրիտանիային առաջարկում է «օրինականացնել» այդ գրասենյակների գործունեությունը ստորագրելով համապատասխան պայմանագիր, բայց երկու տերությունները հրաժարվում են, խուսափելով պաշտոնական հարաբերությունների հաստատումից: Հարկ է նկատել, որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան հանդուրժող են Իրաքյան Քուրդիստանի ու Իրանի միջև տնտեսական հարաբերությունների զարգացման հարցում, քանի որ այլ պարագայում պարտավորված կլինեին լրացուցիչ ծախսեր անել այդ տարածքը սնունդով և նյութական այլ պաշարներով ապահովելու համար: Ուշագրավ է, որ ԱՄՆ-ը ու Մեծ Բրիտանիան չեն փորձում սահմանափակել քրդերի շփումները Ա. Չուսեյնի ու Սիդիայի հետ: Կարելի է կարծել, որ դառնով քուրդ-արաբական կապերի փորձ է կատարվում, ինչը կարող է դրական նշանակություն ունենալ Իրաքի նոր քաղաքական դեկավարության հետ քրդերի հարաբերությունների հաստատման համար:

Թուրքիան առավել լավ է պատկերացնում ինքնիշխան պետություն ստեղծելու իրաքյան քրդերի ձգտման հետ կապված խնդիրները: Իրաքում քրդական հարցը ապացուցեց, որ թուրք քաղաքական ու զինվորական ղեկավարության հաշվարկները համալորեց չէին: Չնայած վերլուծական գրականության մեջ ու լրատվամիջոցներում եղած պնդումները, թե թուրքիան պարտվել է մոտ ապագայում, սակայն կշափի հեռավոր ապագայում, այնուամենայնիվ, Թուրքիան պարտվել է, որում համոզված են ամերիկյան ու եվրոպական բոլոր քաղաքագետները: ԱՄՆ-ը այսպես թե այնպես, պետք է վերացնի իր «հենակետերը» տարածաշրջանում: Բայց թուրք վերլուծաբանները և քաղաքագետները իրավացի են, երբ նշում են ԱՄՆ-ի «քննադատման հանդուրժող» վերաբերմունքը այն երկրների հանդեպ, որոնք չեն աջակցել Իրաքի ղեմ գործողությանը: Իհարկե, իրադարձություններն Իրաքում խոչընդոցեցին հակասությունները ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև: Բայց, այնուամենայնիվ, ինքնին իրադարձություններն Իրաքում հիմնարար պատճառ չեն թուրք-ամերիկյան հարաբերություններում նման աննախադեպ հակասությունների ստեղծման համար: Թուրքիան ապրում է նոր պատմական փուլ, որը սկսվել է քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամից հետո: Թուրքական Հանրապետության կայուն գոյության պատմական շրջանն անցել է, և դա չէր կարող չանդրադառնալ նրա արտաքին քաղաքականության վրա: Դեռևս մինչև Արդուլաի Օջալանի ձերբակալումը, ԱՄՆ-ում կատարվում էին քաղաքական մշակումներ քրդական հարցով: Ըստ էության, մրցոժեր էին

ձեռնարկվում իրագործելու քրդական շարժման զարգացման «նոր հայեցակարգը»: Քրդական գործունե Միջին Արևելքում ստանում է ավելի ու ավելի մեծ նշանակություն, նաեւ ամերիկյան ու իրանյան քաղաքականության համար: Իրանում ու Իրաքում ճանաչվում են քուրդ ժողովրդի գոյության, քրդական լեզվի ու ընկերային-մշակութային հիմնախնդիրները: Ի տարբերություն Թուրքիայի, Իրանի ու Իրաքի հիմնականում քրդաբնակ տարածքները կոչվում են Քուրդիստան: Թեհրանում կան քրդական անվանումներով փողոցներ ու շինություններ:

Քուրդ քաղաքական-հասարակական շրջանակները միշտ բարենպաստ միջավայր են եղել տարբեր պետությունների հատուկ ծառայությունների ու հավանական ձեռնածույթունների համար: Գտնվելով դժվարին քաղաքական պայմաններում քրդական կազմակերպությունները ու գործիչները ստիպված են եղել ուշադրություն անել ու երբեմն ղեկավարվել այդ պետությունների ներկայացուցիչների կարծիքներով ու գնահատականներով: Հանախ դա թուլացրել է ու ապակայունացրել է քրդական ազգային ազատագրական շարժումը, ծնել է հակասական միտումներ ու գաղափարներ: Վերջին երկու տասնամյակներին քուրդ կազմակերպությունները հարաբերական վստահելի հարաբերություններ են հաստատել Միդիայի ու Իրանի հետ, իրենց պայքարը կենտրոնացնելով Թուրքիայի ու Իրաքի դեմ: Դա պայմանավորել է հակաարեւմտյան ու հակախրախայեան տրամադրությունները քրդերի շրջանում, քանի որ ԱՄՆ-ը ու Իրաքյան ղեկավարները չեն հրապարակաբար դաշնակիցներ: Նման տրամադրությունները, բնականաբար, առավել հակված էին ԱՄՆ-ի ու Իրաքի ի հետ համագործակցությանը իբրեւ Իրաքի հակառակորդների: Սա թեւեւ մտաւոր գնահատական է, այնուամենայնիվ, արտացոլում է քրդական քաղաքական միջավայրում ազգային ազատագրական պայքարի նոր հայեցակարգի և համապատասխան նոր արտաքին քաղաքականության կողմնորոշման նոր հայեցակարգի ներդրման նշանակությունը:

1998 թ. գարնանը ՔԲԿ-ն ու ողջ քուրդ ժողովուրդը հայտնվեց բավականին ծանր վիճակում Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում քրդական զինված ապստամբությունը Թուրքիայի կողմից արագորեն ջախջախելու հետեւանքով, որի համար վերջինս կիրառեց զգալի քանակային ուժեր: Թուրքիայում քրդերի համաժողովրդական ապստամբության Ա. Օջալանի հույսերը չարդարացան: Ձինված պայքարում մասնակցում էին ոչ ավել, քան 25 հազար զինված քրդեր, որոնք չնայած կատաղի դիմադրությանը, չկարողացան դիմակայել թուրք կամոնաթուր բանակին: (Որոշ տվյալներով, ապստամբությանը մասնակցել են ոչ թե 25 հազար, այլ ավելի պակաս թվով քրդեր): Այս շարժման ջախջախումը մեծ դեր խաղաց Օջալանի, նրա զինակիցների և ՔԲԿ-ի դիրքերի թուլանման գործում: Միաժամանակ, աճում էր կուսակցության քաղաքական ուղեգիծը, արտաքին քաղաքական և գաղափարախոսական կողմնորոշումները վերափոխվեցին ձեռնադրելու ձգտումը:

Սակայն դեռևս մինչ 1998 թ. գարնանը ՔԲԿ-ի միջավայրում կային գաղափարախոսությունն ու արտաքին քաղաքական կողմնորոշումները վերանայելու տրամադրություններ: Դա պայմանավորված էր մի շարք գործունեությամբ: Մեծ նշանակություն ուներ Ռուսաստանի կողմից ՔԲԿ-ի իրական աջակցության բացակայությունը և նույնպիսի վարքը եվրոպական երկրների

ծախ եւ ծախսակներուն առաջատար կուսակցություններ կողմից: ԲԲԿ-ի ծախ գաղափարախոսությանը դավաճելն ամենեւին անհրաժեշտ եւ սահմանափակում էր քաղաքական հենարավորությունները ոչ միայն Արեւմուտքի, այլև Միջին Արևելքի, նախ Իրանի հետ հարաբերություններում: Հարկ է նկատել, որ ԲԲԿ-ի արձատական-ծախ գաղափարախոսությունը որևէ կերպ չէր համապատասխանում նույնիսկ եվրոպայի ու Ռուսաստանի կոմկուսների հայացքներին: ԲԲԿ-ի գաղափարախոսությանը համարժեք էին միայն եվրոպայի, Լատինական Ամերիկայի եւ Հարավարևելյան Ասիայի որոշ երկրների ծախ ժայռահեղականների հայացքները: Եվրոպայում որոշ ծախ կազմակերպությունների կողմից ԲԲԿ-ին աջակցելը ոչ թե քաղաքական, այլ մարդասիրական բնույթ ուներ: ԲԲԿ-ի նոր սերունդը պահանջում էր քաղաքական ուղեգծի վերախմաստավորում: ԲԲԿ-ի քաղաքականության վերանախուս գործում մեծ դեր խաղացին քրդական քաղաքական կազմակերպությունները Եվրոպայում, որոնք տարածում էին «չափավոր» գաղափարներ՝ Թուրքիայի հետ երկխոսության անհրաժեշտության տեսակետին հանդերձ:

Եթե այլ քրդական կազմակերպություններ, նախ եւ առաջ «Քրդաստանի ժողովրդավարական կուսակցությունը» եւ «Քրդստանի հայրենասիրական միությունը» (գործում են Իրանում) ըստ էության դարձել են Իրաքի իյուսիսարևելյան մարզերում կառավարող ուժեր եւ հաջողությամբ կառուցում են քրդական պետականություն ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի հովանու ներքո, ապա ԲԲԿ-ն շարունակում էր կորցնել իր դիրքերը շրջանում: Թուրքիայում ամերիկացիները ողջունեցին քրդերի նոր կուսակցության «ժողովրդի ժողովրդավարության կուսակցություն» ստեղծումը: Քրդամեն տաս կուսակցությունը հարթեցնակեց 1999 թ. ապրիլի 18-ին երկրի խորհրդարանական ընտրությունների հետ միաժամանակ անցկացված Դիարբեքիի եւ հարավարևելյան այլ քաղաքների համայնքային ընտրություններում: Ժամանակակից Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ քրդամետ HADEP կուսակցությունը վերահսկողություն սահմանեց երկրի հարավ-արևելքի քաղաքներում: Չճարավոր է՝ հենց սա է քրդական ազատական քաղաքական կուսակցության այն տարբերակը, որի վրա գրավ էին ցանկանում ղնել ամերիկացիները: Սակայն ԱՄՆ-ի համար հետաքրքրական են նաև արձատական քրդական կուսակցությունները: Քրդական շարժման մեջ ամերիկացիներին ձեռնտու է քաղաքական մաների հնարավորությունը, այլ ոչ թե միայն քաղաքական մեկ ուժի հետ համագործակցությունը:

Այս պայմաններում, 1998 թ. գարնանը Ա. Օջալանը ըմբռնելով ԲԲԿ-ում խճորումների նշանակությունը՝ հուլիս կապեց Թուրքիայում զինված ապստամբության հաջող ընթացքի եւ քրդական հասարակության մեջ տրամադրությունների փոփոխության հետ: Այնուհանդերձ, նախքան ապստամբությունը ԲԲԿ-ում քննարկվում էին հետևյալ նոր քաղաքական գաղափարները:

Ենթադրվում էր գաղափարախոսության, քրդական պետականության ստեղծումն ու արտաքին քաղաքական կողմնորոշումների զուգահեռ փոփոխություններ: Հիմնական պայմանը քաղաքական գործունեության վերախմաստավորման առումով ԲԲԿ-ի գաղափարախոսության փոփոխությունն էր, ծայրահեղ ծախ, հեղափոխական գաղափարներից հրաժարումը եւ ԲԲԿ-ի վերափոխումը ծախ, հնարավոր է սոցիալ-դեմոկրատական կամ եվրոպական տիպի սոցիալիստական կուսակցության: Դա նախ անհրաժեշտ էր առաջատար եվրոպական-արևմտյան երկրների եւ ԱՄՆ-ի հետ «ուսածակարա-

կան երկխոսություն» սկսելու համար: Միաժամանակ, ԲԲԿ-ն առաջադրում է «դաշնայացման», այսինքն համապատասխանաբար թուրք-քրդական, իրանա-քրդական, իրաք-քրդական եւ սիրիա-քրդական դաշնության ստեղծում: Այս գաղափարն ինքնին արձատական եւ անընդունելի է համարվում տվյալ պետությունների կողմից, որտեղ դաշնախաղերը պաշտպանում են ունիտար պետության բնորոշ: Սակայն դաշնության գաղափարը հնարավորություն կտա համագործակցել Արևմուտքի հետ վերջինիս առիթ տալով միջամտելու Թուրքիայի, Սիրիայի, Իրաքի ու Իրանի ներքին գործերին (տվյալ պարագայում առավել հրատապ խնդիր էր դրված Թուրքիայի վերաբերման): ԱՄՆ-ը եւ Եվրամիությունը հատկապես չեն կարող քննարկել դաշնային կառուցվածքի գաղափարը իբրև ապակառուցողական ու ծայրահեղական: Ելնելով այդ խնդրից՝ նպատակ է առաջանում գործընկերային հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ որպես Միջին Արևելքի տարածաշրջանում քաղաքական ծրագրավորմամբ շահագրգիռ ու կարողունակ միակ արևմտյան պետության, որը նաև մեծ ազդեցություն ունի Թուրքիայի վրա:

Որոշ տեղեկությունների համաձայն, քաղաքական որոշումներ ընդունելու ճկունությամբ աչքի չընկնող Ա. Օջալանը հասկանում էր քաղաքական ուղեգծի փոփոխության անհրաժեշտությունը եւ հետաքրքրվում էր ԱՄՆ-ի հետ նոր հարաբերություններ հաստատելու հնարավոր հեռանկարներով: Օջալանը նաև պարտավորություններով կապված էր Սիրիայի եւ կուսակցական զինակիցների հետ եւ ուներ ծայրահեղականի «իմիջ»: Բացի այդ, Թուրքիան երբեք չէր համաձայնվի Օջալանի հետ հաստատել պարտավորեցնող քաղաքական հարաբերություններ: Ա. Օջալանը չուներ հստակ մշակված ծրագրեր, ժամանակ եւ նոր ուղեգծի մշակման հնարավորություններ: Ռուսաստանում կամ Եվրոպայում խոշոր քրդական քաղաքական կենտրոն ստեղծելու նրա հույսերը խորտակվեցին եւ նա փաստորեն համձնվեց Թուրքիային: Ներկայումս ԲԲԿ-ն նախկինի նման կուռ ու միասնական կազմակերպություն չէ: Ըստ էության, ԲԲԿ-ի շրջանակներում ձեւավորվել է քաղաքական համադաշնություն՝ ներառելով տարբեր երկրներում գտնվող մի շարք քաղաքական կուսակցություններ: ԲԲԿ-ի ներկայիս ղեկավար Օսման Օջալանը իր խմբով գտնվում է Բրյուսելում եւ, ըստ երեւութի՝ հասկանում է նոր արտաքին քաղաքական կողմնորոշում որդեգրելու անհրաժեշտությունը եւ կուսակցական գաղափարախոսության փոփոխության կարիքը: Հավանաբար, այդ փոփոխությունները փաստացի կայացել են, սակայն կուսակցությունների վիճակը, ճգնաժամային երեւույթները եւ կենտրոնախոսու ուժերի հզորացումը հնարավորություն են տալիս պաշտոնական ոլորտում ընդունել եւ համապատասխան հետեւողական քաղաքականություն վարել: Օրինակ, Եվրոպայի երկրներում կազմակերպվեցին մի շարք նոր քրդական խմբավորումներ, որոնք զգալիորեն հեռացան Օսման Օջալանից եւ զբաղվում են զինայների հավաքագրմամբ, նրանց նախապատրաստմամբ, հրատարակում են գրականություն: Այս խմբավորումների ղեկավարները բավականին քննադատաբար են վերաբերվում Օ. Օջալանին եւ դեմ են կայանված Արդուախ Օջալանից ղեկավարող ցուցումներ ստանալուն:

Քուրդ քաղաքական ղեկավարների, արաբ գործիչների ու վերլուծաբանների, նաև իրանական գործիչների խոստովանությամբ, վերջին տարիներին ԱՄՆ-ը ջանքեր է գործադրում քրդական հասարակական-քաղաքական միջավայրում ամերիկանամետ կողմնորոշումներ ձեւավորելու համար:

ԱՄՆ-ի խնդիրը դժվարին է, որովհետև ի սկզբանե քրդերը չէին վստահում ԱՄՆ-ին որպես թուրքալի դաշնակցի: Բացի այդ, ԱՄՆ-ը 50-70-ական թվա- կաններին լինելով Իրանի ու Իրաքի գործընկերը, ամեն կերպ անտեսում էր քրդական ազգային շարժումը և քրդերի իրավունքները: Ամերիկացիները խաչանում էին, որ քրդերի հետ սերտ հարաբերությունների հաստատման իտալոնոտը մայս արմատական գաղափարախոսությունն է, որը կրում էն հիմնական քրդական կուսակցությունները, առաջին հերթին ՔԲԿ-ն: ԱՄՆ-ը և Եվրոպական պետությունները հասկանում էին նաև, որ քրդական հարցը պետք է թեկնագն: մասնակիորեն լուծվի, և Արեւմուտքն այսուհետ չի կարող այդ հիմնախնդիրն անտեսել: առանց արեւմտյան ժողովրդավարական սկզբունքները կասկածների ենթարկելու: Այնուհանդերձ, Արեւմուտքը երկարատեւ գործընկերային հարաբերություններ կարող է հաստատել միայն ազատական ու ժողովրդավարական տիպի քաղաքական կազմակերպությունների հետ: Առավելագույնը, ինչ կարող էին իրենց թույլ տալ Եվրոպացիները չափավոր ծախ (սոցիալ-դեմոկրատական) կարգի ուժերի հետ շփումներ հաստատելն էր: Թուրքիայի և Իրաքի դաշնության վերածելու գաղափարը ենթադրում էր ժողովրդավարական գործընկերների առկայություն, որոնք Արեւմտյան կողմնորոշում ունեն: Սակայն ՔԲԿ-ի նման կուսակցության ազդեցությունը քրդերի շրջանում հույս չէր թողնում: Որ տիպի կազմակերպություն(ներ) ստեղծելու համար: Անհրաժեշտ էր կամ չեզոքացնել և կամ վերափոխել ՔԲԿ-ն: Ա. Օջալանի ձեռնարկությունը զգալիորեն կազմալուծեց ՔԲԿ-ն և պայմաններ ստեղծեց այդ կուսակցությունը վերափոխել ավելի բարձրորդ ուժի: Միաժամանակ, ԱՄՆ-ը և Եվրոպան թուրքիային կարողատարրեն ճանաչել քուրդ ժողովրդի ընկերային-մշակութային իրավունքները: Փաստորեն, թուրքիայի դաշնությունը դառնալու գործընթացը սկսվել է և քաղաքականի հակասական բնույթ ունի: Քրդական գործունը հայկական գործունի հետ միաժամանակ թուրքիայի վրա կարելուր ճնշման լծակ է:

ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան փաստորեն իրագործեցին երկարատեւ հաջող գործողություն Իրաքը դաշնության վերածելու ուղղությամբ, երկրի հյուսիսարեւելյան մասում ստեղծելով քրդական պետական կազմավորում վերնոշյալ երկու կուսակցությունների (ՔԲԿ, ՔՅՄ) դեկավարությամբ, որոնք վարում են գործնապաշտական քաղաքականություն: Գրել է Նշել, որ նախկինում այս կազմակերպությունները արմատական ու զինված բնույթ ունեին: Պահպանելով ազգային ազատագրական կազմակերպությունների կարգավիճակը, այսօր ՔԲԿ և ՔՅՄ ստանձնել են պետական կառավարող կուսակցությունների գործառույթները:

Իրաքում քրդական պետականության գոյության միակ երաշխիքը փաստորեն ամերիկա-քրիտանական դաշինքն է վերոհիշյալ կուսակցությունների գործընկերը: Իրաքի հյուսիսարեւելյան շարունակվում է պայքարը և տարբեր պետությունների ու շարժումների միջև մրցակցությունը ազդեցու- յորեն տարածման համար: Իրանը թույլ չի տա իրեն բացառել Իրաքի քրդերի գործընկեր երկրների թվից: Իրանը չի կարող թույլ տալ Իրաքի հյուսիսարեւելյան շրջանական պետության կամ ռազմաքաղաքական հենակետ ստեղծումը: Իրաքի քրդերը տնտեսական և քաղաքականապես սերտորեն կապված են Իրաքի հետ: Քրդերը չեն կարող հրաժարվել Իրանի հետ համագործակցությունից, ծայրահեղ դեպքում մինչեւ Արեւմուտքի կողմից Իրաքում քրդական պետականության պաշտոնական ճանաչումը: Այդ տարածաշրջանում

Իրանի ազդեցությունը ոչ թե նվազում, այլ ավելանում է, ինչը պայմանավորված է այն փաստով, որ քրդերը գիտակցելով իրենց նոր պետության նկատմանը թուրքիայի ու Իրաքի խնդրահարույց հարաբերությունների հետեւան- բով սպառնացող հնարավոր հատորակցային շրջափակումը, կարեւորում են Իրանի հետ հարաբերությունները: Իրանում համաիրանական շարժումների զարգացումը, որում քրդերն ընկալվում էին իբրեւ իրանական աշխարհի մասը, հնարավորություն է ընձեռնում Իրանի հետ գործընկերային հարաբերու- յություններ հաստատել: Իրանը միակ պետությունն է, որի քրդաբնակ շրջանները պաշտոնապես անվանում են Քուրդիստան, իսկ քրդերը համարվում են դաշնակիցներ ընդհանուր քաղաքակրթական շրջանակներում:

Իրաքի քրդաբնակ շրջաններում քաղաքականի սուր պայքար է ընթա- նում ՔԲԿ-ի ու ՔՅՄ-ի, ինչպես նաեւ վահաբիստական ու հակաա- մերիկյան իսլամական քաղաքական ու զինված կազմակերպությունների միջեւ: Սակայն Իրաքի քրդերի օրինակով ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ցույց տվեցին քրդական շարժումները վերակողմորոշելու կարողությունը հոգուտ Արեւմուտքի և դաշնության գաղափարի:

Դաշնության խնդիրն ինքնին կադապարային կամ համակողմանի չէ: Այս նախագիծը տարբեր պետություններում կիրառողմի պայմանավորված ԱՄՆ-ի հետ նման հարաբերություններով (Սիրիա, Իրաք, Թուրքիա): Այս նա- խագիծը հզոր գնեք է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի աշխարհաքաղաքականու- յության համար: Երկրայումս Իսրայելը որպես տարածաշրջանում ԱՄՆ-ի շահե- իր արտահայտիչ, կորցրել է իր նշանակությունը և չի կարող ունենալ իրա- կան գործունի դեր: Իսրայելը անցել է «ռազմավարական պաշտպանության» և չի փորձում տարածաշրջանում լուծել ամերիկյան ազդեցության հույսը: Այդ նպատակի համար ամերիկացիներին հարկավոր է ավելի եական ու դի- նամիկ գործուն, որպիսին են քրդերը: Քրդերը բնակեցնում են ռազմավարա- կան կարեւոր ու լայնատարած տարածքներ, փաստորեն վերահսկում են գործող և հեռանկարային էներգիադրողակցությունները և ազդեցություն են գործում փաստորեն Մեծ Միջին Արեւելքի բոլոր պետությունների վրա: Քր- դերին բնորոշ է ներքին պայքարը և համախմբման չգոյությունը, պատակտ- վածությունը բնութագրական է նրանց քաղաքական կուսակցություններին, իսկ քաղաքական առաջնորդները հավակնոտ են: Քրդերի հատկանիշներն են և մեծ պասիոնարականությունը, և միաժամանակ հակումը հարմարվո- ղականությանը ու տարբեր պետություններին փոխզիջումներ անելը: Միջին Արեւելքում ստեղծված որեւէ քրդական պետություն երկար ժամանակ կունե- նա լուրջ տնտեսական խնդիրներ, ինչը նրան կախման մեջ կպահի ԱՄՆ-ից: Այդ պետությանը զինմատակարարումը նույնպես խնդրահարույց կլինի և նույնպես կախված ամերիկացիներից: Հանգամանքների որեւէ զարգացման դեպքում Իրաքը ամենեւեւ անմիջապես չի համաձայնի քրդական պետու- յության ստեղծման փաստի հետ, ինչը անհրաժեշտ կդրածնի ԱՄՆ-ի ու Մեծ Բրի- տանիայի կողմից երկարաժամկետ երաշխիքների ապահովումը:

Քուրդ քաղաքական գործիչները զգալի փորձառություն ունեն Ռու- սաստանի հետ հարաբերություններում և վերջին տարիներին երբեք պատ- ռանք չեն տարել վերջինիս կողմից իրենց աջակցելու հարցում: Ռուսաստա- նը նրանց հարկավոր է եղել որպես իրենց հենակետերի տեղակայման, քա-ղաքական փախուսականների մի մասի բնակության երկիր, որտեղից կարե- լի է հեռարձակել գաղափարներ ու քարոզչություն, ունենալ սպառազինու-

թյան ձեռքբերման եւ տեղաշարժվելու հնարավորություն: 1994 թ. աշնանը Արտաքին հեռախոսագրության ծառայության (ԱԴԾ) եւ Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) ղեկավարներ Ե. Պրիմակովի ու Ս. Ստեպաշինի Անվտանգության աշխատանքի թուրքական հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ Չեչենիայում գործողությունը նախորդած բանակցություններում, երբ Ռուսաստանը պարտավորություններ տանձնեց չինջանտեղ թուրքիայի քրդական հիմնախնդրին, քրդերը վերջնականապես եզրահանգումներ արեցին Ռուսաստանի դիրքորոշման մասին: Երանց մտտեցումները Ռուսաստանին ներկայումս ունեն հավասարակշիռ, հանդարտ ու գործնական բնույթ: ԱՄԴ-ում ՔԲԿ-ի պաշտոնական ներկայացուցչի խոսքերով, «Ռուսաստանից հարկավոր է վերցնել այն ամենը, ինչ հնարավոր է առանց պարտաբեռներ տանելու»: Թուրքական Բուրդիստանի խորհրդարանի անդամ Ռուստոմ Բրոնեն ասել է. «Ռուսաստանում քրդերի գործունեությունը առավել քան արդյունավետ է, եթե նկատի առնենք հուլյսերի ու մոտեցումների իրականությունը: Ռուսաստանից ավելին սպասելու անհնար է»: Ռուսաստանի եւ Եվրոպայի վերլուծական շրջաններում ձեռնվորդվել է կաշույն կարծիք քրդական հարցի նկատմամբ Ռուսաստանի խելամուտ դիրքորոշման վերաբերյալ: Ռուսաստանը չունի քաղաքական ու նյութական պաշարներ (ռեսուրսներ) քրդական ազգային շարժման հիմնական կազմակերպություններին վերահսկելու համար եւ իր գործողությունները կարող են վնասել իր ազգային անվտանգությանը: Միաժամանակ, Ռուսաստանի հատուկ ծառայությունները հնտորեն վերահսկում ու ազդեցություն են գործում ՌԴ տարածքում քրդական խմբավորումների վրա, ինչը որոշ ռուսաստանյան խորհրդարանական գործիչների ու Մոսկվայում քրդական ելույթներին քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ մեպատում է քրդերի հետ հավասարակշռված հարաբերություններին: Փորձագետները միանգամայն ճշմարտացիորեն կարծում են, որ Ռուսաստանի համար ավելի կարելի է բարեկամական հարաբերություններ ունենալ Իրանի, Իրաքի, Թուրքիայի ու Սիրիայի, քան քրդական շարժումների հետ: Միաժամանակ քրդերի հետ հարաբերությունները, հատկապես հեռանկարում օգտակար է Ռուսաստանին, երբ լուծելով իր ռազմավարական խնդիրները, անհրաժեշտ կլինի ճնշում բանեցնել Թուրքիայի, Իրանի կամ Մոլդովիայի ԱՄՆ-ի վրա՝ Միջին Արևելքի քառերարբանում: Հարկ է ասել, որ Ռուսաստանը երբեք լուրջ պարտավորություններ չի ստանձնել Թուրքիայի քրդերի նկատմամբ: Այնուամենայնիվ, քրդերը շահագրգիռ են ռուս-թուրքական դիմախոսությամբ: Բուրդիստանյան մտավորականի խոսքերով, «Եվրասիայում կարող են գեղիչ-խել կամ ռուսները կամ թուրքերը, ուրեմն ավելի լավ է լինեն ռուսները»:

Հայտնի է ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հատուկ ծառայությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քրդական հարցերով հատուկ ստեղծված խմբի գոյության փաստը: Այս խումբը համագործակցում է Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Շվեդիայի, Հունաստանի, Սիրիայի հատուկ ծառայությունների հետ: 1998 թ. սկզբին ԿԴԿ-ն առաջադրեց Թուրքիային բողոքներ չներկայացնել Հայաստանում քրդական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Ստոկհոլմում այս շվեդների աջնությամբ հայտնի է, որ թուրք-ամերիկյան միավորված այս հատուկ խումբը կոչված է նաեւ տարբեր գաղափարներ ու ծրագրեր իրական կապված քրդական հարցերի հետ: Համախառնաբար կրում են ամենաեռեւակայական ու անիրական ծրագրեր, ինչ-

պես, օրինակ, Թուրքիայի այն ելույթների ռազմաքաղաքական կարելու շրջաններից քրդերի զանգվածային վերաբնակեցման կազմակերպումը: Ասասնավորապես, հայտնի են երեք գաղափարներ: Առաջինը վերաբերում է նավ-բախանթային Քիրքուկի շրջանը միջազգային վերահսկողության գոտի դարձնելու: (Հայտնի է, որ իրաքյան քրդերը ձգտում են Քիրքուկը դարձնել իրենց մայրաքաղաքը): Այդ հարցով, Թուրքիան ամերիկացիներին առաջարկում է որպես ապակայունացնող տարր տվյալ գոտուց բուրդ բնակչությանը տեղահանելու իրաքյան կառավարության ծրագիրը:

ԱՄՆ-ը ուշադիր հետևում է այդ գործընթացներին թաքցնելով իր դիրքորոշումը: Ըստ երեւույթին, Թուրքիայի համար դա կարելու պահ է մի շարք հարցերով Իրաքի հետ փոխգիշուրներ անելու առումով: Մեկ այլ նախագիծ է Թուրքիայից առաջադրված գաղափարը Հարավային Դազախստանի մտարանակ շրջաններում քրդական ազգային օջախ ստեղծելու վերաբերյալ, ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ այլոց կողմից նյութական աջակցությամբ: Հնարավոր է, որ այս ծրագիրը կապված է Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի վրա ճնշման գործում ստեղծելու ձգտումներ (թեեւ դա դժվար է առայժմ բացատրել): Նաեւ առաջադրվում է թուրքական քրդերի համատարած վերաբնակեցումը Հյուսիսարեւելյան Իրաքում եւ այդ պետական կազմավորմանը իրաքյան Ֆուլաթի հատուկ շուրջ 30 տոկոսի հատկացումը: (Այժմ քրդերի մասնաբաժինը կազմում է 13 տոկոս, ինչը անտեսվում է Իրաքի կառավարության կողմից): Ենթադրվում էր, որ այս նախագիծում կարելու դեր կխաղա քրդերի շրջանում մեծ հեղինակություն վայելող Շվեդիան:

Հարկ է նկատել, որ Թուրքիային առաջադրված կարելու խնդիր է քրդական քաղաքական կազմակերպությունները ու հնարավոր պետական կազմավորումները ԱՄՆ-ի գործընկերներ կամ առավել եւս ռազմավարական դաշնակիցներ դառնալու հեռանկարը խափանելու ռազմական քայլերի կենսագործումը: Դա ստիպում է Թուրքիային արագացնել թուրք-իսրայելյան դաշինքի ձեւավորումը որպես տարածաշրջանում ԱՄՆ-ի անալընտրանք դաշնակից, ինչպես նաեւ ընդունել աշխարհառաջնակարգական ու աշխարհատնտեսական ոլորտներում ԱՄՆ-ի մի շարք պահանջները: Թուրքիայի համար շատ անընդունելի է քրդական հարցը որպես Եվրամիության եւ առաջատար եվրոպական երկրների քաղաքական ճնշանիչք: Այս գործունի լիարժեք կիրառումը կհանգեցնի թուրքական պետության տրոհմանը, ինչը չեն կարող չհասկանալ ժայրաստիճան առաքայլական մտածողությամբ աչքի ընկնող թուրք քաղաքական գործիչները:

Այսպիսով, ԱՄՆ-ը օգտվելով թուրք քաղաքական կազմակերպությունների չափազանց դժվարին, երեմն անկանելի վիճակից Միջին Արևելքի փաստորեն թուրք երկրներում, օգտվելով Եվրամիության եւ Ռուսաստանի կողմից քրդերի նկատմամբ իրականացնելու ազդեցության բացակայությունից, նպատակադրվել են տարածաշրջանում ստեղծել հզոր աշխարհաքաղաքական գործունի ու ղեմն դաշնային հիմքի վրա քրդական պետական կազմավորումներ: Այդ առնչությամբ քրդերի առաջատար կուսակցությունները վերափոխվում են ազատական ու ժողովրդավարական տիպի կազմակերպությունների քաղաքական գործընկերների վերածվելու եւ քրդական շրջաններում քաղաքական իշխանության սուբյեկտներ ներկայանալու նպատակով: Չստանալով ոչ մի աջակցություն տարածաշրջանի երկրներից, քրդերը ամբողջովին վերահմաստավորել են իրենց արտաքին քաղաքական կողմնորո-

շումը, և չնայած որոշ ավանդական քաղաքական կարգախոսներին, Իրաքում բրդապան կազմակերպությունները փաստորեն դարձել են ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի գործընկերը, իսկ ԲԲԿ-ն ԱՄՆ-ի հանդեպ վերակողմնորոշման փուլում է: Ֆրանսիայի և Գերմանիայի փորձերը եվրամիության ազդեցությունը քորելի նկատմամբ մեծացնելու ուղղությամբ՝ արդեն չեն կարող չահագրգռել քաղաքական պայքարում բրձավան ըուրդ առաջնորդներին: Քրդական կազմակերպությունները կփորձեն հարաբերություններ պահպանել Իրանի, Սիրիայի և եվրոպական կառույցների հետ, բայց փաստորեն համարվում են Միջին Արևելքում ամերիկա-բրիտանական քաղաքականության մեջ:

2003 թ. ամռանը, այսինքն՝ թուրք-ամերիկյան հակասությունների սրման պայմաններում, վերակենդանացավ Զուրդիստանի ազատության ու ժողովրդավարության կոմզորեսի (KADEK նախկին PPK (ԲԲԿ) գործունեությունը, որի ղեկավար Օ. Օջալանը հայտարարեց Թուրքիայի դեմ զինված պայքար սկսելու պատրաստակամությունը: Միաժամանակ պարզվեց, որ ԱՄՆ-ը կապեր ունի KADEK-ի հետ: Այդ մասին հայտարարեց Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Փիրսոնը: «Թուրքական բանակի զենքայինության ներկայացուցիչ հուրուշի Տուրնը վերադառնալով վերջերս ԱՄՆ կատարած այցից, հայտարարեց, որ Թուրքիան ակնդետ հետևում է պաշտոնական վաշինգտոնի մերժեցմանը KADEK-ի ըուրդ պատասանների հետ» (Մամվել Մարտիրոսյան, Երևան, <http://www.rosbalt.ru/2003107/17108055.html>)

Անկասկած, հեռավոր ապագայում ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ավելի ու ավելի իրենց քաղաքականությունում ու շահերը տարածաշրջանում կկապեն քրդերի հետ:

2.12. ԱՄՆ-Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերությունները

ԱՄՆ-ը Թուրքիայի հետ ռազմաքաղաքական հարաբերությունները դիտում է ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս: ՆԱՏՕ-ն հետզհետե դառնում է ԱՄՆ-ի համար ոչ պիտանի կառույց: Ամերիկացիները ակներեսաբար որոշում են ընդունել այլընտրանքային պաշտպանական նախաձեռնությունների մասին, որոնց կլուծեն անվտանգության խնդիրները ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս: ՆԱՏՕ-ի գարգացման արտաքին նշանները, ներառյալ դաշինքի կազմի եւ տարածքի ընդլայնումը, այնուամենայնիվ չի ուղեկցվում ՆԱՏՕ-ի առաքելության ընդլայնմամբ, այսինքն խնդիրների, որոնք անհրաժեշտ է իրագործել ելնելով նոր պայմաններից: ՆԱՏՕ-ն ատլանտյան դաշինքից փոխակերպվում է եվրոպական դաշինքի եւ ենթարկվում եվրոպական երկրների սահմանափակ շահերին, ընդ որում՝ առաջատար եվրոպական պետությունները նկատի են առնում միջին եւ փոքր երկրների պայմաններն ու պահանջները ռազմական ծախսերի կրճատման եւ չմասնակցելը տարածաշրջանային ռազմական գործողություններին, որում շահագրգռված է ԱՄՆ-ը: ԱՄՆ-ը մտադիր է գործընկերային ռազմավարական հրաբերություններ հաստատել մի շարք երկրների հետ ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս: Կարելի է նաեւ պնդել, որ ԱՄՆ-ը շահագրգռո չէ ՆԱՏՕ-ի հետ Արևելյան եվրոպայի երկրների ուժեղ կապերի հաստատմամբ: Բայց եթե Լեհաստանի, Չեխիայի, Բալկանյան եւ Բալթյան երկրների հարցում ԱՄՆ-ը շահագրգռված է ՆԱՏՕ-ին նրանց անդամակցությանը որպես Ֆրանսիային ու Գերմանիային հակակշիռներ կատարելի ներսում և նոր գործընկերներ, ապա ԱՊԳ երկրների նկատմամբ ամերիկյան դիրքորոշումը այլ է: ԱՄՆ-ը շահագրգռ-

ված է տվյալ երկրների մասնակցությամբ այլընտրանքային դաշինքներում, որոնք կլինեն անկախ ՆԱՏՕ-ից: Քաղաքական այս խնդրում ԱՄՆ-ը հանդիպեց քաղաքական ղեկավարությունների կապված նշյալ պետությունների միջև զգալի հակասությունների առկայության եւ տարբեր քաղաքական ուղեգծեր իրագործելու նրանց փորձերի հետ:

Թուրքիան նույնպես բավականին անհաջող գործընկեր է ԱՄՆ-ի համար՝ երկրի արտաքին քաղաքական ու ներքաղաքական խնդիրների պատճառով: Ինչպես և Իսրայելը, Թուրքիան մեկուսացված պետություն է թուրդ աշխարհաքաղաքական ուղղություններով: Բալկաններ, Միջին Արևելք, Սեւծովյան ավազան, Իրան: Թուրքիան ԱՄՆ-ի կողմից նկատվում է որպես աշխարհաքաղաքական գործառնական համակարգի կարենորագույն տարր, սակայն իբրեւ «ամրոց» ի վիճակի չէ կատարել առաջադրված խնդիրները: Ներքաղաքական խնդիրները նույնպես անհարկի են ԱՄՆ-ի համար, թեեւ նվազ չափով, քան եվրոպացիների համար: Վերջերս ամերիկացիները կապակենդին հայտնեցին Թուրքիայի գնումով մարտունակության վերաբերյալ եւ անվտանգության համակարգում նրա արդյունավետության մասին: Նշվում է ռազմական տեխնիկայի նոր տեսակները տիրապետելու ցածր մակարդակ եւ որոշ հարցերում թուրքական հետախուզության անիրավատությունը: Այնուամենայնիվ, առայժմ միայն Թուրքիան կարող է կատարել ԱՄՆ-ի շահերի շրջանակում տարածաշրջանային խնդիրները: ԱՄՆ-ի համար աննպաստ գործընթացներն արաբական աշխարհում, Եգիպտոսի ու Սաուդյան Արաբիայի աճող խորթացումը, Սիրիայի, Իրանի հետ չկարգավորված հարաբերությունները, բարդ հարաբերությունները Պակիստանի հետ եւ Աֆղանստանում կայունացման անավարտ գործընթացները, Կենտրոնական Ասիայի ու Հարավային Կովկասի երկրների մեծ մասի պաշտպանության հարցերում իրավասու չլինելը՝ պայմանավորում է Թուրքիայի քաղաքական դերը ԱՄՆ-ի տարածաշրջանային ռազմավարությունում:

Թուրքիան նաեւ դիտվում է որպես հենակետ՝ Վրաստանը, Ադրբեջանը եւ Ուզբեկստանը ներառող տարածաշրջանային ռազմաքաղաքական հանգույցի ձեւակերպման համար: «Մեծ Միջին Արևելքում» հատուկ դեր ունի Իսրայելը: Այնուհանդերձ, ԱՄՆ-ը դեռեւս փորձում է թույլ չտալ այդ ռազմավարական համագործակցության կայացումը հետեյալ պատճառներով: Իսրայելի ու Թուրքիայի միջև զարգանում է ռազմական համագործակցությունը, ինչը լիովին ձեռնուր է ԱՄՆ-ին: Սակայն թուրք-իսրայելյան դաշինքի ստեղծումը արտաքին հարձակման դեպքում փոխզուգումայն մասին պայմանագրի առկայությամբ կհանգեցնի տարածաշրջանում ուժերի կտրուկ բեռնացմանը, ինչն էլ ավելի կսահմանափակի ԱՄՆ-ի ազդեցությունը արաբական երկրների վրա: Նույնիսկ ԱՄՆ-ի հանրապետական վարչակազմի ոչ պաշտոնական գրավադրումը թուրք-իսրայելյան ռազմաքաղաքական «հանգույցի» վրա՝ անչափ բարդացրեց հարաբերություններն արաբների հետ: Միաժամանակ, սակայն, եւ Իսրայելը, եւ Թուրքիան չեն ձգտում ստանձնել միմյանց հիմնախնդիրների լուծումը եւ կապելի հստակ պաշտոնական պարտավորությունները: Ամերիկյան ՌՕՄԻ-ի օգտագործումը Կենտրոնական Ասիայի օդանավակայաններում եւ թուրքական օդուժի կիրառումը Ադրբեջանի վրա իրանական ճնշումը կանխելու նպատակով ցույց տվեց առանց որեւէ ռազմավարական նշանակության ձեւական սկզբունքային պայմանավորվածությունների ռազմաքաղաքական համագործակցության համարավորությունը:

Սակայն պաշտոնական տարածաշրջանային դաշինքների ստեղծման հարցով առավել սկզբունքային խնդիր է ՆԱՏՕ-ուն եվրոպական գործընկերների դիրքորոշումը: ԱՄՆ-ի մասնակցությամբ տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինքների ստեղծումը հարակից եվրասիայի ու Միջին Արևելքի շրջաններում կնշանակի մարտահրավեր առաջատար եվրոպական երկրներին: Միաժամանակ, ԱՄՆ-ը դեռևս պարտաստ չէ ամռնել ՆԱՏՕ-ի և եվրոպայի դիրքորոշումը: ԱՄՆ-ը մեծազույց ցանքեր է բաժնել առլանտյան դաշինքը ստեղծելու համար և շարունակում է աշխատել պահպանել գերատալանդային համագործակցությունը: Ուստի ԱՄՆ-ը չի կարող փոխել անդրաշախտությունները համաշխարհային անվտանգության կազմակերպական կառույցների առումով: ԱՄՆ-ը օգտագործում է Թուրքիային որպես տարածաշրջանային խնդիրներում ՆԱՏՕ-ի հետ բանավեճում կարևոր գործոնի: Ամերիկյան ռազմաքաղաքական փորձագետների կարծիքով, ԱՄՆ-ը ըստ էության նույնիսկ չունի Իրաքի դեմ գործողության անցկացման ժամանակ Թուրքիայի ռազմական ծառայությունների կարիքը: ԱՄՆ-ը ավելի շահագրգռված է Թուրքիայի տարածքի, քան զինուժի օգտագործմամբ:

2.13. Հակաիրաքյան կոալիցիան

Պետքարտուղարության և Պենտագոնի քաղաքական մասնագետները շարունակում են իրագործել ՆԱՏՕ-ի դաշնակիցների ու Միջին Արևելքի պետությունների նկատմամբ «երկակի քաղաքականության» քարոզչությունը, երբ վերջիններս դիտվում են որպես հակաիրաքյան դաշինքի պոտենցիալ մասնակիցներ: Նշյալ քաղաքականության նիշում այն է, թե այդ ռազմաքաղաքական ԱՄՆ-ը դաշնակիցների ու գործընկերների կարիք չունի, չբացցնելով նաև այդ պետություններին դաշինքում ներգրավելու իր ձգտումը: Իրաքի դեմ հնարավոր գործողությանը նախապատրաստվելու քայլերի կատարման սկզբից եւեթ, առաջատար քաղաքագետներն ու վերլուծաբանները (նախ և առաջ՝ աջ, նորպահպանողական քեմի) պնդում էին «կոլեկտիվ որոշումների» ու «կոլեկտիվ գործողությունների» առավելագույն օգտագործումը նկատի ունենալով ԱՄԿ-ի, ՆԱՏՕ-ի բեմերը, արաբական հանրույթը, նաև Ռուսաստանի հետ համագործակցությունը: Այդ տեսակետին են Գ. Քիսինյերը, Տ. Բզեժինսկին, ԱՄՆ-ի գլխավոր վերլուծական և հետախուզական կենտրոնները (SATO ինստիտուտը, Բրուքինգսի անվան ինստիտուտը, Rand Corporation-ը, CSIS-ը, «Քարնեգի» ինստիտուտը, Ատլանտյան խորհուրդը, The American Enterprise-Institute, Նիքսոնի անվան ինստիտուտը): Փաստորեն, միայն «իրապաշտական» քաղաքական ուղղությանը պատկանող «ժառանգություն» ինստիտուտի (The Heritage Foundation) նման կազմակերպությունները խորհուրդ են տալիս ամռնել «կոլեկտիվ որոշումները»: Ըստ էության, Սենատում Դեմոկրատական կուսակցության բոլոր ներկայացուցիչները և ԱՄՆ-ի մեծաթիվ ու ազդեցիկ ազատական շրջանակները կորակամասպե դեմ են «կոլեկտիվ որոշումները» մերժող տեսակետին: Պետքարտուղար Քոլին Փաուելը և նրա գործընկերները, նաև Պենտագոնը նույնպես այդ կարծիքին են, թեև գործնականում իրապարակավ չեն արտահայտվում (բացառությամբ առանձին արտահայտությունների): ՆԱՏՕ-ի ազդեցիկ անդամները Ֆրանսիան, Գերմանիան և Իտալիան հետևողականորեն վարում են «կոլեկտիվ որոշումների» քաղաքականությունը Իրաքի դեմ գործողության հարցում: Գործնականում նման կարծիք է պաշտպանում ոչ

միայն ղեկավարող լեյբորիստական կուսակցությունը, այլև Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ. Բլեյրը: Այդ անդամները Ջ. Քուչի վարչակազմը վարում է բավականին անաշխույժ քաղաքականություն: ՆԱՏՕ-ի անդամներին ու միջինարեւելյան երկրներին դաշինքում ներգրավելու առումով: Ընդ որում, այդ խաղին մասնակցում են Պենտագոնի ղեկավարության անդամները: ԱՄՆ-ի նման քաղաքականությունը բացատրվում է, հետևյալ գործոններով: Նախ, ռազմաքաղաքական տարբեր պետություններին մասնակից դարձնելու գործընթացը ֆինանսական առումով ծախսատար է իսկ քաղաքական առումով՝ զիջումներ ենթարդող: Երկրորդ, գործողության անցկացման մասին որոշում դեռևս չկա, իսկ նախապատրաստական միջոցառումները ավելի հիշեցնում են լայնածավալ մանեւրներ Միջին Արևելքում հնարավոր ռազմական ներկայությունը մեծացնելու և զինուժի մարտունակությունը պարզելու նպատակով: Երրորդ, կոալիցիայում մեծաթիվ պետությունների, հատկապես ՆԱՏՕ-ի առաջատար երկրների մասնակցությունը կարող է անորոշություն և խնդիրներ ստեղծել ետպատերազմյան ժամանակաշրջանում, ինչպես նաև գործընկերների հետ որոշումների համաձայնեցման անհրաժեշտություն կծագի: ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան կարող են տարածաշրջանում կուսակցել այնպիսի ռազմուժ, որն անկասկած կլուծի բոլոր ռազմական հիմնահարցերն առանց այլ պետությունների եական օգնության: Քաղաքական նպատակներով ԱՄՆ-ի համար օգտակար կլինեն Սաուդյան Արաբիայի, Սիրիայի, Իրանի և Գորդանանի մասնակցությունը դաշինքին, սակայն ամերիկյան վարչակազմը չի փորձում գործողության ժամանակային պարամետրերը կապել այդ երկրների հավակնությունների հետ:

Միաժամանակ, ԱՄՆ-ի կողմից գործողության անցկացման նախապատրաստում համար բավականին կարևոր նշանակություն ունի ոչ իրապարակային քաղաքականությունը, արաբական երկրների շարքից «գաղտնի կոալիցիա» ձևավորելու ուղղությամբ: ԱՄՆ-ին հաջողվել է սկզբունքային պայմանավորվածությունների հասնել Սիրիայի, Գորդանանի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Եմենի և Պարսից ծոցի բոլոր արաբական երկրների հետ գործողության նախապատրաստման ընթացքում համաձայնեցված գործողությունների վերաբերյալ: Եգիպտոսի նախագահը, չնայած մի շարք հակահարայական ու իրաքածեմ տպադրությունների, փաստորեն ինքը նախածեռնեց համագործակցությունն ԱՄՆ-ի հետ հակաիրաքյան ռազմաքաղաքական: Գորդանանի ու Պարսից ծոցի երկրների հետ երբեմնե մեծ խնդիրներ չեն եղել: Հիմնական հարցերն առնչվել են Սիրիային ու Սաուդյան Արաբիային: Վերջինիս հետ հիմնահարցերը լուծվել են երկկողմ հարաբերությունների միջոցով, իսկ Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ը ստիպված էր կիրառել լուրջ և բազմաթիվ գործողություններ Թուրքիայի, Իսրայելի, Մեծ Բրիտանիայի մասնակցությամբ: Սիրիան փաստորեն պարտադրեցին համագործակցության: Որոշ աննշան պայմանավորվածություններ եղան նաև Իրանի հետ: Արաբական երկրներն ու Իրանը հետ տվյալ պայմանավորվածությունները ներառում են հետևյալ պահեղը.

1. Իրաքին սպառազինություն մատակարարելու կամ իրենց տարածքներով տարանցման անթույլատրելիությունը,
2. վերաբերմունքը փախստականների, ներկալված և արտաքսյալ իրաքյան զորքերի նկատմամբ,
3. օդային միջանցքների տրամադրում,

4. միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներին առնչվող տեղեկատվության տրամադրում (Իրաքի կամ անկանոն զինված խմբերի կողմից զանգվածային ոչնչացման գեների օգտագործում),
5. մարդկության դեմ եւ ռազմական հանցագործություններում մեղադրվող անձանց ընդունման ու ապաստան տալու անթույլատրելիությունը,
6. Իսրայելի ու Թուրքիայի դեմ որեւէ բշնամական գործողությունից հրաժարումը:

Այսպիսով, ԱՄՆ-ը զգալի ջանքեր չի գործադրել հակաիրաքյան դաշինք ձեւավորելու համար, այլ փորձում է զաղտնի դիվանագիտական ճանապարհով լուծել ռազմական գործողությունների անցնացման իրական խնդիրները կապված քաղաքականության եւ տարածաշրջանային պետությունների դիրքորոշումների հետ: ԱՄՆ-ը հասկանում է, որ Ռուսաստանը փորձում է տարածաշրջանում վաղել ինքնուրույն քաղաքականություն եւ որեւէ պայմանավորվածություն Իրաքի վերաբերմամբ ՌԴ-ի հետ ունենալ իրական չէ: Սա բավականին կարեւոր հանգամանք է ԱՄՆ-ի վրա ազդեցության առումով Թուրքիայի իրական լծակները ծիշտ ընկալելու համար: Այս լծակները այնքան ուժեղ ու արդյունավետ չեն, որքան երբեմն բվում է, եթե մշտապես անորոշառնալու լինենք թուրք-ամերիկյան համագործակցության կարեւոր փորձին:

2.14. Իրաքի դեմ ռազմական գործողության իրագործման ժամանակ Թուրքիայի ենթադրվող առաջարկաբեքները

Պենտագոնի առաջատար պետուծարքն, պաշտպանության փոխնախարար (քաղաքական հարցերով) Ռիչարդ Փեռլի (Richard Perle) եւ ռազմաքաղաքական աստիճանավոր Պուգլաս Ֆեյթի (Douglas Feit) գլխավորած ռազմական ծրագրավորողների լսմերի կողմից նախապատրաստված հայեցակարգային ծրագրի համաձայն, Թուրքիան պետք է կատարեր հետևյալ առաջարկաբեքները.

1. Ռազմական գործողության համար տրամադրել 50-70 հազար զորախումբ, 5-6 զրահատանկային բրիգադ, մինչեւ 900 հրետանային համակարգ, շուրջ 90-120 ճակատային օդուծի ռազմական ինքնաթիռներ, հատուկ նշանակության ուժեր, այսինքն փաստորեն Թուրքիայի ռազմական ներուծի 25 տակուր: Սակայն եղել է նաեւ ավելի սահմանափակ տարբերակը թուրքական զորքերի մասնակցություն վերաբերյալ:

2. Իրագործել երկու մեծ բանակային գործողություններ հյուսիսում իրաքյան գորքերի դիմադրության ռազմամակտը ճեղքելու նպատակով, Մոսուլի շրջանի գրավումը: Բացի այդ, Թուրքիան պետք է մասնակցեր նավթարդյունահանման կարեւորագույն շրջանների ու հաղորդակցման օբյեկտների արագ գրավման գործողություններին, ինչպես նաեւ կարեւոր ենթակառուցվածքային օբյեկտները, ընդդիմության ուժերի դեմ իրաքյան արաքականորդի պատժիչ գործողությունների կանխման, քաղաքացիական արաք եւ թուրք բնակչության պաշտպանության հատուկ գործողություններից:

3. Մասնակցել Իրաքի զգալի տարածքի երկարատեւ բռնազավթմանը, ներառյալ կուալիցիայի կողմից չվերահսկվող զինված կազմավորումների կողմից քրդական շրջաններին սպառնալիքների դեպքում այդ տարածքում վերահսկողության հաստատումը: Թուրքիան մասնակցում է սկուպացիոն վարչակարգի ձեւավորմանը, Իրաքի կառավարման կանոնների պաշարումը եւ նոր պետական-քաղաքական կառուցվածքի ստեղծման կարգին:

մանը եւ նոր պետական-քաղաքական կառուցվածքի ստեղծման կարգին:

4. Թուրքիան Մեծ Բրիտանիայի հետ համատեղ կատարում է առանցքային դեր Գլոսիայի Իրաքի նավթարդյունահանման անվտանգության ապահովման եւ հսկողության, նաեւ Թուրքիայի տարածքի միջերկրական նավահանգիստները նավթափոխադրման գործում: Թուրքիան իրել նավթահանքերի անվտանգության ապահովման համար ծառայությունների վճար ստանում է լրացուցիչ եկամուտներ նավթի վաճառքից, ինչպես որ ստանում է փաստորեն ողջ շահույթը նավթի փոխադրումից: Թուրքիան մասնակցում է բռնազավթիչ իշխանությունների կարգ հաստատելու աշխատանքին (թուրքական ներկայացուցիչները մտնում են բռնազավթիչ վարչակազմ):

5. Ամերիկյան վերլուծաբանների կարծիքով, Ռիչարդ Փեռլի ծրագիրը ունի զաղտնի մասեր, որոնցում ենթադրվում է իրաքյան տարածքի մի մասի բռնակցումը Թուրքիային: Դա կարող է լինել Իրաքի կամ Մրա ժողովրդի երկարատեւ դիմադրության դեպքում: Թուրքիային բռնակցվող տարածքը ներառում է Մոսուլի ողջ հյուսիսային մասը փաստորեն ամբողջ քրդացված շրջանները եւ Քիրքուկի շրջանը: Դա կազմում է շուրջ 55-85 հազար քառակուսի կիլոմետր: Սենատի պաշտպանության ու անվտանգության հարցերով կոմիտեն վարչակազմին զուլաջեցք մեծան նախագծերի անթույլատրելիության մասին, ինչին վերջին պատասխանեց, որ նկատի են ունեցել միայն Թուրքիայի կողմից Իրաքի որոշ տարածքներ երկարատեւ, հնարավոր է՝ տասնամյակներ տեւող կառավարումը:

6. Թուրքիան մասնակցում է ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի հետ համատեղ Իրաքում երեք ռազմականությունների ստեղծմանը:

7. Թուրքիայի տարածքում պետք է տեղակայվի 62 հազար զինձառայողներից բաղկացած ամերիկյան զորքերի հարվածային խմբավորումը, որին կտրամադրվեն զգալի զրահատակային ուժեր:

2.15. Թուրք-ամերիկյան հակատրությունները

Թուրք-ամերիկյան տարածայնությունների ելույթները ԱՄՆ-ի վերահսկողությունից ազատվելու Թուրքիայի փորձերն են, բացառապես ինքնուրույն վտանգավոր ու անկամիատեսելի ռազմավարական խաղերին չմասնակցելու Թուրքիայի ջանքերն են: Սանեյթում ու խուսանակվող Թուրքիայի քաղաքականությունը շարունակվեց երկար ժամանակ Թուրքական Դանրապետության գոյության 80 տարիների ընթացքում: Թուրքական ընտրախաղը բավականաչափ նախապատրաստված է եւ կարծում է, որ իրենց պատմության տվյալ ժամանակաշրջանն ավարտվել է եւ երկիրը կարող է դառնալ տարածաշրջանային գերտերություն ոչ թե խոսքերով, այլ գործով: Թուրքիան իրեն համարում է ինքնուրույն աշխարհաքաղաքական բեւեռ, որի նկատմամբ կողմնորոշվում են մեծաթիվ պետություններ ու տարածաշրջաններ: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած տարիներին Թուրքիան համոզվեց, որ ԱՄՆ-ը շահագործված չէ իրեն սկզբունցային աջակցություն ցույց տալու պատճառով ու Կենտրոնական Ասիայում, զգուշանալով ԱՄՆկարայի ինքնուրույնության մեծացումից: Թուրքական ընտրախաղին ոգեշնչում են 1980-90-ական թվականների տնտեսական հաջողությունները, ռազմուծի արդիականացման հնարավորությունները ոչ միայն ԱՄՆ-ի օգնությամբ: Թուրքիան ձգտում է վարել աշխույժ տարածաշրջանային քաղաքականություն, որը ոչ միշտ է ողջունելի ԱՄՆ-ի կողմից: Օրինակ, ԱՄՆ-ին, ԵՄ-ին, ՌԴ-ին եւ ՍԱԿ-ին

համարժեք հինգերորդ միջնորդը լինելու ցանկությունը արաբ-իսրայելական հակամարտությունում՝ ամերիկացիների կողմից խանդավառության չարժանացավ: Սակայն գլխավորը, ինչն անհանգստացնում է ԱՄՆ-ին, տարածաշրջանում նոր ռազմաքաղաքական այլասենների ծեսավորման վտանգն է, երբ վերջինս ենթակա չի լինի իր վերահսկողությանը եւ որում Թուրքիան կարելի էր կուռնենա: Դարն է մկատել, որ Իսրայելը նույնպես կարող է զգուշանալ նման միտումների զարգացումից: Իսրայելը որպես մեկուսացված տարածաշրջանային երկիր, շահագրգռված է Թուրքիայի մեկուսացմանը որպես իր գործընկերոջ:

Տ. Բուշի վարչակազմի անդամ նորպահպանողականների խմբավորման մեջ կան թուրքական հարցերով փորձառու մարդիկ՝ պետքարտուղարի տեղակալ, Թուրքիայում նախկին դեսպան Մարկ Գրոսմանը, Պենտագոնին կից պաշտպանության հարցերով խորհրդի անդամ Ռիչարդ Փեռլը, ԱՄՆ ՊՆ փոխնախարար, հայտնի թուրքական լորբիստ Պոլ Վուլֆովիցը եւ այլք: Վարչակազմի աշխատանքներում ընդգրկված են Թուրքիայի հարցերով մասնագետներ եւ այդ երկիրը լավ ճանաչող անձինք: Այնուամենայնիվ, մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանի որոշումը ամերիկյան գործերին քիչ արժեք ունեցող ռազմավայաններն օգտագործելու դեմ, որն ընդունվեց կոալիցիոնայի գործերը Իրաք ներխուժելուց մի քանի շաբաթ առաջ, անակնկալ էր վարչակազմի համար եւ դարձավ ԱՄՆ-ում թուրք-ամերիկյան հարաբերությունների վերանայման գործընթացի սկիզբը: Այս գործընթացը նոր միայն սկսված է եւ կունենա ընդհատում եւ վայրիվեռումների բնույթով ընթացք: Սակայն ԱՄՆ-ի համար ստեղծվել է բոլորովին նոր աշխարհաքաղաքական միժնակ, երբ Թուրքիան «աշխարհաքաղաքական ճակատագրից» դարձավ բիկունքային երկիր եւ նույնիսկ չի կարող համարվել բիկունքային պահեստում: Իրաքում գործողությունների ավարտից հետո, Թուրքիան եւ ԱՄՆ-ը փորձեցին կարգավորել հարաբերությունները եւ պարզել փոխադարձ պահանջների էությունը: Բայց ամերիկացիները բավականին արագ եզրահանգումներ արեցին Թուրքիայի նմա պահվածքի վերաբերյալ: «Մայիսին թուրքական հեռուստատեսությամբ հաղորդված հարցազրույցում Փ. Վուլֆովիցը նշեց, որ Վաշինգտոնը այլեւս Անկարային չի համարում ռազմավարական դաշնակից, եւ կսկսված հայտնեց «Ինքիրիլի» ռազմաօդային ռազմակայանի պահպանման անհրաժեշտության առիթով: «Դժվար է հասկանալ, թե որն է ռազմակայանի իմաստը», - ասաց Փ. Վուլֆովիցը: «Այն, ինչ պատահեց մեզ Ինքիրիլիում, ստիպում է մեզ մտածել, որ այդ կառույցը կորցրել է իր նշանակությունը»: CNN-Turk-ի հետ հարցազրույցում Մարկ Գրոսմանը համակարծիք է եղել զգացմունքայնությամբ աչքի չընկնող Պենտագոնի դիրքորոշմանը, հայտարարելով. «Թուրքիան պետք է ընտրություն կատարի»: Բուշի վարչակազմի վրդովմունքն ակնհայտ է: Պարզ չէ, թե ինչպիսի քայլեր պետք է արվեն կողմերի հաշտեցման համար: Թուրքիայի արտգործնախարար Ա. Գյուլը հունիսի 12-ին CNN-Turk-ին հայտարարեց. «Նախ, հարկավոր է հասկանալ որն է ԱՄՆ-ի քաղաքականությունը եւ ինչ է սպասվում Թուրքիայից: Դրանից հետո մենք կքննարկենք այդ հարցը, մենք կկարողանանք գնահատել պահանջների էությունը» (Սեվկուր Քաթիկ, 17.06.2003, Eurasianet, <http://www.eurasianet.org>):

2.16. ԱՄՆ-Թուրքիա նոր հարաբերությունները

ԱՄՆ-ի հույսերը Իրաքի դեմ ռազմաշավում Թուրքիայի անվերապահ մասնակցության առումով փաստորեն չարդարացան: Ամերիկյան վերնախավը, վերլուծական ու ռազմական շրջանակները բացարձակապես չէին ենթադրում Թուրքիայի նման վարքագիծը: Ըստ նրանց, Թուրքիան կմասնակցեր գործողությանը անկախ խորհրդարանական ընտրությունների արդյունքից ու կառավարության քաղաքական կողմնորոշումից: Դա պայմանավորված էր ոչ միայն ԱՄՆ-Թուրքիա ռազմաքաղաքական նախորդ փորձով, այլեւ թուրքական պետությունում եւ հասարակությունում ռազմական ընտրախալի վճռորոշ նշանակության հանդեպ հույսով: Չնայած ամերիկյան վերլուծաբանների այն հավաստումներին, թե Անկարայի մասնակցությունը կունենա խորհրդանշական բնույթ, եւ ԱՄՆ րանակը չունի թուրքական զինուժի ծառայության կարիքը, Թուրքիայի մասնակից չլինելը մեծապես վնասեց ռազմարշավի արդյունավետությանը: Ամերիկյան վարչակազմում թուրքական շահեհի հայտնի լորբիստներ Մարկ Գրոսմանը, Ռիչարդ Փեռլը, Պոլ Վուլֆովիցը եւ այլք, նաեւ մի շարք սենատորներ չփորձուցի մեջ էին: Այսպես թե այնպես, ԱՄՆ-ը պարտադրված է Մեծ Միջին Արեւելքում իր աշխարհաքաղաքականությունը վերախմայնավորել: Այս խնդրի արդիականացման ընթացումը ԱՄՆ-ը ունեցել է բավականին վաղ ժամանակ, բայց միայն Իրաքյան ռազմաշավից հետո դա առարկայացավ: Իհարկե, ԱՄՆ-ը պատրաստ չէ համապատասխան որոշումն ընդունել շուտափույթ կերպով եւ փորձում է ձգձգել Թուրքիայի սահմանազատման գործընթացը: Դրա հետ է կապված Ք. Փաուլսի Թուրքիա կատարած այցը 2003 թ. ապրիլին: Սակայն արդեն ապրիլին հայտնվեցին «զգուշավոր» հրապարակումներ այն մասին, որ ԱՄՆ-ը ստիպված է որոնել նոր ռազմակայաններ իր օդուժի համար Միջին Արեւելքում, օդիանյալ Վրաստանում եւ Իրաքյան Թուրքիստանում: Միաժամանակ կանխանշաններ կային այն բանի, որ ԱՄՆ-ը խանդավառված չէ Թուրքիայից Վրաստանի ու Ադրբեյջանի կանխավճարման չափից դուրս դրսեւորումների հեռանկարով: Իրականությունն ապացուցեց, որ միայն «Ինքիրիլի» օդանավայանի գոյությունը թույլ չի տալիս լուծել նույնիսկ ընթացիկ ռազմաքաղաքական խնդիրները: Թուրքիայի չափավոր իսլամական կառավարության քաղաքականությանը դրդապատճառներն ակնհայտ չեն: Հավանաբար, ընդհանուր առմամբ Թուրքիան փորձում է առավել մախրատրելի փիճակ ապահովել ԱՄՆ-ի, Եվրոպայի եւ մահմեդական աշխարհի հանդեպ, սակայն այդ քաղաքականությունը քացահայտեց փակուղին եւ որեւէ արտաքին քաղաքական մասների անհնարիությունը: Չմարավոր է, որ նման որոշման նախաձեռնողները եղել են Թուրքիայի ռազմական շրջանակները, որոնք զգուշացել են պատերազմին Թուրքիայի անպատրաստ լինելու փաստի բացահայտումից, թուրքական զինուժի մարտունակության ցածր մակարդակի դրսեւորումից: Անկասկած, թուրքական վերնախավը հասկանում էր, որ մասնակցությունը պատերազմին կհանգեցնի երկրի քաղաքական ու տնտեսական աղետի: Հավանաբար այդ երկրի հիմնախնդիրներն ավելի լուրջ են եւ անլուծելի հակասություններ ունեն կապված , ծախս իսլամական զարգափարափոսության ընկերային խնդիրների, ազատական տնտեսական բնորոշի եւ քաղաքական-վարչական բուսակետության միջեւ հակասությունների հետ: Պարզվում է, որ Թուրքիան արդեն չի կարող կատարել ռազմավարական գործընկերոջ գործառույթները պարզապես ըստ բնույթի: Ուստի հարց է ծագում. երբեւէ Թուրքիան եղել է

համարժեք ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի համար: «Այդ իմաստով Թուրքիայի առաջին փորձությունը նրա մասնակցությունն է խաղաղարար ուժերում արդեն պարտաված Իրաքում: Վաշինգտոնի առաջարկից հետո Թուրքիան կառչում է այդ հնարավորությանն ինչպես խեղդվող ծղուկին, քանի որ շատ է ուզում լինել հաղթողների շարքում» («Տանուլ տված Թուրքիան», «Sueddeutsche Zeitung», Գեյնմանիա, Բիխստիանա Շյուտցեր, 22.04.2003, <http://www.inosmi.ru: 22.04.2003>):

Այդուհանդերձ, սխալ կլիներ վավերող հռետտետությամբ զնահատել թուրք-ամերիկյան հարաբերությունները որպես անհեռանկար եւ դատապարտված սառնեցման: Թուրքիան շատ կարևոր գործընկեր է եւ ունի շատ կարևոր աշխարհաքաղաքական առավելություններ, որպեսզի ԱՄՆ-ը կարողանա ամրապնդել թուրքական գործընկեր համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքականության մեջ: ԱՄՆ-ի վարչակազմը վերախիմաստավորում է հարաբերությունները Թուրքիայի հետ, եւ հատուկ վերլուծական քաղաքական ծրագրավորողների ստորաբաժանումները աշխատում են այդ երկրի հետ նոր հարաբերությունների ձեւավորման խնդրի շուրջ, ինչը, հիարկե, ենթադրում է տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության որոշակի շտկումներ: Այս խնդիրը լուծում է Ռազմավարական ազդեցությունների գրասենյակը (Office of Strategic Influence), որը ստեղծվել է 2001 թ. վերջին Գ. Ռամսֆելդի կողմից եւ փակվել է 2002 թ. սկզբից New York Times-ում քննադատական հոդվածների պատճառով, շարունակելով, սակայն, իր գործունեությունը փոփոխելովուժով տեսքով: OSI պատասխանատուս Կետթը է լինել Պաշտպանության փոխնախարար (արտաքին քաղաքականության հարցերով), հայտնի թուրքական լրբիստներից մեկը Գուզլա Ֆեյթը: OSI ղեկավարը ռազմաօդային ուժերի գեներալ Սիմոն Ուրտոնեն էր: OSI -ն փոխվելուց հետո, Գ. Ռամսֆելդը համանման խնդիրը լուծելու համար Գ. Ֆեյթի պատասխանատվության ներքո ստեղծեց ռազմաքաղաքական ծրագրավորողների վերլուծական խումբ Արրահան Շուլցկու ղեկավարությամբ, որը 2002-2003 թթ. զբաղվել է Իրաքի նկատմամբ այլընտրանքային հետախուզությամբ: Բացի զուտ հետախուզական գործունեությունից, այս ստորաբաժանումը զբաղվում է նաեւ ռազմական քաղաքականության քարոզչությամբ: Սակայն այս վերտեղծված ստորաբաժանման աշխատանքներու տեղի ունեցավ ինչ-որ ծախսողում, որի մասին տեղեկություն չկա: Կարելի է միայն ենթադրել, որ դա կարող է կապված լինել ռազմաքաղաքական մասնակցելուն Թուրքիայի հրաժարվելու հետ, Իրաքում ԱՄՆ-ի խնդիրներին դիմապայղ ռուս-գերմանա-ֆրանսիական դաշինքի ստեղծումը խանգարելու նախագծի տապալման արդյունքում, տեղեկատվական ոլորտում ծախսողման եւ նաեւ Իրաքում ամերիկյան ստ քաղաքական խմբավորումների ձեւավորման անհաջողության հետ: Արդյունում անհրաժեշտ համարվեց Պենտագոնի այդ ստորաբաժանումը միավորել նախկինում առկա «Defense Policy Board» ինտելեկտուալ կառույցին, որում ներգրավված են աշխատակազմի, Կոնգրեսի եւ մասնավոր բաժնի նախկին աշխատակիցների խորհրդակցությունը. -(էջ 54)-

Այս միավորումն արդեն որոշ արդյունքներ է տվել: Սասնավորապես, Իրաքում ԱՄՆ-ի գործողությունների հիմնախնդրի, ինչպես նաեւ Իրանի, Սիրիայի ու Լիբանանի, Սաուդյան Արաբիայի ու մահմեդական աշխարհի նկատմամբ ԱՄՆ-ի հարաբերությունների վերաբերյալ: Օրակարգում հետեւյալ խնդիրներն են.

1. Իրաքում պետականության եւ քաղաքական կառուցվածքի ձեւավորման եղանակները, քաղաքական ու հասարակական խմբավորումների օգտագործումը եւ նրանց հետ համագործակցումը,
2. Իրաքում նավթի օգտագործման հիմնախնդիրները: նավթարդյունաբերության ինստիտուցիոնալ ձեւավորումը;
3. ԱՄՆ-ի պահանջների կատարման պարտադրման քաղաքականության մեթոդներն ու մոտեցումները Իրանի, Սիրիայի ու Լիբանանի վերաբերմամբ, այդ երկրներում տարբեր ընդդիմադիր խմբերի հետ կապերի հաստատումն ու համագործակցությունը;
4. պարտախիսյան հիմնախնդիրների կարգավորման ծրագրերի մշակումը;
5. Աֆղանստանի հիմնախնդիրները (անհնարին է ասել, հատկապես որը);
6. Ամերիկա-եվրոպական հարաբերությունների հիմնախնդրի լուծումը:

Abramom Shulskim խումբը երկար ժամանակ Իրաքի ռազմաքաղաքական հետ, այնքան էլ ջանասիրաբար չէր զբաղվել Գրաքվային Կոլկլայի ու Կասպից ծովի խնդիրներով: Գնարավոր է, խումբը զբաղվում է միայն առանցքային ռազմաքաղաքական հիմնախնդիրներով: Դ. Ռամսֆելդը ստանդագել է այդ միավորված կառույցը որպես Պենտագոնի կառուցվածք եւ անտեսողանմես: Այնուհանդերձ, Պենտագոնի որոշ քաղաքական նախաձեռնությունների ծախսողմամբ ամեն Պետքարտուղարության դերը, որը հանգեցրեց քանքերի իրական համախորդման անհրաժեշտության բացառելով գերտեսչական մոտեցումներ: Այդ հարցով Պետքարտուղարությունում տեղի ունեցավ նշանակու: Ժողովրդական դիվանագիտության եւ քաղաքական ու հասարակական կազմակերպությունների (մահմեդական երկրներում) հետ կապերի հարցերով ոմն խորհրդական Էդվարդ Շերեբյանը ուրծավ Ջ. Բուշի անկան հյուստոնյան ինստիտուտի տնօրենը, որը ԱՄՆ-ի նավթային քիզմեսի ուղեղային կենտրոնն է: Է. Շերեբյանը նաեւ նկատվում է որպես տարբեր վերլուծական, քաղաքական ծրագրավորումների Միջին Արեւելքի ու մահմեդական երկրների հարցերով աշխատակազմի կառույցների աշխատանքների (կուլտիս խումբի shil job) համակարգող: Գարկ է նկատել, որ Շերեբյանը Ջ. Բուշ ավագի վարչակազմի մարդն է, միջնդե Դ. Ռամսֆելդի խումբը ռեյանական է: Կարելի է ենթադրել, որ Ջ. Բուշը եւ Ջ. Փաուելը ցանկանում են ստեղծել մրցակցության «դաշտ» եւ հակակշիռներ վարչակազմում: Abramom Shulskim խմբի ստորաբաժանման մեջ աշխատում են առաջատար հետազոտական եւ վերլուծական հիմնարկություններից գործուղված մասնագետներ, նաեւ ԱՄՆ-ի համալսարաններից: (Ոեւր թորպորեյլըն, CSIS, «Heritag», «Միջինարեւելյան հետազոտությունների վաշինգտոնյան ինստիտուտ (Միջին Արեւելքում ԱՄՆ-ի ծրագրերի գլխավոր մշակող եւ իսրայելական հաստատություն), Միջին Արեւելքի ինստիտուտ (արաբամես հիմնարկություն), Արտաքին քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտ, CSTO ինստիտուտ, Բրուքինգս ինստիտուտ, Սթենֆորդի եւ Գարվարդի համալսարաններ):

Այսպիսով, Թուրքիայի հիմնախնդիրներով զբաղվում է թերես ԱՄՆ-ի քաղաքական ծրագրավորողների ամենաուժեղ խումբը: Ամիմաստ կլինել վերականգնել նախկին հարաբերությունները Թուրքիայի հետ: Ամերիկացիները պետք է ձեւավորեն հատկապես նոր հարաբերություններ:

Ուշագրավ է «Կենտրոնասիական նորությունների» հայտնած տեղեկատվությունը «Թուրք-ամերիկյան հարաբերություններն ապագա չուեն» վերնագրով (16.07.2003). «Վերջերս առաջատար վերլուծական թերթերն ու

ամազոնյան հրապարակում են մի շարք հոդվածներ, ուր խոսվում է այն մասին, որ Իրաքում պատերազմից հետո աշխարհը պետք է վերապահ մեծ քաղաքական վերաբաժանում կապված բոլոր դաշնակցային ու գործարար պարտավորությունների վերացման հետ: Աշխարհը բախվել է թուլի համընդհանուր թելարանքի սպառնալիքին: Այդ առնչությամբ շատ հետաքրքրական են դիտվում հետազա հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Վաշինգտոնում միջին: Փորձագետները նշում են, որ Թուրքիայի մերժումը իր տարածքը Իրաքի դեմ «Հյուսիսային ճակատ» բացելու համար ամերիկյան զինվորների տրամադրելու հարցում» վերջակետ դրեց ԱՆՏՕ-ի իր դաշնակցի հետ հարաբերություններում և նոր ժամանակաշրջան բացեց եվրամիությանը համարվելու համար: Հետագա հարաբերությունները, արդեն կարելի է ասել նախկին դաշնակիցների միջև, կլինեն գործընկերության շրջանակներում, ինչն այնքան սիրելի է Սպիտակ տան համար մյուս պետությունների հարցում: Ինչ կհետևի նման կարևոր փոփոխությանը ղեկավար է ասել: Փորձագետների մեծամասնությունը խոսում է հարեան երկրների Իրանի, Պակիստանի, արաբական մյուս երկրների հետ Թուրքիայի անդամակցելի համարվման մասին: Բացառված չէ, որ ԱՄՆ-ի հայացքը հեռավոր ապագայում դառնա դեպի Հնդկաստան ու Հինաստանը՝ որպես ամերիկյան էրապանիստիկ հակակշռող երկրների» (<http://centran.org>):

Ուշագրավ է նաև Թուրքիայի առաջատար քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդի հոդվածը «Օյուրքիշ դեյլի նյուս» քերթում (Turkish Daily News, July 15.2003, Don't letus create a northern Iraq problem as well, by Mehmet Ali Birand): Այդ հոդվածում, հեղինակը փոխառնում է Թուրքիայի ժողովրդավարացման ու անվտանգության հիմնահարցերը ԱՄՆ-ի հետ հարաբերությունների զարգացման հետ: Որպես Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի բարդացված տրամադրվածության օրինակ նա նշում է Իրեական լոբբիի օգնությունը ԱՄՆ-ի «Հայկական բանաձևելի» ձախողման հարցում, ԱՄՆ-ի հետ դիմակայության մեջ ներքաշվելու կտրականապես դեմ է, ինչպես նաև է քրդերի հետ Հ. Իրաքում բախվելուն, և գոյազգնում է, որ Հ. Իրաքը կարող է դառնալ «Ճահիճ», որտեղից Թուրքիան ղեկավարությամբ կկարողանա դուրս գալ: Հետաքրքրական է նաև, որ հեղինակը նախազգուշացնում է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վատացման դեպքում Թուրքիայում քրդական շարժման նոր ալիքի բարձրացման և Իրաքում քրդերի քաղաքական հաջողության մասին: Հեղինակին նաև հուզում է երկրի քաղաքականության իսլամացման հեռանկարը և նա գերադասում է երկրի նորացման ժողովրդավարական փորձված մեթոդները:

Թուրքիան մեծ ներուժ ունի ամերիկյանմետ տրամադրություններ ծավալելու համար ոչ միայն ազատական մտավորականության ու գործարարների, այլև ռազմական շրջանակների միջավայրում: Հավանաբար, Մեհմեդ Բիրանդն արտահայտում է հատկապես հասարակության այս շերտերի շահերը: Հարկ է նշել, որ տվյալ հոդվածը հրապարակվել է նաև Թուրքիայի առաջատար մյուս լրատվամիջոցներում (Daily Posta, in daily Hurriyet, on Hurriyet's internet site (www.hurriyetim.com.tr), on Milliyet's internet site (www.milliyet.com.tr), Turkish Daily News staff, www.turkishdailynews.com):

Առաջնայնություններ կամ մաներներ: Հարց է ծագում. ի՞նչ է նշանակում Թուրքիային նման «աշխարհաքաղաքական» վերակողմնորոշումը:

Այդ միտումը ժամանակավոր, առաջնային՝ բնույթ ունի, թե՛ Թուրքիայի ընդհանուր ռազմավարության մեջ մաներ է: Ռուս հետազոտող Իգոր Տորակովը, որն աշխատել է Թուրքիայում, մեքերթում է Diplomaticobserver.com կայքի գլխավոր խմբագիր Կիվանջ Գալիպ Օվերի արտահայտությունը. «...Մուրաբիթ քաղաքականության ոլորտում տեղի է ունենում Թուրքիայի անմտամետ կողմնորոշման ավանդական երկու հիմնասյուրենքի այնպիսի մեծ: ԵՄ-ի կողմից իրեն անդամակցելու հարցով Թուրքիայի հետ բանակցությունների ժամկետ նշանակելու ցանկության բացակայությունը, նաև Իրաքի դեմ ԱՄՆ-ի անընդմեջ ավանդական մեքերթում և Վաշինգտոնի միջև տարածային փոխհարաբերություններում և նա առաջանում է թուրքական ղեկավարների շրջանում և ստիպում որոնել աշխարհաքաղաքական այլընտրանքներ, ինչպես այնուամենայնիվ ստորաաշրջանի հարցերով փորձագետները: Թուրք քաղաքական գործիչների զգալի մասը, նաև իշխող կուսակցության շարքերից, համոզված են, որ Թուրքիան պետք է իր դիրքերին անդամակցի Միջին Արևելքում և բարեկալի հարաբերությունները Ռուսաստանի ու Կենտրոնական Ասիայի թյուրքական պետությունների հետ՝ «արեւմտյան ճակատում» անհաջողությունները փոխհատուցելու նպատակով: «Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Արեւմուտքում Թուրքիայի դիրքերը կախված լինեն Արեւելքում այդ երկրի ունեցած ազդեցություններից» (Իգոր Տորակով, 23.01.03., [Eurasianet, http://www.eurasianet.org](http://www.eurasianet.org)):

Գնեթալ Թուրքիայի Բիլիջը Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը 2002 թ. մարտի սկզբին հայտարարեց, որ երկիրը պետք է բողոքի եվրամիության անդամ դառնալու փորձերը և մերժեման հարեաններին Ռուսաստանին ու Իրանին: «Ես համոզված եմ, որ ԵՄ-ը երբեք իր շարքերը չի ընդունի Թուրքիային: Ռուսի Թուրքիային հարկավոր են նոր դաշնակիցներ, և օգտակար կլինեն, եթե Թուրքիան նրանց որոներ, այդ բովան և նաև ի դեմս Ռուսաստանի և Իրանի»: Թուրք քաղաքական գործիչների անդրադարձը հետեւյալն էր: Վարչապետ Բյուլենթ Էջելիթի խոսքերով, «մեզ չպիտի կանգնեցնեն խոչընդոտներն ու ղեկավարությունները, որոնց մեքերթում հանդիպում ենք ԵՄ-ի անդամակցության ճանապարհին, և մեքեր չենք դիտարկի այլընտրանքային տարբերակներ»: Փոխվարչապետ, «Հայրենիք» կուսակցության ղեկավար Մեսուր Զըլմազը, նաև եվրամիության գործերով նախարարն է, բուրջ-իրանա-ռուսաստանյան միությունն անվանեց «մոծականջային բեմազրույթություն»: Առաջատար մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը այդ առթիվ ասաց, թե «ընդհանուր առմամբ ողջ հասարակությունը մոլորվել է, սակայն առաջին անգամ թուրքական հանրույթը սկսում է բացահայտելու արտահայտել իր կասկածներն ու տագնապները ԵՄ ընդունելու անընդմեջ մեքերթում»: Թուրքիայում աշխատող վերլուծաբան Ջոնաս Գորվետը նշել է, որ Ռուսաստանն ու Իրանը Թուրքիայի ավանդական հակառակորդներն են, իսկ գլխավոր շտաբը՝ համադրյալ միաժամանակ Բիլիջի հայտարարության հետ հրապարակեց մի գեկույց, որում Իրանին մեղադրում է Թուրքիայում արմատական ասիայական խմբերի աջակցելու մեջ: «Միլիթեթ» թերթի մեկնաբան Ֆիքրեթ Բիլլ ասել է, որ «ինքը եվրամեքերթում և նրանից, որ Թուրքիան պետք է հիշի իր հաղթանակների մասին եվրամիության դեմ»: Արագործախարար Իսմայիլ Ջեմի կարծիքով, այդ հաղթաթղթերը կարող են նաև շահավետ լինել Թուրքիայի համար: Ըստ նրա, «իրադարձությունների նման շրջադարձը արդեն վնասել է ինչպես մեզ, այնպես էլ մեր հարաբերությունները»:

րին ԵՄ-ի հետ. մենք կտրում ենք ճյուղը, որի վրա նստած ենք (Չոնաս Գորվեն, 14.03.2002, Eurasianet, <http://www.eurasianet.org>): Սակայն կան եւ այլ արտահայտություններ: Օրինակ, թուրքական խորհրդարանի նախագահ Օմեր Իզզիդը իր վերջերս արված մեկնաբանության մեջ ասաց, որ «Թուրքիան մեծ տերություն է, որը պտտվում է իր առանցքի շուրջ, դա մեծագոր պետություն է: Եթե եվրամիության կողմից դիմադրությունը կշարունակվի եւ անընդունելի լինի Թուրքիայի համար, վերջինս հնարավորություն կզգամ միանալ ուրիշ իրեն շրջապատող տերությունների հետ» (19.03.2002, Eurasianet, <http://www.eurasianet.org>):

Արտաքին քաղաքականությունը. ժամանակագրություն: Ուշագրավ է Աֆղանստանում Թուրքիայի կողմից ISAF խաղաղարար զորամասի հրամանատարության ստանձնմանը նախորդած ժամանակաշրջանը: 2002 թ. ապրիլ-հունիսին Թուրքիան ցուցաբերեց մեծ արտաքին քաղաքական աշխուժություն եվրասիայում՝ եվրասիական քաղաքականությունում առաջնահերթությունները եւ հիմնական ուղղությունները ավելի հստակ ճշտելու նպատակով: Բացահայտվեց Կենտրոնական Ասիայում Թուրքիայի ռազմաքաղաքական դերը մեծացնելու ձգտումը՝ եվրասիայի առանցքային պետությունների հետ նոր պարտավորեցնող հարաբերություններ հաստատելու միջոցով: Թուրքիան չի կարող չտեսնել, որ իր հավակնությունները եվրասիայում ակնհայտորեն չեն համապատասխանում նրա քաղաքական-տնտեսական հնարավորություններին, եւ այդ պատճառով վախճանում է առավել հզոր տերությունների, առաջին հերթին ԱՄՆ-ի ու Ռուսաստանի կողմից որոշ հարցերով ի վնաս Թուրքիայի շահերին «մեղմ դավադրությունից» նկատի առնելով երկարաժամկետ հեռանկարը:

Ապրիլ- Թուրքիա կատարած իր այցի ժամանակ Չինաստանի վարչապետ Չժու ժուճցզին խոստացավ նպաստել երկու երկրների գործարարների միջեւ հարաբերությունների զարգացմանը եւ Թուրքիան ներառելն գորաշրջության համար խորհուրդ տրվող երկրների ցանկում՝ ասելով, որ արեւելյան Թուրքիա կարող են այցելել 100 հազար չինացիներ: Առավել ուշագրավ է, որ Չինաստանն առաջին անգամ այցելելու նպատակով քայքայ Սինգվանյան անհանգիստ շրջանը, ուր այրում են թուրքալեզու ուլդուրները:

Մայիս- Նախագահ Ահմեդ Սեզերի այցը Թեհրան: Թուրք-իրանյան առևտրի խորհրդի ստեղծումը:

Հունիս- Ահմեդ Սեզերը այցելեց Ղազախստան:

Հունիս- Թուրքական փոխվարչապետ Դեվլեթ Բախչելին առաջին պաշտոնական այցը կատարեց Չինաստանի Սինցզյանյան շրջանը:

Հունիս- Այցով Մոսկվա ժամանեց Թուրքիայի ՉՈՒ գլխավոր շտաբի պետ Հուսեյին Կիլիժբեռլին, որը հանդիպումներ ունեցավ իր ՌԴ գործընկերոջ Ս. Իվանովի հետ: Կողմերը քննարկեցին իրավիճակը Չեչնիայում, միջազգային ահաբեկչությանը եւ զինմատակարարմանը վերաբերող հարցեր: Ռուսաստանը մրցակցում է մի շարք ընկերությունների հետ՝ Թուրքիային ռազմական ուղղաթիռներ տրամադրելու համար:

Հունիս- Ղազախստանում տարածաշրջանային անվտանգության հարցերով զուսարված խորհրդատուները Ս. Սեզերը եւ Վ. Դուտինը համաձայնություն եկան Հարավային Ասիայում լարվածության թուլացմանն են ուղղված համատեղ գործողությունների մասին:

Հունիս- Թուրքիայի նախագահը զրուցեց նաեւ Հնդկաստանի նախագահ Աթալ Բիխաթի Վաջպաի եւ Ղազախստանի ղեկավար գեներալ Փերվեզ Մուշաբաֆի հետ:

Հունիս- Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեյին Կիլիլիզբեռլին ժամանեց Թիրխիսի՝ Կրաստանին 2,8 մլն դոլարի օգնության մասին համաձայնագիր ստորագրելու համար, ըստ որի, կարողականացվեն երկու ռազմավայաններ, այդ թվում՝ Վազիանիի նախկին ռուսաստանյան ռազմահանգրվանը: Մայիսին Թուրքիան ռազմական համագործակցության մասին համաձայնագրեր կնքեց Ադրբեջանի ու Կրաստանի հետ Բաքու-Չեչյան ճակատաբերի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Հունիսի 20- Թուրքական զորքերը ստանձնում են 15AF խաղաղարար զորամասի հրամանատարությունն Աֆղանստանում:

Ուշագրավ է, որ Թուրքիայի արտգործնախարար Ա. Գյուլի այցը 2003 թ. ամռանը ԱՄՆ նախապատրաստելուն զուգահեռ, Թուրքիայի գիտնիկ գլխավոր շտաբի ղեկավարությունը հայտարարեց, թե մտադիր է դադարեցնել աներկյալ արտադրության «AH-1Z Super Cobra» ուղղաթիռների գնումների համար բանակցությունները: Նման կտրուկ ցույցի պատճառը հուլիսի 4-ին Իրաքի Մուլլեյմանիա քաղաքում թուրքական զինծառայողների մի խմբի կալանավան հետ կապված իրադարձություններն էին: Գլխավոր շտաբում պահանջում են պաշտոնապես ներում հայցել, մինչդեռ քաղաքական ղեկավարությունը մտադիր է ընթացք չալալ: Նույն մտքին են նաեւ աներկիացիները: Նախկինում հաղորդվում էր, որ ԱՆկարան մտադիր է գնել շուրջ 50 միավոր Նշալ ուղղաթիռներից, եւ գործարքի ընդհանուր զուամրը կազմի է շուրջ 2,2 մլրդ աներկյան դոլար:

Հետաքրքրական է զրույցը հեղինակ, արտաքին քաղաքականության ոլորտում, փորձառու եւ խորամտ սնանագետ, արիեստաբար լրբիստ, ծայրահեղ աջ հայացքների տեր, ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության աջ քեռում մեծ ազդեցություն ունեցող Ջիմ Ջաթրաս (Jim Jatras): Նրա գնահատմանը, ԱՄՆ-ի եւ Իսրայելի խնդիրներից մեկը պետք է լինի Առաստանի ներգրավումը իսլամական ահաբեկչության եւ արմատականության հիմնախնդիրների լուծման հարցում ընդգրկուն համագործակցության մեջ: Երբ կայուն ԱՄՆ-ը ու Ռուսաստանը սերտ համագործակցության ու գործընկերության այլ ապարդեջ չունեն: ԱՄՆ-ը պատրաստ չէ որոշում ընդունել ռուսաստանյան ճակթը մեծ քանակով սեծովյան պետությունների կողմից մշակելու հարցում արակցություն ցույց տալու մասին: Նախի հարցերով բոլոր շփումներն ու բանակցությունները վերաբերում են միայն իրն նախաամքերի շահագործման աշխատանքներին արակցությանը: Ռուսաստանը ԱՄՆ-ի կողմից նախորդյուսահաման ու մատակարարման ոլորտում չի կարող իրավիճակից որպես ռազմավարական գործընկեր, քանի որ նախի ռազմավարական մատակարարը պետք է ունենա թեկուզ ընդհանուր արդյունահանվող նավթի 10-15 տոկոսի չափով պաիուստներ: Սակայն նման հնարավորություններ Ռուսաստանը չունի: Ուստի, եթե օրվա ռուսաստանյան ղեկավարությունը ու ուզում է ստանա ԱՄՆ-ի արակցությունը, պետք է որոշում ընդունի համաշխարհային հակաահաբեկչական պայքարին միանալու մասին:

Չնայած դառը փորձին, Ռուսաստանը համառում է եւ չի ուզում իրեն ճանաչել որպես իսլամիստների ու ահաբեկիչների համապարտիկ հարմակման առարկա: Մեր կարծիքով, հատկապես ուշագրավ է հետեւյալ միտքը.

«Ռուսաստանը դատապարտված է լինել ԱՄՆ-ի գործընկերը հակաանարաբել-չակայն գործունեության ոլորտում և մասնակցել ԱՄՆ-ի կազմակերպած խոշորածավալ գործողություններին: Ռուսաստանը շատ սահմանափակ ընտրության առջե է կամ այդ հարցում դառնա ԱՄՆ-ի անմիջական գործընկերը ապահովելով բարձր կարգավիճակ, կամ դառնալ Իսրայելի ու Թուրքիայի գործընկերը ընտրելով ավելի ստորին կարգավիճակը: Ռուսաստանը ստիպված կլինի իր քայլերը համաձայնեցնել ԱՄՆ-ի հետ ոչ թե անմիջականորեն, այլ Իսրայելի կամ Թուրքիայի միջոցով: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա շատ շուտով կդառնա անվտանգության երաշխավոր և գլխավոր դատավորը տարածաշրջանի քաղաքական հակամարտություններում: Թուրքիան կվճռի, թե որ քաղաքականությունը է և որ պետություններն են համապատասխանում անվտանգության մասին պատկերացումներին»: Այս միտքն ինձ շատ յուրօրինակ բվաց, և ես նորից հարցրեցի Տարաասիին այդ մտքի նշանակության մասին (Տարաասը ծագումով հույն է, համակերպ է բավական ուղղափառներին և չի համակրում Թուրքիային): Նրա կրծիքով, ահաբեկության սպառնալիքը անենասարդյունավետ ճնշման լծակն է Ռուսաստանի վրա: Ընդ որում, Ռուսաստանը հարմար փորձադաշտ է հակաահաբեկչական գործողության ասպարեզում համագործակցելուց նույնպես խուսափել փորձող Եվրոպայի ևԱՄՆումաք փորձարկված մեթոդներն ու մոտեցումները կիրառելու համար: Գարց է առաջանում. այն, որ փորձագետը Իսրայելի անունը հիշատակեց ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում շատ թե քիչ հասկանալի է, սակայն ինչո՞ւ հիշատակվեց Թուրքիան: Արեւմտյան վերլուծական հանրությունը նվաճտոյակ է, որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան դեռեւս մինչեւ չեչեանական առաջին պատերազմը չեն օգտագործել իրենց հատուկ ծառայությունների հնարավորությունները Գյուսիսային Կովկասում իրավիճակը հաստնացնելու համար, այլ առաջնությունը զիջել են Թուրքիային: Մեծ Բրիտանիայում լեյբորիստների իշխանության անցնելուց հետո, այդ երկիրը փաստորեն նվազագույնի է է հասցրել այդ տարածաշրջանում իր գործակալական գործունեությունը, աշխատանքները կենտրոնացնելով Գարավային Կովկասում: Գս. Կովկասի ձեռնարկներին ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան մասնակցում են խորհրդարանների ու առանձին քաղաքական գործիչների մակարդակով: 1991 թ. հետո Գս. Կովկասում գլխավոր դերակատար եղել են Թուրքիայի հատուկ ծառայությունները Ադրբեջանի ու Վրաստանի հատուկ ծառայությունների ենթակա մասնակցությամբ: Այդ իսկ պատճառով է նշվում է Թուրքիայի կարելուր լինելը հակաահաբեկչական նախագծերում: Սակայն այդ դրույթը առաջարկվել էր Իրաքի դեմ ռազմարշավից ամիսներ առաջ, այսինքն՝ Թուրքիայի հանդեպ ամերիկացիների ունեցած քաջարձակ «հավատի» շրջանում: Կարելի է նաեւ հիշել, Դ. Ռամսֆելդի տեսակետը, թե Ֆրանսիան ու Գերմանիան շուտով հաշվի կնստեն Անկարայի ու Վաղշավայի կարծիքի հետ:

Մենք այս օրինակը բերեցինք ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջեւ հին և նոր հարաբերությունների տարբերությունը ներկայացնելու համար: «Այսպիսով, Թուրքիան կարողացավ վիճել Եւրոպի հետ: Ի միջի այլոց, մի միլիտարություն նա դեռ ունի, չնայած Անկարա-Վաշինգտոն դաշնակցային հարաբերությունների ստեղծությանը, ԱՄՆ-ը նախկինի նման իր աջակցությունն է հայտնում ամիսաբարձիներնի տարանջան բուրբաքական ծրագրերին: Կասպյան ավազանում էներգետիկական ռազմավարության հարցերով ԱՄՆ-ի պետքա-

տուղարության ավազ խորհրդական Սթիվ Մաննը հավաստել է, որ բուրբ-ամերիկյան տարածայնությունները որեւէ կերպ չեն ազդի Կասպյան տարածաշրջանում էներգետիկական նախագծերի իրագործման վրա: Ըստ նրա, արտահանող խողովակաշարերի նախագծերը «հիմնված են հիմնարար տարածաբնության եւ երկարածամկետ ռազմավարության վրա, ուստի դրանց վրա չեն կարող ազդել նման իրադարձությունները: Խոսքը առաջին հերթին Գիմնական արտահանման խողովակաշարի (ԳԱԽ) Բաքու-Թբիլիսի-Տեյխան նավթամուղի մասին է: Ամերիկյան պետքարտուղարությունը, իհարկե, բարեգործական կազմակերպություն է: Սթիվ Մաննը չի քաջցնում, որ ԳԱԽ-ը հարկավոր է նախ իրեն ԱՄՆ-ին՝ «ռազմավարական նկատառումներով»: Իսկ նախագծի մասնակիցներին հարկավոր է, նրա կարծիքով, ողջ ուժերով հասնել ԳԱԽ-ի տնտեսական-առեւտրային շահավետությանը: Ամերիկացիները համոզված են, որ պատերազմի ավարտից հետո, շուկա կհասի մեծաքանակ իրաքյան նավթը, եւ կուժեղանա պայքարը էներգետիկական ծրագրերում օտարերկրյա ենդրույնների կհամար: «Ամերիկացիների համար Իրաքում բարդ վիճակի պայմաններում Թուրքիան քայլեր է ձեռնարկում իր դիրքերը Գս. Իրաքում իրապես անրապնելու համար հենվելով քյուրքալեզու տարրի վրա: Քիրքուկից ոչ հեռու, ապրիլի 23-ին կայանվել է 23 թուրք: Նրանցից հարկական զինվորական տվյալներով, բուրբական հատուկ նշանակության ուժերի մարտիկներ էին: DIME մասագրի կայքէջի համաձայն, նրանք քաղաքացիական հազուստով էին եւ բարեգործական շարայան կազմում էին: Խուզարկության ժամանակ հայտնաբերվել են AK-47 ինքնաձեռնարկ, M-4 հրացաններ, նոսակներ, գրահարաձեռններ եւ գիշերային տեսողության ադրքեր: Ինչպես լրագրողներին հայտնել է գնդապետ Բիլ Մեյվիլը, «նրանք այստեղ անկեղծ ստրով չեն եկել: Նրանց նպատակը եղել է այնպիսի պայմաններ ստեղծելը, որ Թուրքիան կարողանար դա օգտագործելով Քիրքուկ ուղարկել մեծաթիվ խաղաղարար զորախումբ»: Նրա խոսքերով, հատուկ զոկատայինները կապված են քաղաքում գործող տարբեր ուրբքական խմբերի հետ: Այս խմբերը միավորված են Իրաքի բուրբական ճակատում (ITF): Մեյվիլի կարծիքով, կոմանդոսները պետք է մարզին ITF անդամներին, նաեւ նրանց օգտագործելով վիճակն ապակայունացնելու համար: Ապրիլի 24-ի ռազմական պահակախմբի ուղեկցությամբ նրանց վերադարձրեցին սահմանագիծը»: (<http://lenta.ru/irag/2003/04/25/turks/>):

Ամերիկացիների այս արարքը առաջացրեց Թուրքիայի խիստ անդրադարձը, նաեւ վարչապետ Ռ. Երդոհանի մակարդակով: Ըստ էության, սա լրորովին նոր ոճ է բուրբ-ամերիկյան հարաբերություններում: Թուրքիան քացահայտորեն փորձում էր ցուցադրել Իրաքում իր հիմնարար շահերի առկայությունը, որը տարբեր է ամերիկյան շահերից, ինչպես նաեւ իր պատրաստակամությունը իր շահերը անեն գնով պաշտպանելու առումով:

2.17. Իրաքյան հարցում Թուրքիայի դիրքորոշման մասին

Իրաքում ռազմարշավից երկու ամիս առաջ ԱՄՆ ռազմական շրջանակներում ակա էր զգալի դժգոհություն ռազմական գործողության անցկացմանը ԱՄՆ-ի գիմուժի անբավարար պատրաստվածության հարցում: Գեներալիտեղը, այդ թվում է պաշտպանութթը բարձրաստիճան սպաները, որոնք աշխատանքում են ռազմական փորձագիտության ոլորտում, պահանջներ են առաջարկում ԱՄՆ-ի վարչակազմին: Գիմնական դժգոհությունը վերաբերում էր

նազանական խնդիրները քաղաքական նպատակներին ու պայմաններին ենթարկեցնելու հանգամանքին, ինչը զգալիորեն վնասում է գործողության նախապարտատման ու անցկացման արդյունավետությանը: Ուսումնական հետազոտությունների ինստիտուտի (Վաշինգտոն) հարցախոյզից հետո, երբ նազանական փորձագետները տվեցին անմաքաստ ճանաչատեղանքներ, վարչակազմը արգելեց նման գործունեությունը և նման նյութերի հրատարակումները: Հինվորականությունը վարչակազմին մեղադրում է քանկարծք ժամանակը կորցնելու և Իրաքի վարչակարգի հետ բանակցությունները տապալելու մեջ: Ըստ գնահատականների, բրիտանական զորքերն ավելի լավ են նախապատրաստված: Թուրքիայի խորհրդարանի Իրաքյան նազանարշավին մասնակցելու հարցերով մերժման որոշումից հետո, ԿՊԿ-ն և Ռազմական հետախուզությունը «այսուրեքներեցին» նյութեր և զեկուցագրեր, որոնք հաստատում էին Թուրքիայում իրադարձությունների նման ընթացքի հնարավորությունը: ԱՄՆ ռազմական հետախուզությունը բարձրագույն հրամանատարությանն է ներկայացրել զեկույց, համաձայն որի՝ Թուրքիայի զվաճարը շտաբի և ՊՆ աշխատանքները Իրաքի դեմ գործողությունը նախապատրաստելու առումով աշխատանքներն անբավարար են: Չեկույցում արտացոլվել են Թուրքիայի ռազմական ու քաղաքական ընտրությանի դիրքորոշումների հիմնական միտումները: Չեկույցում եզրահանգում է արվում թուրք հասարակության և խորհրդարանի հակապատերազմական տրամադրությունները անմիջականորեն զվաճարը շտաբի կողմից հրահրելու մասին: Այս զեկուցագիրը կազմվել է 2002 թ. վերջին, բայց ուշադրության չի անցնել: Այն վերականգամի ու զինվորական հրամանատարության կողմից: Թուրքական խորհրդարանի բացասական որոշումից հետո, աշխատակազմում քննադատության ենթարկվեց պետքարտուղարի տեղակալ Սարկ Գրոսմանը՝ Թուրքիայի հետ հարաբերությունների հարցով պատասխանատու: (Ի դեպ, նրա նախածնունդյամբ է ստեղծվել թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը, որն սկզբունքորեն զբաղվում է թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման ծրագրով և այդ պատճառով ԱՄՆ-ի աշխատակազմի կազմակերպությունների ուշադրության չըջագծում է): Տարբերակ կա, ըստ որի, պետքարտուղարությունը դիտմամբ քայլեր չի ձեռնարկել թուրքական խորհրդարանի նման որոշումը թույլ չտալու համար, Պենտագոնի քաղաքական գործունեությունը Թուրքիայի, ընդհանրապես միջինարևելյան պետությունների հետ հարաբերությունները ձախողելու միտումով: Արդեն թուրքական խորհրդարանի մերժումից հետո, պետքարտուղարությունը հատուկ խումբ ստեղծեց հատուկ ծառայությունների, փորձագետների (միջազգային տնտեսական հարաբերությունների գծով) ներկայացուցիչներից՝ Թուրքիայի վերաբերյալ ծրագրեր մշակելու համար):

Ռազմական գործողությունների ընթացքում կատարվող դեպքերը հաստատում են այն ենթադրությունները, որ ԱՄՆ-ը սկզբունքորեն չէր ցանկանա թուրքական զորքերի ակտիվ մասնակցությունը մարտական գործողությունների՝ բազմաթիվ պատճառներով (արաբական աշխարհի և քրդերի հետ հարաբերություններ, Իրան և ՅուՆեսկոյի առնչություններ): Չափավոր նորպահանջողականների կարծիքով, առաջին հերթին պետքարտուղար Քոլին Փաուելի համոզմամբ, Թուրքիայի մասնակցությունը կունենա աշխարհաքաղաքական ծանր հետևանքներ տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքականության համար: ԱՄՆ-ը միանգամայն գոհ կլիներ Թուրքիայի

տարածքի և 2-3 օդանավակայանների (երկուսը երկրի արևելքում, մյուսը Իսրայրի կամ Ստամբուլի շրջակայքում) տրամադրումից: Այսպիսով, ԱՄՆ-ի պահանջը Թուրքիայից՝ չափավոր էր: Հասկանալի է, որ Մուսինսկ Թուրքիայի կողմից ամերիկյան պահանջը նախապատրաստական շրջանի վերջին պահին ընդունելու դեպքում, Թուրքիան արդեն չէր ստանալու նախկինում նախատեսված չափով զգալի լրավճարներով ու տնտեսական օգուկությունը: Դա Ջ. Քուչի անձնական որոշումն էր:

Մեծ Բրիտանիան փորձեց խուսափել Թուրքիայի կամ Իսրայրից տարածքով իրաքյան նավթի հնարավոր փոխադրման այդ բանակցություններից: Ուշադրությամբ քննարկվում է դեպի Հարավային Աբաբա (հորդանանյան նավահանգիստ) գերնավթամուղի կառուցման հարցը: Լոնդոնը կողմ է իրաքյան նավթի արդյունահանման և փոխադրման հարցով միջազգային կարտել ստեղծելուն: Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիան ցանկանում է ոչ թե սահմանափակ ամերիկաբրիտանական կազմով, այլ ՅուՆԵՍԿՈ-ի, Իտալիայի, Ռուսաստանի և այլ պետությունների (ենթակալի կարգավիճակով) մասնակցությամբ կարտելի ստեղծում:

2003 թ. մարտին Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) անդամ երկրների ղեկավարների վերջին զագաթնաժողովն ավարտվեց անարդյունք: Արաբական քաղաքական շրջանակները շփոթված էին, եւ առանձին ազդեցիկ գործիչներն ձգտում էին մշակել Ս. Հուսեյնին և նրա վարչակազմին իշխանությունից հեռացնելու եղանակներ՝ պահպանելով վարչակարգի արժանապատվությունը: Լիբանոնյան, Եգիպտոսյան, սիրիական և ավելի ուշ՝ երկու մայրաքաղաքներով, որում են նախագահը կլինի Բաշար Ասադը: Այդ պետությունը կունենա «պայմանագրային» բնույթ, որի գոյությունն ու կենսագործունեությունը կկարգավորվի համապատասխան երկկողմանի պայմանագրով՝ Լիգայի հավանությամբ: Լրանց կարծիքով, դա թույլ կտա ազատվել իրաքյան վարչակարգից: Յմարավոր է, այդ ծրագիրն արդիական կդառնա հեռավոր ապագայում: Ըստ որոշ տեղեկությունների, այդ ծրագրի «ստվերային» հեղինակը ԱՊԼ-ի զվաճարը քարտուղար, եգիպտական գործիչ Ամր Մուսան է: Այլ լուրերի համաձայն, այդ գաղափարը մշակվել է Մեծ Բրիտանիայի օլիգարխիական և հատուկ ծառայությունների կառույցներում: Հավաստի է միայն, որ Բ. Ասադը դա առաջարկել է Ս. Հուսեյնին: Այդ իմաստով հաշվի են առնված Մեծ Բրիտանիայի նավթային շահերը: Միաժամանակ, Մեծ Բրիտանիայի արիստոկրատական շրջանակները Մարգարե Թեթչերի մասնակցությամբ առաջ քաշեցին Ս. Հուսեյնին և նրա ընտանիքին անվտանգության երաշխիքներ տրամադրելու ոչ հրապարակավ առաջարկությունը՝ իշխանությունից կամովի հեռանալու պայմանով: Այս շրջանակները Իրաքում միապետության վերականգնում են նախապատրաստում:

2.18. Իրաքի շուրջ իրադարձությունների կապակցությամբ Թուրքիայի ու Իրանի միջև հարաբերությունների մասին

Սախբան Իրաքի դեմ ռազմարշավին մասնակցելուց Թուրքիայի հրավարվել, տեղի էր ունենում Իրաքի խնդրի շուրջ թուրք-իրանյան դիմակայության մեծացում: Միաժամանակ, Իրանի և Թուրքիայի միջև ընթանում էին բարձր մակարդակի բանակցություններ Իրաքյան Քուրդստանի հար-

ցով: Ուսումնական ապահովման հետևյալ լարվածությունը չնվազեց, ստանալով նոր երանգներ: Իրանի քաղաքական դեկավարությունը բավականին զգուշանում է թուրքական զորքերի հնարավոր ներխուժումից Իրաքյան Քուրդիստան և առհասարակ Յս. Իրաք: Իրանի ղեկավարությունը տեղեկություններ ունի, որ Յս. Իրաքի որոշակի զործողություններում թուրքական զորքերի մասնակցությունը կարող է տեղի ունենալ եւ ամերիկա-քրիստոնեական ռազմական գործողությունների շրջանակներում, եւ ինքնուրույնաբար: Իրանցիների կարծիքով, Թուրքիայի կողմից Իրաքյան Քուրդիստանի եւ Առևտրի շրջանի բռնազավթումը որեւէ տեղային եւ առաջիկա քաղաքական խնդիրների լուծման նպատակ չի հետապնդում: Թուրքիան իր հնարավոր գործողությունները համարում է աշխարհառազմավարական առումով կարևոր «Թուրքիայի վերափոխումը Մերձավոր ու Միջին Արևելքում անվտանգության երաշխիքների» ընդգրկուն ծրագրի շրջանակներում, որը առաջին անգամ հրապարակեց Բ. Էյնիթը իր հրաժարականից առաջ: Սակայն այս ծրագիրը եւս մաս է կազմում Թուրքիան տարածաշրջանային գերտիրության վերածելու մեկ այլ ծրագրի՝ ավելի մեծ տարածքի ընդգրկմանը: Ներկա պահին (2003 թ. մարտի սկիզբ) Թուրքիան թուրք-իրաքյան սահմանագծին կենտրոնացրել է միայն 7000 զինվոր, ինչը բավարար էլ ջրղերի դեմ գործողություն սկսելու համար: Սակայն Իրանը տեղեկացված է, որ Թուրքիան այդ ելման շրջաններում կուտակում է մեծաքանակ ռազմական տեխնիկա՝ քոլարակելով դրանք: Այդ սպառնալուծությունը բավարար է շուրջ 40 հազարանոց զորայինի ծավալման համար: Իրանցիների կարծիքով, քրդերն առաջին Թուրքական սահմանագծին իրապես կարող են տեղակայել 15000-ից ոչ պակի կանոնավոր եւ առավելագույնը 10000 անկանոն զինյալներ: Իրանցի փորձագետները պնդում են, որ Թուրքիան կիրականացնի ոչ միայն ժամանակավոր բռնազավթում Իրաքյան Քուրդիստանում, այլեւ Յս. Իրաքի երկարատև բռնազավթում, հնարավոր է եւ Իրանին սահմանակից Իրաքյան տարածքի բռնակցում:

Այդ հեռանկարի գիտակցումը նպաստեց 1991 թ. հետո առաջին անգամ ԱՄՆ-ից Իրաքյան քրդերի քաղաքական դեկավարների լուրջ սահմանազատմանը: Իրաքյան քրդերի առաջատար երկու կուսակցությունները ԲԺԿ-ն եւ ԲԻԿ-ն, սերտ կանոնավոր հարաբերություններ հաստատեցին Իրաքի կառավարության հետ այդ հարցերի առնչությամբ: Վերջինս արդեն քրդերին է տրամադրել մեծաքանակ կրակներ, 6 հրետանային համակարգ, ավանանտներ եւ զինամթերք: Բանակցություններ են ընթանում հակաօդային միջոցներ տրամադրելու շուրջ: Ուշագրավ է, որ բանակցությունների նյութ է քուրդ-իրաքյան համատեղ պայքարը Քիրքուկի շրջանը Թուրքիայի կողմից վերահսկելու փորձերի դեմ: Միաժամանակ, Բաղդադում ընթանում էին բանակցություններ ԲԺԿ-ի տարածաշրջանային ղեկավարության հետ Թուրքիայի դեմ համատեղ գործողությունների շուրջ: Իրանցիները պնդում են, որ թուրք-իրաքյան սահմանին քրդերի վերահսկողության ներքո տարածքներում գտնվում են Իրաքյան սպաներ, որոնք զբաղված են քրդական զորամիավորությունների կազմավորմանը: Այդ շրջաններում ակտիվորեն տեղեփվում են ամրակետեր, կրակակետեր, տանկերի ու զրահատեխնիկայի շարժման արգելազուտներ: Անբնակավայրերում կառուցվում են ութապատասխաններ: Իրանցիների կարծիքով, Թուրքիան շատ հեռատև քաղաքականություն է վարում՝ քաղաքական գործողությունների նմանակմամբ (ի-

միտացիա) հետապնդելով Յս. Իրաքը բռնազավթելու հարցում ԱՄՆ-ի համաձայնությունը ստանալու նպատակը, սակայն չմասնակցելով մարտական գործողություններին: Դա թուրքական քաղաքականության առավել հավանական տարբերակն է:

Իրանը իրանա-քրդական սահմանին հարող քրդական շրջանում նախապատրաստում է բավականին մեծ զորայիններ: Ձրայինքի կազմում են բանակային զորամասեր եւ «հեղափոխության պահապանների» ջոկատներ: Իրանը չի կարող հանդուրժել թուրքական զորքերի կողմից Իրաքյան Քուրդիստանի բռնազավթումը: Սակայն, հասկանալով իր խոցելի վիճակը, Իրանը փորձում է Թուրքիայի հետ ձեռք բերել ինչ-որ փոփոխումային մի տարբերակ: Այդ հարցով ԱՆկարա է այցելել Մ. Խաթամնի անձնական ներկայացուցիչ, փորձառու դիվանագետ Բեհզադ Նաբավին, որը հաջողությամբ հանդիպումներ է ունեցել Մախխի վարչապետ Արդուլաշ Գուլուի, ներկայիս վարչապետ Էրդողանի, արտգործնախարարի, գլխավոր շտաբի եւ նախահամիների: ՔՖՏարկվել են Իրանի առաջարկները Իրաքյան Քուրդիստանի հանտեղ թուրք-իրանյան բռնազավթման մասին: Ընդ որում, Իրանը պետք է զբաղվի իր սահմանի երկայնքով 40-60 կմ զոտին: Իրանը հայտարարում է, որ նպատակ չունի գրավել Քիրքուկի շրջանը եւ Թուրքիայի Իրաքյան Քուրդիստանի հետ կապող որոշ ճանապարհները: Հարկ է ուշադրություն դարձնել, որ իր քաղաքականության այդ ուղղության զարգացման գործընթացը Իրանը պատճառաբանում է Իրաքում քրդական պետության ստեղծման հարցում իր շահագրգռված չլինելով: Միաժամանակ, Իրանի հիմնական նպատակն է Թուրքիայի դիրքերի հզորացման խոչընդոտումը: Այսպիսով, այսպես թե այնպես, շուտով կուրվագծվի թուրք-իրանական աշխարհաքաղաքական դիմակայության ուժեղացումը:

Այս իրադարձությունների առնչությամբ, ուշագրավ է, որ Մեծ Բրիտանիան նպաստում է Իրաքյան քրդերի ռազմական զորության մեծացմանը, ելնելով թուրքական զորաշարժին հնարավոր դիմադրության անհրաժեշտություն տեսանկյունից: Մեծ Բրիտանիան այդ հարցով կապեր ունի Իրանի հետ: Լոնդոնը չի կարող հանդուրժել Յս. Իրաքում Թուրքիայի վերահսկողությունը, առաջին հերթին Քիրքուկի շրջանում: Սա, փաստորեն, զուգորդվում է Թուրքիայի տարածքով եւ նրա նավահանգիստներով Իրաքյան նավթ փոխադրելու ծրագրի հարցում Մեծ Բրիտանիայի բացառական դիրքորոշման հետ:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացման հետ, Իրանը զգալի ջանքեր գործարդեց Թուրքիայից մերձեցնելու համար, շեշտադրելով ընդհանուր մասնեղակալ շահերը: Սակայն Իրանը ընդհանուր շահեր էր որոնում նաեւ աշխարհիկ կուսակցությունների եւ քաղաքական ուժերի հետ: Անկարայում Իրանի ղեկավար Դոլաթաբեյն հանդիպել եւ բանակցություններ է վարել թուրքական «Մամ միխան» կուսակցության ղեկավար Ալի Գեմրիի հետ: Վերջինս իր կուսակցության անունից շահագրգռություն հայտնելով թուրք-իրանական երկկողմանի կապերի զարգացման վերաբերյալ, ասել է. «Իշխանության ղեկին վարչապետի պաշտոնում մեր կուսակցության ղեկավար Թուրքիա Օզալի օրոք թուրք-իրանական հարաբերությունները եւ կապերը զարգացել են ինչպես երբեք»: Նա նաեւ կոչ է արել կազմակերպել մշտական հանդիպումներ երկու երկրների ղեկավարությունների միջեւ երկ-կողմանի հարաբերությունների ու տարածաշրջանային փոփոխակի կարևորագույն հարցերը քննարկելու համար: (ԱՆկարա, ԻրԱՄ, 25.06.2003):

2.19. Թուրք-իրանա-սիրիական բանակցությունները քրդական հարցի շուրջ

«2003 թ. ապրիլի 10-ին Սիրիայի արտգործնախարար Ֆարուխ աշ-Չարաան հայտարարեց, որ պաշտոնական Դամասկոսը լիովին համակարծիք է Անկարայի ու Թեհրանի հետ Իրաքի տարածքային ամբողջականությունը պատերազմից հետո պահպանելու հարցում: Նա հայտնեց, որ երեք երկրների դիվանագիտական գերատեսչությունների միջև շփումներ են լինում, որի ժամանակ կողմերը համաձայնեցնում են իրենց քաղաքականությունը: Այսպես, այս կիրակի Թուրքիայի արտգործնախարար Ա. Գյուլը կթռչի Դամասկոս, որտեղ բանակցություններ կվարի իր գործընկերոջ հետ Իրաքի ետպատերազմյան կարգավորման հարցերով: Դիտորդները նշում են, որ այս երեք երկրները դեռևս «սպասողական» վիճակում են և որեւէ կտրուկ հայտարարություն չեն անում: Սիրիան առհասարակ քրդական հարցում պահում է Անկարայի կողմը, քանի որ զգալիորեն թույլ է Իրանից և Կաշիմզ-տունի կողմից համարվում է քիվ 2 թեկնածու Իրաքից հետո: Բացի այդ, Կաշիմզտունը բազմիցս մեղադրել է Դամասկոսին իրաքյան վարչակարգին աջակցելու և կերպով զենք և ռազմական այլ հանրեծմանք մատակարարելու մեջ: Վերլուծաբանները չեն բացառում, որ հարթանակից արբեցած Պենտագոնը պտղաբարուղարությունից պահանջի քաղաքական հիմնավորում ստանալ արդեն Սիրիայի դեմ ապագա ռազմական գործողությունների համար»: (13.04.2003, <http://www.cenran.ru>):

2003 թ. սկզբին տեղի էին ունենում ակտիվ բանակցություններ Իրանի, Թուրքիայի և Սիրիայի միջև Իրաքի ապագա կառուցվածքի և քրդական հիմնախնդրի հարցերով: Բանակցություններ ընթանում էին տարրեր մակարդակներով և չունեին խիստ ասիմանված շրջանակներ: Առավել բարձր մակարդակը բանակցություններում արտգործնախարարների մասնակցությունն էր:

Առանձին դեպքերում հեռախոսազրույցներ են եղել Իրանի նախագահի և Թուրքիայի ու Սիրիայի վարչապետների միջև: Առավել նշանակալից այցը Իրանի արտգործնախարար Բ. Խաքանիի ժամանումն էր Անկարա, և Թուրքիայի ԱԳ Նախարար Ա. Գյուլի ծրագրած այցը Սիրիա: Այդ երկրների ուժային և հատուկ ծառայությունների ներկայացուցիչները նույնպես նշյալ հարցերով շփումներ ունեն: Իրաքյան մեկնաբանների արձամար, Իրանի ու Սիրիայի միջև ավելի վստահելի հարաբերություններ են, բայց վերջիններս ու Թուրքիայի հարաբերությունները: Թե՛ն և հռչակված նպատակներին, որոնք հիմնականում համընկնում են, այս երկրները պայմանավորվածություններ չեն հասել Իրաքի և քրդերի հարցերում: Բոլոր երեք պետությունները զգուշանում են Իրաքի տրոհումից, քրդական պետության ստեղծումից կամ քրդական ինքնավարությանը մեծ լիազորություններ շնորհելուց: Սակայն նույնիսկ տվյալ խնդիրների վերաբերյալ հակասություններ կան, մասնավորապես Իրանի ու Թուրքիայի միջև: Իրանի քաղաքականությունը թույլ, ապաստանականացված, ապակենտրոն պետության ստեղծումն է, որում կզեն իր շինների քաղաքական ազդեցությունը: Այսինքն, ժամանակի հետ են-բարդում է Իրանի մեծ ազդեցությունը տվյալ պետության վրա: Իրանցիները հասկանում են, որ Իրաքում արդեն վաղուց ստեղծվել է քրդական պետական կազմավորում և չի կարող այն վերանայ: Քրդական պետականությունն Իրաքում կարող է միայն ամրապնդվել, եւ խնդիր է դրվում թույլ չտալ նրա

անցատուն Իրաքից: Ի տարբերություն Թուրքիայի և Սիրիայի, Իրանը ավելի հզոր լծակներ ունի Իրաքի քրդերի վրա ազդելու, որոնց քաղաքական ու տնտեսական կյանքը սերտորեն կապված է Իրանի հետ:

Եթե Թուրքիան ազդեցություն ունի միայն քրդական ինքնավարության հյուսիսային հատվածի ու Իրաքյան Զուրդիստանի ժողովրդավարական կուսակցության վրա, ապա Իրանի ազդեցությունը տարածվում է բոլոր իրաքյան քրդերի վրա, թե՛ն ավանդաբար համարվում է, որ Իրանի դերը նշանակալից է Իրաքյան Զուրդիստանի հայրենասիրական Միության նկատմամբ ազդեցության ոլորտում: Եթե Սիրիան ու Թուրքիան կարող են հուսալ միայն քրդերի վրա ազդեցության մասին, ապա Իրանի դիրքերը հատկապես ուժեղ են Իրաքի շիակն գազախոսներում, ուր չիքական արաբական բնակչությունն ունի իրանական արմատներ և կապված է Իրանի առաջատար շիակն երկրի հետ: Ուստի Իրանը հավանվում է առավել ուժեղ դիրքեր ունենալուն Իրաքում: Եթե Թուրքիան չի վիճակվել է իր շահերը Իրաքում լուծել փաստորեն միայն ուժային մեթոդներով, ապա Իրանը շեշտադրում է քաղաքական-գաղափարախոսական ազդեցությունը: Իրաքում Իրանը նաեւ նախընտրելի դիրքեր ունի Սիրիայի նկալ տնտեսական ու քաղաքական ներուժ ունեցող և խոցելի իհնավում հայտնված պետության համեմատությամբ: Իրանցիները հաստատապես վճռել են իրագործել Իրաքի «չիայաբանել», այսինքն ապահովել շիաների գերիշխան դերը քաղաքականության մեջ և նախկին նկատուների թաշնամուն հարցում, քանի որ Իրաքի նախկին երկու երրորդը գտնվում է երկրի չիայաբանակ վայրերում: Նրանք նաեւ Թուրքիայից նմալ գալիվ են զգուշանում Իրաքում քրդերի իրավունքների ընդլայնումից, քանի որ ավելի համընտրող քաղաքականություն են վարում վերջիններիս նկատմամբ առաջին հերթին իրենց երկրում և կարող են հուսալ քրդերի աջակցությունը Իրաքում ու Թուրքիայում: Այսպիսով, Իրանի համար նախընտրելի են ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի այն ծրագրերը, որոնց համաձայն Իրաքը կունենա դաշնային կամ համադաշնային կառուցվածք: Իրանի այս նպատակները բացառել նշել են ամերիկյան ու եվրոպական քաղաքական գործիչներն ու վերլուծաբանները: Ուստի ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան դաշնային կառուցվածքի դեպքում կփորձեն Իրանին հակազդել մի շարք գործոններ. արաբ շիաների արաբական ազգայնականությունը, Իրաքում արմատամետ շիայական քաղաքական ընտրախախիք, աշխարհի բյուրոկրատիային և շիաների տնտեսական շահերը նախկին հարցում: Առայժմ ամերիկյան տեղի շիայական շարժումներին և ոչ մեկը պարտավորեցնող հարաբերություններ չունի Իրանի հետ: Սակայն մինչեւ Իրաքի դեմ ռազմարշավ, իրանական քաղաքական-գաղափարախոսական ազդեցությունն Իրաքում անհամեմատ մեծ էր ամերիկյան ազդեցությունից: Այժմ, երբ շիաները ազատագրվել են կուսիցիայի գործերի կողմից, Իրանի դերը չի կարող չնվազել: Իրանի վերահսկողության տակ է առայժմ միակ լավ կազմակերպված իրաքյան շիաների «Բադր» մարտական միավորը, որը «Իրաքում իսլամական իեղափոխության Գերագույն խորհրդի» ռազմական թեւն է: ԻՒՀ Գև ղեկավարն է Ֆանատիկորեն իրանամետ քաղաքական և կրոնական գործիչ Բաքր ալ-Շաքիդը: Իրանն ամբողջ Իրաքում ունի յուրապարկված և հակատարին գործակալական ցանց, առաջին հերթին հարավում: Այնուհանդերձ, նոր պայմաններում Իրաքում շիայական ընդդիմության այդ կառույցները կարող են ապակազմակերպվել և կորցնել նշանակությունը:

Թուրքիան, Իրանը եւ Սիրիան Իրաքի հարցում իրենց քաղաքական ղեկավարությունների կողմից հիմնավորված ու հաստատված գործողությունների ծրագիր: Իրանը փորձում է Իրաքի հարցում վարել ինքնուրույն, ԱՄՆ-ից եւ Թուրքիայից անկախ քաղաքականություն, բայց առայժմ այդ ուղեգիծը չի կայացրել եւ հազիվ թե իրագործվի: Իրանը փորձում է նաեւ ապահովել Թուրքիայի աջակցությունը, նկատի առնելով ԱՄՆ-ի նկատմամբ նրա հիբրիդոլուժը, սակայն այդ քայլերը եւս չեն ընկալվել Թուրքիայի կողմից:

Անկախած, Թուրքիան զիջում է Իրանին Իրաքում ազդեցության հարցում: Իրաքում հնարավոր են իրադարձությունների զարգացման սցենարներ: Բայց Իրաքում առկա է հզոր իրանական եւ զգալի հակաբուհական ներուժ, որը կարող է ձեւավորել այն, ինչից ամենքս վախենում են հեռատես ամերիկյան եւ քրիստոնական քաղաքագետները. կստեղծվի իրանա-իրաքյան-սիրիական տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինք: Այդ հեռանկարը մատնանշել է «Սթրաթֆոր» վերլուծական ծառայությունը:

2.20. Թուրքիայի մտադրությունները Հյուսիսային Իրաքում

ԱՄՆ-ը եւ Իսրայելը մշակել էին բավականին մանրամասն ծրագիր Իրաքի դեմ գործողություններում Թուրքիայի մասնակցության վերաբերյալ, որում ուրվագծվում էին քաղաքական հեռանկարներ.

«Ինչպե՞ս հայտնում է «Debka» կայքը, իսրայելյան բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Մոշե Յապոնի Անկարա կատարած այցի ընթացքում նախապատրաստվել է ծրագիր, համաձայն որի՝ իրաքյան ռազմարշավի սկզբից եւեթ ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ Իսրայելի գործողությունները համակարգված բնույթ կունենան: Գործողության նախօրեին թուրքական 3-րդ բանակը կմտնի Մոսուլ ու Քիրքուկ, եւ Իրաքի խորքում շարժման էաջողության համար մոտ ժամանակներում կկայացվի «թուրք-քրդական համաձայնություն»: Իրաքի թուրք ղեկավարներ Ջալալ Թալարանիի եւ Մասուք Բարզանիի հաճախակի այցերն Անկարա կապված են նշյալ համաձայնության հետ, որում շահագրգիռ է ԱՄՆ-ը: Ավելին, համաձայնագիրը կստորագրվի 4աշինգտոնում: Թուրքական ազդեցիկ «Միլիթեթ» թերթը վկայակոչելով նշյալ հարայնելան աղբյուրը, գրում է, որ թուրք-քրդական համաձայնագրով, ամերիկյան զորքերի հարձակման նախօրեին, թուրքական 3-րդ բանակը կմտնի Հս. Իրաք եւ կգրավի նավթային շրջանները: Ըստ համաձայնագրի, Հս. Իրաքում իրադարձությունները կընթանան հետևյալ կերպ. ինքնավար քրդական իշխանությունները «միջանցք» կապահովեն թուրքական 3-րդ բանակի 70 հազար զինվորների շարժման համար մինչև Մոսուլ եւ Քիրքուկ, այդ ընթացքում թուրք զինվորները կռուելու կլինեն խաղաղ քուրդ բնակչության հանդեպ, եւ դա կլինի Անկարայի կողմից Հս. Իրաքում քրդական իշխանությունների անուղղակի ճանաչումը: Թուրքական ուժերը տեղի թուրքներների աջակցությամբ կմտնեն Մոսուլ եւ Քիրքուկ: Այդ փուլում քրդերը չեն հավակնի նավթահանքերին: Թուրքիան կստեղծի թուրքմենական ինքնավարություն, որի տարածքը կներառի հյուսիսային սահմաններից մինչև Բաղդադ շրջանները: ԱՄՆ-ը եւ Թուրքիան կլինեն թուրքմենական եւ քրդական ինքնավարությունների միջեւ քաղաքական, ռազմական եւ տնտեսական համագործակցության զարգացման երաշխավորը: Բացի այդ մոսուլյան նավթի շահույթի մի մասը կհատկացվի քրդական ինքնավարության կարիքները հոգալու: «Միլիթեթ» համաձայն, ԱՄՆ-ը Թուրքիայի դրական պատասխանը ստանալու

համար նախապատրաստել է 20 մլրդ դոլարի ֆինանսական աջակցության թրթածրագր: Այլ խոսքով, արդեն այս տարի Թուրքիան կարող է ստանալ 2 մլրդ դոլարի վարկ: Մնացած ումարը կհատկացվի ավելի ուշ: Թուրքիան այդ հարցում այլ տեսակետ ունի. նա ծուլում է ստանալ 28 մլրդ դոլար, որը ըստ կանխատեսումների համարժեք կլինի հարավային սահմաններում պատերազմի դեպքում կրած տնտեսական վնասին» (www.iran.ru):

Սակայն այս ծրագիրը, որը բժում է այնքան տրամաբանական ու իրագործելի, ունի շատ հակասություններ: Ծրագրի հիմնական խոցելի կետը ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի հավակնությունների լուրջ թերագնահատումն է, վերջինիս քաղաքականությունում նոր որակի ի հայտ գալու պատճառով: ԱՄՆ-ը լիվատեղյակ էր Թուրքիայի ռազմաքաղաքական հնարավորություններին եւ ծրագրված ռազմարշավում մեծ խնդիրներ չէր առաջադրում, սակայն ամերիկացիները, ըստ ամենայնի, գերազնահատեցին իրենց համաշխարհային ազդեցության իրապարանքի ուժը: Իսրայելն ավելի լավ էր պատկերացնում Իրաքի դեմ Թուրքիայի հետ համագործակցության բարդությունը: Այնուհանդերձ, ԲժԿ-ի ղեկավար Մ. Բարզանին մեծածախքաքա քույրակցությունը Մոսուլում ու Էրբիլում թուրքական հյուպատոսությունների բացումը՝ չբացատրելով նույնիսկ տարածաշրջանում որոշակի թվով թուրքական զինուժի ներկայությունը: Մեկ տարի առաջ դժվար էր երեսակայեք քուրդ ղեկավարի, որը թույլ կտար Թուրքիային ներկա լինել Իրաքում, նրբ Անկարաներիսուժում էր առանց հարցնելու: Երկրորդ պլան մղվեցին նաեւ Իրաքի թուրքմենները: Ամերիկացիները Մոսուլում ստեղծեցին քաղաքային խորհուրդ, որը պետք է ստեղծված բառսում կազմակերպական աշխատանքներ տաներ: խորհրդի 19 անդամը 13-ը արաբներ էին, 5-ը քրդեր, 3-ը՝ ասորիներ եւ միայն մեկը թուրքմեն: Հարկ է նշել, որ թուրքմենները կազմում են քաղաքի բնակչության 60 տոկոսը:

2.21. Աֆղանստանում Թուրքիայի ուշագրավ կեցվածքը

Վերջին 10 տարիներին Թուրքիան ակտիվորեն մասնակցել է արտասահմանում խաղաղարարական գործողություններին. 1993-94 թթ. ԱՄԿ-ի «Չույս» գործողությանը Սոմալիում (300 մարդ), նաեւ Բոսնիայում եւ Հերցեգովինայում՝ ապահովելով հրադադարից հետո թիջչների արգելազտին: Թուրքիան մասնակցել է նաեւ ՆԱՏՕ-ի օդային գործողությանը Կոսովոյում եւ որչ աշխարհում պաշտպանում է ՆԱՏՕ-ի դիտորդական առաքելությունները: Դա ապահովել է Թուրքիայի հարաճուն դիրքերը համաշխարհային քաղաքականության ոլորտում: Սակայն Աֆղանստանում խաղաղարարական գործողությունը Թուրքիայի համար դարձավ խնդրահարյուց:

Աֆղանստանում թուրքական զորախմբի մասնակցության մասին որոշումը ընդունվեց վարչապետ Բ. Էյբեիի օրոք՝ նախքան խորհրդարանական ընտրություններում «Արդարություն եւ զարգացում» կուսակցության հաղթանակը: Սակայն հաջորդ թուրքական կառավարությունը անհանգստություն հայտնեց ISAF-ի ռազմավարության եւ խնդիրների վերաբերյալ. երբ 2002 թ. սկզբից արդեն ինքն էր ստանձնել իրամասնատարությունը: Տվյալ խնդիրը Թուրքիային հնարավորություն էր տալիս ԱՄՆ-ի հետ հարաբերություններում լինել վստահ, նոր դիրքեր նվաճել Եվրոպայում ու Ասիայում: Թուրքական քաղաքական ղեկավարությունն ու զինվորական իրամասնատարությունը անհանգստանում էին Աֆղանստանին առնչվող բազմաթիվ

նազմատեխնիկական, քաղաքական և ֆինանսական հիմնախնդիրների ա-
նոթով: «Մարտի 29-ի հայտարարությանը ասվում է, որ կողմերը պայմանա-
վորվել են ֆինանսական հարցերով, ԱՄՆ-ը Թուրքիային խոստացել է 228
մլն դոլարի չափով օգնություն, որից 28 մլն դոլարը կհատկացվի ISAF-ի
թուրք խաղաղարարներին աջակցության համար»: «Թուրքական ղեկավա-
րությունը ամերիկացիների խոստումը համարել է ոչ համարժեք: Խոստաց-
ված C-130 տրանսպորտային ինքնաթիռներն անբավարար են, թուրք զին-
վորներն առևտ են, որ ավելի շատ ինքնաթիռներ են հարկավոր, որոնք կու-
նենան բեռնափոխադրման մեծ ծավալ: Թուրքական գլխավոր շտաբը պն-
դում է, որ պահանջվում է լրացուցիչ 1600 թուրք զինվոր, այդ թվում՝ Քաբու-
լի օդանավակայանի անվտանգությունն ապահովող 300 զինծառայող: Երե-
կայումս Քաբուլում են 267 թուրք զինվորականներ, որոնք աշխատում են
Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Լիդերլանդների, Իտալիայի ու Գերմանիա-
յի զործնկերների հետ»: «Այլ խոսքով, ISAF-ը իր մանդատի համաձայն,
պետք է ապահովվի ժամանակավոր կառավարության պաշտպանությունը,
մինչև Կարգայի պաշտոնավարման ժամկետի ավարտը, իսկ այ կլինի Լոյա
ջիդդիի (գերագույն խորհուրդ) հունիսյան գումարից հետո: Խաղաղարար-
ները նաև խոստանում են ուսուցանել աֆղանական նոր բանակին և ուսի-
նախնությունը: Այդ ամենը պետք է կատարվի Քաբուլի շրջագծում, քանի
ISAF-ը լիազորված չէ գործել մայրաքաղաքի սահմաններից դուրս, չնայած
երկրի այլ քաղաքներում խաղաղարարների ներկայությունն ապահովելու
աֆղանական ղեկավարության հորդորներին (Ձոնաս Գորվետ, 12.IV.2002,
Eurasianet, <http://www.eurasianet.org>):

Այսպիսով, Թուրքիան Աֆղանստանում բախվել է ոչ միայն ռազմա-
տեխնիկական ու ֆինանսական խնդիրներին, այլև իր վիճակի անհամարժե-
քության փաստերին: Կենտրոնական Ասիայում իր քաղաքական ազդեցու-
թյունը հաստատել փորձող Թուրքիան ներքաշվել է իր ազգային շահերին
խորք խաղում մեծաթիվ տերությունների և ուժերի մասնակցությամբ: Թուր-
քիայի ղեկավարությունը բարձրացրել է տվյալ տարածաշրջանում իրավիճա-
կի և իր ազգային շահերի համապատասխանության հարցը: Անկարան հա-
մոզվել է, որ չի կարող մասնակցություն ունենալ այդչափ հեռավոր տարա-
ծաշրջանում ռազմաքաղաքական նախագծերին, համոզվել է, որ Աֆղանս-
տանում չունի հստակ շահեր: Տագնապ է հարուցում այն հարցադրումը, թե
որքանո՞վ Թուրքիայի մասնակցությունը տվյալ ռազմաքաղաքական ծրագ-
րին կարող է նպաստել իր մեկուսացմանը Ասիայում: Այդ երկուլից իմքեր ու-
նի, քանի որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան հետապնդում են տարբեր, հաճախ
հակասական Թուրքիայի շահերի տեսանկյունից, նպատակներ: Թուրքիան
կարող է կատարել ամերիկա-բրիտանական ռազմավարության կողմից իրեն
հանձնարարված հիմնական գործառնությունը միայն Ասիայում և մահմեդա-
կան աշխարհում իր մեկուսացման պարագայում: Մահմեդական պետություն-
ների հետ համարված ու համագործակցող Թուրքիան հարկավոր չէ ԱՄՆ-ին,
Մեծ Բրիտանիային ու Իսրայելին: Աֆղանստանն անկասկած պատկանում է
ոչ թե Զարաֆային, այլ Կենտրոնական Ասիայի շրջանին, այսինքն, ըստ Լու-
թյան, Թուրքիայի կողմից պետք է համարվեր իր արևելյան քաղաքականու-
թյան (պանրոբիզմի և նրոսամիզմի գաղափարախոսություն) կարեւոր
բաղկացուցիչ: Առանց Աֆղանստանի Կենտրոնական Ասիայում Թուրքիայի
ներկայությունը որպես տարածաշրջանային գերտերություն լուրջ չի դիտվի:

Կենտրոնական Ասիայի ներկայիս աշխարհաքաղաքական կառուցվածքն
այնպիսին է, որ, չվերահսկելով Աֆղանստանը, անհնար է գերիշխող դիրքեր
գրավել տարածաշրջանում: Թուրքիայի ղեկավարությունը չի կարող դա
չհասկանալ և այնուհանդերձ զգուշավոր է Աֆղանստանում իր ներկայու-
թյան հարցում: Միանգամայն ինքնուրույնաբար վերահսկել Աֆղանստանը
Թուրքիան չի կարող, իսկ ԱՄՆ-ի քաղաքական ծրագրում Թուրքիայի մաս-
նակցությունը կարող է հանգեցնել տարիների ընթացքում եվրասիայի ներ-
քին շրջաններում իր դիրքերի կորստին: Թուրքիայի տվյալ կեցվածքը նաև
վկայում է, որ Անկարային այնու ձեռնուռ չէ ԱՄՆ-ի գերակայի գործընկերոջ
կարգավիճակը: Թուրքիան իրեն համարում է ինքնուրույն աշխարհաքաղա-
քական «բեւեռ», տարածաշրջանային գերտերություն, որն ունի իր ռազմա-
վարական շահերը տարբեր ԱՄՆ-ի շահերից և երբեմն հակառուր դրանք:

Ուշագրավ է Աֆղանստանում ISAG-ի խաղաղարարական ուժերի հրա-
մանատարության ստանձնմանը նախորդած շրջանը: 2002 թ. ապրիլ-հունի-
սին Թուրքիան մեծ արտաքին քաղաքական աշխուժություն է դրսեւորել եվ-
րասիայում այդ տարածքում իր գերակայությունն ու նպատակները ճշտելու
համար: Ուրվագծվեց Թուրքիայի ձգտումը եվրասիայի առանցքային պետու-
թյունների հետ նոր պարտավորեցնող հարաբերությունների հաստատմանը
մեծացնել Թուրքիայի ռազմաքաղաքական դերը Կենտրոնական Ասիայում:
Թուրքիան չի կարող չտեսնել, որ իր հավակնությունները եվրասիայում չեն
համապատասխանում իր տնտեսական ու քաղաքական հնարավորություն-
ներին և զգուշանում է ավելի հզոր տերությունների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի
ու Ռուսաստանի «թավշյա դավադրությունից» ի վնաս Թուրքիայի շահերի:

2.22. Թուրքիա-Ռուսաստան

2000 թ. ապրիլի 16-ին ՈՂ գլխավոր դատախազությունը դիմեց Թուր-
քիայի իշխանություններին չեզնվական ծայրահեղականների զաղափարա-
խոսներից մեկին Մովլադի Ուդուգովիկ ձեռքարկելու և հանձնելու պա-
հանգով: Կեռքինս, լինելով այսպես կոչված «իչկերիայի ու Դաղստանի ժո-
ղովրդների կոնգրեսի» ղեկավարներից մեկը, հետախուզման մեջ էր 2000
թ. մարտի 10-ից: Նա մեղադրվում է 1999 թ. աշնանը Դաղստանի Լոկուլաք-
կի շրջանի վրա ավազակային զինվածավորումների հարձակման կազմա-
կերպիչներից մեկը լինելու մեջ: 2000 թ. ապրիլին Ուդուգովիկ նկատմամբ
հայտարարվեց միջազգային հետախուզում: Որոշ տվյալներով, Ուդուգովը
վերջին տարիներին գտնվել է Թուրքիայում կամ Պարսից ծոցի երկրներից
մեկում: 2002 թ. սկզբին Թուրքիան սկսեց քաղաքական առևտուր Ռուսաս-
տանի հետ չեզնվական շարժման ղեկավարների հանձնելու շուրջ: ՌԴ-ն
Թուրքիայի առաքարկները գնահատեց իրեն բարի կամքի դրսեւորում,
մինչդեռ իրականում Թուրքիան փորձում էր կատարել քաղաքական փոխա-
մեկում և հասնել Վրաստանում թուրքական ռազմական ներկայության մե-
ծացման հարցում Ռուսաստանի «բարյացակամ» վերաբերմունքին (նաև
անխկին ռուսաստանյան օդային ռազմավարներում թուրքական օդուժի
ներկայացման հարցում): Սակայն տվյալ ծնամարկը հաջողություն չունեցավ,
և ըստ Լության, միայն բացահայտվեց Թուրքիայի ակնհայտ ճնշումը Ռու-
սաստանի վրա: Ընդ որում, Թուրքիան խախտեց վատախելի հարաբերու-
թյունների կարևորում ինչպես ՌԴ-ի, այնպես էլ չեզնվական շարժման հետ:
Թուրքիան մերժում գործընկեր է Չեչենիայի և Յւ. Կովկասում կատարուա-

կան շատ ուժերի համար: Լրատվամիջոցներում սովորաբար հիմնականում անդրադառնում են չեչենների և Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Էմիրաթների, «Մուսուլման ռեպայրների» կապերին: Սակայն, առանց Թուրքիայի մասնակցության ու աջակցության, հնարավոր չէ չեչենների այդչափ լայն շարժման իրագործումը: Ռուսաստանում, սակայն, գերադասում են իրականությունն այլ կերպ հետևել, ինչը, հնարավոր է, քաջատրվում է Թուրքիայի հետ դիմակայությունը չեչենացնելու ցանկությամբ: Արդյունքում Թուրքիան մնում է հավատաստական քաղաքական ու ռազմական խմբավորումների կարեւորագույն հենակայանը: Թուրքիան մեծ ջանքեր է գործադրել Հս. Կովկասում դիրքեր նվաճելու համար եւ չի հրաժարվի դրանցից:

Թուրքիան բազմիցս ցուցադրել է խՍՀՄ և Արեւմուտքի միջեւ խուսափելու ավանդական կարողությունը, քեւ դա հաճախակի չի եղել. քեւմալական պետության ստեղծման առաջին փուլում (1920-23 թթ.), մինչեւ Երկրորդ աշխարհամարտը տնտեսության զարգացման շրջանում, Երկրորդ աշխարհամարտի տարիներին, ՆԱՏՕ-ին անդամակցելիս: 1974թ. կիպրոսյան ճգնաժամի ընթացքում (ավելի լավատեսյակ հեղինակը կարող է ավելի շատ փաստեր նշել): Սակայն իրաքյան ռազմարշավի հարցով ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սառնության ժամանակ Թուրքիան պետք եղած ուշադրությունը չդարձրեց Ռուսաստանին: Թուրքիայի պետական գործիչների այցեքը Ռուսաստան ծեւական-ցուցադրական բնույթ ունեն, ինչը համապատասխանում է մեր ուրվագծած ավանդական բուրքական արտաքին քաղաքականության ոճին: Հակառակ հայանի ռուսաստանյան քաղաքագետների այն պնդումներին, քե Թուրքիան վերակողմնորոշվել է դեպի Եվրասիա, տվյալ ենթադրությունը ամենեւին չի համապատասխանում իրողություններին, եթե նկատի առնենք, որ Թուրքիայի եվրասիական կողմնորոշումը ինքնաբերաբար կհանգեցնէր թուրք-ռուսաստանյան ռազմավարական միությանը հավելյալ ֆրանս-գերմանական դաշինքին: Այդպես է, օրինակ, հայտնի ռուսաստանյան քաղաքագետ, նորեվրասիական մախագծի սկզբունքների հետեւորդ Ալեքսանդր Գուզինի տեսակետը:

«Իրաքի դեմ պատերազմը արմատապես հակասում է Թուրքիայի ուղղակի շահերին, սակայն դա բավարար չէ վճռական պահին մերժել «չեֆին» այնքան հարկավոր օգնությունը: Բանն այն է, որ վերջին տարիներին Թուրքիան էապես վերախմաստավորել է իր աշխարհաքաղաքական դրույթները ոչ միայն տարածաշրջանային, այլեւ ընդգրկում քաղաքականության համաձայնեություն: Արտաքին դիտորդի համար ամնկատ (որը սովոր է Թուրքիային համարել «արեւմտամետ, եՄ-ին անդամակցել ձգտող եւ լիովին ենթակա Վաշինգտոնին), թուրքական ընտրախավերի ընդհանուր տրամադրությունը որակապես փոխվել է: Հայտնվելով «սառք» պատերազմի խիտ շրջանակներին դուրս, Թուրքիան իրեն գիտակցեց որպես «Եվրասիա» եվրասիական տերություն: Այդ բանաձեւը փրկարար էր հիմնական թուրքական քաղաքական ուժերի համար, ավանդապաշտներին ծեւնտու էր (Էրբաթան եւ Էրդոյան), որ եվրասիականությունը մերժում է արեւմտյան բնորոշի անվերապահ միլիտանը, զինվորականներին ու քեւմականներին գրավում է այն, որ եվրասիականությունը կարելի է մեկնաբանել որպես «շարժում դեպի Արեւմուտք, բայց ազգային ու մշակութային ինքնատիպության պահպանմամբ»: Եվրասիականությունը դարձել է իրեալական աշխարհայացքային միջոց թուրքական երկու հակընդդեմ բեւեռները միավորելու համար. խոսքը իսկա-

մական ու աշխարհիկ բեւեռների մասին է: Թուրքիայի ներքին հիմնահարցն այն է, որ բնակչության ճնշող մեծամասնությունը ավանդապաշտ է՝ «արեւելյան» կողմնորոշմամբ, իսկ մտավորական ընտրախավն ու բանակը, որոնք իշխանության դեկին են արեւմտամետ են համաձայն Աթաթուրքի բնորոշ: Ընդ որում, այս խնդիրն աստիճանաբար խորանում է: Այս իրավիճակում եվրասիականությունը, հաշտեցնելով հակառակորդներին, ասպարեզ է գալիս իդեալական հիմնավորմամբ. մերժում է արմատական մահմեդականությունը եւ մեղմացնում զինվորականների դիրքորոշումը ավանդական իսլամի հանդեպ: Եվրասիականությունը ստիպում է թուրքերին նորովի վերաբերվել Ռուսաստանին, որն ինքնին աշխարհաքաղաքական Եվրասիան է: ԱՊԳ երկրների նկատմամբ Անկարան սկզբնական քաղաքականության փոխարեն, որը պանթուրքական ծրագրերի աջակցումն էր եւ չեչենական անցատողականության հանդեպ բարոյացական վերաբերմունքը, այսօր սկսել է Մոսկվայի հետ ռազմավարական գործընկերության որոնումները: Ռուսաստանն այսօր նորից, որոշ առանձնիստական շեղումից հետո, վերադառնում է իր բնականոն եւ աշխարհաքաղաքականորեն կանխորոշված դիրքերին: ՌԳ-ն աջակցում է ֆրանս-գերմանական դաշինքին, պատրաստ է Ասիայի հետ մերձեցմանը: Այլ խոսքերով, Ռուսաստանն իրեն ավելի ու ավելի է գիտակցում որպես Եվրասիա» (Ալ. Գուզին, «Եվրասիա» քաղաքական կուսակցության նախագահ, Թուրքիայի քաղաքականությունը Եվրասիական վերափոխում, Հայաքց Մոսկվայից, Իզվեստիա, ՌԳ):

Նսնդիւրն այն է, որ նույնիսկ թուրք քաղաքական ու ռազմական գործիչների հայտարարությունը Եվրասիայի հետ հարաբերություններում նոր մոտեցման վերաբերյալ, բավականաչափ համոզիչ ու որոշակի չեն: Բայց եթե նույնիսկ Թուրքիան որոշում է ընդունել Եվրասիայի պետությունների հետ առավել սերտ համագործակցության մասին, սպա դա ամենեւին «հանգիստ» կայան չի խոստանում Ռուսաստանին: Թուրքիան պատճառ չունի որեւէ բան զիջել Ռուսաստանին Եվրասիայում: Հակառակը, Թուրքիայի եվրասիական քաղաքականության աշխուժացումը կնշանակի Ռուսաստանի դուրսնորում իր դիրքերից, այլապես ինչպե՞ս պատկերացնել այդ եվրասիական կողմնորոշումը: Եվ առհասարակ, հատկապես ի՞նչ է նշանակում եվրասիական կողմնորոշում, եւ ո՞ր աշխարհաքաղաքական բեւեռի հանդեպ պետք է կողմնորոշվի Թուրքիան. չէ՞ որ այդ տարածքում Ռուսաստանից բացի այլ բեւեռ չկա: Թուրքիան, նաեւ ամերիկյան աշխարհայացքում Եվրասիան, պատկերվում է որպես մեծածավալ հուժեղային աղբյուրներ ու շուկա ունեցող տնտեսական տարածք: Ոչ ավելին: Նույնիսկ ավանդական պանթուրքիզմի հայեցակարգն այսօրվա Թուրքիայում փորձում են տնտեսական բնույթ հաղորդել. այլապես հասկանալի չէ Կենտրոնական Եվրասիայի երկրների հետ հարաբերությունների զարգացման եղանակը:

Թուրքիան իսկապես ճամփաբաժանին է, սակայն ամենեւին ոչ աշխարհաքաղաքական խաչմերուկում: խՍՀՄ համակարգի փլուզման արդյունքում Թուրքիան կորցրել է իր աշխարհաքաղաքական նշանակությունը Արեւմուտքի համար: Արեւմուտքն ինքն է պառակտվել, ինչը բարդացնում է Եվրամիության ու ԱՄՆ-ի միջեւ մանդրելը, եւ բուրքական քաղաքականության մեջ եվրոպական ու ամերիկյան ուղղությունների համադրումը: ԱՄՆ-ը այդպես էլ հարկավոր աջակցությունը ցույց չտվեց Թուրքիային իր քաղաքական ու տնտեսական ներկայությունը Կենտրոնական Եվրասիայում հաստատելու

հարցում: Թուրքիան շարունակում է մնալ որոշակի քաղաքական մեկուսացման մեջ: Միջին Արևելքում նրա շուրջ ստեղծվում է բացահայտ քննադատական «ամրոցներ» աղել: ԱՄՆ-ը թույլ տվեց Թուրքիայում տնտեսական խոր ճգնաժամ առաջանալուն, քանի որ իր կողմից վերահսկվող միջազգային ֆինանսական կազմակերպությունները ուշադրություն չդարձրին սպառնալից տնտեսական միտումների զարգացմանը: Սակայն սկզբունքորեն ոչ մի նոր բան Թուրքիայի քաղաքականության մեջ չկատարվեց: Թուրքիան միշտ փորձել է պահպանել որոշակի ինքնավարությունը ԱՄՆ-ի նկատմամբ և երբեմն չէր ձեռնարկում խոսքերը: Թուրքիան ռազմական գործողություն իրագործեց Կիպրոսում: ԱՄՆ-ի դժգոհությունը անտեսելով: Թուրքիան անմիջականորեն չնասնակցեց «Փոթորիկ անապատում» գործողությանը: Ըստ երևույթին, ԱՄՆ-ի շահերին չեն համապատասխանում ներքաղաքական քաղաքական գործիչների ռեանաշխատական և ռազմամուլ հայտարարությունները Չուևաստանի, Հայաստանի, Իրանի, Սիրիայի ու Իրաքի հասցեին: Վերջին երկու տասնամյակներին Թուրքիան մեծ հաջողություններ արձանագրեց տնտեսության զարգացման մեջ դառնալով առաջատար արդյունաբերական երկիր մասնիճակով աշխարհում: Թեև տնտեսական շատ հաջողություններ ժամանակակից են, բոլորական ընտրախավն իրեն զզաց առաջնորդ քաղաքական և տնտեսական լայնածավալ տարածքում և իրավահավասար գործընկեր եվրոպական ընտրախավերին: Թուրքական հասարակությունը «նեղացած» տրամադրություն ունի Եվրոպայում ու ԱՄՆ-ի նկատմամբ ժամանակակից աշխարհում Թուրքիայի դերն ու նշանակությունը անտեսելու համար: Այդ ամենը նոր հավակնությունների պատճառ դարձավ, որոնք պահանջում էին համարժեք քաղաքական մոտեցումներ, բայց այդ մոտեցումները բավարար չափով իմաստավորված ու բանաձեված չեն: Թուրքական ընտրախավը պարզորոշ գերագնահատել է իր երկրի միջազգային նշանակությունը, ինչը բերել է թուրք-ամերիկյան հարաբերություններում ձախողումների: Այն, որ տվյալ շրջանում Թուրքիայի իշխանության ղեկին չափավոր խլամականներն էին, փաստորեն, պատահականություն է: Հիմքեր չկան պնդելու, որ Թուրքիայի խորհրդարանը այլ կուսակցությունների գերիշխանության պայմաններում կգլխարկեր հոգուտ իրաքյան գործողությունում Թուրքիայի մասնակցության: Առավել եւս, զինվորականությունը խանդավորված չէր ռազմարշավին իր մասնակցությամբ: Թուրք-ռուսաստանյան դիմակայությունը արտապատճառական ե քաղաքակրթական բնույթ ունի: Թուրքիան անիմաստ է համարում Եվրոսիայում հավակնություններից հրաժարվելը, առավել եւս, երբ այդ գերտարածաշրջանում Ռուսաստանը նրա միակ մրցակիցը չէ (չպետք է մոռանալ Հինաստանին, Իրանին եւ եվրոպական երկրներին): Եվրասիական ավանդական արժեքների հիմքի վրա Թուրքիայի հետ համերաշխվելու հնարավորության մասին գաղափարները բազմիցս շրջանառվել են ռուսաստանյան քաղաքագիտության մեջ: Հիշե՛ք Կոնստանտին Լեոնտեի աշխատանքները եւ եվրասիականության ներկայացուցիչների կոնորտային 19-20-րդ դարակազմում: 20-րդ դարի ողջ ընթացքում: Սակայն 20-րդ դարի ընթացքում Թուրքիան միայն սպասել է ռուսաստանյան կայսրության փլուզմանը: Եթե Թուրքիան պատրաստ լիներ ռազմավարական երկխոսության, դա հնարավոր էր իրագործել Իրանի հետ որպես երկու առաջատար մասնիճակալ երկրներ: Ինչպես եւ Ռուսաստանի հարցում, Թուրքիան հարկ չհամարեց մերժենալ Իրանի թուրք-ամերիկյան հարաբերությունների ժամանակ:

2.23. Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հիմնախնդիրները

Թուրքիան լուրջ խնդիր է եվրամիության համար, եւ դա նախ վերաբերում է Ֆրանսիային ու Գերմանիային: Հավանություն տեղեկություններ կան, որ Ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, իսպանացի ու հույն քաղաքական ընտրախավերը որոշում են կայացրել Թուրքիայի մուտքը Եվրամիություն արդեւելու մասին: Չավելտն այն է, որ Չուևաստանն ու Իսպանիան ցուցադրում են Թուրքիային աջակցելու պատրաստակամություն եւ ընդունելու հարցում: Հավանաբար Թուրքիային կտրվեն ավելի մեծ իրավունքներ Եվրամիության տնտեսական հնարավորություններն օգտագործելու համար: Բայց եվրոպացիները զգուշացում են եւ երբեք թույլ չեն տա երկու պայմանների իրագործումը՝ ա) Թուրքիան իրավունք չի ունենա իր քաղաքացիների ազատ տեղաշարժի համար, ինչպես Եվրոպայի քաղաքացիները, բ) Թուրքիան իրավունք չի ունենա մասնակցելու Եվրամիության ռազմաքաղաքական հարցերում որոշումների ընդունմանը: Եվրոպական վերլուծաբանների ընդհանուր կարծիքով, Թուրքիան դադարել է լինել կայուն պետություն եւ հասարակություն, սպասել է կայունության իր պատմական պաշարը (ռեսուրս) եւ հավասարական միայնալ քաղաքականություն վարող անհուսալի գործընկեր է, որը միեւնոյն ժամանակ եւ նորոսանյան կայսերապաշտական հավակնություններ ունի: Իրաքի դեմ ռազմարշավին իր մասնակցության մերժումը չիանցեցրեց եվրոպացիների կողմից Թուրքիայի հանդեպ վստահության մեծացմանը: Հավատարմ, եվրոպացիները դրա մեջ տեսան Թուրքիայի քաղաքական անհուսալիության եւ անկանխատեսելիության եւս մեկ ապացույց: Արագ արձագանքման կրրուպի գործունեության նկատմամբ Թուրքիայի կողմից քաջահայտ շանտաժ, երբ կանոնադրի համաձայն կրրուպի պետք է օգտվի ՆԱՏՕ-ի ռազմական պաշարներից միայն դաշինքի բոլոր անդամների համաձայնության դեպքում, հատկապես նյարդացնցումն է Ֆրանսիային ու Գերմանիային: ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի համառ պահանջները Թուրքիային եւս ընդունելու վերաբերյալ (ԵՄ-ի գործունեությունը ապակազմակերպելու նպատակով նրա կազմում ապակառուցողական գործընկեր երկրներու միջոցով) նույնպես քննամարտ է ընկալում եվրոպացիների կողմից: (Հարկ է նկատել, որ նշյալ պահանջները այդ երկրների կողմից ուժեղացան Իրաքի հարցում Թուրքիայի մերժումից հետո): Այսպիսով, խաղալով ապակառուցողական դեր արագ արձագանքման կրրուպի ձեւավորման եւ իրական գործունեության մեջ: Թուրքիան չի կարող խանգարել ֆրանս-գերմանական միության գործունեությանը եւ Անվտանգության ու պաշտպանության Եվրոպական միությանը: Միաժամանակ, հատկապես Թուրքիայի վիճակն ու կեցվածքը կնխաստեն Հարավային եւ Հարավ-արեւելյան Եվրոպայի մի շարք պետությունների միաբանմանը ֆրանս-գերմանական միության հետ:

«Թուրքիայի մուտքը Եվրամիություն կլինի «Եվրոպայի վախճանը»: Այսպիսի կարծիք է հայտնել Ֆրանսիայի նախկին նախագահ ժիսկար Դ'եստենը «Մոնթը» բերթին տված հարցազրույցում եւ որի ներկայիս պաշտոնն առնչվում է ԵՄ-ի սահմանադրական չափորոշիչները ճշտելու հետ: Նրա խոսքերով, Թուրքիայի անդամակցության աջակցող մարդիկ «Եվրամիության հավասարակողմերն են»: Թուրքիայի մայրաքաղաքը Եվրոպայում է, բնակչության 95 տոկոսն ապրում է Եվրոպայից դուրս, դա Եվրոպական երկիր չէ: Այս խիստ խոսքերը հնչեցին Թուրքիայի ու Եվրոպայի մշակութային

ու աշխարհագրական համատեղելիություն չուրջ ծավալված չդադարող վեճերի համապատկերում» (Դ'Եստեն, «Թուրքիան ԵՄ-ում՝ դա աղետ է, BBC, նորություններ, ուրբաթ, 8 նոյեմբերի, 2002 թ.):

«Աջակողմյան եվրոպական քաղաքական գործիչները պնդում են, որ Թուրքիան մաս չի կազմում Յիս աշխարհին, եւ BBC քրթակից Քրիս Մորրիսի հաղորդմամբ, ԵՄ-ի հայտնի գործիչ Դ'Եստենի խոսքերը Անկարային նոր ատիթ կտան պնդելու, քե եվրամիությունը ցանկանում է մնալ քրիստոնեական ակունքի դերում: Պաշտոնական Բյուրասը, ճիշտ է, ամփոփապես հերքեց Դ'Եստենի հայտարարությունը: «Ես չեմ պատրաստվում պինգ-պոնգ խաղալ պարոն ժխկար Դ'Եստենի հետ», հայտարարեց եվրոպական համեմատողական ներկայացուցիչ ժան Քրիստոֆ Ֆիլիորին. - Թուրքիայի մուտքը եվրոպություն կդառնա՞՞ արդյոք ԵՄ-ի վերջը: Պատասխանն է ոչ» (Քրիստոնեական ակունք, BBC, լուրեր, 8 նոյեմբերի, 2002 թ.):

2.24. Քաղաքական իսլամը Թուրքիայում

Իսլամական քաղաքական շարժումը Թուրքիայում նպատակահարմար է բաժանել երկու մասի. «արմատական քաղաքական իսլամ» և «խորհրդարանական քաղաքական իսլամ»: 1970-ականների սկզբից Թուրքիայի քաղաքական շրջանակները որոշակի մասնակցություն են ունեցել երկրում իսլամական շարժում ձեւավորելու գործում հետապնդելով հետևյալ նպատակները. ա) դուրս մղել պատիճարային երիտասարդությունը ձայն արձատյան կազմակերպություններից, որոնք կարող էին կապեր ունենալ ԽՄԴՄ-ի հետ, բ) իսլամական քաղաքական գաղափարներ տարածել քրդերի միջավայրում թուրք-քրդական համերաշխության եւ թուրքական պետության ամբողջակամությունն ապահովելու համար, գ) չափավոր իսլամիզմի տարածմամբ դուրս մղել արձատյան իսլամական կազմակերպություններին, դ) իսլամական կազմակերպություններում ստեղծել գործակալական ցանց Իրանի եւ Սաուդյան Արաբիայի ազդեցության դիմակայելու համար, ե) թուրքական շահերի գոտում ներառված տարբեր շրջաններն ուժեղացնել իսլամական կազմակերպությունների ու հիմնարդանների միջոցով: Թուրքիայի ղեկավարությունը խնդրի էր դրել երկրում ձեւավորել իսլամական-ազգայնական դաշինք ներքին եւ արտաքին քաղաքական խնդիրների լուծման համար: Թուրքիայում առավել գործուն իսլամական արձատյան «Չըզբ ար-թախիրի», «Իսլամական հեղափոխության մարտիկներ», «Մարտիկների թուրքական իսլամական բանակ» եւ «Վրիժառույթյան թուրքական շարիաթական ռազմիկներ»: Թեեւ բոլոր արձատյան իսլամական կազմակերպությունները «Մուսուլման եղբայրներ» համաշխարհային մահմեդական ասոցիացիայի կանոնավոր օրյակներն են, սակայն մնացել են ոչ միայն գալաֆառական, այլեւ որոշակի իմաստով մարգինալ (լուսանցքային) համաշխարհային իսլամական հիմնական կենտրոնների նկատմամբ: Դա մեծապես մտահոգում է թուրքական իշխանություններին: 1970-ականների վերջին, քայց հատկապես 80-ականների կեսին Թուրքիայում գործունեություն ծավալեց իրանամետ «Չըզբուլաիդ», ընդգրկելով երկրի ողջ տարածքը, սակայն հենմանն ունենալով հարավարեւելյան շրջանների շիաական համայնքներում: Դրանով Թուրքիայի քաղաքական կյանքում ի հայտ եկավ «իրանյան» գործունը, թեեւ արձատյան ձեւով: Իսլամիստների նպատակն է հասարակության եւ պետության հետեւողակարծն իսլամացումը: Թուրքիայի իսլամական կազ-

մակերպություններին բնորոշ են ձայն գաղափարները, քանի որ նրանցից շատերը ստեղծվել են ձայն ծայրահեղական շարժումների հիմքի վրա: Իսլամյեցի հեղինակ է. Քարմոնի տեղեկություններով «Meria» ամսագիր, թիվ 4, հունվար, 1998 թ.), «1983 թվից հետո քաղաքացիական առաջին կառավարության վարչապետ Թուրքոթ Օզալը անմիջական ու բավականին հասատուն կապեր ուներ կրոնամասիտիկական Նակչարանիյա օրդենի հետ: Նա ձգտում էր քեմալիզմի ազդեցության եւ աթեիստական քաղաքականության թուլացմանը փորձելով զուգահեռաբար իսլամը ներկայացնել որպես թուրքական ինքնատիպության համար անհրաժեշտ բաղադրիչ: Երկարատեւ ժամանակ վարչապետի պաշտոնում ղեկավարման, այնուհետեւ երկրի նախագահ ինքնու ընթացքում ստեղծվեցին իսլամական շատ ասոցիացիաներ, կրոնական արժեքների քարոզչությունը տարվում էր հրապարակումների, հեռուստատեսական եւ ռադիոյի ժրագրերի միջոցով: Չավելեմը, որ ոչ միայն Օզալը, այլեւ Սուլեյման Դեմիրելը եւ ուրիշ շատ «աշխարհիկ» գործիչներ պատկանում էին Նակչարանիյա օրդենին: (Չեղինակին բախտ վիճակվեց տեսնել, քե ինչպես 1998 թ. Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Ստամբուլում Ֆանար քաղամասում, որը հունական բնակչության արտաքսումից հետո դարձել էր Նակչարանիյա օրդենի կողմնակիցների օջախը, Ն. Էրքանցինի պատկերող ցուցապատաստների հետ կախված էին կրոնական րոլանդակութայմար պատտաներ Ս. Դեմիրելի պատկերով): Սակայն ոչ ամենեինից բոլոր կազմակերպությունները եւ խմբերն են վերահսկվում իշխանությունների կողմից: Իշխանություններն ավելի շուտ որոշում են նախաձեռնում են իսլամիստների գործունեությունը, քան վերահսկում Երանց:

Ազգային գործուն միշտ կարելուրվել է Թուրքիայի իսլամիստների գործունեությունում: Իսլամական քաղաքական գաղափարախոսությունը շատ ազգային փոքրամասնությունների համար ձեռնառու էր իրենց իրավունքների պաշտպանության նկատառումով: Թուրքական իշխանությունները միշտ օգտագործել են շիաների միջավայրում իսլամական քաղաքական կազմակերպությունների գոյության փաստը երկրի արեւելքում պատժիչ գործողությունների համար: Թուրքիայում ստեղծվել է մեծաթիվ անդամներ ունեցող «Դաշնային իսլամական Անատոլիա» կազմակերպությունը, որի կազմում են շատ ազգային ու կրոնական խմբեր, այդ թվում ալավիտներ:

ԱՄՆ-ը երբեք չի զգուշացել իսլամական արձատյան կազմակերպություններից: Ամերիկյան վերլուծաբանների կարծիքով, տվյալ կազմակերպությունները միշտ կլինեն լուսանցքային եւ պատմալից չեն լինի սահմանադրական կարգի համար: ԱՄՆ-ը շատ ավելի զգուշանում է կազմակերպված խորհրդարանական տիպի իսլամիզմից:

Վերջին 10-15 տարիներին Թուրքիայում խորհրդարանական քաղաքական իսլամի զարգացումը ունեցել է մի քանի փուլ: 1970 թվականին ստեղծվեց «Ազգային կարգի» կուսակցությունը դառնալով «Բարոություն» կուսակցության վաղաժամ փորձը: 1996-97 թթ. «Բարոություն» («Ռեֆաի») կուսակցության հաջողությունը Էրքանցինի գլխավորությամբ՝ չափավանկեց իսլամական ուղու հետեւորդների կողմից: Այդ հաջողությունը մեծապես պայմանավորված էր Թուրքիայում ուժեղագույն ներքաղաքական ճգնաժամով կապված վարչակազմի կողմից արված լայնածավալ չարաշահումների հետ: Էրքանցինն ու «Ռեֆաիին» իշխանությունը հանձնվեց փաստորեն Թանու Չիլերի եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցության, այսինքն աջ ու քաջա-

հայտ արձեւումանտ քաղաքական խմբավորման ձեռքով: Հմարավոր է, «Ռեֆահ» կուսակցության հետ փորձարարությունը (էքսպերիմենտ) իրագործվել է մեծաթիվ քաղաքական կուսակցությունների, նաեւ ռազմական շրջանակների միջոցով: Այս փորձարարության սկզբից եեք պարզ էր, որ դա թուրքիայում իսլամական-ազգայնականության սինթեզի ձեւավորման առաջին փուլն էր: Այդ շրջանին բնորոշ էր որոշակի ահեռեստրատեգիաներից մեկի արագականության մեջ եւ բացահայտ ծախսողուններ արտաքին քաղաքականության ոլորտում: «Բարորություն» կուսակցությունը չկարողացավ բնակության լայն խավերին բացատրել իր նպատակներն ու մտադրությունները, առաջարկել փորք-ինչ հասկանալի տնտեսական ծրագիր: Ըստ եւրոպայան, լինելով իշխանության ղեկին, կուսակցության ղեկավարները շարունակում էին իրենց զգալ ընդդիմություն, նաեւ չկարողանալով ստեղծել ազնիվ մեծ քաղաքական դաշինք արտախորհրդարանական ուժերից: Թուրքական ընտրախավում ու միջին խավը վախեցած էին ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ վատահույսության եւ պարտավորեցնող համագործակցության կորստի հեռանկարից: «Ռեֆահ» կուսակցության բախտը չբերեց նաեւ տնտեսական վիճակի առումով: Վերջինս շարունակում էր մնալ կայուն, բայց ուրվագծվում էին խոր ճգնաժամի կանխանշանները: Կուսակցության ղեկավար եւ վարչապետ Ն. Էրթաքանը չկարողացավ ձեւավորել համոզիչ իսլամամետ արտաքին քաղաքականություն, ինչը նրան զրկեց արաբական երկրների ու Իրանի աջակցությունից: 1997 թ. ԱՄՆ-ի ճնշման ներքո նա ստիպված էր համաձայնել Իսրայելի արտագործնախարար Լեիլի ընդունելության եւ ամերիկա-իսրայելաթուրքական գորակարծությունների անցկացման պարտադրանքին:

«Ռեֆահի» արգելումից հետո ստեղծված «Ֆազիլեթ» կուսակցությունը չկարողացավ հանդես գալ նոր քաղաքական նախաձեռնություններով: «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը արդեն խորիդրամական ընտրությունների ժամանակ հասարակությանն առաջարկեց ընկերային եւ տնտեսական հիմնախնդիրների լուծման, ինչպես նաեւ արտաքին քաղաքականության որոշ գերակայությունների վերաբերյալ իր պատկերացումները: Առավել հստակեցնի էլ պոլիտիկայան, Սիջին Մուրեցին, եվրասիայի նկատմամբ դիրքորոշումները: Կուսակցության ղեկավարները լրջորեն փորձեցին ձեւավորել իսլամական նպատակների ու գործնապաշտության վրա հիմնված քաղաքական ուղեգիծ: Ավելի ստույգ, խնդիր դրվեց իսլամական գաղափարներն ու քաղաքական իսլամը առհասարակ դարձնել գործնապաշտական: «Թուրքիայի հակադիր քաղաքական ուժերը բանակն ու իսլամախոսները, հետապնդում են մեկ նպատակ՝ թուրքիան դարձնել ուժեղ, կայուն եւ զարգացած երկիր, միայն թե մի կողմի համար կրոնը համախմբման ու նորացման աղբյուր է, մյուս կողմի համար՝ հաշտ աշխարհի աչքին վարկաբեկիչ փաստ» (Պրոտալ, www.credo.ru. 2001.03.10):

Որս հեղինակ Բորիս Պոլոզովսկին այդ երեսույթը բացատրում է հետևյալ կերպ. «ԱԶԿ-ին եւ նրա առաջնորդ Ոնջեթ Թաիբ Էրդողանին հատկապես է Արեւմուտքի հետ մեծեցման ու ազատականության հանդեպ հակման միտումը: Նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններում հաղթանակից հետո Էրդողանը առաջին հերթին այցելեց մի շարք եվրոպական երկրներ, ԱՄՆ եւ Ռուսաստան: Թուրքիայում նշում են, որ Արեւմուտքը կանխատրամադրված չէ ԱԶԿ-ի հանդեպ, որը նպատակ է հռչակել «ուսուրլանական ժողովրդավարության» հաստատումը, իսլամի «փոխընթացում»

մոդերնիզմի հետ, Եվրոպային համարվումը: Միաժամանակ, ԱԶԿ-ն արդեն խորհրդարանում հաստատել է այն սահմանադրական դրույթը, համաձայն, որի բացառվում է ընտրությունների գաղափարական, անարխիստական եւ լույսների կամ Սահմանադրությանը հակասող գործողություններ անելուն խրախուսող ու սադրողողովածներով դատապարտված անձանց մասնակցության արգելքը: Այս փոփոխությունը Էրդողանին հմարավորություն տվեց մասնակցել 2003 թ. մարտի 9-ին կայացած լրացուցիչ խորհրդարանական ընտրություններին, քանի որ մինչ այդ նա չէր կարող դա անել 1998 թ. միջկրոնական պառակտիչ տրամադրություններ իրահերելու համար դատապարտված լինելու հանգամանքով: (Անկարան շտապով է Եվրոպայություն, քիվ 124 (1957), 24.06.2003, 2-փախիր իսլամական նախապարտատու են մեւրքիայի նոր սահմանադրության իսլապահիդը, Բորիս Պոլոզովսկի):

Դատելով հոչակված նպատակներից ու կարգախոսներից, «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը ծախսկենտրոն է, թեւեւ աջ գաղափարները նրա խնդիրներում առկա են, դատի որ իսլամական էրիկան ու իսլամական տնտեսության սկզբունքները հիմնված են (ինչպես եւ քրիստոնեական քաղաքական գաղափարախոսությունը) աջ գերակայությունների վրա: Ընդ որում, վերջինիս գաղափարները ինչ-որ օտար բաներ չեն աշխարհիկ թուրքական հասարակության համար: 1980-90-ական թվականներին Թուրքիայում զարգացան իսլամական տնտեսության հաստատությունները, Ն. Էրթաքանի քաղաքական գործունեության հետ: Բացի կրթական հաստատությունների լայն ցանցից, այդ շարժման շրջանակներում ստեղծվեցին ցեմաքների իսլամական պետության գաղափարները քարոզող համայնքներ ու տնտեսական հիմքերը: Չեմաքների զարգացման գործում կարեւոր դերակատարում ունեցավ իսլամական գաղափարախոս Փեթիսլապ Գյուլենը, որը ցեմաքների բազմաթիվ հողիցներն է այլ ձեռնարկությունների տեր է: Բնութագրական էր իսլամական կողմնորոշման գործարար մարդկանց ընկերության ստեղծումը (ՄՅՈՒՍՄԻ):

Համանման հաստատություններ են ստեղծվում նաեւ Եվրոպայի բուրջ արտագաղթածների շրջանում, որտեղից տարեկան ստացվում էր շուրջ 250 մլն դոլարի օգնություն: Մի շարք հեղինակների վկայությամբ, իսլամական տնտեսությունը Թուրքիայում բնութագրվում է բավականաչափ մեծ արդյունավետությամբ, նպաստում է հասարակական համերաշխությանը եւ կայուն շրջանը: Իսլամական գործարարները հեղինակավոր են հասարակության շրջանում իբրեւ հասարակական գաղափարների եւ իսլամական բարոյականության կրողներ:

Գարկ է նշել, որ Թուրքիայի մահմեդականների մեծ մասը դավանում է իսմիֆիզական մազհաթ (համիֆաթ) իսլամի առավել ազատական ուսմունքը, որը մի կողմից թույլատրում է աղաթի եւ ուրֆի լայն կիրառումը, մյուս կողմից՝ նպաստում է հասարակության մեջ գործարարության, նախաձեռնական ոգու, պատասխանատվության, հասարակական կարգի հաստատմանը: Պատասխանատու եւ ուժեղ բարձրագույն իշխանության դեպքում իսմիֆան նպաստում է ընկերային շարժումության զարգացմանը: Ի տարբերություն մյուս իսլամական «բեւեռի»՝ համբալի եւ հատկապես նրա ուղղափառ ձեւի՝ վահաբիզմի (իսլամական բողոքականություն), համիֆան մեծ հմարավորություն է ընձեռում իսլամում կարեւոր սկզբունք հանդիսացող «ըստ համանմանության մեկնաբանման», այլ քաղաքականությունների

նվաճումները յուրացնելու համար: Անկասկած, Անատոլիայի բնակչության մեծամասնության պատկանելությունը իսանիֆային նպաստել է թուրքիանյութային աշխարհիկ քաղաքական վարչակարգի հաստատմանը եւ կանխորոշել է կողմնորոշումը եվրոպայի հանդեպ: Հետեւաբար, քաղաքական իսլամի թուրք գաղափարախոսները խնդիր են ունեցել ոչ այնքան իսլամը հարմարեցնել արեւմտյան արժեքների համակարգին, որքան քաղաքական իսլամը համապատասխանեցնել թուրքական հասարակությանը, նրա կրոնաեթիկական ավանդույթներին: Ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում քաղաքական իսլամը կդառնա կարելոր, եթե ոչ գերիշխող գաղափարախոսությունը Թուրքիայում եւ վերջին տասնամյակի փորձերը պատահական երեւույթներ չեն:

Միանգամայն հնարավոր է, որ այդ միտումը ճիշտ է գնահատվում Թուրքիայի զինվորական շրջանակներում, որոնք թուրքական պետականության երաշխավորներն են եւ բավականին զուսպ են «Արդարություն եւ գարգացում» կուսակցության հանդեպ վերաբերմունքում: Հիշենք, որ վերջիններս խորհրդարանական հարթմանակին ճախորդել է ազգային անվտանգության խորհրդի քարտուղար գեներալ Թ. Քիլիչի հայտարարությունը, քննադատելով համար նպատակահարմար է վերակողմնորոշվել եվրասիայի պետությունների հանդեպ, եւ զուր են ԵՄ-ի անդամ դառնալու ցանքերը (Ք.Մ. Յազուրդին, խորհրդարանականության էվոլյուցիան Թուրքիայում, Մասնադական երկրները ԱՊՀ սահմաններին, «Կրաֆտ» հրատարակչություն, Մոսկվա 2002):

(Վ. Ի. Դանիլով, Իսլամական շարժումը եւ Թուրքիայի քաղաքական ճգնաժամը 90-ականներին, Մոսկվա):

2.25. «Նոր ահաբեկչության մասին կոնսպիրոլոգիական և մեկնակերպը եւ իսլամական արմատական կազմակերպությունները Թուրքիայում

Ինքզայգային քաղաքական թատրաբեմում «նոր ահաբեկչության մասին կոնսպիրոլոգիական մեկնակերպը դեռևս բավականաչափ հաստատված ու տարածված չէ: Ավելին, ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի առաջատար վերլուծական հաստատությունների հրապարակումներում այս մեկնակերպը նշվում է իբրև շատ ավելի վիճելի եւ հիմնականում կցկտուր շեղաբացում: Ասկայն այս մեկնակերպի քննարկման ժամանակ առավել վիճելի խնդիրն այն է, որ, այսպես կոչված, «նոր ահաբեկչությունը» նշվում է միայն իբրև վերջերս ստեղծված ահաբեկչական ու արմատական կազմակերպությունների գործունեություն: Վերլուծաբաններն ու հետազոտողները փորձեր են անում ընդհանրացնել այդ կազմակերպությունների հիմնական բնութագրիչները եւ գարգացման միտումները: Նրանց կապերն աշխարհում ու միմյանց հետ: Միաժամանակ, փաստորեն, ուշադրության չէին արժանանում տվյալ կազմակերպությունների «նոր նպատակները» եւ նրանց գործունեության աշխարհաքաղաքական ու գաղափարախոսական հիմքերը: Տպակորություն կա, որ Արեւմուտքի վերլուծական ու տեղեկատվական ծառայությունները անտեսում են այդ կազմակերպությունների աշխարհաքաղաքական ու գաղափարախոսական ակունքների սկզբունքային նորույթը եւ նպատակները: Արեւմուտքում ավանդական ահաբեկչական ու արմատական կազմակերպություններ են համարվում Խոլանդական հանրապետական բանակը, «Կարմիր բրիգադները», բասկերի երկրի քաղաքական ազգայնական կազ-

մակերպություններ, այդպիսիք հայկական Սփյուռքում, որոշ ծախ մարդ սիստական ու տրոցկիստական կազմակերպություններ Լատինական Ամերիկայում, Ֆրանսիայում, Իտալիայում, նաեւ Հարավ-արեւելյան Ասիայում, աջ արմատական կազմակերպությունները Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում եւ ուրիշներ: Նոր արմատական (որը հաճախ ահաբեկչական բառի հոմանիշն է) կազմակերպությունների շարքում են մի քանի տասնյակ քաղաքական միավորումներ ՌԴ-ում, ԱՊՀ երկրներում: Սակայն անզոր-ամերիկյան հետազոտողների կողմից նոր ահաբեկչական համարվող կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը իսլամական են: Մենք կփորձենք նշել տվյալ կազմակերպությունների որոշակի, իհարկե ոչ ամբողջական ցանկը.

1. Palestinian Islamic Jihad
2. Hizbollah of Libanen
3. Hamas
4. Mujahedin-e-Khald Organization (MKO)
5. Iranian Kurdush Democratic Party (Berfin)
6. Turkish Fazilat Party
7. Algerian Frount Islamigues armeses or GIA
8. Groupes Islamigues armeses or GIA
9. Muslim Brotherhood
10. Taliban
11. Wabbabi-TTakfri (Osama bin Laden)
12. Aum Shinkikyo s
13. Amerika From The Inside (Amerika min al-Dakhie)
14. Jamaat-e-Islami (Muslim partu in Pakistan)
15. Hizbollah of Turkie

Թվարկված կազմակերպությունները ժամանակային առումով իսկապես ուշ են ստեղծվել: Նաեւ, անկասկած է, որ այս կազմակերպությունները կրում են որոշակիորեն նոր գաղափարներ ու նպատակներ: Մեր ժամանակների համաձայն, մնաւ կարգի իսլամական ու ոչ իսլամական կազմակերպությունները ռոնապետական (տոտալիտար) են, քարոզում են որոշակի բնույթի աշխարհակարգ եւ իրենց գաղափարախոսության գերիշխանությունն աշխարհում: Չախ արմատական կազմակերպությունների ի հակադրություն Իսլամական միջավայրում եւ քրիստոնեական միջավայրում աջ քրիստոնեական կազմակերպություններին համանման (որոնք ընդհանուր առմամբ իրենց գործունեության արդյունքում ամփոփվեցին ազգայնական կուսակցությունների կաղապարում), տվյալ նոր ու գերազանցապես իսլամական կազմակերպությունները ձգտում են խուսափել ազգայնականությունից: Կախալանելով անդրազգային բնույթը: Կարելի է ենթադրել, որ նոր իսլամական ու ահաբեկչական կազմակերպությունների ստեղծման դրդիչ ազդակներինց մեկը իսլամական ժողովուրդների շրջանում ազգայնականության մարտահրավերներին «պատասխան» տալու եւ համընդհանուր քիսի հայտար կազմակերպական կառույցներ ստեղծելու անհրաժեշտությունն էր: Ռայտնի է, որ «Մուսլաման եղբայրներ» ավանդական կազմակերպությունների մնաւ կառույցները Սիրիայում, Եգիպտոսում եւ այլ երկրներում

«ազգայնացվեցին» եւ ըստ եւրոյան վերածվեցին քաղաքական ազգայնական կազմակերպությունների ավյալ երկրներում: «Չըզբոլլահ» կազմակերպությունը Լիբանանում եւ Թուրքիայում ի սկզբանե ստեղծվեց որպէս պաշտոնաւետ քաղաքական կազմակերպություն: Բազմաթիվ մահմեդական երկրներում զարգացան ժամանակակից ազգայնական քաղաքական կազմակերպություններ, որոնք ունեն ներազգային ուժեր եւ համերաշխ են արտերկրյա հավատակիցների հետ միայն մասամբ եւ անասիմանափակ կերպով: Կայուն անդրազգայնության եւ նպատակների համակողմանիության բացակայության դեպքում ամենաբնականաբար է պայքարել համաշխարհային իսլամական կարգի համար եւ պաշտպանել առաջատար մահմեդական պետությունների աշխարհաքաղաքական նպատակները:

Տվյալ կազմակերպությունների մեկ այլ կարեւոր բնութագրիչներից է նրանց սերտ կապը մահմեդական պետությունների ու նրանց հատուկ ծառայությունների հետ: Ընդ որում, այդ պետությունների ստեղծման եւ քաղաքական զարգացման գործընթացը թեւ ինքնին կապված է իսլամական գաղափարին, քայք պարզացել է ոչ կրոնական առջնորդների ու ոչ իսլամական քաղաքական կուսակցությունների ղեկավարությամբ: Առայժմ կարելի է միայն պնդել, որ նոր արմատական ահաբեկչական իսլամական կազմակերպությունների ստեղծման ու զարգացման ճախածեռնող պետությունների քվում են Սաուդյան Արաբիան, Պակիստանը եւ Արաբական Միացյալ Էմիրաթները: Արանց շարքին կարելի է դասել և՛ Սուդանը, քայք այդ երկիրը չունի իրական հնարավորություններ խոչըր կազմակերպություններ ստեղծելու եւ գործունեությունն ապահովելու համար: Պակիստանյան Pakistan's radical Islamists Pakistani secret services (SI) հատուկ ծառայությունը ստեղծել է եւ ղեկավարում է հետևյալ կազմակերպությունները. Jamaat-e-Islami, Lashkar-e-Toiba, Tehrik-e-Jihad, Al-Barz:

Ըստ եւրոյան, նոր իսլամական քաղաքական արմատական կազմակերպությունների շարքում են Թուրքիայի բոլոր մասն կազմակերպությունները: Թվարկեմք նրանց ցանկը եւ բնութագրերը:

Hizbolla, Թուրքական այս կազմակերպությունը համարժեք նպատակներ ու հայացքներ ունի լիբանանյան ու այլ երկրների նույնպես կազմակերպությունների նման, քայք ըստ երեսուրթին, որն է կազմակերպական կապեր չունի նրանց հետ: Այս կազմակերպությունը սերվել է Kurdish Islamist կազմակերպության վաղ փուլում, երբ Արդուաի Օջալանի համարյաապարանցի Հյուսիսեի Վելիոլուն նպատակադրվեց Թուրքիայի տարածքում ստեղծել բռնապետական բնույթի Քրդական իսլամական պետություն: Թուրքական հատուկ ծառայությունների ներկայացուցիչները պնդում են, որ այդ կազմակերպությունը նշանակալից ֆինանսական ու զինված օգնություն է ստացել Իրանից: Կազմակերպության զինյալները սովորել են իրանական ծանրաբեռներում: Սկզբնապես նրանք պայքարում էին ոչ թե թուրքական կառավարության, այլ ՔԲԿ-ի դեմ, որին համարում էին մարքսիստական գաղափարախոսական հակառակորդ: Որոշակի շրջանում «Չըզբոլլահի» անդամները հիմնական գործը դարձել երկրում արգելված ՔԲԿ-ի անդամների, համակիրների ու նրանց ֆինանսավորող թուրք գործարարների առնանգումներն ու սպանությունները: Թուրքական «Չըզբոլլահի» անդամները փաստորեն ՔԲԿ-ի հետ պայքարող հատուկ ստորաբաժանումների մասն էին կազմում: Դրա հաստատումն են թուրքական լրատվամիջոցների այն հաղորդումները,

որ 1990 թ. սկզբին Թուրքիայի նախկին վարչապետ Թանուտ Չիլերը, շրջանցելով օրենքը, Բաթման նահանգի վարչակազմի ղեկավարին զենք զենու համար իր գաղտնի հիմնադրամից հատկացրել է 2,7 մլն դոլար: Այնուհետև «Չըզբոլլահը» համաձայնագիր է կնքում ՔԲԿ-ի հետ ընդդեմ թուրքական կառավարության: 1998 թ. ընթացքում, երբ ՔԲԿ-ն սկսել է կորցնել իր ընկերային հենարանը եւ ազդեցության ոլորտը, «Չըզբոլլահի» դերը զգալիորեն անճեց: 1999 թ. կազմակերպությունը ընդլայնեց իր սկզբնական կազմակերպությունների ցանցը Արևմտյան Թուրքիայի զխավոր քաղաքներում, առաջին հերթին՝ Մամուրլում: Կազմակերպվեցին ֆինանսական պահուստներ իսլամական թիզմենաններից էրսայապիացիայի միջոցով, կուտակվեց զենք եւ լուրջ նախապատրաստություններ արվեցին 2001 թ. «զխավոր» զինված ելույթի համար: Թուրքական հատուկ ծառայությունները տեղեկություններ ունեն, որ «Չըզբոլլահի» շարքերում են 25 հազար անդամ ներառյալ 4000 զինյալներ: Ամենամեծ ուժերը կենտրոնացված են հարավային Թուրքիայում, որտեղ «Չըզբոլլահի» հավաքագրեց անդամներ ՔԲԿ-ի շարքերից, երբ 1998 թ. օգոստոսի 2-ին Օջալանը հռչակեց իրադրար: Հայտնի են «Չըզբոլլահի» հետևյալ զինված ահաբեկչական գործողությունները ընդդեմ Թուրքիայի. ա) Ստամբուլի արվարձանում անվտանգության ծառայության գրասենյակի դեմ, բ) Թուրքիայի 80 շրջաններում եւ 54 շենքերում կատարված ահաբեկչությունները, գ) 2400-4000 սպանություն, որոնցում կասկածվում են «Չըզբոլլահի» զինյալները, դ) ավելի քան 73 տեղական վարչակազմի ղեկավարների սպանությունը, որոնցից 60-ը եղել է վերջերս:

Վրաստան, Հայաստան և Ադրբեջան պետք է այցելի ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալ, այս պետությունների հետ ԱՄՆ-ի ռազմական հարաբերությունների հարցով զբաղվող Միքա Ռիկարդուլ: Այցի ընթացքում բացի ռազմական համագործակցության հարցերից, կքննարկվեն Իրանի խնդիրները: Վրաստանը և Ադրբեջանը Պենտագոնին կփորձեն համոզել, որ իրենց անվտանգության ապահովման միակ միջոցը կարող է լինել ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը տարածաշրջանում: Հայաստանը սիսակալի իր որոշում է ընդունել Հարավային Կովկասի պետությունների հավասարաչափ և հավասարակշիռ ռազմական օգնություն ցույց տալու պահանջներ ներկայացնելու մասին: Հայաստանը որոշում է ընդունել ընդդեմ Իրանի գործողության համար Հարավային Կովկասի տարածքի օգտագործումը բոլոր չտալու ջանքերին աջակցելու մասին: Ընդ որում, Հայաստանը հենվում է բավականին սահմանափակ քաղաքական ռեսուրսի վրա, որն է՝ իր պատրաստակամությունը մասնակցելու Հարավային Կովկասում անվտանգության ու կայունության ապահովման ԱՄՆ-ի և ԱՏՕ-ի ծրագրերին: Ըստերի կարծիքով, դա բավականին կասկածելի քաղաքականություն է, բայց երեւի միակ եղանակն է տարածաշրջանի աշխարհաքաղաքական դասավորումներում Հայաստանի տեղը հաստատելու համար:

Հարավային Կովկասում և Իրանում իրադարձությունների հնարավոր զարգացումների նշյալ սցենարները կարող են չարդարացվել և որոշ ժամանակ այն դառնալ ժամանակակից: Բայց այս սցենարները բացահայտում են ԱՄՆ-Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում որոշակի իրողություններ: Դժվար չէ նկատել, որ նշյալ ծրագրերը ենթադրում են ռազմական գործողությունների իրագործում առանց Թուրքիայի մասնակցության: Հենց այդ պատճառով ԱՄՆ-ը կարող է շահագրգռված լինել Ադրբեջանը Թուրքիայից սահմանազատելու մեջ:

3.4. Ադրբեջանի քաղաքական կուսակցությունները և Թուրքիայի շահերը

Ադրբեջանի առաջատար ընդդիմադիր քաղաքական կուսակցությունը «Մուսավաթն» է, որի անդամների կարծիքով, իրենց 1918-20 թթ. Ադրբեջանի կուսակցության ժառանգորդներն են: Դրա համար հիմքեր կան: Ժամանակակից «Մուսավաթն» բյուրոյ ազերիների ծայրահեղ ազգայնական, ադրբեջանական ազգայնական մտավորականության ծաղիկը ներկայացնող կուսակցություն է: Դեկավարում է մտավորական, հումանիտար կրթությանը Իսահամբադը, որն ունի հարուստ քաղաքական փորձ և նախագահական պաշտոնի առաջնորդ ընդդիմադիր թեկնածուն է: «Մուսավաթն» քարոզում է պանթյուրքիզմի գաղափարները, Դարաբադյան հարցի ռազմական լուծումը, ունի որոշակի հակաիրանական և հակառուսական կողմնորոշում: «Մուսավաթն» Ադրբեջանի պետական համակարգը պատկերացնում է թուրքական աշխարհիկ մոդելին հասնող պատասխան: Կուսակցությունը հակադասական ազդեցությունն ունի հասարակության բոլոր խավերում, նաեւ գավառներում: Խորհրդարանական ընտրություններում «Մուսավաթն» իրականում ստացավ ձայների ոչ պակաս 40 տոկոսը: «Մուսավաթն» Թուրքիայի գլխավոր շտաբի անալիզներում քաղաքական գործընկերն է, համագործակցում է Թուրքիայի ազգային գործողության կուսակցության («Գրոշ գայլեր»), որոշ կառավարման թուրքական հիմնադրամների, Թուրքիայի պանթյուրքիստական գործարարական շրջանակների հետ: «Մուսավաթն» Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի ու «Բրիթիշ Փեթրոլիում» քաղաքականության իրագործող է: «Մուսավաթն», փաստորեն, միակ կուսակցությունն է, որը նման ազդեցություն ունի բանակի վրա: Նրա նախածննդյանը ստեղծվել է ժողովրդավարական կոնգրես միջկուսակցական կազմակերպությունը, շնորհիվ որի՝ զգալիորեն ընդլայնվել է կուսակցության ընկերային հիմքը և քաղաքական աջակցությունը:

Ազդեցությանը երկրորդ կուսակցությունը Ադրբեջանում «Միլլի Իստիգլալ» է (Ադրբեջանի ազգային անկախություն), որը դեկավարում է խորհրդային ալյախի Էթիբար Մամեդովը: Սա տարբերվում է «Մուսավաթից», այն ազատական, եվրոպական ոճաբանության կողմնակից և ազատական արժեքներ քարոզող կուսակցություն է: Ազդեցություն ունի քաղաքային բնակչության խավերի շրջանում, ժողովրդավարական չունի գավառներում: Քարոզում է երկրի շուտափույթ համարվումը Արեւմուտքին: Մեծ հեղինակություն ունեն Արեւմուտքում, վատախուրդ է ներշնչում արեւմտյան դիվանագետներին, հավակնում է Ադրբեջանի նախագահի պաշտոնին, ապահովված է ֆինանսական միջոցներով, սնվում է արեւմտյան ֆինանսական հիմնադրամներից, ունի լրատվամիջոցներ: Էթիբար Մամեդովը փորձում է արգելիլ ծայրահեղ ազգայնական միտումները, ի տարբերություն Իսահամբադի: Այս կուսակցությունը Թուրքիային չի համարում իր գլխավոր գործընկերը գերադասելով կապերը Եվրոպայի ու ԱՄՆ-ի հետ: Թուրքիան հետաքրքրված չէ մի կուսակցությամբ, որի դեկավարները ձգտում են լինել ավելի եվրոպացի, քան եվրոպացիներն են:

Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյի մահից հետո նրա դեկավարած Ադրբեջանի «ժողովրդական ճակատ» կուսակցությունը պատակովեց երկու մրցակից կուսակցությունների: Մի մասին ընդունված է անվանել «դասականներ», որի դեկավարն է Հասան Հասանովը: Չալիմխան Մամեդովը՝ «Դասականներ» չունեն վատ արտահայտված առաջնորդ, որը կարող լինի հավակնել երկրի նախագահի պաշտոնին: «Ժողովրդական ճակատի» այս թեւ զգալիորեն կորցրեց իր հեղինակությունը և կազմալուծվեց, սակայն առաջնորդները որոշակի խարիզմա դրամական միջոցներ ունեն: «Դասականները» գաղափարախոսությամբ և քաղաքական խնդիրներով Հատ մնան են «Մուսավաթին» և սերտորեն համագործակցում են նրա հետ: Թուրքիան «ժողովրդական

տի» երկու բեւերին համարում է իր քաղաքական գործընկեր Ա. Էլչիբեյի կուսակցությունը, սակայն հազիվ թե լուրջ գրավ դնի «Ժողովակառի» վրա:

Մայիսինում կար դաշինք «Մուսավաթի», «Միլլի Իստիզլալի» և «դասականների» միջև ժողովրդավարական կոնգրեսի շրջանակներում: Թուրքական դեպիմատուրը ջանում էր ամրապնդել այս միությունը, սակայն «Մուսավաթի» առաջնորդության պայմանով, ինչը չհաջողվեց: Վերջինս բոլորտեց նախագահական ընտրությունները, ինչը քննադատության ենթարկվեց «Միլլի Իստիզլալի» և «դասականներից» կողմից: Բացի այդ, Իսա Ղանմարը և Էթիբար Մամեդովը բավականին հավակնուտ քաղաքական գործիչներ են և միյանց չեն զիջում սապարեզը: Բացի այդ, «Մուսավաթին» հաջողվեց իր կողմը գրավել դաշինքի ավելի մանր կուսակցություններին ու խմբերին: Ե. Մամեդովը միշտ զգուշացել է Ի. Ղանմարի և նրա ազդեցիկների մայրաքաղաք ազգայնական կեցվածքից: Որոշակի իմաստով երեք կուսակցությունների միությունը դադարել է լինել այդպիսին, և ժողովրդավարական կոնգրեսը վերածվել է մուսավաթաբան կազմակերպության:

Այսօր նախագահական ընտրությունների մայրտեղին, Ի. Ղանմարը և Ե. Մամեդովը առաջադրել են իրենց թեկնածուներին, վարում են համապատասխան քաղաքականություն և քարոզչություն, փորձում են ստանալ արտերկրյա ուժերի և կառավարությունների աջակցությունը:

Բավականաչափ ազդեցիկ է «Ժողովակառի» «բարեփոխիչների» կուսակցությունը, որն ունի վառ արտահայտված առաջնորդ Ալի Քերիմլին, որը երկուստարդ ու հավակնուտ գործիչ է, նույնպես նախագահական պաշտոնի հավակնորդ: Ի տարբերություն «դասականների», վերջիններս պակաս ազգայնական են արմատական, ըստ էության պահպանողական ազգայնական կուսակցություն են, չափավոր աջ համայցներով: Ներկայիս քաղաքական քառարեքնում «բարեփոխիչները» իսլամադոմական են «Միլլի Իստիզլալի» հետ վերջինիս զիջելով բոլոր մակարդակներում:

Հասարակության շրջանում մեծ ժողովրդականություն է վայելում Ադրբեջանի նախկին նախարար Իլյաս Իսմայիլովը, որը ղեկավարում է «Ադալյաթ» կուսակցությունը: Նախկինում սա կազմում էր ժողովրդավարական կուսակցության մասը, որը ղեկավարում են ֆինանսավորում է վտարանդի գործիչ Ռասուլ Գուլիեյը խորհրդարանի նախկին խոսնակը, որը այժմ բնակվում է ԱՄՆ-ում: «Ադալյաթը» հեղինակություն ունի իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների շրջանում, սակայն Ի. Իսմայիլովը պատկանում է ընդդիմադիր գործիչների երկրորդ էջերին և լրջորեն չի կարող հավակնել նախագահի պաշտոնին: Ուշագրավ է, որ նա սերտ կապեր ունի նախկին նախագահ Ալյազ Մութալիբովի հետ:

Այժմյան վարչակարգի արմատական հավառակողդեներից միակնորած ժողովրդավարական կուսակցությունը նախագահի պաշտոնին առաջադրում է Ռ. Գուլիեյին: Երկար ժամանակ վարչակազմը և ԱՄՆ-ի առանձին խմբավորումներ, որոնք կապված էին նավթային քիմիայի, հետաքրքրված էին այս գործիչով: Փորձագետների կարծիքով, սակայն, այսօր այդ առաջնորդությունը չկա, քանի որ ԱՄՆ-ում առեսարակ նվազել է հետաքրքրությունը Ադրբեջանի նկատմամբ: Երկարատե մի շրջան 100 միլիոն դոլարի կարողությամ տեր Ռ. Գուլիեյը առատաձեռնորեն ֆինանսավորում էր բազմաթիվ քաղաքական ուժերի, նաեւ «Մուսավաթին» և «Միլլի Իստիզլալի» ու ընդդիմադիր մասնավոր հուսավոր վերջիններիս աջակցությունը իր քաղաքա-

կան կարիերային: Սակայն վերջերս իր տեղի չի ունենում: Նա այսուհետ ֆինանսավորում է միայն իր կուսակցությանը և փորձում շահագրգռել որոշ մանր կուսակցությունների ու թերթերի: Ժողովրդավարական կուսակցության ղեկավարը քիչ ժողովրդականություն վայելող գործիչ (գլխավոր քարտուղար) Սարգար Ջալալովին է, որը կրում է կազմակերպական աշխատանքի որջ բեռը: Կուսակցության գործիչները հայտարարեցին, որ նախագահական ընտրությունների նախադրյալին Գուլիեյը կվերադառնա Ադրբեջան, ինչը թեկնած է, քանի որ երկուս վերջինիս նկատմամբ հարուցված է քրեական գործ կոռուպցիայի ու պետական միջոցների յուրացման մեղադրանքով: Այս կուսակցության մյուս հավակնուտ գործիչներն են քարտուղարներ Ն. Ջաբիեյը, Ա. Գուլիեյը: Ադրբեջանում բավականին շատ են Ռ. Գուլիեյի կողմնակիցները, սակայն դա ակնհայտորեն բավարար չէ նախագահի պաշտոնի հավակնորդ լինելու համար:

Փաստորեն, համարժեք վիճակում է նաեւ Ադրբեջանի առաջին նախագահ Ալյազ Մութալիբովը, որն արդեն 12 տարի ապրում է Մուսկվայում: Նա նույնպես ունեւոր մարդ է, բայց ոչ այնչափ, որքան Ռ. Գուլիեյը և ունի ռուսաստանաբնակ ադրբեջանական համայնքի որոշ խմբավորումների ու վարչակազմի աջակցությունը: Ի տարբերություն Ռ. Գուլիեյի, որի համեմունք անդադարորեն պահանջում է Ադրբեջանը ԱՄՆ-ից, 1997 թ. ի վեր Մութալիբովի հարցով նման պահանջներ Ռուսաստանին չեն առաջադրվում: Ադրբեջանում Մութալիբովի կողմնակիցները բավականին աշխուժ են և պահանջում են թուլատրել իրենց ղեկավարի անարգել վերադառնալ: Ադրբեջանում ստեղծվել է Քաղաքացիական միասնություն կուսակցությունը, որը ներկայացնում է նրա շահերը, բայց դեռ չի կարողանում ժողովրդականություն վայելել և ազդեցություն ձեռք բերել: Ռուսաստանյան որոշ փորձագետներ կարծում են, որ Մութալիբովը որոշակի հնարավորություններ ունի հավակնելու նախագահական պաշտոնին (հարցը այն է, թե երբ): Սակայն նկատի առնելով իրադրությունների ընթացքը, Մութալիբովը նման հեռանկար չունի: Նրա կարելու հենարանը ՌԴ-ում Իլյար Ղազմովի գլխավորած «Ադրբեջանցիների համառուսաստանյան կոնգրես» կազմակերպությունն է:

Գրվել է նշել, որ Ադրբեջանին բնորոշ է «ներգաձած» անձանց հոծ բանակը, որը պատրաստ է զոհողությունների ռիսկի՝ հանուն անձնական պահանջների բավարարման: Այդ առնչությամբ Ռ. Գուլիեյի և Ա. Մութալիբովի գաղափարախոսական-քաղաքական հիմքը բնակչության մի մասի բողոքավոր կեցվածքն է, ինչը չի կարող քաղաքական հաջողություն դառնալ:

Գարաբերականորեն ակտիվ քաղաքական մյուս կուսակցություններն են.

- «Ընկերային-ժողովրդավարական կուսակցությունը» ղեկավարներ Արազ Ալիզադե և Ջարդուշտ Ալիզադե,
- «Թեկնայուլ» ղեկավար Թեյուբ Ալիեւ,
- «Ազատական ժողովրդավարական կուսակցություն» ղեկավար Ֆուադ Ալիեւ,
- Ազադլիգ (Ազատություն) Ահմեդ Օրուջ,
- «Միասնական Ադրբեջան» Թերաթ Սելիով,
- «Վախդատ» Թայիր Քերիմլի,
- «Ժողովրդական կուսակցություն» Փանահ Հուսեյնով,
- «Իսլամական կուսակցություն» Ալիբրամ Ալիեւ (դատապարտված է),

- «Բարև եւ Բարժի գյուղեր» Ղանլար Իրրահիմով,
- «Աղրիզաղ» Մատիղ Մուսաաֆանե,
- «Յուրդաշ» Մայիս Մաֆարի,
- «Ժողովրդական ազատություն» Վալեն Միրզոբե,
- «Ազատական կուսակցություն» Լեյլա Շուքբե Գաջեևա
- «Ազատական-ընկերակարական կուսակցություն» Գաջի Արդուլ,
- «Համայնակարական միասնական կուսակցություն» Մուսա Թուկանով,
- Մայալ Մայաթով,
- «Կովկասը մարքսիզմ-լենինիզմի պատֆորմին» Թեման Նուրուլանե:

Այս կուսակցությունները իրական ազդեցություն չունեն հասարակության մեջ, այլ ավելի շուտ փոքր խմբավորումներ են, որոնց շարքերում կան 100-500 կանտիվ անդամներ են մինչև 1000-2000 համակիրներ: Նույնիսկ այս կուսակցությունների միավորումը նրանց զգալի քաղաքական հաջողություն չի բերի: Որպես ընդդիմադիր կուսակցություններ նրանց խնդիրն է աջակցությունը «Մուսավաթին» կամ «Միլլի Ռոստալալին»: Հատկանշական է, որ այս կուսակցությունների մեծ մասը կոտլուրմու կարողությունը, իսկ որոշները նպատակ են դրել միջոցներ գտնել իշխանությունների հետ համագործակցելու համար:

Աղբրեջանի քաղաքական-կուսակցական կյանքում կան նաեւ մի շարք միջկուսակցական կազմակերպություններ՝ ստեղծված ընդդիմադիր կուսակցությունների գործունեության համակարգման համար. «Աղբրեջանմետ Ռուստի միավորում», «Ընդդիմության համակարգող կենտրոն», «Ժողովրդավարական կոնգրես»: Սակայն այս կազմակերպությունները ավելի շատ ծեւական են եւ ժամանակավոր: Ուշագրավ է ԱՄՆ-ի դիրքորոշումը Աղբրեջանի նախագահական ընտրությունների եւ անհասարակ քաղաքական պայքարի առումով: Վաշինգտոնում ճշտել են այն հավանորոգների անունները, որոնց ԱՄՆ-ը պատրաստ է աջակցել այն դեպքում, եթե նախագահ Գ. Ալիևը չմասնակցի 2003 թ. հոկտեմբերի ընտրություններին: Ամերիկյան վարչակազմն ունի իր «աղբրեջանական բիզնես», որը ծրագրեր է մշակում քաղաքական ղեկավարության համար: Թիմի կազմում են Աղբրեջանում ԱՄՆ դեսպան Ռոսս Ռեյլսոնը, եւ այդ թիմն ունի իր հովանավորները: Գ. Ալիևից հետո ԱՄՆ-ը պատրաստ է պաշտպանել նախ Իլհան Ալիևին: Վաշինգտոնը դրական է վերաբերվում նաեւ Ալի Քերիմլիին, Իսա Դամբարլին եւ էթիբար Մամեդովին: ԱՄՆ-ը քացասաբար է վերաբերվում Այազ Մուքալիբովին եւ Ռ. Գուլիեին: Գ. Ալիևի վարչակազմում են կան երկու գործիչներ, որոնց ամերիկացիները զգուշավոր են վերաբերվում: Առաջինը նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհտիբեյն է, մյուսը ԱՄՆ ղեկավար Նամիկ Աբասովը: Այն դեպքում, երբ Գ. Ալիևը թեմանաժու չլինի կամ պաշտոնաթող լինի նախքան ժամկետի լրանալը, Տ. Քուչի վարչակազմը կծգոտի անցումային փուլը դարձնել թափանցիկ ու վերահսկելի:

Մուսկվայանես Ս. Մուքալիբովը հազվի թե կարող է հույս ունենալ ստանալու Վաշինգտոնի աջակցությունը: Ինչ վերաբերում է Ռ. Գուլիեին, հայտնի է, որ Արեւմուտքի համար հաստատուն դիրքեր չի գրավել: Հնվյանաբար չպետք է Վաշինգտոնից ակնկալել, թե իշխանությունների վրա ճնշում կգործադրվի նախկին նախագահին ու խոսնակին «հայրենադարձելու» համար: Ժողովրդավարական եւ Քաղաքացիական միասնություն կուսակցությունները Ռ. Գուլիեին եւ Ս. Մուքալիբովին վերադարձնելու համար պետք է փորձեն գտնել այլոց օգնությունը արտերկրում: Հավանաբար սա է

Ռ. Գուլիեի եվրոպական այցերի պատճառ, որին նրա կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս: Նա դիմել է Եվրադատարանին իր հանդեպ մեղադրանքները վերացնելու համար: Սակայն ընտրությունները մտնեցում են, իսկ նախկին խոսնակի հայցի քննարկման ժամկետի մասին դեղին հայտնի չէ: Ռ. Գուլիեյը դեռեւս Լոնդոնում է եւ հանդիպումներ է ունենում Ստասուրոզուն ու Փարիզում՝ Եվրաստրիորդի կողմից աղբրեջանական իշխանությունների վրա ճնշում ապահովելու համար: Ինչ վերաբերում է Վաշինգտոնի զգուշավորությունը հարուցած մյուս երկու դեմքերին, ապա դրանով արտահայտվում է վարչակազմի ցանկությունը Աղբրեջանում իշխանափոխության ընթացքում տեսնել քացասապես երկրի ազդեցիկ, օրինական քաղաքական կառույցների ներկայացուցիչներին և դեմ է «Ենի Աղբրեջան», «Ժողովակա», «Մուսավաթ» եւ «Միլլի Ռոստալալ» կուսակցությունների:

Ամերիկյան ու եվրոպական ազդեցիկ կազմակերպությունները IFES-ը եւ մյուսները, դժգոհում են նախընտրական գործընթացներից եւ կանխատեսում լուրջ խախտումներ ընտրությունների ընթացքում: Աղբրեջանի քաղաքական կուսակցություններից առավել սերտորեն Ռուսաստանի հետ համագործակցում է Ա. Մուքալիբովի խմբավորումը: ՌԴ-ի հետ հարաբերություններ է ձգտում հաստատել նաեւ «Ադալաթի» ղեկավար Բ. Իսմայիլովը: Այդ հարցին դրական է վերաբերվում Ընկերային Ժողովրդավարական կուսակցության նախկին առաջնորդ Արազ Ալիզադեյն եւ նույն այդ կազմակերպությունը: Նույնախիսի հուսեր ունեն նաեւ համայնակարական կուսակցությունները (ընդամենը հինգ կուսակցություն): Սակայն ռուսաստանյան ուժերը լուսանցքային վիճակում են եւ այդպես էլ չի վիճակի չեղան կազմակերպել ազդեցիկ շարժում: Հավանաբար այս կուսակցությունները կմիանան, քայց նույնիսկ տվյալ հանգամանքներում ռուսաստանյան ուժերը չեն կարող հուսալ քաղաքական հաջողության մասին: Այս կուսակցությունների նշանակությունը անփոփոխ կերպով կնվազի: Ներկայումս ռուսաստանյան ուժերի առավել լուրջ հեռանկարը արտաքին քաղաքական ճնշումն է իշխող վարչախմբի վրա: Բայց նաեւ պետք է հասկանալ, որ այս խմբավորումներին միայն մեծ վերապահությամբ կարելի է համարել ռուսաստանյան:

Ուշագրավ է Թուրքիայի ազդեցությունը Աղբրեջանի իրավիճակի վրա եւ նախընտրական գործընթացներում կապված Իլյամաններին կուսակցության իշխանության գալու հետ: Թուրքիայում չափավոր իսլամականների գաղափարախոսական հիմքը «Նուրչուլարն» է, այսինքն՝ Սայիդ Նուրսի-նի՝ հոգեւորական գործիչ գաղափարախոսական-ընկերային հայեցակարգը, որը քարոզում է չափավոր իսլամական գաղափարախոսական ղեկավար Ֆարուկահ Գյուլենը: Այս գաղափարախոսությունը լայնորեն քարոզվում է Աղբրեջանում, Կենտրոնական Ասիայում եւ ՌԴ որոշ շրջաններում: Չի կարելի ասել, եւ այս կուսակցության քաղաքական ուղեգծի հիմքը պանթուրքիզմն է, բայց այդ համադրույթը քաղաքական ծրագրի կարելու կետն է: Կուսակցության ղեկավար Ռեբեք մայիֆ Էրողդանի այդը Աղբրեջան հիասթափեցրեց ընդդիմադիր կուսակցություններին եւ նույնիսկ պաշտոնական կազմակերպություններին: Ռ. Էրողդանը, փաստորեն, չցավացավ հանգամանակից քննարկել Ղարաբաղյան հիմնախնդիրը, չմիջամտեց ներքաղաքական գործընթացներին եւ որեւէ գնահատական չտվեց: «Մուսավաթը» հույս ուներ համագործակցություն հաստատել, սակայն պատասխան ազդանշաններ չեղան: Էրողդանը գերադասեց քննարկել տնտեսական խնդիր-

ները Թուրքիային Կասպյան ավազանում անհրաժեշտ է մատակարարման հարցերով: Թուրքիան այսօր չի կարող Ադրբեջանին առաջարկել տնտեսական մեծ օգնություն և նրա փոխարեն լուծել Ղարաբաղյան հարցը: Այդ պատճառով այժմ եւ հետագայում ադրբեջանական ընդդիմությունը պետք է իր քաղաքականությունը կառուցի ոչ միայն Թուրքիայի, այլեւ եվրոպական կառույցների եւ ԱՄՆ-ի դերերի հաշվառմամբ: Այդ իմաստով իրավացի էր ներկայիս նախագահական թեկնածու Է. Մամեդովը, որը վաղօրոք նախագզուլացնում էր Արեւմուտքին հենարան դիտելու անհրաժեշտության մասին, այլ ոչ միայն գերազանցապես Թուրքիայի, ինչպես ամեն էլ «Մուսավաթը»:

Իշխող վարչակարգը առայժմ ունի զգալի քաղաքական ռեսուրսներ եւ կարգեր իշխանությունը պահելու համար: Շատ բան կախված է կլիմի Ադրբեջանի տնտեսական ու ընկերային վիճակից: Հատկապես այդ գործոնները, այլ ոչ թե Ղարաբաղյան խնդիր է, հիմնական ու առաջնային բնակչության համար: Այսպես թե այնպես, երկրի քաղաքական վարչակարգը ավելի ու ավելի կկողմնորոշվի դեպի Արեւմուտք: ՌԴ-ի համար նպատակահարմար է ուրուշակի երկարամասն կետ պարտավորություններ շտամծնել Ադրբեջանի նկատմամբ, այլ ձգտել հավասարակշիռ բարեկամական հարաբերությունների աշխարհատնտեսական խնդիրների լուծման նպատակով, որում ավելի շահագրգիռ է Ադրբեջանը: Չնայած վարչակարգի եւ հասարակության զգալի մասի ձգտմանը Արեւմուտքի եւ Թուրքիայի հետ համարկվելու հարցում, Հ. Ալիևի տարբեր հայտարարություններն ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում այս փուլում ՌԴ-ի համար գերադասելի է աջակցություն ցույց տալ Հ. Ալիևի «ընտանիքին»: Նույնը նպատակահարմար է նաեւ Իրանի ու Հայաստանի համար: Այս վարչակարգի այլընտրանքը նոր իշխող խմբի ձեռավորումն է, որը ՌԴ-ի հանդեպ ավելի թշնամական քաղաքականություն կկարգի: Ըստ էության, Ադրբեջանում կարող է ստեղծվել Ռուսաստանի թշնամի իշխանություն: Չեչենիայի նմանությամբ: Սակայն պետք է հաշվի առնել եւ այլ կարծիք: Ներկայիս վարչակարգը փաստորեն կատարել է իր Ռուսաստանի նկատմամբ թշնամական քաղաքականություն վարելու առաքելությունը, եւ որն էլ այլ կատավարություն չի կարող անել ավելին, քանի որ դրա համար անհրաժեշտ պայմանները չկային: ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն եւ Թուրքիան պատրաստ չէին ընդունել Հ. Ալիևի բոլոր առաջարկները:

ԱՄՆ-ը եւ Թուրքիան Ադրբեջանում ունեն համընկնող, բայց եւ նկատելիորեն տարբեր նպատակներ: Ամերիկացիները ստիպված են հաշվի մտնել «Մուսավաթի» ազդեցության հետ, բայց ակնհայտորեն չեն ցանկանա այդ աջ ազգայնական կուսակցության իշխանության գալուստը: Որոշ առումով պատճառներից մեկը նաեւ «Մուսավաթի» կապերն են բրիտանական կապիտալի հետ, ինչպես եւ սերտ կապերը Թուրքիայի հետ: ԱՄՆ-ը Ադրբեջանի իշխանությունների գլուխ չի ցանկանում տեսնել քաղաքական ուժեր, որոնք քարոզում են ծայրահեղական գաղափարներ եւ պատրաստ են իրագործել արտաքին ռազմական ագրեսիա: ԱՄՆ-ը գերադասում է Հարավկովկասյան երկրներում իշխանության ղեկին տեսնել գործնականաշտներին: «ԵՄԻ Ադրբեջան» կուսակցությունը, ԱՄՆ-ի կարծիքով, այն ձեռնտու տարբերակն է, որն անհրաժեշտ է իրենց մոտակա ապագայում: Այս խմբավորումը եւ նրա ղեկավար Հ. Ալիևի «ընտանիքը» փաստորեն երբեւիցե ձեռնտու չի եղել Թուրքիային: Սակայն ԱՄՆ-ի համար ընդունելի ազատական-ժողովրդավարական ուժերն Ադրբեջանում ազդեցիկ չեն եւ իրական հնարավորություններ

չունեն հաջողության հասնելու նախագահական ու խորհրդարանական ընտրություններում: «Ժողովրդավարության ազգային ինստիտուտում», որը քաղաքական նախագծեր է մշակում նորանկախ պետությունների համար, ձեռավորվել են որոշակի գնահատականներ Ադրբեջանի քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Այդ գնահատումների համաձայն, Ադրբեջանում կարող է երկար ժամանակ գերակայել ազգայնական-քաղաքական խմբավորումը, որը կհամագործակցի Թուրքիայի նույնանուն ուժերի հետ: Բնականաբար, դա ավելի կմեծացնի լարվածությունը տարածաշրջանում եւ կպատճառե էներգահարողակցության նախագծերին: Թուրքիան ձգտում է Ադրբեջանում իշխանության բերել աջ ազգայնականներին ոչ միայն իր աշխարհաքաղաքական հավակնությունների պատճառով: Թուրքիան պետք է մտ ժամանակներս լուծի քաղաքականապես հուսալի աղբյուրներից էներգապաշարներ ստանալու հիմնահարցերը: Սակայն Անկարայում ըստ երեւոյթին հասկացան, որ այդ խնդիրը կարելի է լուծել միայն Ադրբեջանի նախկին ու զագի պաշարները լիովին վերահսկելու պայմանով, այսինքն կատարել այն դերը, որն ստանձնել է Մեծ Բրիտանիան: Թուրքիայի եւ Իսրայելի, իսկ մյուս կողմից Մեծ Բրիտանիայի միջեւ ընթանում է ծածուկ պայքար կասպյան նավթի ու գազի փոխադրելու համար: Այս դիմակայությունը, որն առկա է Մեծ Բրիտանիայի ու Թուրքիայի միջեւ, լրացուցիչ բաղադրիչ է թուրք-աներիկյան տարածայնություններում:

ՎԵՐՋԱԲԱՆ

ԱՄՆ-ում տեղի են ունենում թուրք-ամերիկյան հարաբերությունների վերանայման հետ կապված գործընթացներ: Ըստ էության, Սենատում են Կոնգրեսի ստորին պալատում թուրքական լոբբին են թուրքական խմբավորումը կազմալուծվեցին: Լրատվամիջոցներում փաստորեն չկան թուրքամետ հողավաններ ու նյութեր: ԱՄՆ-ում են Կոնգրեսի հետախուզության ու պաշտպանության հարցերով կոմիտեերը առաջարկում են պաշտոնապես վերանայել Թուրքիայի հետ հարաբերությունները եւ ԱՄՆ-ի կողմից չեղյալ համարել բոլոր ոչ պաշտոնական պարտավորությունները Թուրքիայում անվտանգությունն ու կայունությունը պահպանելու հարցում: Ուշագրավ է, որ հենց Գանրապետական կուսակցությունն է առավել արմատական հակաթուրքական տրամադրություններ արտահայտում: Միաժամանակ, առաջարկվում է 3-5 տարվա ընթացքում վերանայել ռազմակայանների նշանակությունը Թուրքիայում ու Միջին Արեւելքում: ԱՄՆ-ի ռազմավարության մեջ Թուրքիայի նշանակության քննարկումներում ինչ-որ անցումային փուլի առկայության մասին տպավորությունն արդեն սխալ է: Իրանում այդ սկզբունքային խնդիրների քննարկման փուլն արդեն անցել էր: ԱՄՆ-ի Կոնգրեսի, վարկակազմի եւ ընտրախափի համար արդեն վերջնականապես պարզ է, որ Թուրքիայի հավատարմության պատմական փուլն Արեւմուտքին անցել է, եւ անհրաժեշտ է շտապ իրագործել ուժերի վերաբաշխում Միջին Արեւելքում: Այս միտումի զարգացման մեջ հատուկ նշանակություն ունի Պենտագոնի դիրքորոշումը: Գեներալիտետի տրամադրությունը խիստ կատեգորիկ է, եւ նրանք պահանջում են ռազմաքաղաքական հարաբերությունների շուտափույթ վերանայում Թուրքիայի նկատմամբ: Բնորոշ է, որ պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդը, որն ավանդաբար հրեա-թուրքական լոբբիի եւ Պենտագոնի թուրքամետ գործիչների ազդեցության տակ էլ, նույնպես հակաթուրքական դիրքորոշում ունի: Քաղաքական եւ վերլուծական շրջանակներում ԱՄՆ-ի ընտրախափային ակումբներում նկատվում է Թուրքիայի վերաբերյալ Դ. Ռամսֆելդի խոսքերի միտումնավոր արտահոսք: Ըստ այդմ, Թուրքիայի դեբի վերանայման հարցը վճռված է, սակայն անհրաժեշտ է պատմել այդ երկրին, որը 1945 թ. հետո իր գոյությանը պարտական է ԱՄՆ-ին: Սակայն հրեական «նրպախիպանոդական» խմբավորումը Պենտագոնում Պոլի Կոլֆոլիցը, Դուգլաս Ֆեյթը, Ռիչարդ Փեյլը, Զարգ Բրաուքիսիները, Ուիլյամ Քրիսթլը, ինչպես նաեւ պաշտոնական քաղաքագետ Ռոբերտ Կազանը, ԱՄՆ փոխնախագահի աշխատակազմի ղեկավար Լյուիս Լիքրին, Պենտագոնի ազդեցիկ կառույցի «Defense Policy Board» անդամները եւ այլք փորձում են ակտիվ միջոցներ ձեռնարկել Թուրքիան ամերիկյան ռազմավարության ուղեգիծ վերադարձնելու համար: Թեեւ Թուրքիայի դեմ Պ. Կոլֆոլիցի կտրուկ ելույթում հատկապես նա է այդ երկրի հետ հարաբերությունների բարելավման հիմնական նախաձեռնողը: Այս ձեռնարկման հիմքում են տեսլայլվել է.

1. Փաստացիորեն Պետքարտուղարությանը մեկուսացնել Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման ոլորտից եւ այդ հարաբերությունները

- ըլ լիովին կենտրոնացնել Պենտագոնում:
- 2. Հզորացնել ԱՄՆ-ի ռազմական կցորդությունը Թուրքիայում, ստեղծել տվյալ ապարատի շրջանակներում 3-4 խմբեր քաղաքական նախագծերի մշակման ու կիրառման գործում:
- 3. Լրացուցիչ կապեր հաստատել արեւմտամետ քաղաքական խմբավորումների հետ եւ ջանքեր գործարդել նրանց ազդեցության աճի համար Թուրքիայում:
- 4. Ամերիկյան լրատվամիջոցների համար կազմակերպել նոր ծրագրեր Թուրքիայի նկատմամբ կողմնորոշմամբ ներառյալ տիեզերքի հնարավորությունները:
- 5. Հատուկ աշխատանքներ իրագործել Թուրքիայի դրամատների ու գործարարների հետ՝ նրանց ընդդիմադիր գործունեության մեջ ներառելու համար:
- 6. Կազմակերպել էներգահարողակցային նախագծերի իրագործման արգելափակումը թուրքական կառավարությանը շանտաժի ենթարկելու նպատակով, մի շարք միջոցառումներ իրագործել Իրանից ու Ռուսաստանից այլընտրանքային էներգապաշարների նախագծերի իրագործումը խոչընդոտելու նպատակով, օգտագործելով ներդրումային խմբերի հնարավորությունները:
- 7. Գործնական հողի վրա դնել ԱՄՆ-ի գերակայելի հարաբերությունները Թուրքիայի ռազմական շրջանակների հետ նաեւ քաղաքական ոլորտում, Թուրքիայում զինվորականների ազդեցությունը ուժեղացնելու համար՝ ի կազմալուծել կառավարությանը:
- 8. Արագացնել ռազմաքաղաքական ծրագրերի իրագործումը, որոնց նպատակն է զինվորական շրջանակների ազդեցության մեծացումը արտաքին քաղաքականությունում՝ ներառյալ հարաբերությունները Հունաստանի, Սիրիայի եւ Վրաստանի հետ, ինչը նախատեսում է Թուրքիայի ռազմա-տեխնիկական զարգացման ծրագրերի ընդլայնումը Վրաստանում (օդահենակայանի ստեղծում, սահմանապահ ծառայության զարգացում), կադրերի պատրաստում, Թուրքիայի ներկայությունը Վրաստանում):
- 9. Թուրքիայի շտապ անդամակցումը ԵՄ-ին, որպես նրա նկատմամբ վերահսկողության մեծացման ուղի, տնտեսական խնդիրների լուծման եւ Թուրքիայի մասնակցությունը Ֆրանսիայի ու Գերմանիայի դիմակայությանը եվրոպական քաղաքական դաշտում:

ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներում չեն րացառում, որ Պենտագոնը եւ ԿԿԻՆ նախապատրաստել են եւ կիրառեն իրագործել ռազմական պետական հեղաշրջում Թուրքիայում: Այնուհանդերձ, ԱՄՆ-ի վերլուծաբանների գերակշիռ մեծամասնությունը կարծում է, որ Պենտագոնի այդ նախաձեռնությունները բոլորովին անընդունելի են եւ անիմմ: Լույնիսի իրենց նորպահանջողական համարող վերլուծաբանները գզուշորեն են վերաբերվում նման ծրագրերին: Վերջերս Կոնգրեսում բազմիցս ելույթներ ունեցող Դ. Ռամսֆելդը եւ իր տեղակալները բախվեցին սենատորների ու կոնգրեսականների դիմադրությանը Իրանի, Իրաքի ու Թուրքիայի հարցերում:

2003 թ. վերջին ամիսներ է ասել, թե ինչպես կզարգանան իրադարձությունները, եւ ԱՄՆ-ի վարչակազմի որ խմբավորումը կհաղթի թուրքական խմբերի առումով: Պետքարտուղարությունը մտադիր է առաջարկել մի շարք նախաձեռնություններ արաբական երկրների, Իրանի եւ Թուրքիայի հետ

հարաբերությունների զարգացման վերաբերյալ: Պետքարտուղարությունը աշխուժորեն վերակազմավորում է աշխատակազմը, որը գործառնորեն պետք է զբաղվի տվյալ արտաքին քաղաքական ուղղություններով: Այդ աշխատանքում ներգրավում են հարյուրավոր վերլուծաբաններ, փորձագետներ և Միջին Արևելքի հարցերով տարրեր մասնագետներ: Ք. Փաուլսի մտահղացմամբ, այդ մասնագետներին չեն տրվի մշտական պաշտոններ: Նրանք կաշխատեն պայմանագրային հիմունքներով, նրանց ծառայողական վիճակը և աշխատավճարը սերտորեն կապված կլինեն իրենց գործունեության արդյունքներից: Պենտագոնն ակտիվորեն օգտագործում է պետքարտուղարության ծախսողունները Ք. Փաուլսի վարկաբեկման համար: Վերջինս համոզված է, որ արաբական երկրների, թուրքիայի ու Իրանի հետ հարաբերությունները պետք է կատուցել առկա խնդիրների փուլային լուծման եղանակով՝ ԱՄԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ:

Այնուհանդերձ, կան կանխանշաններ այն բանի, որ Պետքարտուղարությունն ստիպված է համաձայնել Պենտագոնի որոշ ծրագրերի հետ: Խոսքը թուրքիային քաղաքական լայնածավալ շանտաժի ենթարկելու որոշ երկարաժամկետ ծրագրերի մասին է, որը ներառում է քրդերի շարժման զարգացումը եՄ-ի միջոցով ճնշումներ բանեցնելը, նաև ռազմական բռնապետության ժամանակավոր հաստատումը: Միաժամանակ, իրաքյան ռազմարշավից հետո Պենտագոնի քաղաքականությունը դարձավ ավելի չափավոր, և ԱՄՆ-ը հազիվ թե որոշում ընդունի թուրքիայի հիմնախնդրի լուծման արմատական միջոցների կիրառման մասին:

Չ. Բուշի պահանջով վարչակազմը չպետք է ավելացնի արդեն առկա արտաքին քաղաքական հիմնահարցերի շրջանակը հատկապես նախքան ԱՄՆ-ի հերթական ընտրությունների ավարտը: Նախագահը կարգադրել է Ազգային անվտանգության խորհրդին մանրագնին քննել տարբեր արտաքին քաղաքական ծրագրերը և առաջարկները, անանուն փորձագիտության մեթոդով ներգրավելով համալսարանական փորձագետներին և նույնիսկ արտասահմանյան փորձագետներին, որոնք լավատեղյակ են այս կամ այն տարածաշրջանի հիմնախնդիրներին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ժամանակակից թուրք-հայկական հարաբերությունների քննարկման համար տնտեսական կապերի զարգացմանը հարողակցությունների ևուպաշրջակալման խնդիրների առնչությամբ ուշադրավ է Տրապիզոնում Ասաստանի գլխավոր հյուպատոսության գեկույցը թուրքիայի հյուսիս-արևելյան մի շարք վիլայեթների (Պոնտոսի գավառ և Արևմտահայաստանի հյուսիսային մաս) ընկերային-տնտեսական վիճակի մասին: Այս գավառները աշխարհագրորեն կապված են ԳԳ-ի հետ և թուրք-հայկական հարաբերությունների ենթադրվող զարգացումը նախ վերաբերում է հատկապես այդ շրջանների հետ Հայաստանի կապերին: Նշյալ գեկույցը մեր կողմից տպագրվում է նշանակալի կրճատմամբ:

«...Նրա կազմում են թուրքիայի 11 հյուսիս-արևելյան վիլայեթները, որոնցից մեծ մասը առավել հետամնաց և տնտեսական ու ընկերային առումով, քան երկրի մյուս շրջանները: Այդ շրջանների տնտեսական հետամնացությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Մասնավորապես, կարելի է նշել Արևելյան Անատոլիայի բնական-աշխարհագրական պայմանները, հիդրոէներգետիկական ներուժի օգտագործման դժվարությունը, օգտակար հանածոների պաշարները չօգտագործելը, լեռնային տեղանքի պատճառով գյուղատնտեսական հողերի անբավարար լինելը, որն արգելում է մեծ մակերեսով հողերի մեքենայացված մշակումը, արտադրամիջոցային կամակարգի ցանցի չզոյությունը և երկաթուղու բացակայությունը: Թուրքական Հանրապետության գոյության 80 տարիներին այդ տարածքում չստեղծվեց ինչ-որ չափով նշանակալի արդյունաբերական բազա: Բացասական դեր խաղացին նաև ռազմաքաղաքական պայմանները, որոնց քվում թուրքիայի լարված հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ, նախկինում ՆԱՏՕ-ի ռազմակայանի առկայությունը Տրապիզոնում, Հայաստանի հետ համապարփակ հարաբերությունների բացակայությունը և այլն: Բոլոր այս պատճառները նպաստում էին, որ թուրքիայի արևելքը մնա փակուղիի տնտեսական ծայրագավառ: Նույն այդ ընթացքում թուրքիայի հարավը և արևմուտքը ունենալով Ստամբուլի, Իզմիրի, Միջերկրականի նավահանգիստների ներուժը և օտարերկրյա ներդրումները, բավականին ակտիվորեն համագործակցում էին շատ երկրների հետ և եվրոպական երկրների հետ շուկայական տնտեսության պայմաններում չլիզելով՝ կուտակում էին աշխատանքային կենսափորձ:

Ընկերային-տնտեսական բնութագրիչներով վիլայեթները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ մերձսևծովյան (Գիրեսուն, Տրապիզոն, Ռիզա, Արդվին) և մայրցամաքային (Բայբուր, Գյումուշխանե, Էրզրում, Էրզինջա, Կարս, Արդահան և Իզդիր): Առափնյա վիլայեթները տնտեսապես ավելի զարգացած են: Կենսամակարդակն այստեղ 2-2,5 անգամ ավելի բարձր է, քան երկրի ներքին շրջաններում: Այսպես, Գիրեսունում և Արդվինում միջին տարեկան եկամուտը բնակչության մեկ շնչին կազմում է 2000 դոլար, Իսկ Արդահանում և Իզդիրում՝ 1000 դոլար: Չորս մերձսևծովյան վիլայեթներում տնտեսությունը զարգանում է վերջին տարին աշխու-

ժողովն ձեւավորող երեք ոլորտների արտաքին առեւտրի, գյուղատնտեսության և զբոսաշրջության հիմքի վրա: Մնացած վիլայքներում գերակայում է տեղական նշանակության գյուղատնտեսական և դրա հետ կապված սննդամթերքի արտադրությունը, ինչպես և տեղական առեւտուրը:

Վիլայքների գործարար շրջանակների ներկայացուցիչները շարունակում են աջակցել Դայաստանի հետ առեւտրատնտեսական հարաբերությունների կարգավորման գաղափարին: Որեւէ մեկի համար գաղտնիք չէ, որ Դայաստանում թուրքական շատ ապրանքներ ներկրվում են Իրանից ու Վրաստանից: Թուրքիայից ղեպի Դայաստան ուղիղ ճանապարհը թուրք արտահանողներին թույլ կտա խուսափել տարանցիկ փոխադրումից, որն զգալիորեն կնվազեցնի փոխադրման ծախսերը և ապրանքների ինքնարժեքը: Նրանք ընդգծում են, որ Դայաստանը լուրջ պահանջարկ ունի թուրքական արտահանման ավանդական ապրանքների սննդամթերքի, մանածագործական և շինարարական նյութերի հարցում: Թուրք-հայկական ասիանների բացմանը երկու երկրների միջև առեւտրաշրջանառությունը կկազմի 1 մլրդ դոլար: Բացի այդ, Դայաստանը կարող է ավելի ծեռնուու պայմաններ առաջարկել երրորդ երկրներում տարանցիկ փոխադրումների համար: Այսպես, եթե Վրաստանում մեկ բեռնատարի երթը արժե 2500 դոլար, ապա հայկական երթուղին կարժենա 500 դոլար:

Վերակառուցվում է մերձսեւծովյան ավտոմայրուղին՝ Ստամբուլից մինչև Ասրապ ձգվող 1500 կմ երկաթուղային ճանապարհը: Բննարկվում է Կարս-Թրիխի երկաթուղու կառուցման հարցը, որը պետք է լինի Մեծ մատաքես ճանապարհի մտահղացման օրինակներից մեկը: Ընդլայնվում են ծովային նավահանգիստները և մերձսեւծովյան օդանավակայանները: Այստեղ նախատեսվում է օդակայանի կառուցում Օրդու և Գիրեսուն բնակավայրերի համար: Թուրքիայի պաշտոնական իշխանությունները 1997 թ. հռչակելով «Արևելյան տարածքների առաջնահերթ զարգացման ծրագիրը», իսկ նետո՝ 1998 թ. մայիսին որոշում ընդունելով փորձարարական կարգով 4 մերձսեւծովյան Արևելյան վիլայքներում արագացված զարգացման մասին, ընթացիկ ժամանակահատվածում չկարողացան իրագործել այդ ուղեգիծը և փոխել զգալի չափով արևելյան Թուրքիայի տնտեսական հետամնացությունը: Միեւնույն ժամանակ, Թուրքիայի կառավարությունը փորձում է մեծ ուշադրություն դարձնել Արևելյան և Դարավարելյան Անատոլիայի տնտեսական զարգացմանը: Օրենքի ֆինանսական հիմքը Թուրքիայի կառավարության կողմից 70 տրիլիոն լիրան (ավելի քան 105 մլրդ դոլար) է, որը կտրվի Թուրքիայի 26 վիլայքների ձեռնարկություններին, ընկերություններին և ֆիրմաներին, որոնք համապատասխան հայցեր են ներկայացրել մինչև 2001 թ. հունիսի 30-ը Թուրքիայի զարգացման կամ Վակաֆի դրամատներից: Տեղի գործարար շրջանակները որոշակի հույսեր են կապում նոր օրենքի հետ զբոսաշրջության, կրթության, առողջապահության, նաեւ արդյունաբերական, գյուղատնտեսական ապրանքների վերամշակման գծով ենթակառուցվածքի զարգացման հետ:

Թուրքիայի հյուսիս-արևելյան վիլայքներ

Տրապիզոնի վիլայք (Տրապիզոն): 17 շրջաններից կազմված Տրապիզոնի վիլայքի տարածքը զբաղեցնում է 4685 քառ. կմ: Բնակչության թիվը հաստատունորեն աճում է: Գնաձայն 2000 թ. մարդահամարի, վիլայքի բնակչության թիվը կազմել է 1,2 մլր մարդ, ինչը 26,6 տոկոսով գերազանցում է 1997 թ. ցուցանիշը (887 հազար մարդ): Կենտրոնի բնակչության թիվն աճել է 185 հազար մարդուց (1997 թ.) մինչև 217 հազար մարդու (2000 թ.): Բնակչության աշխատունակ մասի 60 տոկոսից ավելին զբաղվում է գյուղատնտեսությամբ, 8 տոկոսը զբաղված է արտադրությունում, 10-ական տոկոսը՝ առեւտրում և սպասարկման ոլորտում: Տարեկան միջին եկամուտը կազմում է 2,3 հազար դոլար: Տրապիզոնի բաժինը Թուրքիայի ԴՆԱ մատով կազմում է 0,8 տոկոս: 1997 թ. Տրապիզոնը թույր քաղաք է Սչիզի հետ: Նույնաման համաձայնագրեր են ստորագրվել Ջիզետվար (Ռուճարիա), Բարունի (Վրաստան), Ռիզհաու (Չինաստան) քաղաքների հետ: Ընթացիկ տարում Առեւտրի մշակութային կապերի զարգացման և համագործակցության մասին համաձայնագիր կստորագրվի Ջելենդղյակ (Թաթարստան, ՌԴ) քաղաքի հետ: Գյուղատնտեսության համար պիտանի հողերի մակերեսը կազմում է 110,1 հազար հեկտար (վիլայքի 25 տոկոսը): Գինական գյուղմթերքներն են պղուկը (գյուղատնտեսական մակերեսի 44,7 տոկոսը), եգիպտացորենը (28,01 տոկոսը), բոլը (14,4 տոկոսը), կարտոֆիլը (7,3 տոկոսը): Գյուղատնտեսության զարգացած ճյուղ է ձկնորսությունը: Գինական մթերքը խամսան է՝ ծովային մանր ձուկը: Որսի մեծ մասը վաճառվում է տեղի շուկայում, որոշ մասն արտահանվում է: 2000 թ. արտահանվել է 210 տոննա խամսա (172 տ՝ Գերմանիա, 19տ՝ Ավստրիա և Բելգիա): Արտահանման շահույթը կազմում է 152 հազար դոլար: Արդյունաբերական զարգացման մակարդակով Տրապիզոնը հետ է մնում երկրի արեւմտյան արդյունաբերական զարգացած շրջաններից:

Վիլայքի ԴՆԱ-ի արդյունաբերության բաժինը չի զարգացնում 10 տոկոսը: Արդյունաբերության հիմնական մասը վերամշակում է գյուղատնտեսական մթերքները: Վիլայքում կան 29 բնիկ ֆաբրիկներ 65,7 հազար տոննա տարեկան արտադրողականությամբ, ինչպես և 12 գործարաններ, որոնք տարեկան կարող են մշակել 93,4 հազար տոննա պղուկ: 2000 թ. հավաքվել է 67,8 հազար տ պղուկ, որից 20 հազար տոննան արտահանվել է: Տրապիզոնում կա նաեւ ցեմենտի գործարան տարեկան 410,1 հազար հզորությամբ: Բացի այդ, վիլայքում գործում են 3 արտադրա ֆաբրիկաներ (տարեկան 163,8 հազար տոննա), 10 կաթի գործարան, 8 մանածագործական ձեռնարկություններ, զինագործարան (15 հազար ատրճանակ տարեկան): Սյուրնեի շրջանում նավաշինարաններում կառուցվում են ձկնորսանավեր:

Վիլայքի արդյունաբերական ենթակառուցվածքի կարևոր մասն է Տրապիզոնի արդյունաբերական գոտու կազմակերպության ձեռնարկությունները, որը ստեղծվել է 1995 թ.: 983,4 հազար կմ տարածքում գտնվում են 73 ձեռնարկություններ, որոնցից 44-ը արդեն սկսել են արտադրությունը: Աշխատողների թիվը կազմում է 1747 մարդ: Զեռնարկությունների մեծ մասում զբաղված են սննդամթերքի արտադրությամբ (12), սարքավորումներով (10), կախույքագործությամբ (8): Մտն ժամանակներս ծրագրվում է ստեղծել

ես 2 կազմակերպված արդյունաբերական գոտիներ: 1988 թ. Սարայի սահմանակետի բացմամբ, ինչպես եւ 1991 թ. լաստանավային անցման Տրապիզոն-Սոչի երթուղու գործարկմամբ Տրապիզոնը իր աշխարհագրական դիրքի շնորհիվ վերածվեց տարածաշրջանային առևտրի կենտրոնի: Արտահանման ծավալը մշտապես աճում էր 1998 թ. հասնելով 134,1 մլն դոլարի միջին: Արտահանման ծավալով առաջին տեղում են պնդուլը, մրգերը եւ բանջարեղենը: Տրապիզոնյան արտահանման հիմնական հասցեատերերից առաջին տեղում են եվրոպիկները եւ Ռուսաստանը, Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը, Ճապոնիան, Սաուդյան Արաբիան, Իսրայելը: 2000 թ. Տրապիզոնից արտահանվել է 61,5 մլն դոլարի ապրանք, ինչը 20 տոկոսով քիչ է 1999 թ. ցուցանիշից: Ընդհանուր թուրքական արտահանման ծավալում Տրապիզոնի չափաբաժինը գնահատվում է 27,2 մլրդ դոլար կազմելով 2,2 տոկոսը: Արտահանման ծավալի զգալի նվազեցման գլխավոր պատճառներից մեկը ԱՄՆ-ի երկրների հետ առևտրական ծավալների կրճատումն է, ինչը տեղի ունեցավ 1998 թ. ռուսաստանյան ճգնաժամից հետո:

Տրապիզոնով է անցնում գլխավոր մեքենաների ավտոմայրուղին Սամուն-Սարպը, որը հիմնական ցամաքային զարկերակն է ուղեորների ու բեռների փոխադրման համար երկրի արեւմտյան շրջաններից դեպի արեւելյան շրջաններ, նաեւ Վրաստան ու Ադրբեջան: Տրապիզոնում է գտնվում միջազգային օդանավակայանը: Բացի ներքին չվերթներից, կանոնավորապես թռիչքներ կան նաեւ դեպի Կրասնոդար (շաբաթական 2 չվերթ), Բաքու եւ Թբիլիսի (շաբաթական մեկական չվերթ): 2000 թ. ուղեւորափոխի ծավալը կազմել է 539 հազար մարդ: Զարգացման ներուժ ունի Տրապիզոնի նավահանգիստը: Տրապիզոն-Սոչի, Տրապիզոն-Փոքի ուղեւորներում գործում է լաստանավային փոխադրամիջոցը: 2000 թ. նավահանգիստ է մտել 760 նավ, որոնցից 56-ը ռուսաստանյան նավ են: Նավահանգստի ենթակառուցվածքը թույլ է տալիս մշակել տարեկան մինչեւ 3,5 մլն տոննա բեռ: Սակայն այսօր նավահանգստի ծանրաբեռնվածությունը 17 տոկոսից ավելի չէ: Ստեղծված իրավիճակի պատճառներից մեկը նավահանգստի ոչ արդյունավետ կառավարումն է, որը դեռեւս միակն է չսեփականաշնորհվածներից: Տրապիզոնի նավահանգստով Թուրքիա ներկրվող հիմնական ապրանքը ԱՄՆ երկրների քարածուխն է: 2000 թ. ներկրվել է 436 հազար տ քարածուխ: 1992 թ. նավահանգստի տարածքում ստեղծվեց Ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ): Տրապիզոնյան արտահանման մոտ 25 տոկոսը ԱՏԳ-ի մասն է: ԱՏԳ-ի առևտրային գործողությունների առավելագույն ծավալը նախկին ԽՍՀՄ երկրների հաշվին է, առաջին հերթին Ռուսաստանի: Վերջինիս հետ ԱՏԳ-ի առևտրային շրջանառությունը 2003 թ. հասնում է 3,95 մլն դոլարի: Ռուսաստանից ներկրման հիմնական չափաբաժինը կազմում է 3,8 մլն դոլար: Ռուսաստանից հետո Աւգրեկստանն է (1,1 մլն դոլար), Վրաստանը (916,9 հազար դոլար), Ուկրաինան (878 հազար դոլար), Թուրքմենստանը (864,8 հազար դոլար), Ղազախստանը (669 հազար դոլար): Տրապիզոնի ԱՏԳ-ի ներուժն ակտիվորեն օգտագործող մյուս երկրների խմբի առևտրաշրջանառությունը 2000 թ. կազմել է 2,5 մլն դոլար: Գերմանիայի չափաբաժինն է 545 հազար, Բելգիայինը 248 հազար, Իտալիայինը 236,3 հազար, ԱՄՆ-ինը 1,5 մլն դոլար: Թուրքիայի հետ առևտրաշրջանառությունը 2000 թ. հասնելով 2,3 մլն դոլարի: Առևտրաշրջանառության հիմնական մասը արդյունաբերական արտադրությունն է, մասնավորապես մետաղագործությունը (8,1 մլն դո-

լար), ավտոմոբիլային արտադրությունը (3,1 մլն դոլար):

ԱՏԳ-ի գյուղատնտեսական միակ արտադրանքը ծխախոտն է: ԱՏԳ-ի ընդհանուր արտաբերաչառանառության մեջ վերջինիս չափաբաժինը 3,8 մլն դոլար է: Վիլայեթը գրոսաշրջության զարգացման համար հեռանկար ունի: Տրապիզոնի հիմնական տեսարժան վայրերն են Սոււմելա վանքը, Ար Ռոֆիայի քանդախանը, Աքաբուրդի տուն-քանդախանը, բարձրադիր Ռուզնոգել լիճը: 2000 թ. Տրապիզոն են այցելել ավելի քան 828 հազար գրոսաշրջիկներ, ինչը գրեթե 2 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը (ավելի քան 424 հազար): Համապատասխանաբար աճեցին եւ գրոսաշրջության եկամուտները 32 մլն դոլարից (1999 թ.) մինչեւ 80 մլն դոլար (2000 թ.): Դա գրոսաշրջությունից ստացված Թուրքիայի ընդհանուր չափույթի մեկ տոկոսն է: Աճել են լեռնային համալիրներ, մասնավորապես «Չիգանա» եւ «Նիդրների» այցելած գրոսաշրջիկների թիվը: Այդ առնչությամբ որոշվել է կառուցել համանման այլ շինություններ:

Տրապիզոնում է գտնվում Մեծովյան տեխնիկական ուսումնարանը, որում սովորում են ավելի քան 33 հազար ուսանողներ, այդ թվում 52 հոգի Ռուսաստանից: Ուսանողների թվով ԱՊՌ-ն գրավում է 4-րդ տեղը թուրքական համալսարանների շարքում: Դասախոսական կազմը հաշվվում է 1,5 հազար մարդ: Համալսարանն ունի 16 ֆակուլտետ, 2 բարձրագույն դպրոցներ, 12 մասնագիտական բարձրագույն դպրոց, 3 ինստիտուտ, (մագիստրոսների եւ գիտության դոկտորների նախապատրաստում), 14 հետազոտական կենտրոններ: Համալսարանի բաժանմունքները տեղաբաշխված են Օրդուի, Գիրեսունի, Ռիզեի, Գյումուշխանի վիլայեթներում: 1991 թ. մայիսին Տրապիզոնում բացվեց ԽՄՄ գլխավոր հյուպատոսությունը (1992 թ. մայիսից, Ռուսաստանի): ՈՂ-ի գլխավոր հյուպատոսության հետ այնտեղ գործում են Իրանի եւ Վրաստանի գլխավոր հյուպատոսությունները, նաեւ Դանիամայի պատվավոր հյուպատոսությունը: Մոտ ժամանակներս հնարավոր է աղբբեջանի գլխավոր հյուպատոսության բացումը:

Արդահանի վիլայեթը: Մինչեւ վերջին ժամանակներս կազմում էր Կարսի վիլայեթի մի շրջանը: 1992 թ. մայիսի 27-ին վերակազմվեց որպես վիլայեթ եւ դարձավ Թուրքիայի 75-րդ վիլայեթը: Վիլայեթի կենտրոնը Արդահանն է (բնակչությունը 18,9 հազար մարդ) եւ ունի 5 շրջան: Տարածքը՝ 5576 քառ. կմ, բնակչությունը՝ 136,4 հազար մարդ, որն ավելին է 1997 թ. ցուցանիշից (128,6 հազար): Գյուղատնտեսությունը վիլայեթի տնտեսության հիմքն է: Աճում է ցորեն եւ գարի, որոնք հիմնականում սպառվում են տեղում: Հիմնականում զարգացած է խնոր եղջերավոր անասունների անասու տեսակի բազմացման ճյուղը: Միջը վերանշակվում է Էրզրումի եւ Կարսի մակոմբի-նատներում: Կաթը մշակվում է տնայնագործական եղանակով կամ մշակման համար առաքվում է հարեւան վիլայեթներ: Զարգացած է մեղվաբուծությունը: Մեղը արտահանվող միակ ապրանքն է: Տարեկան արտադրվում է 30 տոննա մեղր, որը վաճառվում է երկրի մյուս շրջաններում: Արդահանում տեղապահված են զգալի թվով թուրքական գորամասեր եւ ժամդրաներիա: Գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը գնվում է տեղի գինիղրական գորամասերի կողմից, որոնք էլ կազմում են վիլայեթի բնակչության մեծ մասը: Արդյունաբերական ձեռնարկությունը մեկն է կոչիկի ֆաբրիկան (70 աշխատող), որը կատարում է բացառապես ռազմական պատվերներ: Վիլայեթի տարածքում օգտակար հանածոներ չեն հայտնաբերված, սահմանային

առևտուր չկա: Բեռնա և ուղևորափոխադրումը միայն հնարավոր է ավտոմեքենաներով:

Արդվինի վիլայեթ: Մակերեսը 7,4 հազար քառ. կմ է կազմված է կենտրոնից ու 7 շրջաններից: 2000 թ. մարդահամարով բնակչության թիվը 191,6 հազար մարդ է, ինչը 2,2 տոկոսով ավելին է 1997 թ. ցուցանիշից (187,1 հազար): Արդվինի ՀՆԱ-ի չափաբաժինը կազմում է շուրջ 0,335 տոկոս: Միջին տարեկան եկամուտը բնակչության մեկ շնչին կազմում է 2,5 հազար դոլար: Աշխատող բնակչության 70 տոկոսից ավելին գյուղատնտեսության բնագավառում, զբաղված է ձկնորսությամբ, անտառտնտեսությամբ, որսորդությամբ: Արդվինում արտադրվում է Թուրքիայի հյուսիսային մերձսևծովյա մասին բնորոշ ապրանք՝ թեյ, պնդուկ, մեղր, կան ոչ մեծ ձկնաբուծական տնտեսություններ: Բնակչության մեծացած մասը զբաղված է սպասարկման (11 տոկոս) և արդյունաբերության (5 տոկոս) ոլորտներում: Ընդհանուր առմամբ Արդվինում հաշվվում է 18 արդյունաբերական ձեռնարկություն (7-ը՝ պետական): Արդվինի ապագան կապվում է էլեկտրաէներգիայի արտադրության հետ: Վիլայեթով հոսում է ճորդիչ գետը՝ 354 կմ երկարությամբ (ընդհանուրը՝ 376 կմ), որի վրա կառուցվում է 7 ամբարտակներից բաղկացած կասկար: «Ղերիներ» ամբարտակի կառուցմանը (670 մզվտ), որի բարձրությունը 247 մետր է, մասնակցում են ռուսաստանյան «ՎՕ Տեխնոստրուկտուրայթսպրտ» ՕԱՕ ընկերության մասնագետները: Հիդրոէլեկտրակայանի շինարարության ավարտը (սկիզբը 1998 թ.) նախատեսված է 2006 թ.: Նախագծի իրագործումը կտրուկ կփոխի վիլայեթի տնտեսության բնույթը: Էլեկտրակայանների կառուցման ծրագիրը նախատեսում է վիլայեթի տարածքով նոր ճանապարհաշինարարություն, որը կկապի արեւելյան մերձսևծովյան շրջանները Թուրքիայի հարավ-արեւելյան շրջաններին: Վիլայեթում է խոպա նավահանգիստը, որը գործում է 1972 թ. և տարեկան մինչև 1,3 մլն տոննա բեռնաբեռու-նակություն ունի: Նավահանգստում կա քարածխի պահեստ, որը օգտագործվում է ՌԴ-ից ածուխ ներկրելու համար: Վիլայեթի ղեկավարությունը փորձում է խոպա դարձնել ազատ տնտեսական գոտի: Խոպայից Սամսուն կատարվում է Արդվինում արդյունահանված պղնձի հիմքի փոխադրումը: Խոպայից 19 կմ հեռու գտնվում է Սարպի սահմանակետը, որը վրաստանը Թուրքիային միացնող հիմնական ցամաքային առևտրային ճանապարհն է: Սարպիի միջոցով արտահանվող ամբարների ծավալը ներկայումս նվազել է: Պատճառները 1998 թ. ռուսաստանյան ճգնաժամն է և վրացական տարածքում թուրքական բեռնատարներից կատարվող շրջումները: Թուրքիան, սակայն, միջոցներ է ձեռնարկում առևտուրն աշխուժացնելու համար: Սեծ նշանակություն է տրվում ճանապարհաշինարարությանը: 2000 թ. հոկտեմբերին բացվել է երկկողմանի Խոպա-Սարպի ճանապարհը: Արդվինում է գտնվում Կովկասյան ինստիտուտի (Կարս) ֆակուլտետը:

Բայբուրդի վիլայեթ: Մինչև 1989 թ. եղել է Կարսի վիլայեթի կազմում: Ունի 3652 հազար քառ. կմ մակերես, կենտրոնը Բայբուրդն է (38,6 հազար մարդ) և ունի 2 հարավից շրջաններ: Թե՛ն րե՛սի երկրի արեւմտյան շրջաններ ուղղությամբ արտագաղթին, բնակչությունը կայուն կերպով աճում է: 1997 թ. բնակչության թիվը եղել է 101,5 հազար մարդ, 2000 թ. հասել է 112,8 հազարի ցուցանիշին: Գյուղատնտեսության հիմքը անասնապահու-

